

3308

28
R-93

1856

2010

131

* 2001

2036 K 30 2036
Sp. Eydenbank
1877 J. Mocher



28

այ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊՐՈԿՈՒՐԻ Կ. ՍՏԵՓԵՆՅԱՆ

Բ-93 ԲՐԻՍՏՈՆԵՆԷԿԱՆ

ՎԱՐՊԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՈՐ

ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲԸ

ՀԱՄԱՌՕՏԱԲԱՐ ԿԸ ՍՈՐՎԵՑՈՒՆԻ ԲՐԻՍՏՈՆԵՆԷ


ՀԱՐԿՍԻՈՐ

Գ Ի Տ Ե Լ Ի Գ Ն Ե Ր Ը



ԵՐՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲԱԳՐՈՒԱԾ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՅԳԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1856

11178

ՔՈՒ մանկութենէդ 'ի վեր Սուրբ Գեղքերը դիտես ,
որոնք կրնան խնաստուն ընել քեզ վերհուելու՝ Քրիս-
տոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը : Բոլոր Գեղքը
Աստուծոյ շունչն է , և օգտակար է սարկեցունելու , յան-
դիմանելու , շիտկելու , ու արդարութեան խրատելու հա-
մար . որ Աստուծոյ մտրդը կատարեալ ըլլայ՝ ամէն բա-
րի գործքերու սրտարաստուած : Բ. ՏԺՏ. Գ. 45—17 :



4955-50

ՅԼՈՒԼՔԼԻՆՆՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Քրիստոնէական ճշմարիտ հաւատքին մի միայն հաստատ հիմը՝ ու Քրիստոնէի մը լուսաւոր ճամբան առաջ նորդողը՝ միայն Սուրբ Գիրքը ըլլալը՝ ինչպէս որ ամէն Քրիստոնէայ ազգիչը վկայէ, ասանկ ալ՝ ան անխախտելի հիմին վրայ հաստատուած և անոր վկայութիւնովը լեցուած գիրքերը կարող են աւաջնորդել մեզի դէպի ան շխտակ ճամբան երթալու, և անոր լոյսին ալ հաղորդ ըլլալու : Ուստի աս գրքիս նպատակն ալ ուրիշ բան չէ՝ բայց միայն ան լուսաւոր ճամբային շտկել ամէնուն ղիտաւորութիւնը՝ որ անով լուսաւորուին • ու (ինչպէս որ Առաքեալը կ'ըսէ) Թող ասն խաւարին գործքերը : Աս ճշմարիտ պատճառներէս և մանաւանդ շատ Հայազգի ընթերցմունք սիրողներուն միշտ Թախանձանքներէն ստիպուելով՝ որոնք առջի ու երկրորդ տպագրութենէն մեծ օգուտ քաղելով՝ կը փափաքին անոնց ամէն մէկերնին աս սխալանի գրքէս ունենալ՝ Թէ՛ իրենց և Թէ՛ զաւելններնուն լուսաւորութեանը համար և առջի ու երկրորդ տպուածներուն Թիւր հերթը չըլլալով՝ յիշեալ բարեկամներուն փափաքը լեցունելու համար ձեռք զարկինք անոր երրորդ տպագրութեանը : Եւ առհասարակ ամէն մարդու՝ և մանաւանդ տղայոց ալ ղիւրին հասկըցուելու ըլլալու համար՝ բոլորովին սարգ ու անզարդ բառեր գործածեցինք, չնայելով ընաւ Հայոց լեզուին ընդարձակ ճոխաբանութեանը՝

որով գուցէ ամենահարկաւոր գիտելիքները շատերուն մտած սխալի մնային: Ուստի ստիկայ՝ թէ և փոքրիկ Գիրք մըն է, բայց մեծ օգուտներ կրնայ տալ որ և իցէ հասակի մարդոց • մանաւանդ որ իր պարզութեամբը՝ ռամիկ մարդիկ և նոր հասած տղաքն ալ ճշմարտութեան սկզբունքները կրնան համառօտաբար ասկից քաղել: Ամէն մէկ յօդուածին սկիզբը դրուած գլուխները՝ նոյն յօդուածին խմատին վերաբերելուն համար՝ կարդացողը երբոր անոնց հանգիստի, կրնայ բանալ Աստուածաշունչը և նոյն գլուխը կարդալ:

Արդ՝ կը յուսանք որ հոգեւեր վարժապետները իրենց ձեռքի աշակերտներուն, և բարեպաշտ ծնողք իրենց նոր հասած զաւկրներուն մտքին մէջ բարեպաշտութեան հոգին վառելու համար՝ սխալի փափաղին կարդացունելաւ նոնց՝ առ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԸ, և թէ որ կարելի է սերտել տալ • որպէս զի անոնք մանկութեան ժամանակէն կրթուելով հոգևոր գիտութեան մէջ՝ մեծցած ժամանակնին ազգին բարեկարգութեանը՝ և մանաւանդ քրիստոնէութիւնը օրէ օր աւելի ծաղկեցունելու հոգ տանին, իրենց քրիստոնէայ անուններուն համեմատ՝ քրիստոնէականել վարքով ալ ծաղկելով՝ ի փառս Քրիստոսի յուսոյն մերոյ:

ՅԱՆ Կ

Մ Ա Ս Ն Ա . Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Վ Ր Ա Յ

էրէս

Ճ .	Աստուծոյ ինչ ըլլալուն, եւ թէնք ինչպէս իրեն էրիբոյստութեան ընկերուս Վրայ	1
Կ .	Աստուծոյ յաստուծութենէնէրուս Վրայ	4
1 .	Աստուած անմահ է	4
2 .	Աստուած ամէն տեղ ներկայ է, ու ամէն բան գիտէ	7
3 .	Աստուած ամենակարող է	10
4 .	Աստուած սուբբ է	13
5 .	Աստուած բարի ու ողորմած է	16
6 .	Աստուած արդար է	20
7 .	Աստուած ճշմարտութեան Աստուած է	26
Կ .	Սուբբ Երրորդութեան Վրայ	31

Մ Ա Ս Ն Բ . Տ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր Ո Ւ Ն Վ Ր Ա Յ

Ե .	Բարի հրեշտակներու Վրայ	35
Բ .	Չար հրեշտակներու Վրայ	41

Մ Ա Ս Ն Գ . Մ Ա Ր Գ Ո Ւ Ն Վ Ր Ա Յ

Ե .	Աստուծոյ ասեղծագործութեանը Վրայ	48
Բ .	Դրախտին Վրայ	52
Գ .	Մարդուն գործութեանը Վրայ	55

Դ .	Մարտիրոսան առաջին Տղլիսոս իշխաւը .	60
Ե .	Մեր առաջին Տնորացի իշխաւան վը րայ	66
1 .	Աննք անխճուեցան ու Ղրախտէն գուրս ձգուեցան	66
2 .	Մեր առաջին ծնողաց բորբ սերունդը կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը . . .	71
Զ .	Փրկումէան Ճամբուն Վրայ	79
1 .	Ատուած կը պատրաստէ մեզի համար կատարեալ փրկութիւն	79
2 .	Յիսուս Քրիստոսի մեր Փրկչին ո՞վ ըլլալը .	84
Ե .	Ինչը Լստում է	84
Բ .	Ինչը Տարդ է	90
3 .	Ինչն Քրիստոս մարդ եղաւ	95
4 .	Քրիստոս մեզ սլատի՞էն կ'ազատէ . . .	100
5 .	Յիսուս Քրիստոս չարչարուեցաւ ու մե ռաւ մեզի համար խաչին վրայ	106
6 .	Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար . .	114
7 .	Աննք միայն կը փրկուին՝ որ Յիսուսի կը հաւատան	117
8 .	Ի՞նչ է Յիսուս Քրիստոսի հաւատալը . .	121
Է .	Մեր Քրիստոսի Գալուն ու Երկին չին համար պատրաստութեան Վրայով .	128
1 .	Մենք կամք չունինք Քրիստոսի գալու մեր փրկութեանը համար . հասկա Աս տուած է որ կը փոխէ մեր սիրտերը ու իր հոգիով Քրիստոսի կ'առաջնորդէ մեզ	128
2 .	Մենք սլարտինք սրտի փոփոխութիւն ու	

նենալ . առ սրտի փոփոխութիւնը ի՞նչ է , և ի՞նչպէս Սուրբ Հոգին իր գործը կը կատարէ ու Երկինքին համար կը պատրաստէ մեզ	136
Ք . Սուրբ Հոգին կը խօսի մեզի Աստուածաշունչով	143
Կ . Սուրբ Հոգինն ո՞վ ըլլալը	154
Ը . Մահուան Վրայ	159
1 . Մարմինին մեռնելուն վրայ	159
2 . Հոգին ի՞նչ կ'ըլլայ Երբոր մարմինը մեռնի .	165
ԹԵ . Յարուսեան Վրայ	168
Ժ . Դասուսուսանին Վրայ	173
ԺԵ . Երկինքի Վրայ	182
ԺԸ . Դժոխքին Վրայ	190

ԳՅԱՍՆ Գ . ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԻՆԻՔԻՆ ՎՐԱՅ

Ե . Օրէնքը սրբաւելումն Վրայ	196
Բ . Տաղը Պատուիրաններուն Վրայ	200
Առաջին Պատուիրանքը	200
Երկրորդ Պատուիրանքը	205
Երրորդ Պատուիրանքը	212
Չորրորդ Պատուիրանքը	215
Հինգերորդ Պատուիրանքը	224
Վեցերորդ Պատուիրանքը	231
Եօթներորդ Պատուիրանքը	240
Ութերորդ Պատուիրանքը	248
Իններորդ Պատուիրանքը	255
Տասներորդ Պատուիրանքը	261

ՔՐԻՍՏՈՆԵԿԵՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՄԱՍՆ Ա

ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ



Ե . Աստուծոյ ինչ ըլլալուն , եւ յինչ ինչպէս ի
բն իրիպագոռնիան ընելնուս Վրայ :

Հ . Ի՞նչ է Աստուած :

Պ . Աստուած Հոգի է :

(Անիկայ) մարդիկներէն մէկը չտեսաւ , ոչ ալ տեսնու
լու կարող է : ԱՏԻՃ . Զ . 16 :

Հ . Մենք ինչպէս երկրպագուլթիւն ընելու
ենք Աստուծոյ :

Պ . « Հոգիով ու ճշմարտութիւնով » : ՅՈՒՄ .
Դ . 23 , 24 :

Հ . Օրը քանի՞ անգամ Աստուծոյ երկրպա
գուլթիւն ընելու ենք :

Պ . Գոնէ ամէն առտու ու իրիկուն :

Իրիկունը՝ առտուն ու կէս օրը պիտի բողբոբիմ ու հառաչեմ , և անիկայ պիտի լսէ իմ ձայնս : Մառ . ԾԵ . 17 :

Հ . Աստուծոյ Հոգի ըլլալուն վրայով ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը :

Պ . « Աստուած Հոգի է . և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն » : Յովհ . Դ . 24 :

Հ . Ի՞նչ բանի համար ստեղծուեցանք :

Պ . Տէրօջը երկրպագութիւն ընելու և իրեն ծառայելու համար :

Ինչու որ ամէն բաները անկէ , ու անով , և անոր համար են . իրեն փառք յաւիտեանս . ամէն : Հոովհ . ԺԱ . 36 : Արդ՝ Թէ՛ ուտէ՛ք Թէ՛ խմէ՛ք՝ և Թէ՛ ինչ գործ որ ընէք , ամէն բան Աստուծոյ փառքին համար ըսէ՛ք : Ա . Կորնթ . Ժ . 31 :



Դուք հիմա գիտէք Աստուծոյ ինչ ըլլալը : Մենք միս ու արիւն ունեցող մարմիններ ունինք . բայց Աստուած մեզի պէս չէ՛ . Ինքը Հոգի է . Ինքը ամէն տեղ ներկայ է . բայց մենք չենք կրնար տեսնել զինքը :

Հիմա գիտէք Թէ ինչպէս երկրպագութիւն ընելու

էք Աստուծոյ • « Հոգիով » • այսինքն Հոգիի մը պէս (ա) • և ձեր հոգիովը, ձեր սրտովը իրեն աղօթելով ու մեղքեր-նիդ խոստովանելով, զինքը օրհնելով՝ սիրելով և ձեր բոլոր սրտովը իրեն ծառայելով : « Պէտք է երկրպագութիւն ընէք Ճշմարտութիւնով ալ », այսինքն առանց կեղծաւորութեան, անկեղծ սրտով :

Ա • Աստուած կը սիրէ ու կը հասնի միայն անոնց՝ որ հոգիով ու Ճշմարտութիւնով երկրպագութիւն կ'ընեն իրեն : Զգուշացէ՛ք ուրեմն որ Աստուծոյ երկրպագութիւն ըրած ատեննիդ հոգիով ու Ճշմարտութիւնով ընէք :

Բ • Ամէն մարդիկ՝ ծեր ու սպառանի, երկրպագութիւն ընելու են Աստուծոյ, հրապարակաւ ու առանձին : Հրապարակաւ՝ եկեղեցիին մէջ, և ընտանեաց մէջ • առանձին՝ գոնէ օրը երկու անգամ՝ առտու ու իրիկուն մէկ

(ա) • Դունք քեզի կուռք չշինեն ո՛չ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներու մէկ նմանութիւնը • Անոնց երկրպագութիւն չընեն, ու զանոնք չսպաշտեն • Ընչու որ էս քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վերայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս • Եւ կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն : Երբ որդի Պատուիրանի • Եւեց • Ի • 2—6 : Որովհետև Աստուծոյ ցեղէն ենք, պէտք չէ որ անանկ սեպենք թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի, որ մարդուս վարպետութիւնովը ու խելքովը քանդակուած է : Գործ • Ժե • 29 : Դուք Աստուածը որո՞ւ կը նմանցուցէք, ու զանիկայ ի՞նչ նմանութեան հետ կը հաւասարցուցէք : Եսայ • Խ • 18 •

մասնաւոր տեղ մը՝ ուր որ մէկը չկրնար տեսնել⁷ կամ՝
լուէլ բայց միայն Աստուած (ա) :

Ոմանք երկրպագութիւն կ'ընեն Աստուծոյ՝ օրը իրեք ան
գամ⁸, առտու, ու ցորեկը, ու գիշերը :

Գ. Աստուած մեզ իրեն համար ստեղծեց, որ միշտ
իրեն երկրպագութիւն ընենք ու իրեն ծառայենք : Ուս-
տի թէ որ կ'ուզէք որ Աստուած սիրէ ձեզ ու ձեզի բարի
ընէ, թէ որ կ'ուզէք երջանիկ ըլլալ աւ աշխարհիս մէջ
ու գալու աշխարհին մէջն ալ, երկրպագութիւն ըրէք
Աստուծոյ « Հոգիով ու Ճշմարտութիւնով » : Ա ՏԻՏ . Գ .
8, 9 : « Աստուծոյ մօտեցէք, ու անիկայ ձեզի պիտի
մօտենայ » : Յակ . Գ . 8 :

Ի . Ըստուծոյ ցափեղատիւնն երրօտն լըրայ :

1 . Աստուած անմահ է :

Հ . Ո՛վ ստեղծեց ու ո՛վ կը խնամէ ամէն
բաները :

Պ . Ըստուած : Երան . Ե . 1

Հ . Ըստուած ինքը ստեղծուած է :

Պ . Չէ՛ : Եսայ . ԽԴ . 6 :

Հ . Հայր ունի :

(ա) . Մտիւր քու ներքին սենեակդ, ու դուռդ գոցէ :
Մատթ . 23 . 6 :

- Պ . Չէ՛ . ինքը հայր չունի : Եփես . Դ . 6 :
- Հ . Ուրեմն թէ որ Աստուած ստեղծուած է ու հայր ալ չունի, ո՞վ իրեն կեանք կու տայ :
- Պ . Մէկը չտար :
- Հ . Ուրեմն հայր Աստուած ինչպէս ունի իր կեանքը :
- Պ . Հայրը իր անձին մէջը ունի կեանք : Եփե . Ե . 26 :
- Հ . Աստուած սկիզբ ունեցա՞ւ :
- Պ . Չէ՛ :
- Հ . Աստուած փոփոխութիւն կամ վերջ ունի :
- Պ . Չէ՛ : Եփես . Ե . 33 : Սաղմ . Դ . 2 :
- Հ . Մեր ու ամէնուն կեանքը ո՞վ կու տայ :
- Պ . Աստուած . քանզի « Անով կ'ապրինք և կը շարժինք ու կանք » : Գործ . ԺԵ . 28 :
- Հ . Յաւիտեանս յաւիտենից պիտի ապրինք :
- Պ . Մեր մարմինները պիտի մեռնին, բայց հոգիներնիս պիտի ապրին :
- Հ . Հապա մեր մարմինները պիտի յարու-
թիւն չառնեն վերջին օրը նորէն ապրելու համար :
- Պ . Այո՛ . « Յարութիւն պիտի ըլլայ, թէ՛

արդարներուն և թէ՛ մեղաւորներուն» : Գործ .
ԻԿ . 13 :

Ատուած անմահ է . ինքը բնաւ սկիզբ չունեցաւ ,
բնաւ վերջ ալ պիտի չունենայ : Ինքը չփոխուիր . ինքը
նոյն է երեկ , այսօր , և յաւիտեան :

Ա . Ինքն է յաւիտենական Հայրը , ինքն է կենաց
Ազբիւրը ու ամէն բաներուն մեզի Տուողը : « Անով
կ'ապրինք և կը շարժինք , ու կանք » : Հայրերնիս և մայ-
րերնիս ու բարեկամներնիս աս աշխարհիս մէջ կը մեռ-
նին , ու մեզ մինակ կը ձգեն . բայց մեր երկնաւոր Հայրը
ասոնցմէ աւելի մեծ է , և անմահ : Ինքը անմահ է ու
կրնայ հոգ տանիլ մեզի՝ մեր տղայութենէն մինչև գերեզ-
մանը : Սաղմ . ՃԳ . 1—5 :

Բ . Եւ քանզի ինքը կենդանի է , մենք ալ կենդա-
նի պիտի ըլլանք : Մենք անմահ ենք . մեր մարմինները
կը մեռնին , բայց Ատուած նորէն պիտի յարուցանէ ա-
նոնք . մենք հոգիով ու մարմնով պիտի ապրինք յա-
ւիտեան . աս է ճշմարտութիւնը : Բ ՏԷՏ . Ա . 9 , 10 :

Գ . Եւ աս ուրախութիւն տուող ճշմարտութիւն մըն
է մեզի՝ թէ որ մենք արդար ենք : Թէ որ մենք արդար
ենք , Ատուածոյ հետ երկինքին մէջը պիտի ըլլանք յաւի-
տեան : Բայց ցաւելու ճշմարտութիւն մըն է թէ որ մենք
չար ենք . ինչու որ սատանաներուն հետ պիտի բնակինք
գոթիքին մէջը յաւիտեան : Մաթթ . ԻԵ . 46 :

Դ . Ինչպէս Տէրն է՝ որ աս ներկայ կեանքերնիս կու

տայ մեզի, անանկալ Տէրն է՝ որ անիկայ կ'առնէ մեզ-
մէ : Ուրեմն ջանք ընենք անանկ ապրել առ ներկայ
կեանքերնուս մէջ, որ երբ Աստուած անիկայ առնելու
ըլայ, մենք կարենանք պատրաստ դանուիլ իր դէմը
էլլելու, ու իր հետը փառքի մէջ բնակելու՝ դալու
կեանքով (ա) :



2 . Աստուած ամէն տեղ ներկայ է, ու ամէն բան
գիտէ :

Հ . Աստուած ո՞ր է :

Պ . Աստուած ամէն տեղ է :

Մէկը ծածուկ տեղուանք կրնայ պահուիլ՝ որ ես
զանիկայ չտեսնեմ, կ'ըսէ Տէրը . միթէ երկինքը ու երկի-
րը լեցունողը ես չեմ, կ'ըսէ Տէրը : Եբեժ . ԻԳ . 24 :

Հ . Ինքը ի՞նչ կը տեսնայ ու գիտէ :

Պ . Ամէն բաները : Գործ . ԺԵ . 18 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքը « Տէրոջը աչ-
քերուն » վրայով :

Պ . « Տէրոջը աչքերը ամէն տեղ չարերը ու
բարիները կը գիտեն » : Առաջ . ԺԵ . 3 : Ի Սը-
նայ . ԺԵ . 9 : Եբեժ . ԻԳ . 19 :

(ա) . Դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ
կու գայ անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր :
Ղրմի . ԺԲ . 40 :

Հ • Բնաւ խնդրներնս կրնանք Աստուծմէ
զաղտուկ տեղ մը պահել :

Պ • Չէ՛. ոչ ցորեկ և ոչ գիշեր : Եբե՛ժ. ԻԳ. 24 : Սաղ՛ժ. ՆԴԹ. 10, 12 : Յե՛Ք. ԼԵ. 4 : Եբր. Դ. 13 :

Հ • Ի՞նչ էր ան անունը՝ որն որ Հագար
Աստուծոյ տուաւ :

Պ • « Տեսիլքիս ԴՆ Էրեւոյած Աստուածն էս » :
Նոնիդ. Ժ.Օ. 13 : Առաջ. Ե. 21 :

Հ • Թէ որ մեզմէ մէկը իմաստութեան կա
րօտի, որմէ՞ խնդրելու է :

Պ • Աստուծմէ. ինչու որ բոլոր գիտութեան
և բոլոր իմաստութեան Տէրը Աստուած է :

Թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակաս ըլլայ,
Թող խնդրէ Աստուծմէ՝ որ ամենուն առատապէս կու
տայ ու չնախատեր, և անոր պիտի տրուի : Յակ. Գ. 5 :
Սաղ՛ժ. ՂԴ. 10 : ՃԽԵ. 5 : Եսայ. Խ. 28 :

Հ • Աստուած ի՞նչ տուաւ Սողոմոնին :

Պ • « Եւ Աստուած Սողոմոնին իմաստու
թիւն ու խիստ շատ հանձար տուաւ » : Գ.
Թագ. Դ. 29 :

Հ • Ա՛մէն մարդու ներսիդին ի՞նչ է ան՝ որն
որ Աստուած միայն կատարելապէս գիտէ :

Պ • Սիրտը :

Վասն զի բոլոր մարդոց որդիներուն սիրտը մինակ
գուն գիտես : Գ. Թագ. Ը. 39 : Սաղ՛ժ. ԽԴ. 21 : Հոով՛ժ.
Բ. 16 : Ա կորն. Դ. 5 :

Հ • Ի՞նչ կ'ըսուի սրտին խաբեբայութեանը ու չարութեանը վրայով :

Պ • « Սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է » : Երեմ. ժ. : 9 : Նահր. Բ. : 5 : Բ. : 21 : Հոովմ. Գ. : 10—19 : Եփես. Բ. : 3 : Տեա. Գ. : 3 :

Հ • Ինչո՞ւ համար Աստուած բոլոր մարդոց սիրտերը կը քննէ :

Պ • Ամէն մէկուն իր դործքերուն պէս հատուցանելու համար : Ե. Սահայ. Ի. : 9 : Սաղմ. Ն. : 23, 24 : Երեմ. ժ. : 10 : Յայտ. Բ. : 23 :

Տէրը կը լեցունէ երկինքն ու երկիրը • ինքը ներկայ է ամէն տեղ, և կը տեսնայ ու գիտէ ամէն բաները :

Ա • Ուստի թէ որ սրտակիներ թէ որ ելանք, կամ ընթէ որ դուրս երթանք, և կամ ներս գանք, ո՞ր որ չլանք, ինչ որ ընելու ըլլանք, Աստուած մեր բոլորակին է : Մենք կրնանք մարդոցմէ սրահուիլ, բայց Աստուծմէ բնաւ չենք կրնար : Յօրեկը ու գիշերը մէկ է անոր • միշտ յիշենք ան անունը՝ որն որ Հաղար Աստուծոյ տուաւ • « Տեսիլքիս մէջ երեցած Աստուածը » • և վարուինք իբր թէ իր ներկայ ըլլալը զգալով • վախնանք գողնալէն, կամ սուտ խօսելէն, կամ անխիղճի կամ ո՞ր և իցի չար բան մը ընելէն • քանզի ամէն բան Աստուած կը տեսնէ ու գիտէ :

Բ • Ինքը նաև կը տեսնէ չէ թէ միայն մեր չար դործ-

քերը, հապա բարի գործքերնիս ալ: Ուստի եկէ՛ք
քաջալերուինք բարի ընելու. Աստուած կը տեսնէ, և
ներկայ է մեզի հետ, ու պիտի օրհնէ մեզ. մենք
չպիտի կորսնցունենք մեր վարձքը: Մաղ. Գ. 18:

Գ. Միայն Աստուած գիտէ սիրտը. ինքը չէ՛ թէ
միայն մեր գործքերը կը տեսնէ, հապա մեր սիրտերուն
պինտ գաղտուկ խորհուրդներն ալ: Ինքը մեզմէ ազէկ
գիտէ մեզ. մենք կրնանք մարդ խաբել, բայց Աստուած
չենք կրնար խաբել: Ինքը կը գրէ ու պիտի դատէ ա-
մէն սիրտի ամէն գաղտուկ խորհուրդները: Ազաչենք
Աստուծոյ Քրիստոսի անունովը որ գայ ու իշխէ մեր սիր-
տերուն մէջ և փոխէ ու սրբէ անոնք, և անանկ մեզ
երկինքին համար սրատրաստ ընէ:

Դ. Բոլոր խմաստութեան Տէրը Աստուած է. և բա-
րի կերպով կը նայի ամէն բաները: Մենք փափաքելու
ենք որ Աստուած մեզի համար անանկ ընէ ճիշդ ինչ-
պէս որ իրեն ազէկ կը թուի. և մենք հաճելու ենք
ինչ որ ինքը ընէ. և երբոր խմաստութեան կարօտինք,
երբոր ուզենք գիտնալ թէ ինչ պարտինք ընել կամ
չընել, Աստուծմէ խնդրելու ենք որ ինքը մեզի սոր-
վեցունէ:

3. Աստուած ամենակարող է:

Հ. Աստուած իր ամենակարող զօրութիւ-
նը ցուցունելու համար ինչ ըրաւ:

Պ. Աշխարհը՝ արեգակը՝ լուսինը՝ և աստ-

ղէրը ստեղծեց ու կրկառաւարէ անոնք :
 Ծանր . Ե . 1 : Յոբ . Ի . 7 : Եսայ . Խ . 26 :
 Կող . Ե . 15 , 16 : Եբր . Ե . 2 , 3 , 10 :

Հ . Եստուած ինչպէս ստեղծեց անոնք :

Պ . Իր կարող խօսքովը : Ծանր . Ե . 3 :
 Սաղ . ԼԻ . 6—9 : Եբր . ԺԵ . 3 :

Հ . Մէկը կրնայ արգիլել զինքը՝ իր ուզածը
 ընելէն :

Պ . Զէ : Եսայ . ԽԻ . 13 : Դան . Դ . 3 :

Հ . Եմենակարող Եստուածը մեր Եստուա-
 ծը ու մեր Փրկիչը ունենալու համար ինչ
 պիտի ընենք :

Պ . Պարտինք մեծապէս ուրախանալ :

Հ . Կրնանք մեղքի մէջ ամուր պահել ինք-
 զինքնիս Եմենակարող Եստուծոյ դէմ ու յա-
 ջողութիւն ալ գտնալ :

Պ . Զէ :

Անկիայ սրտով խմաստուն՝ և ուժով կարող է . ո՛վ
 անոր դէմ իր սիրտը խստացուցեր ու յաջողութիւն
 գտեր է : Յոբ . Թ . 4 : Ամբարիշտները դժոխքը պիտի
 դառնան և ան ամէն ազգերը որ զԵստուած կը մոռ-
 նան : Սաղ . Թ . 17 : ԿԶ . 7 :

Հ . Ո՛րուն ձեռքը իյնալը սոսկալի բան է :

Պ . Կենդանի Եստուծոյ ձեռքը :

Արդ իմացէք ասիկայ՝ ո՛վ դուք Եստուած մոռցող-
 ներ , չըլլայ որ ձեզ պատուեմ , և ազատող մըն ալ

չգտնուի : Սաղմ. Ծ. 22 : Դուն սլ Տէր , Դուն ահաւոյ
 ես՝ և սլ կրնայ կայնիլ քու առջիդ քու բարկութեանդ
 ասենը : Սաղմ. ՀԶ. 7 : Բորբոքած կրակով վրէժ աւ
 նելու անոնցմէ՝ որ Աստուած չեն ճանչնար , և որ մեր
 Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին չեն հնազանդիր
 որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով՝ Տէ
 րոջը երեսէն ու անոր զօրութեանը վառքէն : Բ ԹԷ՝
 Ա. 8, 9 :

Աստուած ամենախարոզ է . ամէն բաները ինքը
 ստեղծեց ու ինքը կը պահէ իր կարող խօսքովը : « Ինքը
 ըսաւ , ու եղաւ » . Աստուծոյ առջին դժուարին բան
 մը չկայ . դուք կրնաք արդիւլէլ մարդը , բայց ոչ զԱ
 ստուած : Երեմ. ԼԲ. 27 :

Ա . Ինքը կարող է փրկելու . ուստի մինակ իր յաւի
 տենական զօրութեանը ապաւինելու ենք : Ինքը կարող
 է բոլոր մեզի պէտք եղածը տալու , մեզ ամէն վտանգ
 ներէ ազատելու և մեզ ամէն փորձութիւններուն մէ
 ջէն ապահով տանելու : Բ Կորնթ. ԺԲ. 9 : Ո՛չ մարդու՝
 ոչ ալ սատանային զօրութիւնը կրնայ փնասել մեզի՝ թէ որ
 Աստուած մեզի հետ ըլլայ : Բ ՏԷ՝ . Դ. 17 , 18 : Հոգիին
 փրկութիւնը ապահով է երկրի վրայ . թող ուրախա
 նան իր ժողովուրդները (ա) :

Ե . Ինքը կորսընցունելու ալ կարող է . մէկը չկը

(ա) . Որ Աստուծոյ զօրութեամբը պահպանուած էք
 հաւատքով ան փրկութեանը համար՝ որ պատրաստուած

նար կայնիլ իր առջև, ոչ ալ շատ զօրաւոր մեղաւորները :
 Ինքը կրնայ կտոր կտոր ջարդել անոնք, ու մէկը չկը-
 նար ազատել անոնք : Իր բարկութիւնը ահագին է :

« Սոսկալի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնա-
 լը » : Եբբ . Ժ . 31 : Աստուծոյ զօրութիւնը չարերուն
 դէմ կը դառնայ, անոր համար թող չարերը վախնան,
 և ապաշխարեն ու Յիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը
 Աստուծոյ դառնան :

4 . Աստուած սուրբ է :

Հ . Երբոր Եսայի մարգարէն Տէրը իր ա-
 թողին վրայ նստած՝ ու հրեշտակներուն իրեն
 երկրպագութիւն ընելը տեսաւ, անոնք
 ինչ կը կանչէին մէկզմէկու :

Պ . » Սուրբ, սուրբ, սուրբ, Օջորութեանց
 Տէրը, Լեցուն է իր փառքովը բոլոր երկիրը » :
 Եսայ . Զ . 1—4 : Յայտ . Դ . 8 :

Հ . Ընիրաւութիւն մը կայ Աստուծոյ քով :

Պ . Չէ՛ . ոչ մեղք, ոչ անօրէնութիւն և ոչ
 անիրաւութիւն : Սաղմ . ՆԺԵ . 6 : Եսայ . ԽԴ .
 15 : Քործ . Դ . 14 : Յակ . Ե . 13—17 : Հատմ .
 Թ . 14 : Ե Յօհ . Ե . 5 :

է վերջի ժամանակը յայտնուելու . որ անով կ'ուրբ-
 խանաք : Ա Պեք . Ա . 5 :

Հ . Ի՞նչ տեսակ տեղ մըն է երկինքը՝ ուր որ Լստուած կը բնակի :

Պ . Սուրբ տեղ մըն է : Յայտ . ԻԵ . 10 , 27 : Ի՛ . 14 , 15 :

Ես բարձր ու սուրբ տեղը կը բնակիմ : Եայ . ԾԷ . 15 :

Հ . Ի՞նչ կ'ընէ Լստուած չարերը :

Պ . Կատէ զանոնք : Սաղճ . Ե . 4 , 5 : ԺԵ . 5 , 7 : ԼԻ . 16 : ՅԻԲ . ԺԵ . 14—16 :

Հ . Ի՞նչ կ'ընէ Լստուած արդարները :

Պ . Կը սիրէ զանոնք : Սաղճ . ԺԵ . 7 :

Հ . Թէ որ մենք սուրբ չըլլանք, Լստուած մեզ երկինքը սխտի ընդունի :

Պ . Չէ :

Եւ հոն բնաւ անմաքրութիւն մը սխտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու ստուութիւն գործող մը : Յայտ . ԻԱ . 27 :

Հ . Լստուած մեր սուրբ ըլլալուն յիշատակին հ'ըսէ մեզի :

Պ . « Սուրբ եղիք, քանզի ես սուրբ եմ » : Ե. ՊԵՊ . Ե . 15 , 16 : ՂԽՊ . ԺԹ . 2 :

Հ . Ի՞նչ բանի պարտինք հետեւիլ՝ թէ որ Տէրը տեսնել ուզէնք :

Պ . « Սրբութեան » :

Խաղաղութեան ետեւէ՛ եղիք ամէնուն հետ՝ և սրբութեան, որ առանց ասոր մէկը սխտի չտեսնէ Տէրը : ԵԲԲ . ԺԲ , 14 : Ինչպէս որ ձեր անդամները անօրէնու-

Թեան համար ընծայեցիք՝ պղծութեան և անօրէնութեան ծառաներ ըլլալու, անանկ ալ հիմա ձեր անդամները սրբութեան համար ընծայեցէք՝ արդարութեան ծառաներ ըլլալու : Հռովմ. Զ. 19 :

Աստուած սուրբ է. Իր բնութիւնը իսկապէս սուրբ է. իր սրբութիւնն է իր փառքը. Ինքը անհուն մաքրութիւն է բոլոր իր խորհուրդներուն և խօսքերուն ու ճամբաներուն մէջը : Ինքը կ'ատէ մեզքը մեծ ատելութիւնով :

Ա. Թէ որ Աստուած սուրբ չըլլար, իր ստեղծուածներուն սիրոյն արժանի չալիտի ըլլար :

Բ. Ինքը կը սիրէ արդարները. Ինքը պիտի հոգայ անոնք, ու երկինքին մէջ իր առջևը տեղ պիտի տայ անոնց :

Գ. Ինքը կ'ատէ չարերը, և պիտի կորսնցունէ զանոնք. վայ իր սրբութիւնը արհամարհողներուն. Թող մարդ չյուսայ թէ իր մեղքերուն մէջ առաջ երթալով՝ զ'Աստուած պիտի տեսնայ խաղաղութեամբ :

Դ. Ուրեմն բնաւ մենք չենք կրնար երջանիկ ըլլալ, ոչ ալ Աստուծոյ շնորհքը առնելու յուսալ : Թէ որ չգազարինք մեղքէն ու սրբութեան չհետեւինք : Մեր սրբութիւնը իր օրէնքին հնազանդիլն է, խորհրդով խօսքով և գործով : Ու առ սրբութիւնը Տէրօջմէն կը ստանանք (ա) :

(ա) . Ո՛վ Աստուած՝ իմ մէջս մաքուր սիրտ ստեղծ

Տ . Աստուած բարի ու ողորմած է :

Հ . Միայն ո՞վ բարի է :

Պ . Աստուած միայն կատարելապէս բարի է ինքիւրմէն , և բարի կ'ընէ մեզի ու ամէն աշարածներուն : Սաղմ . Ն'ժ'ժ . 68 : Սափ . ժ'ժ . 17 : Ե Սափ . ժ'ժ . 34 : Եւեղ . Լ' . 6 :

Հ . Իսկ ինձի Աստուծոյ քեզի ըրած բարիքներուն մէկ քանին :

Պ . Աստուած ինքը կու տայ մեզի հայր ու մայր , ուտելիք ու խմելիք , և հազնելու լաթեր . և երբոր մենք հիւանդ ըլլանք՝ ինքը մեզ կ'առողջացունէ :

Հ . Ասոնցմէ պինտ աւելի մեծ բարութիւններն ալ չընէր Աստուած :

Պ . Այո՛ . Աւետարանը տարածուած երկրի մէջ մեզ կը բնակեցունէ , և մեզի իր սուրբ

ծէ , և իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ՛ : Իս երեսէդ մի՛ ձգեր , ու քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի՛ հաներ : Սաղմ . ԾԱ . 10—12 : Բայց որոնք որ զինքը ընդունենցին , անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու , որոնք կը հաւատան իր անուանը . որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ՛՝ ոչ ալ մարդու կամքէ , հապա Աստուծմէ ծնան : Յօ4 . Ա . 12, 13 : Իր ուղեւորը մեզ ծնաւ ճմարտութեան խօսքովը որ մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք : Յա՛ . Ա . 18 :

պատգամը կու տայ :

Հ . Աստուծոյ մեզի ըրած բարեբարութիւնն
ներուն մենք արժանի ենք :

Պ . Չէ :

Հ . Ինչո՞ւ համար :

Պ . Ինչու որ իրեն դէմ մեղանչեցինք :

Հ . Մեզի մեղաւորներուս համար Աստուած
ի՞նչ ամենամեծ բան ըրաւ՝ որ կը ցուցնէ թէ
ինքը ոչ միայն բարի է, այլ նաև ողորմած :

Պ . Ինքը իր Որդին մեզի համար մեռնելու
խրկեց : Ե. Յօհ. Գ. 9, 10 :

Հ . Աստուած՝ որ մեզի հետ բարի ու ու
ղորմած կերպով վարուեցաւ՝ ի՞նչպէս կը
պատուիրէ մեզի իրարու հետ վարուիլ :

Պ . Մենք ալ իրարու հետ բարի ու ողոր-
մած կերպով վարուելու ենք : Մատթ. Ե. 44 :

Գթած եղիք՝ ինչպէս որ ձեր հայրն ալ գթած է : Դու. Ե.
2. 36 : Ուրեմն դուք կատարեալ եղիք՝ ինչպէս որ ձեր
երկնաւոր հայրն ալ կատարեալ է : Մատթ. Ե. 48 :

Հ . Աստուծոյ բարութիւնն ու ողորմութիւ-
նը մեզ ի՞նչ բանի կ'առաջնորդէ :

Պ . « Ապաշխարութեան » .

Անոր անցալի քաղցրութիւնը՝ և համբերութիւնն ու եր-
կայնամտութիւնը կ'արհամարհեն, չգիտնալով որ Աստու-
ծոյ քաղցրութիւնը քեզ գէպի ապաշխարութիւն կ'ա-
ռաջնորդէ : Հո. Ե. 6. 4 :



05-5567

Աստուած բարի է , և բարի կ'ընէ . երկինքն ու երկիրը լեցուն են իր բարութիւնովը . ամէն կենդանիները կը վայելեն իր բարութիւնը : Թռչունները , անասունները , ձուկերը , ճճիները , սողունները իր առատակց ձեռքովը կը կերակրին : Ինքը քաղցր խնամքով հոգ կը տանի անոնց ամենուն (ա) : Սաղմ . Ծ՛Դ . 19—30 : Յոբ . 1, Լ . 41 :

Մենք զԱստուած բարկացուցինք մեր վրայ՝ իրեն դէմ մեք գործելովնիս , անանկ որ արժանի չենք իր բարութեանը : Ուստի մեզի ըրած բոլոր իր բարութիւնները ողորմութիւն է . իր ողորմութիւնն է որ մենք կ'ազրկինք ու կը տեսնենք արեգակին և լուսնին զուարճակ լոյսը , և կը վայելենք գարունը՝ երբոր ծառերը ու խոտերը կը կանանչնան . ամառը՝ երբոր կ'ուտենք գէղեցիկ պտուղներ . աշունը՝ երբոր կը ժողվենք ցորենը . և ձմեռը՝ երբոր կը տաքնանք կրակին տաքութիւնովը : Իր ողորմութիւնն է որ մենք հայր ու մայր ունինք , ուտելիք ու խմելիք , մէջը բնակելու համար տուներ՝ և հագնելու լաթեր :

Իր ողորմութիւնն է որ մենք երբոր հիւանդ ըլլանք , մեզ կ'առողջացունէ . և երբոր մենք յիասուելու կամ սպաննուելու վտանգին մէջն ըլլանք , ինքը մեզ կ'ազատէ :

(ա) . Ամէնուն աչքերը քեզի կը սպասեն . ու ժամանակին անոնց կերակուրը դուն անոնց կու տաս : Քու ձեռքը կը բանաս , ու ամէն կենդանիին փափաքը կը լեցնես : Սաղմ . Ծ՛ԽԵ . 15 , 16 :

Ամէն բանէն աւելի իր ողորմութիւնն է որ իր Որդին մեզի համար մեռնելու խրկեց . և որ մենք կը բնակինք անանկ երկրի մը մէջ՝ ուր որ Յիսուս Քրիստոսի Աւետարանը գիտցուած է ու կը քարոզուի . քանզի տակաւին միլիոնաւոր մարդիկ կան որ Աւետարանը չունին և չեն գիտեր : Բայց մենք ունինք Աստուածաչունչը, եկեղեցիներ, Կիրակին, Քրիստոնէական դիրքեր, և բոլոր ան բաները որ հարկաւոր են մեր հոգիներուն փրկութեանը համար :

Ա . Պէտք է մեզի որ զգանք մեր մեղանշականութիւնը ու անարժանութիւնը, և փառաբանենք զԱստուած մեզի ցուցուցած բոլոր իր ողորմութիւններուն համար : Թէ որ Աստուծոյ ողորմութիւնը չըլտար, չէինք կրնար ասլրիլ՝ աշխարհն ալ չէր կենար : Սողմ . ՃԳ . 4 :

Բ . Եւ պէտք է որ իր ողորմութիւնը մեզ ասպշխարութեան առաջնորդէ : Հռոմ . Բ . 4 :

Բայց մենք մեր կենացը մէջ ո՞րչափ ատեն Աստուծոյ ողորմութիւնը չարաչար գործածեցինք ու իր Որդին անարգեցինք : Ասանկ կենցաղավարութիւն ունենալէն աւելի ուրիշ ի՞նչ բան կրնայ ցուցնել մեր սիրտերուն խորունկ չարութիւնը :

Չար կերպով գործածուած ողորմութիւնը աւելի սոսկալի բարկութիւն կը բերէ մեր վրայ : Մաթթ . ԺԱ . 21—24 : Ուրեմն շուտ ասպշխարութիւնով Աստուծոյ հետ հաշտութիւն խնդրելու ենք իր Որդիին միջնորդութիւնովը :

Գ . Մենք պարտինք ողորմած ըլլալ, ինչպէս որ Աստուած ողորմած է իր ամէն արարածներուն :

Մեկը պարտինք սնուցանել և հոգ տանել մեր բուրբութիւնը եղած բոլոր արարածներուն . մեզք է բուն մեր զուարճութեանը համար անոնք մեռցունել, անօթի կամ ցուրտ պահելով սասկեցունել, ծեծել, չարջորկել, չափէն աւելի աշխատցունել, կամ անոնցմէ մէկը տանջել : Ատուած ասեզօնց անոնք, և մեզի պէս անոնք ալ զգացում բանին (ա) :

Եւ պարտինք իրարու ողորմած ըլլալ, մեզի դէմ եղած անիրաւութիւնները ներելով, անիծողը օրհնելով, ատելութեան փոխարէն սեր՝ չարին փոխարէն բարի հատուցանելով . ամէնուն բարերար ըլլալով և մանաւանդ խեղճերուն, հիւանդներուն, անօղնականներուն, տառապեալներուն : Մարթ. Ե . 7 : Հոռով . ԺԲ . 17—21 : Մարթ . Ե . 43—44 : Յակ . Բ . 13—16 :

6 . Ատուած արգար է :

Նոնոր . ԺԹ . 1—28 :

Հ . Երբոր արդարները կը մեռնին, ուր կ'երթան :

Պ . Երկինք :

(ա) . Երգարը իր անասուններուն կենացը համար հոգ կը տանի . բայց ամբարիշտներուն սպիւրները անողորմ են : Առաջ . ԺԲ . 10 :

Հ . Իսկ չարերը ո՛ւր կ'երթան :

Պ . Դժոխք :

Հ . Ո՞վ կը խրկէ զանոնք հոն :

Պ . Ըստուած :

Հ . Ըստուած անհնուն Դատաւորն է, և միշտ ինչ որ իրաւ ու արդար է՝ ան պիտի ընէ :

Պ . Հրամե՛րես :

Քան լնցի քեզ աստնկ բան ընելը՝ որ արդարը ամբարշտին հետ մեռցնես, ու արդարը ամբարշտի պէս ըլլայ . քան լնցի քեզ . միթէ բոլոր երկրին Դատաւորը արդարութիւն պիտի չընէ՞ : Ծննդ . ԺԼ . 28 : Ինչու որ կու գայ երկիրը դատելու . պիտի դատէ աշխարհքը արդարութիւնով, ու ժողովուրդները իր շնամարտութիւնովը : Սողմ . ՂԶ . 13 :

Հ . Ըստուծոյ ամէն մարդ վարձատրելունս վրայով ինչպէս կ'ըսէ սուրբ Գիրքը :

Պ . « Ըմէն մէկուն իր գործքերուն համեմատ հատուցում պիտի ընէ » : Մատթ . ԺԳ . 27 : Ե կորնթ . Գ . 8 : Ի Մնաց . ԺԺ . 7 :

Հ . Ի՞նչ ըրաւ Ըստուած ան հրեշտակներուն՝ որ մեղանչեցին երկինքին մէջը :

Պ . Դժոխքը ձգեց զանոնք :

Վասն զի թէ որ Ըստուած մեղք գործող հրեշտակներուն չննայեց, հասաւ խաւարի կապերով տարտա-

ըստ ձգտած՝ դատաստանի սլահել տուաւ : Բ Պէք • Բ • Զ :

Հ • Ի՞նչ ըրաւ Աստուած հին աշխարհի մեղաւորներուն :

Պ • Զըհեղեղով խղզեց զանոնք : Սինդ • Բ, 1: Գլուխները :

Հ • Ի՞նչ ըրաւ Սողոմ Գոմոր չար քաղաքները :

Պ • Կրակով ու ծծմբով այրեց զանոնք : Սինդ • ԺԹ :

Հ • Ի՞նչ կը սորվինք աս ամէն բաներէն :

Պ • Աս ամէն բաներէն կը սորվինք թէ Աստուած անշուշտ պիտի պատժէ չարերը :

Անորէնները թէև ձեռք ձեռքի տալով միաբանին, անսպասիւթ պիտի չմնան : Առակ • ԺԱ • 21 :

Հ • Աստուած ո՞ր մարդը փրկեց տապանով՝ երբոր հին աշխարհը կորսնցուց :

Պ • Արդար՝ Նոյը :

Հ • Աստուած ո՞ր մարդը փրկեց երբոր Սողոմ ու Գոմոր քաղաքները այրեց :

Պ • Արդար՝ Ղուտը :

Հ • Ի՞նչ կը սորվինք ասկէց :

Պ • Ասկէց կը սորվինք թէ ինքն անշուշտ պիտի փրկէ արդարները :

Հ • Կրնայինք Աստուած սիրել ու իրեն ապակնիլ՝ թէ որ ինքը ամէն բան իրաւունքով ու արդարութեամբ ջննէր :

Պ • Չէ՛ :

Հ • Թե՛ որ Աստուած՝ միշտ ինչ որ իրաւ ու արդար է ան կ'ընէ, մեզմէ ալ ի՛նչ ընել կը պահանջէ :

Պ • Ինչ որ իրաւ՝ ու արդար է :

Ուստի ամէն ի՛նչ որ կ'ուզէք՝ որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք • քանզի աս է օրէնքն ու մարգարէները : Մատթ. • Է • 12 :

Հ • Թե՛ որ մէկը անիրաւութեամբ վարուի մեզի հետ ու զրկանք մը ընէ, որո՞ւն նայելու ենք, և մեզի օգնելու համար ո՞վ կանչելու ենք :

Պ • Աստուծոյ դիմելու ենք :

Բայց ինձի ասիկայ ոչինչ բան մըն է, որ ձեզմէ դատուիմ՝ կամ մարդոց դատողութենէն, մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ դատեր • (վասն զի ես իմ անձիս վրայով չար գործ մը չեմ գիտեր • բայց չէ՛ թէ ասով կ'արդարանամ •) հասա զիս դատողը Տէրն է : Ուրեմն ժամանակէն առաջ դատողութիւն մի՛ ընէք, մինչև որ դայ Տէրը՝ որ խաւարին դաղտնիքը 'ի լոյս պլիտի հանէ, ու սրտերուն խորհուրդները յայտնի պլիտի ընէ • և ան ատենը ամէն գովութիւնը Աստուծոմէ պլիտի ըլլայ : Ա Կորնթ. • Դ • 3—5 : Որ կը նախատուէր, և փոխարէնը չէր նախատէր • կը չարչարուէր, ու սպառնալիք չէր ընէր • հասա ինչպէս արդարութեամբ դատողն կը յանձէր : Ա Պետ. • Բ • 23 : Չարութեան փո-

խարէն մէկուն չարութիւն մի հատուցանէք • ամէն մարդոց առջևը բարի բաներ ընելու հոգ տարէք : Որչափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք • Սիրելիք , վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար , հասլա բարկութեան տեղ տուէք • Խնջու որ գրուած է • Վրէժխնդրութիւնը իմս է • Ես պիտի հատուցանեմ՝ կըսէ Տէրը : Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց տուր անոր , և թէ որ ծարաւի է՝ ջնջու տուր անոր • քանզի աս ընելով՝ անոր դիտուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես : Չարէն մի յաղթուիր , հասլա բարիով յաղթէ չարին : Հոով՝ Երեմ. 17 — 21 :

- Հ • Ի՞նչպէս պէտք է սիրել զՄատուած :
 Պ • Մէկք պարտինք սիրել զՄատուած մեր բոլոր սրտովը , միտքովը և զօրութիւնովը :
 Հ • Ի՞նչպէս պէտք է սիրել մեր ընկերը :
 Պ • Պարտինք սիրել մեր ընկերը մեր անձին պէս :

Աստուած արդար է • անկարելի է որ Աստուած անանկ բան մը ըսէ կամ ընէ որ իրաւ ու արդար չըլլայ : Իր արարածները կառարեալ արդարութեամբ կը դատէ : Ինքը մէկ մեկք մը պիտի չձգէ առանց դատելու • Ինքը մէկու մը աջառութիւն պիտի չընէ • ո՛չ պղտիկի , ո՛չ մեծի , ո՛չ արուի ո՛չ ալ կզի , ո՛չ հա-

բուստի ո՛չ ալ աղքատի, ո՛չ ծառայի ո՛չ ալ ազատի, ո՛չ խմատունի ո՛չ ալ յիմարի, ո՛չ հրեշտակի ո՛չ ալ մարդու: Ինքը պիտի քննէ և յայտնէ ամէն սրտերուն գաղտնիքները, ու պիտի վարձատրէ ամէն մարդուն իր դործքերուն պէս: Ամէն մարդուն պիտի ըլլայ անաչառ քննութիւն և արդար դատաստան:

Ա. Ուրախացէք Աստուծոյ արդարութեանը համար, քանզի ամէն բան ուղիղ պիտի երթայ վերջը: Արգարները պիտի վարձատրուին և չարերը պիտի պատժուին: Սաղմ. ՀԳ: Առաջ. ԺԱ. 21: Բ. Պէտ. Բ. 4—9: Եւ երբոր խստութեամբ ու անիրաւութեամբ վարուելու ըլլան մեզի հետ, մեր պարտքը Աստուծոյ արդար դատաւորին նայիլն է մեզ պաշտպանելու համար, և ինքը անշուշտ այնպէս պիտի ընէ (*):

Բ. Մենք պէտք է որ դողանք արդար Աստուծոյ առջև. մենք ամէնքս մեղաւոր չենք. մեր մեղքերը արդարապէս պատժուելու արժանի չեն. ինչպէս պիտի ազատինք անկէջ՝ միայն Յիսուս Քրիստոսով: Ինքը կը վճարէ Աստուծոյ մեր մեղքերուն համար, ու Աստուած կը ներէ մեզի իրեն համար: Բայց թէ որ մենք չհաւատանք Յիսուսին՝ թէպէտ կարելի է որ անպատիժ մնանք աս աշխարհիս մէջ, բայց անշուշտ պիտի տատժուինք դալու աշխարհին մէջ: Հռովմ. Գ. 20—26: Ա Յօ4. Ա. 9: Սաղմ. ՃԼ. 3, 4:

(*) Եւ սեղանէն լսեցի՝ որ կ'ըսէր. Այո՛ Ամենակալ Տէր Աստուած, քու դատաստաններդ արդար ու ճշմարիտ են: Յայտ. Ժ. 2. 7:

Գ . Ինչպէս որ Աստուած արդար է , մեզմէ ալ ա-
նանկ արդար ըլլալ կը պահանջէ : Պէտք է որ արդար
ըլլանք առ Աստուած . իր սուրբ անունին արժան է-
լած փառքը տալով , սիրելով ու պաշտելով զինքը բո-
լոր սրտով , միաքով ու զօրութիւնով : Պէտք է որ
արդար ըլլանք առ մարդիկ ամենուն մեր պարտաւո-
րութիւնը կատարելով : Սիրէ՛ քու ընկերդ քու ան-
ձիդ պէս : Մատթ . Ի . 12 : Հուսի՛ճ . ԺԳ . 8—10 : Ա Կո-
րնթ . Զ . 8—10 : Նաև պէտք է որ արդար ըլլանք դէ-
պի մեր անձին : Առաջ մեր խիստ լաւ օգտաւը խընդ-
րելով այսինքն մեր անմահ հոգիներուն փրկութիւնը (ա) :



7 . Աստուած ճշմարտութեան Աստուած է :

Գործ . Ե . 1—10 :

Հ . Ըստուած ճշմարտութեանն Ըստուած
է ու միշտ ճշմարտութիւնը կը խօսի :

Պ . Հրամարեա : Ի Օրէն . 1, Ի . 4 : Սաղմ .
ԶԳ . 15 :

(ա) Բայց առաջ ինդրեցէ՛ք Աստուծոյ թաղաւորու-
թիւնը և անոր արդարութիւնը , ու ատ բոլոր բաներն
ալ ձեզի պիտի տրուի : Մատթ . Զ . 33 : Ինչու որ մար-
մինին վարժութիւնը քիչ բանի օգտակար է , բայց Աս-
տուածպաշտութիւնը ամէն բանի օգտակար է , որ թէ՛
ներկայ և թէ՛ ապառնի կենաց խոստմունքն ունի : Ա
Տիմ . Գ . 8 :

Հ . Ի՞նչ կ'ըսուի Աստուծոյ անսուտ ըլլալուն վրայով :

Պ . « Անկարելի է Աստուծոյ սուտ զրուցել » :

Որ երկու անփոփոխելի բաներով՝ որոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ զրուցել, հաստատուն մխիթարութիւն ունենանք մենք՝ որ ապաստանեցանք առջնինս դրուած յոյսը ամուր բռնելու : Երբ . Զ . 18 : Յաւիտեանական կենաց յուսովը, որ ինքը անսուտ Աստուծը խոստացաւ յաւիտեանական դարերէն առաջ : Տէր . Ա . 2 : Սակայն Աստուած ճշմարիտ թող ըլլայ, և բոլոր մարդիկ՝ սուտ . ինչպէս որ դրուած է . Որ քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, և դատուելու ատենդ դուն յաղթես : Հով . Գ . 4 :

Հ . Ի՞նչ է ան պատուիրանքը որ մեզի կ'ըսէ, « Ատութիւնը մէկդի ձգելով » :

Պ . « Ուստի ստութիւնը մէկ դի ձգելով, ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ » : Երբ . Գ . 25 : Գ . 14 : Կող . Գ . 9 :

Հ . Ի՞նչ կ'ըսուի սուտ խօսող շրթունքներուն վրայով :

Պ . « Սուտ շրթունքը Տէրոջը զգուելի է » : Երբ . Ժ . 22 :

Հ . Եւ ի՞նչ կ'ըսուի սուտ խօսող լեզուին վրայով :

Պ . « Սուտ շրթունքը Տէրոջը զգուեղի է » :
 Լւսաւի . ԺԻ . 22 : Բ . 16, 17 :

Հ . Ո՛րոնք էին՝ սուտ մը զըուցեղնուն հա-
 մար՝ մահոյլ պատժուողները :

Պ . Լնանիան ու իր կնիկը Սափիրան : Գործ .
 Ե . 1—10 :

Հ . Կրնա՞նք սուտ մը զուրցել ու Լսա-
 ուած չգիտնայ անիկայ :

Պ . Չէ՛ :

Հ . Բոլոր սուտ խօսողները , իրենց բա-
 ժինը ո՛ւր պիտի ունենան :

Պ . « Կրակով ու ծծումբով վառած լճին
 մէջը » : Յայտ . ԻՆ . 8, 27 : ԻԲ . 15 :



Աստուած Ճշմարտութեան Աստուած է . անկարելի է
 իրեն որ սուտ խօսի , հիմա ինքը չխօսիր մեզի երկին-
 քէն : Առաջուց կը խօսէր . և իր մեզի ըսելու ամէն
 բաները , այսինքն իր պատգամները , պատուիրաննե-
 րը , խտասմունքները , սպառնալիքները Աստուածաշունչ
 չին մէջը կը դռնենք , այսինքն՝ Աստուծոյ Գրքին մէջ ,
 որն որ բոլոր ուրիշ գրքերէն պիտո շատ վեր է , և է
 Գիրք Ճշմարտութեան :

Ա . Մենք բնականաբար հակամիտեալ ենք Աստուծոյ
 Հաւատաւու . և թէպէտ կ'ըսենք որ կը հաւատանք ի-
 րեն , բայց անանկ կը շարժինք՝ որպէս թէ իր ըսածը

սուտ էր . աս է Աստուած սուտ զրուց ընելը և իր բարկութիւնը մեր վրայ բերելը :

Բ . Մենք մեր թերահաւատութեանը վրայ սուգ ընելու ենք . և աղաչելու ենք Աստուծոյ որ տայ մեզի հաւատացող սիրտ մը , որ լսենք ու հնազանդինք իր ձայնին : իր խօսքերուն ապաւինելու ենք . եթէ ինքը ըսէ որ երկինք ու դժոխք կան , կան ուրեմն երկինք ու դժոխք . եթէ ինքը ըսէ մեզի , թէ՛ անոնք որ կ'ապաշխարեն ու կ'ը հաւատան՝ պիտի վրկուին . և անոնք որ չեն ապաշխարեր ու չեն հաւատար՝ պիտի կորսուին , անանկ պիտի ըլլայ . վերջապէս ինչ որ ըսէ ինքը՝ ճշմարիտ է . ուրեմն մեր պարտքը ու մեր օգուտն է մըտիկ ընել ու հնազանդիլ իր խօսքին :

Գ . Աստուած կը պահանջէ մեզմէ ճշմարիտ ըլլալ խօսքի ու գործքի մէջ՝ ինչպէս որ ինքն անանկ է :

Կախ՝ ճշմարիտ ըլլալ մեր երկրպագութեանը և Աստուծոյ պաշտօնին մէջ : Երբոր մենք իր պաշտօնին մէջ ճշմարիտ ըլլանք , ինքը կ'ուրախանայ մեր վրայ , և մենք կրնանք ինքզինքնիս իր հաւատարիմ՝ պահպանութեանը յանձնել (ա) :

Երբոր ճշմարիտ չըլլանք , ինքը մեզի ստախօսներու և կեղծաւորներու ու անհաւատներու պէս կը նայի որ լի-

(ա) Տէրը մօտ է ան ամենուն՝ որ զինքը կը կանչեն , ան ու մենուն որ ճշմարտութեամբ զինքը կը կանչեն : Սող. ՃիսԵ . 18 : Ուստի անոնք որ Աստուծոյ կամացը համեմատ կը չարչարուին , բարիք գործելով իրենց հոգիները թող անոր յանձնեն , իբրև հաւատարիմ Ստեղծողին : Ա Պէ* . Գ . 19 :

Ճին մէջը սլատժուելու համար սլատրաստուած են (ա) :

Երկրորդ՝ մեր բողոքակիցը եղած ամենուն հետ ճշմարիտ ըլլալու ենք . ստախօսը գէշ անձ է՝ որ անիկայ Աստուած ալ կ'ատէ , մարդն ալ : Սուտղրուցին վերջը միշտ գէշ է : Սատանան է սուտը և ստուգեան հայրը (բ) : Շատ ապահով ու լաւ է ձեզի որ միշտ ճշմարիտ խօսիք ամէն բանի մէջ (գ) : Թէ որ յանցանք մը ընես կամ ուրիշներուն յանցանք ընելը տեսնես , անոր վրա յով շիտակը ըսէ : Թէ որ բան մը խոստանաս , կատարէ անիկայ . թէ որ բան մը պարտք ունիս , վճարէ անիկայ . թէ որ մէկէն բան մը կ'ուզես , խնդրէ անիկէց . ուզիլը լեզուի պէս ուզիլ ձեռք ունեցիր . սուտղրուցները Աստուծոյ արքայութիւնը չեն կրնար մտնել . անոնք թշուառաբար պիտի կորսուին :

(ա) . Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես երիկամունքներու մէջ , ու ծածուկ քէշը խմատութիւն ոլխի գիտցունես ինծի : Սաղ . ԾԱ . 6 : Թէ որ ըսենք թէ անոր հետը հաղորդութիւն ունինք , ու խաւարի մէջ պարտինք , սուտ կը զրուցենք՝ և ճշմարտութիւնը չենք ընէր : Ա Յօ 4 . Ա . 6 : Ան որ կ'ըսէ՝ թէ Ես անիկայ ճանչցայ , ու անոր սաստուիրանքները չարահեր , ստախօս է , և անոր մէջը ճշմարտութիւն չկայ : Ա Յօ 4 . Բ . 4 :

(բ) . Դուք ձեր հօրմէն սատանայէն էք , ու ձեր հօրը բաղձանքը կ'ուզէք ընել . անիկայ սկիզբէն հետէ մարդասպան էր , և ճշմարտութեան մէջ չկեցաւ , ինչու որ անոր ներսի դին ճշմարտութիւն չկայ . երբոր անիկայ ստուգեան խօսի , բուն իրեններէն կը խօսի . քանզի անիկայ ստախօս է և անոր հայրը : Յօ 4 . Ը . 44 :

(գ) . Ճշմարտախօս չթուանքը միշտ հաստատ կը մընայ . բայց ստախօս լեզուն վայրկեանական է : Առաջ . ԺԲ . 19 :

Գ . Սուրբ Երրորդութեան վրայ :

Սասն . ԻԸ . 1—20 :

Հ . Քանի՞ Մատուած կայ :

Պ . Կայ միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Մատուած մը : Ի Օրհն . Թ . 4 : Եսայ . ԽԴ . 6, 8 : Ե Կորնթ . Ը . 4 :

Հ . Քանի՞ անձինք կան Մատուածութեան մէջ :

Պ . Իրեք :

Հ . Ի՞նչ են անոնց անունները :

Պ . Հայր , Արդի , և Սուրբ Հոգի : Սասն . ԻԸ . 19 : Ե Կորնթ . ԺԳ . 13 :

Հ . Ես իրեք անձինքը միայն մէկ Մատուած են :

Պ . Հրամարես . միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Մատուած են :

Հ . Ի՞նչպէս ստուգիւ գիտենք ասիկայ :

Պ . Մատուածաշունչը ասանկ կ'ըսէ մեզի :

Հ . Սեր Փրկիչը ի՞նչպէս մկրտել պատուիրեց Մաքեալներուն , և անոնցմէ ետքը եղած բոլոր պաշտօնեաներուն :

Պ . « Յանուն Հօր , և Արդւոյ , և Հոգւոյն Սրբոյ » :

Հ • Ինչո՞ւ աս անուններով մկրտուելու ենք , ու անոնց երկրպագութիւն և պաշտօն մատուցանելու ենք :

Պ • Քանզի ան իրեք անձինքը միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած են : Մ. Զօհ . Ե . 7 :

Հ • Մեր Երկնաւոր Հայրը ի՞նչ ըրաւ մեզի համար :

Պ • Իբր Որդին մեզի համար մեռնելու խրոկեց :

Հ • Որդին ի՞նչ ըրաւ :

Պ • Որդին՝ մեռնելով խաչին վրայ մեր մեղքերուն հատուցումը ըրաւ , և հիմա իբր Հօրը աջ կողմը նստած անդադար թարեխօսութիւն կ'ընէ մեզի համար :

Հ • Սուրբ Հոգին մեզի համար ի՞նչ կ'ընէ :

Պ • Մեր սիրտերը կը փոխէ , և մեզ երկինքին համար կը պատրաստէ :

Կայ միայն մէկ Աստուած Ստեղծիչ երկնի և երկրի • և Աստուածութեան մէջ իրեք անձինք կան • Հայրը , Որդին և Սուրբ Հոգին • աս իրեքը մէկ Աստուած են • «նոյն են էութեամբ , հաւասար են զօրութեամբ և փառօք » : Ասկէց զատ ուրիշ Աստուած մը չկայ : Ասիկայ

գիտենք, ինչու որ բուն Աստուծոյ խօսքէն ասանկ
կը սորվինք :

Ա . Անոնք որ Աստուծոյ Բանը չունին՝ իրենց տգիտութիւնովը և չարութիւնովը կը կարծեն որ շատ աստուածներ կան, և իրենք կուզէր կը շինեն ու անոնց երկրպագութիւն կ'ընեն : Աղօթենք Աստուծոյ որ խրկէ անոնց Աստուածաշունչը, որ մէկ դի ձգեն իրենց սուտ աստուածները, և սիրեն ու պաշտեն ճշմարիտ Աստուածը :

Բ . Կան ոմանք ալ որ Աստուծոյ խօսքերը ունին, բայց շիտակ չեն հասկընար և չեն ուզեր շիտակ հասկընալ . անոնք կ'ըսեն թէ Աստուածութեան մէջ իրէք անձինք չկան : Անոնք կործանեալ սխալի մէջ են, և մենք աղօթելու ենք Աստուծոյ որ իր Բանը լսելու պիտա աղէկ խմացողութիւն տայ անոնց :

Գ . Որովհետեւ միայն մէկ Աստուած կայ, պարտինք երկրպագութիւն չընել և չծառայել ուրիշ մէկու մը Աստուծոյ պէս . և Աստուծոյ տեղը՝ հրեշտակի մը՝ կամ մարդու մը՝ և կամ ուրիշ ստեղծուածի մը երկրպագութիւն ընելը, կամ աղօթելը, կամ հնազանդելը, դատապարտելի մեղք մըն է :

Դ . Մենք պարտինք երկրպագութիւն ընել և պատուել Հայրը և Որդին և Սուրբ Հոգին իբրև Աստուած, որ արժանի են հաւասար սիրոյ և օրհնութեան և փառաց : Ասկէ զատ ուրիշ կերպով չենք կրնար հաճոյալ կան երկրպագութիւն մատուցանել Աստուծոյ . բայց ասկէ բոլոր ուրիշ երկրպագութիւնները և բոլոր

կրօնքները սուտ և դատարի են :

Ե . Աստուածաշունչը կը սորվեցունէ մեզի՝ թէ միայն մէկ Աստուած կայ , և թէ՛ Աստուածութեան մէջ իրեք անձինք կան : Մենք բաւական չենք գիտեր աս ինչպէս ըլլալը խմանալու կամ՝ զրուցելու . մենք՝ տկար ու տգէտ արարածներս՝ որ ինքզինքնիս անգամ չենք գիտեր , այսինքն մեր հոգիներուն և մեր մարմիններուն ինչպէս մէկ տեղ միաւորած ըլլալը , արդեօք կրնանք խմանալ Աստուծոյ էութիւնը կատարելապէս : « Ահա Աստուած մեծ է և մենք զինքը չենք գիտեր » : Օրհնեալ ըլլայ իր սուրբ անունը , որ իր բնութեամբը և փառքովը բարձրացեալ է բոլոր իր արարածներուն գիտութենէն գեր ՚ի վերոյ , և ինքն անոնց Աստուածն ըլլալուն համար պէտք է որ ասանկ ըլլայ :

Զ . Երբոր մենք կը զգանք մեր տգէտ՝ մեղաւոր ու կորսուած արարածներ ըլլալը , որ կը բնակինք փորձութեան՝ ձախորդութեան՝ չարչարանաց ու մահուան աշխարհին մէջ , ան ատենը կ'խմանանք թէ մեր Աստուածը ճիշտ անանկ Աստուած մըն է որուն մենք կը կարօտինք :

Մենք Երկինքը հայր մը ունինք որ հոգ կը տանի , և դուրս ունի մեր վրայ՝ մեր ողորմելի վիճակին մէջ : Մենք Ամենակարող Փրկիչ մը ունինք որ հաճեցաւ չարչարուելու ու մեռնելու , Արդարը անարդարներուն համար : Եւ մենք Բարեշնորհ Սուրբ Հոգի մը ունինք որ անոր գործը մեզ մեղքէն մաքրել է , մեզ կեանքի մէջ քաջալերել ու մխիթարել է , և մեզ մահուան՝

գատատանին՝ և երկինքին համար պատրաստել է : Ալ
 Լինչ բանի կը կարօտինք : Ինքն է հոգիին հատուցանող
 բաժինը :

Այսպէս մենք Սուրբ Գիրքերէն կը սորվինք որ Աս-
 տուած Հոգի է , անմահ , ամէն տեղ ներկայ և ամէն
 բաները գիտցող , ամենակարող զօրութիւն ունի , մէկը
 չկրնար արգիլել զինքը իր կամքին բոլոր ուղածներն ը-
 նելէն . որ ինքը բարի ու ողորմած Աստուած է , ար-
 դար ու ճշմարիտ բոլոր իր խօսքերուն ու գործքերուն
 և ճամբաներուն մէջ . և թէ՛ Տէրը մէկ Աստուած մըն
 է , բայց իրէք անձինք ըլլալով Հայր , Որդի , և Սուրբ
 Հոգի , նոյն են էութեամբ , հաւասար զօրութեամբ և
 փառքով . և աս իրէքը մէկ Աստուած են :

Մ Ա Ս Ն Բ

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր Ո Ւ Ն Վ Ր Ա Յ

Ա . Բարի կրեշտակներուն Վրայ :

Ղ Դ Է Դ . Ժ Ե . 1—10 :

Հ . Ի՛նչ են բարի հրեշտակները :

Պ . Փառաւորեալ ու սուրբ էակներ :

Հ . Ո՞վ ստեղծեց անոնք :

Պ . Աստուած ստեղծեց : Կող . Ե . 15 , 16 :

Հ . Ո՛րչափ բարի հրեշտակներ կան :

Պ . Անթիւ բազմութիւնն են : Դանի . Ե . 9 ,
10 : Գ թափ . ԻԲ . 19 : Սաղմ . ԿԸ . 17 : Յայտ .
Ե . 11 : Եբե . ԺԲ . 22 : Սաար . ԻՊ . 53 : Գ շահ .
Բ . 13 :

Հ . Ո՛ւր տեղ է անոնց բնակարանը :

Պ . Երկինքը : Սաար . ԻԲ . 30 : Սարի . ԺԲ .
25 : Բ թես . Ե . 7 :

Հ . Ի՞նչ կ'ընեն Երկինքին մէջը :

Պ . Աստուած կը փառաբանեն և իր կամքը
կը կատարեն : Սաղմ . ՆԳ . 20 , 21 : Սաար .
Պ . 10 : Գ շահ . Բ . 13 , 14 : Յայտ . Ե . 11—13 :

Հ . Աստուած երբեմն անոնք աս երկիրը կը
խրկէ :

Պ . Հրամարես , մանաւանդ հին ատենները
չատ անգամ անոնց ձեռքը կը խրկէր իր պատ
դամները հին ատենի սուրբ մարդոցը :

Հ . Ի՞նչ դիտաւորութեան համար :

Պ . Բարի ընել անոնց՝ որ Աստուած կը սի
րեն : Եբե . Ե . 1 : Սաղմ . ԴԵ . 11 , 12 : Սաար .
ԺԸ . 10 :

Հ . Ի՞նչ էր ան հրեշտակին անունը՝ որն
որ Աստուած կոյս Սարիամին խրկեց , անոր
Յիսուսի ծննդեան աւետիսը տալու :

Պ . Քաբրիէլ : Ղ Դ-է . Ե . 11—38 :

Հ . Աստուած ուրիշ ինչ բանի համար երբեմն բարի հրեշտակները աշխարհ խրկեց :

Պ . Չար մարդիկները սլատժելու ու կորսնչուցունելու համար : Նոնի . ԺԹ . 1 : Դ Թափ . ԺԹ . 35 :

Հ . Ի՞նչ է ան չար թագաւորին անունը՝ որն որ Տէրոջը հրեշտակը զարկաւ, անանկ որ որդնալից եղաւ ու մեռաւ :

Պ . Հերովդէս : Գործ . ԺԲ . 21—23 :

Հ . Բարի հրեշտակները մեր փրկութեանը հոգ տանելնուն համար ինչ կ'ըսէ Սուրբ Գիորգը :

Պ . « Ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջևը մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ » : Ղ Դ-է . ԺԵ . 10 : Ե Պե՞ . Ե . 10—12 : Եփե՞ս . Գ . 10 :

Հ . Երբոր բարի մարդ մը մեռնի, ո՞վ անոր հոգին երկինք կը տանի :

Պ . Բարի հրեշտակները :

Հ . Ըն աղքատին անունը ինչ էր որ մեռաւ ու հրեշտակներուն ձեռքովը Աբրահամին գիրկը տարուեցաւ :

Պ . Ղ աղարոս : Ղ Դ-է . ԺԾ . 22 :

Հ . Պէտք է հրեշտակներուն աղօթել ու

անոնց երկրպագութիւն ընել ինչ և իցէ
կերպով :

Պ . Զէ՛ . քանզի մեծ մեղք է :

Ու ես Յովհաննէսս լսցի ու տեսայ աս բաները .
և երբ որ լսցի ու տեսայ , ինկայ որ երկրպագութիւն
ընեմ ան հրեշտակին ոտքերուն առջև՝ որ աս բանե-
րը ինծի կը ցուցընէր : Եւ ըսաւ ինծի . Զգուշացիր՝
մի ընէր . ինչու որ ես քուկին՝ ու քու եղբայրներուդ
մարդարէներուն՝ ու աս գրքիս խօսքերը պահողներուն
ծառայակիցն եմ : Յայտ . ԻԲ . 8 , 9 : Ես ալ անոր ոտ-
քերուն առջև ինկայ , որ անոր երկրպագութիւն ընեմ .
ու ըսաւ ինծի . Զգուշացիր՝ մի ընէր . ինչու որ ես ալ
քու ծառայակիցդ եմ՝ ու քու եղբայրներուդ՝ որոնք
Յիսուսի մկայութիւնը ունին . Աստուծոյ երկրպագու-
թիւն ըրէ : Յայտ . ԺԹ . 10 :

Հ . Բարի հրեշտակները պիտի դա՛ն Քրիստոսի
հետ՝ Դատաստանին մեծ օրը :

Պ . Հրամարեա : Մատթ . ԻԵ . 31 : Ի ԹԵՍ .
Ե . 7 , 8 : Ե ԹԵՍ . Դ . 15 : Յուդ . 14 :

Հ . Հրեշտակները մարմին ունին :

Պ . Զէ՛ . քանզի անոնք հոգիներ են , անտե-
սանելի և անմահ : Դ յաւ . ԻԴ . 39 : Կող . Ե .
16 : Մարկ . ԺԴ . 24 , 25 : Դ յաւ . Ի . 35 , 36 :

Հ . Պիտի տեսնենք ու գիտնանք և պիտի
սիրենք բարի հրեշտակները՝ թէ որ երկինք
երթանք :

Պ . Հրամեղեո : Աբր . ԺԻ . 22 : Ղ Դ-Է .
ԺԲ . 22 : Յայտ . Լ . 9—17 :

Հ . Բարի հրեշտակներուն քանի՞նք անուն
ները գիտենք, և ո՞վ են անոնք :

Պ . Արկուքին . Գաբրիէլի և Միքայէլի :
Դանի . Ը . 16 : Թ . 21 : Ղ Դ-Է . Ե . 19 , 26 :
Յայտ . ԺԻ . 7 :

Մարդոցմէ զատ՝ ուրիշ իմաստուն և հաշիւ տուող
Աստուծոյ ստեղծուածները կան, հրեշտակները : Բայց
թէ որ Աստուծոյ խօսքը չըլլար, բնաւ մենք բան մը պիտի
չգիտնայինք անոնց վրայով . ինչու որ մենք անոնք ո՛չ
կրնանք տեսնել, ո՛չ կրնանք լսել, ո՛չ ալ կրնանք
զգալ, որովհետեւ անոնք մարմին ու արիւն չունին մեզի
պէս, հասցա միայն հոգիներ են :

Անոնց վրայով ըսուած Աստուծոյ խօսքին նայելով,
բարի հրեշտակները պէտք է որ ըլլան՝ լեզուի պատ-
մել կրցածէն աւելի լուսափայլ ու գեղեցիկ, փառաւո-
րեալ ու երջանիկ : Անոնք սուրբ են, անոնք բնաւ
չմեղանցեցին, և բնաւ պիտի չմեղանցեն : Աստուած ա-
նոնք սուրբ վիճակի մէջ հաստատեց : Ա ՏԻԺ . Ե . 21 :
Անոնց բազմութիւնը անթիւ է, անոնց բնակարանը
Արկիներն է . անոնց գործը Աստուած փառաբանել և
իր կամքը ընել է : Անոնք Աստուծոյ հրամանովը եր-
կինքէն կ'իջնեն մարդոց ողորմութիւն կամ վրէժխնդրու-

Թիւն ընելու համար, և հոգի կամ փայլակի պէս չուտով կը շարժին: Անոնք շատ հոգ տանելով մեր փրկուածիւնը կ'ուզեն, և երկրպագութիւն կ'ընեն, Տէր Յիսուսին իր զարմանալի սիրոյն համար: Երբոր մեղաւոր մը կ'ապաշխարէ, երկինքը կը լեցուի անոնց ուրախութիւնովը: Ուրախութեամբ օգնութիւն կը հասնին Քրիստոսի աշակերտներուն, և անոնց բոլորովը կը հսկեն բարի ընելու համար. և երբոր մեռնին՝ հրեշտակները երկինքը կը տանին անոնք ցնծութեան ճայներով: Եւ վերջին մեծ օրը անոնք պիտի դան Տէր Յիսուսին հետը իր փառքովը, և աշխարհի դատաստանին վերջին սարսափելի գործին ներկայ պիտի դրուին:

Ա. Բայց մէկը թող չկարծէ որ մենք բարի հրեշտակներուն աղօթելու կամ երկրպագութիւն ընելու ենք: Ասիկայ հոգին կորսընցունող մեզք մը կ'ըլլայ ետքը. անոնք բնութեամբ աստուածներ չեն, հապա մեզի պէս արարածներ, թէպէտև աւելի փառաւոր: Աստուած ստեղծեց անոնք, և ինքն է որ անոնք կենդանի կը պահէ, և սուրբ ու երջանիկ վիճակի մէջ դրած է. և անոնք բան մը չեն կրնար ընել իրենց կամ մեզի համար առանց Աստուծոյ օգնելուն:

Բայց մենք պատուելու ենք անոնց սուրբ վարքը, և դժ ըլլալու ենք անոնցմէ՝ իրենց մեզի ցուցուցած բարեկամութեանը և մարդասիրութեանը համար: Ինչու որ անոնք կ'օգնեն Քրիստոսի ծառաներուն աս աշխարհիս մէջ, թէև մենք չենք կրնար տեսնել կամ դժալ անոնք:

Բ . Թէ որ անոնք այսչափ կը զբան՝ կամ մեր փրկողութեանը համար այսչափ ուրախութեամբ կ'աշխատին, մենք ալ զգալու և ջանք ընելու ենք ապահով ընել բուն մեր փրկութիւնը . և մեր կարողութիւնովը ամէն պէտք եղածը ընելու ենք, ուրախութիւնով ուրիշներուն փրկութիւնն ալ ապահով ընելու համար :

Գ . Եւ կատարեալ սիրոյ՝ ու Աստուծոյ հնազանդելու համար՝ մեզի օրինակներ են անոնք : Մենք ջանք ընելու ենք Աստուծոյ կամքը կատարել երկրի վրայ, ինչպէս որ երկինքը կ'ըլլայ անոնցմով . և ինչպէս որ անոնց սրբութիւնը երջանիկ կ'ընէ անոնք, նոյնպէս թէ որ մենք ալ սրբութեան հետեւինք, մենք ալ պիտի տեսնենք Աստուած և անոնց պէս երջանիկ պիտի ըլլանք Վրիստոսով :

Դ . Երկինքին մէջը մենք պիտի տեսնենք և գիտնանք ու սիրենք անոնք, և անոնց ընկերութիւնը պիտի աւելցունէ մեր ուրախութիւնը :

Բ . Չար հրեշտակներուն շրայ :

Ստաբլ . Դ . 1—11 :

Հ . Հրեշտակները բնաւ մեղանչեցին Աստուծոյ դէմ :

Պ . Հրամարեա, անոնցմէ ոմանք մեղանչեցին : Յոհ . 6 : Բ Պէտ . Բ . 4 :

Հ . Անոնք որչափ էին :

Պ . Շատ մեծ թուով :

Հ . Ո՞վ էր անոնց գլուխն ու մեղաց առաջնորդողը :

Պ . Բէէղղէբուղը, կամ դեր : Մատթ . Թ . 34 : ԺԻ . 24 :

Հ . Աստուած ո՞ւր ձգեց անոնք մեղանչելնուն համար :

Պ . « Դժոխք » : Ի Պեթ . Ի . 4 : Յոոր . 6 :

Հ . Ի՞նչ ատեն չար հրեշտակները մեղանչեցին :

Պ . Աստուած չըսաւ մեզի :

Հ . Աստուած ըսաւ մեզի անոնց ինչ մասնաւոր մեղք գործելը :

Պ . Չէ : Ե Տե՛՛՛՛ : Գ . 9 : Յօհ . Ը . 44 : Ե Պեթ . Ե . 8 :

Հ . Հիմայ անոնց բնաւորութիւնը ինչպէս է :

Պ . Ահհնարին չար է :

Հ . Աստուած անոնց փրկիչ մը տուաւ ինչպէս որ մեզի տուաւ :

Պ . Չէ : Եւր . Ի . 16 :

Հ . Անոնք կրնան փրկուիլ :

Պ . Չէ . անոնք յաւիտեան կորսուած են : Ի Պեթ . Ի : 4 : Յոոր . 6 : Մատթ . ԻԵ . 41 : Յայտ . Ի . 10 :

- Հ . Հիմայ անոնք ուրկէց կը վախնան :
- Պ . Մտուծմէ ու գալու դատաստանէն :
- Յակ . Ի . 19 : Մատթ . Ը . 29 :
- Հ . Բնաւ անոնք աս աշխարհքը կու դան :
- Պ . Հրամերես :
- Հ . Ինչ դիտաւորութեան համար :
- Պ . Մեզի չար ընելու համար :
- Հ . Երբոր Տէր Յիսուս աս աշխարհիս մէջն
էր, մարդոցմէ դէկըր չհանէց :
- Պ . Հրամերես : Մատթ . Գ . 24 : Ղուկ . Գ .
36 : ԺԵ . 20 : ԺԳ . 16 : Մարկ . Ե . 8 : Գործ .
Ժ . 38 :
- Հ . Սատանան ինչ անունով կը կոչուի,
որն որ աս աշխարհիս մէջ իր ունեցած գործ-
քերը կը ցուցնէ մեզի :
- Պ . « Փորձող » : Մատթ . Գ . 3 : Ե թեա . Գ :
5 :
- Հ . Ուրիշ անուններ ունի :
- Պ . Հրամերես, շատ անուններ : Մատթ . Գ .
3 : ԺԻ . 24 : Յակ . ԺԲ . 31 : ԺԳ . 30 : Ի կորնթ .
Գ . 4 : Յայտ . Ի . 2 :
- Հ . Սատանան կրնայ փորձել մեզ ու մեզք
գործել տալ թէ որ մենք մեղանչել չու-
զենք :
- Պ . Չէ :

Հ . Ի՞նչ կ'ըսուի սատանային առիւծի վրայ
պէս պողպատի ըլլալուն վրայով :

Պ . « Սատանան մենչող առիւծի պէս կը
պտրտի, ու կը վնասուի թէ ո՞վ կլլէ » : Ե Պէր .
Ե . 8 : Գրւի . ԻԲ . 31 : ՅԲ . Ե . 6, 7 : Ի .
1, 2 :

Հ . Ի՞նչ պիտի ընէ ան, թէ որ մենք իրեն
հակառակ կենանք :

Պ . Մեզմէ պիտի փախչի : Յակ . Դ . 7 :

Հ . Սատանան ի՞նչ իշխանութիւն ունի չա-
րերուն վրայ :

Պ . Սատանան մեծ իշխանութիւն ունի չա-
րերուն սիրտերը փորձելու ու անոնց վրայ իշ-
խելու : Նիկ . Ի . 2 : Բ . 10—16 : Ի Կրի .
Դ . 4 : Ի Տեճ . Ի . 26 : Մարի . Դ . 15 :

Հ . Սատանան մեր փրկիչն ալ փորձեց եր-
բոր անիկայ երկրի վրայ էր :

Պ . Հրամարես : Մարի . Դ . 1—11 : Գրւի .
Դ . 1—13 :

Հ . Ո՞վ կարող է և ո՞վ աշխարհ եկաւ սա-
տանան ու անոր զորքերը կորսնցունելու
համար :

Պ : Տէր Յիսուսը :

Ուստի որովհետեւ զուակները մարմինն ու արիւնին
հազրդ էղան, ինքն ալ նմանապէս անոնց բաժա-

նորդ եղաւ որ իր մահովը փճացունէ անիկայ՝ որ մահուն իշխանութիւնը ունէր, այսինքն է՝ սատանան : Եբր․ Բ․ 14 : Եւ ան որ մեղք կը գործէ՝ սատանայէն է . ինչու որ սատանան սկիզբէն ՚ի վեր կը մեղանչէ . ասոր համար Աստուծոյ Որդին յայտնուեցաւ, որ սատանային գործքերը քակէ : ԱՅօ՛հ․ Գ․ 8 :

Հ․ Դատաստանին օրը մեր Փրկիչը չարերուն ո՛ւր գացէ՞ք պիտի ըսէ :

Պ․ « Մէկդի գացէ՞ք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստուած է սատանային՝ ու իր հրեշտակներուն » : Մատթ․ Ի․ 41 :

Հրեշտակները առաջ երբոր ստեղծուեցան սուրբ էին, բայց ազատութիւն ունէին կայնելու ալ կամ ինչպէս ալ : Շատերը չինկան ու հիմա անոնք սուրբ հրեշտակներ են : Շատերն ալ ինկան, ու հիմա անոնք ինկած կամ չար հրեշտակներ են . ասոնցմէ սատանան գլուխն է : Անիկայ էր առաջին մեղանչողը և մեղքի առաջնորդողը : Ե՛րբ մեղանչեցին, և ի՛նչ էր անոնց մասնաւոր մեղքը, Աստուած չըսաւ մեզի : Բայց անոնց մեղանչելէն ետքը Աստուած անոնք երկինքէն վար դժոխքը ձգեց . անոնց համար Փրկիչ մը չխրկեց . անոնք բնաւ չպիտի կրնան փրկուիլ, հապա կորսուած են յաւիտեան :

Անոնց բնաւորութիւնը այնչափ դէշ է՝ որչափ որ կրնայ ըլլալ, անոնք Աստուծոյ ու մարդոց դէմ կը պատերազմին : Անոնք աս աշխահը կու գան մեզ փորձելու ու մեղքի առաջնորդելու, և աս պատճառաւ կը կորսընցունեն մեր հոգիները յաւիտեան : Սատանան՝ որ Տէր Յիսուսը փորձեց, կ'երևայ թէ կ'ուզէր կորսնցընել Աստուծոյ մեր փրկութեան համար ունեցած գաղափարը, և երկինքին վրայ մեր ունեցած բոլոր յոյսերը : Իր անորէնութեանը մէջ ինքն համարձակ է • բայց բոլոր իր մեղքերը և իր հրեշտակներուն մեղքերը իրենց գլխուն վրայ պիտի էյնան • յաւիտենական կրակ պատրաստուած է իրենց համար, և կը գողան երբոր կը խորհին գալու դատաստանին վրայով :

Ա • Բարի հրեշտակներուն իյնալէն սորվեցէ՛ք որ բարի անձ մը սուրբ վիճակի մէջ անգամ կրնայ մեղք գործել, թէ որ անիկայ շատ զգուշութիւն չընէ, ու Աստուած ալ չպահպանէ զինքը : Սատանան և իր հրեշտակները մեղանչեցին երկինքին մէջը • Ագամ ու Եւան ալ գրախտին մէջը :

Բ • Դարձեալ սորվեցէ՛ք թէ՛ մեղաւոր մը կրնայ ապականել շատ բարի մարդիկներ ու շատերը մեղքի մէջ ձգել : Սատանան մեղանչեց և շատերն ալ իրեն հետևեցան • զգո՛յշ կեցիր չար ընկերներէն՝ որ ինքզինքը չկորսընցունես, և զգո՛յշ կեցիք ուրիշները չարութեան մէջ ձգելէն՝ որ դուք չկորսընցունէք անոնք :

Գ • Մեղաւոր մը չպիտի թողուի երկինքին մէջը մինչև անգամ թէ որ հրեշտակ մըն ալ ըլլայ :

Սատանան երկինքէն դուրս ձգուեցաւ և իր հրեշտակներն ալ :

Դ • Յիշեցէ՛ք որ դուք մեծ թշնամի մը ունիք՝ սատանան , որ խորամանկ ու զօրաւոր է փորձութեան մէջ : Չար մարդոց սիրտերուն ինքը կը տիրէ • Համարձակ կը փորձէ ամէն մարդ , բնաւ մէկն ազատ չէ իր փորձութենէն : Ինքը մեր բարձրացեալ և սուրբ Փրկիչն ալ փորձեց :

Ե • Բայց իրմէն աւելի մեծ մէկը կայ՝ մեր Տէր Յիսուսը , որ կրնայ կորսընցունել սատանան և անոր ամէն գործքերը • անիկայ աս դիտաւորութեանս համար աշխարհ եկաւ • և աս դիտաւորութիւնը բուն իր ատենը պիտի կատարէ և բոլոր աշխարհ Յիսուսին իշխանութեանը տակը պիտի ըլլան :

Զ • Օրհնենք Աստուած իր մեր վրայ ունեցած սիրոյն ու մեղի պէս մեղաւորներուն տուած Փրկչին համար , որ մեղանչող հրեշտակներուն չտուաւ : Անոնք վրկուելու պատեհութիւն չունին , բայց մենք ունինք • ձեռք ձգենք անիկայ սիրով • ասպաշխարհէն և հաւատանք Տէր Յիսուսին , ու ինքը պիտի տայ մեղի զօրութիւն ու շնորհք՝ ատել և դէմ կենալ սատանային և անոր ամէն գործքերուն • և ան ատենը անիկայ պիտի փախչի մեզմէ , և ան թշուառ բազմութեան մէջը չպիտի ըլլանք որոնց պիտի ըսէ վերջին օրը , “ Մէկդի՛ գացէք ինձմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է սատանային ու իր հրեշտակներուն ” :

Մ Ա Ս Ն Գ

Մ Ա Ր Դ ՈՒ Ն Վ Ր Ա Յ

—

Ե . Լսասո՞ճոյ Ստեղծագործութեանը Վրայ :

Նօ՞նոր . Ե . 24—31 : Ե . 1—7 , 18—25 .

Հ . Քանի՞ օրուան մէջ ստեղծեց Լստուած
երկինքն ու երկիրը :

Պ . Վեց օրուան մէջ : Նօ՞նոր . Ե . 26—31 :

Հ . Ո՞ր օրը ստեղծեց մարդը :

Պ . Վեցերորդ օրը : Նօ՞նոր . Ե . 26—31 :

Հ . Ո՞վ էր առաջին մարդը :

Պ . Եղամ : Նօ՞նոր Բ . 18 : Ե Կորնել . ԺԵ .
45—47 :

Հ . Ո՞վ էր առաջին կնիկը :

Պ . Նւա : Նօ՞նոր . Գ . 20

Հ . Ինչէն ստեղծեց Լստուած մարդը :

Պ . Նրկրի հողէն : Նօ՞նոր . Բ . 7 : Ե Կորնել .
ԺԵ . 47 :

Հ . Ինչէն ստեղծեց Լստուած կնիկը :

Պ . Եղամին կողէն : Նօ՞նոր Բ . 21 , 22 :

Հ • Երբոր Ադամ ու Եւան ստեղծուեցան, չափահաս մարդիկ էին :

Պ • Այո՛, կատարեալ մարդիկ էին :

Հ • Տէրը անոնց բանական ու անմահ հոգի տուաւ :

Պ • Հրամեքեա :

Եւ Տէր Աստուած գեանի հոգին շինեց մարդը, և անոր քիթին ծակերուն կենդանութեան շունչ փչեց, մարդը կենդանի հոգի եղաւ : Ծանոթ • Բ • 7 : Ան ատենը հողը երկիրը պիտի դառնայ՝ առջի եղածին պէս, ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ, որ անիկայ տուաւ : Ժող • ԺԲ • 7 :

Հ : Ադամ ու Եւան որո՞նք պատկերին նմանութեանը ստեղծուեցան :

Պ • Աստուծոյ պատկերին նմանութեանը : Ծանոթ • Ե • 26, 27 : Կող • Գ • 9, 10 :

Հ • Աստուած ինչպէս ստեղծեց մարդը :

Պ • Ուղիղ : Ժող • Լ • 29 :

Հ • Կնիկը ինչո՞ւ համար ստեղծեց Աստուած :

Պ • Մարդուն օգնելու ու անոր ընկեր ըլլալու համար : Ծանոթ • Բ • 18 : Ե Կորնթ • ԺԵ • 7—12 : Եփես • Ե • 23—25 : Կող • Գ • 18, 19 :

Հ • Աստուած եօթներորդ օրը ինչ ըրաւ :

Պ • Հանգստացաւ : Ծանոթ • Բ • 2, 3 :

Հ • Աստուած որո՞նք տուաւ աշխարհը :

- Պ • Աստուած բոլոր աշխարհը մարդուն
տուլաւ , ու զինքն անոր վրայ տէր ըրաւ :
Պննդ . Ե . 26—28 : Թ . 2 : Սաղ . Լ . 5—8 :
Հ • Աղամին առաջին անցուցած օրը ո՞րն էր :
Պ • Աբաթ օրը :



Վեց օրուան մէջ Տէրը երկինքն ու երկիրը ստեղծեց . վեցերորդ օրը իր ուրիշ գործքերը ընցունելէն ետքը մարդն ստեղծեց արու և էգ : Առաջին մարդուն անունն Ադամ էր , և առաջին կնկան անունը Եւա էր : Ադամ երկրի հողէն ստեղծուեցաւ , և Եւան Ադամին մէկ կողէն : Տէրն անոնք կատարեալ մարդիկ ստեղծեց , բանական ու անմահ հոգիներով , և իր սլաակերին նըմանութիւնովը : Անոնք արգար ու սուրբ էին , բոլոր բարիին հակամիտելով : Աղէկ չէր մարդուն որ մինակ ըլլար , և կնիկը ստեղծուեցաւ իրեն օգնական ըլլալու համար , և Աստուած անիկայ Ադամին կնիկ ըլլալու տուաւ , ու ետքը Աստուած պատուիրեց անոնց որ աճին ու բազմանան և երկիրը լեցունեն , ու երկիրն աճնոնց ձեռքը յանձնեց ժառանգութեան համար որ իշխեն անոր : Հետևեալ եօթներորդ օրը , սուրբ հանգստութեան օրն էր , և Աստուած իր գործքերէն հանգստացաւ ու մարդն ալ իրեն հետ հանգստացաւ :

Ա • Աստուծոյ վերջին և ազնիւ գործն է մարդը՝ որ կանգուն անձ ունի՝ և դաշտերուն անասուններէն

աւելի գեղեցիկ է, և բանական ու անմահ հոգի ալ ունի, որ անիկայ անասունները չունին:

Բ. Աստուած մարդն իր պատկերին նմանութեանը ստեղծեց գիտութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով և երկրի իշխողութիւն ունենալով: Աստուած մարդն արդար ստեղծեց. անիկայ մաքուր գլուխ ու ուղիղ սիրտ մը ունէր. անիկայ կատարեալ էր: Աստուած նայեցաւ իր գործքերուն ու ըսաւ որ բարի է. Փառաւորեալ ու սուրբ էակ մըն էր մարդը, երբոր Աստուած ստեղծեց անիկայ:

Գ: Մարդն ստեղծուեցաւ արու և էգ, ամուսնութեան վիճակի մէջ: Կնիկը երկի մարդուն համար եղաւ: Անոր համար էրիկը կնկանը զուլին է. և աս առաջին ա մուսնութիւնը որ մեր նախնիքներուն մէջ եղաւ, բոլոր իրենց տղաքներուն վայելուչ հարսանեաց օրինակն է:

Դ. Աստուած աշխարհքը մարդուն սուաւ իր ժառանգութեանը պէս. անոր համար մենք բոլոր կենդանիներուն վրայ կ'իշխենք: Անոնք մէզմէ կը վախնան բայց մենք ողորմութիւնով տիրելու ենք անոնց վրայ, և աշխարհ ու անոր մէջ եղած բաներն անանկ կերպով մը գործ ածելու ենք, ինչպէս որ Աստուծոյ հաճելի է:

Ե. Ադամին երկրի վրայ անցուցած առաջին օրը Շաբաթն էր. անիկայ ան օրը Աստուծոյ հետ անցուց. ասով Աստուած Ադամին կը սարկեցունէ թէ մարդուս առաջին և բարձրագոյն և ամենաբարի պաշտօնը Աստուծոյ սէր ունենալ և իրեն ծառայութիւն ընելն է:

Ասանկ մենք երկրպագութիւն ընելու ենք Տէրոջը

մեր Ստեղծողին, և մեր առաջին և բարձրագոյն ու
լաւագոյն գործն է ղենքը սիրել ու պաշտել :

Ի : Դրախաբին վրայ :

Նոնոր . Ի . 8—15 :

Հ . Ըստուած մարդը ստեղծեւէն ետքը ինչ
ըրաւ անոր համար :

Պ . Հաճելի պարտեղ մը տնկեց անոր հա-
մար՝ դրախտը՝ որ հոն բնակի : Նոնոր . Ի . 8 :

Հ . Ըղամին ու Եւային համար ուտելու
ինչ բուսաւ պարտեղին մէջը :

Պ . Ըմէն պատուական պտուղները : Նոնոր .
Ի . 9 :

Հ . Ըս զուարճալի պարտեղը ինչպէս կը
ըրուէր :

Պ . Գետով մը : Նոնոր . Ի . 10 :

Հ . Տէրը անոնց ինչ գործ տուաւ որ պար-
տեղին մէջ գործեն :

Պ . « Գործել ու պահել անիկայ » : Նոնոր .
Ի . 15 :

Հ . Տէրը վար իջաւ ու խօսեցաւ Ըղամին
հետ՝ դէմ առ դէմ :

Պ . Հրամարեա : Նոնոր . Գ . 8 :

Հ • Ազամ ու Եւան ի՛նչ վիճակի մէջ էին :

Պ • Սուրբ ու երջանիկ վիճակի մէջ էին, ու ինչ որ կ'ուզէին՝ ունեցան : Ն՝նդ • Ե. 31 :

Մարդը ստեղծուելէն ետքը Աստուած ինքիրմէն պարտեղ մը անկեց, և աճեցուց հոն ամէն ծառ որ հաճելի էր տեսնելու՝ և բարի ուտելու. և առատօրէն կը ջրուէր գետով մը. և հոն դրաւ իր ստեղծած մարդը որ վայելէ աս գեղեցիկ և առատ պարտեղը. մարդուն գործը պարտեղը գործել ու պահէն էր. և Տէրն ինք վար կ'իջնէր ու անոնց հետ կը խօսէր :

Ա • Մարդուն առաջին վիճակը սուրբ ու երջանիկ էր. Ազամ ու Եւան Աստուծոյ հետ էին. և տեսան ու սիրեցին և պատուեցին զինքն ամէն բաներէն աւելի : Անոնք Աստուծոյ տնկած պարտեղին մէջը բնակեցան. անոնք անօթութիւն չէին գլտեր. ոչ ալ ծարուութիւն, ոչ հիւանդութիւն, ոչ ալ ցաւ, ոչ մեղք, ոչ ալ մահ : Անոնք երկինքի հրեշտակներուն պէս սուրբ ու երջանիկ էին : Աս էր մարդուն առաջին և խիստ լաւ վիճակը. սրբութիւնն ու երջանկութիւնը միշտ մէկ տեղ կ'երթան :

Բ • Աստուծոյ մեծ բարութիւնն էր որ Ազամն ու Եւան այնչափ առատութեամբ լեցուց. և անոնք պարտաւոր էին զինքը սիրել ու շնորհակալ ըլլալ իրմէն՝ իր անթիւ բարերարութիւններուն համար : Աստուծոյ մեծ բարութիւնը չարահոյր Ազամին տղաքներուն. ինքն է

որ մեզ կը նախախնամէ, ու կու ապ կեանք և կերակուր ու հանդերձ և ան ամէնը որ կը վայելէնք երկրի վրայ, և պարտաւոր ենք սիրելու զինքն ու շնորհակալ ըլլալ իր բարութիւններուն համար:

Գ. Թէ որ ուզենք երջանիկ ըլլալ և Աստուծոյ բարութիւնն ու սէրը և իր ատուութիւնը վայելել, պարտինք սուրբ ըլլալու ջանալ: Աստուած պիտի չձգէ մեզ երկրի վրայ պարտէզի մը մէջ, հասաւ երկինքն եղած պարտէզը պիտի տանի մեզ յաւիտեան իր հետը բնակելու համար: « Բարութիւն մը պիտի չպահպեցունէ ուղղութեամբ քաղովներէն: Սաղմ. 2Գ. 11:

Դ. Մարդը ստեղծուեցաւ ժիր և գործունեայ ըլլալու համար՝ գործելով ու պահելով պարտէզը: Ան պարտէզին գեղեցկութիւնը և առատութիւնը բուն իր հոգ տանելէն կախում ունէր. ասանկ ալ՝ մենք ժրջանն ու ճարտարամիտ ըլլալու ենք, և կրնանք ըսել թէ ան որ շատ աշխատասէր է՝ ուրիշներէն աւելի յաջողութիւն կը գտնէ: Դատարկակեաց կեանքի մէջ յաջողութիւնն ու երջանկութիւնն չկրնար ըլլալ. դատարկութիւնը գէպի մեղքը՝ և թշուառութեան կը տանի մարդը. թէ որ մարդս ընելու բան մը չունենար, հազար անգամ աւելի գէշ պիտի ըլլար:



Պ • Սարգսուհի փորձուիւեանը Վրայ :

Նոնոր • Բ • 15—17

Հ • Ի՞նչ էին ան երկու մասնաւոր ծառերուն անունները , որոնք դրաւ Աստուած սպարտեղին մէջը :

Պ • Օրառ կենաց , ու ծառ գիտութեան բարւոյ և չարի :

Հ • Տէրը աս ծառերուն որմէն չուտել հրամայեց մարդուն :

Պ • Բարիի ու չարի գիտութեան ծառէն :
Նոնոր • Բ • 16, 17 : Պ • 2, 3 :

Հ • Ինչու Տէրը աս ծառը սպարտեղին մէջը տնկեց ու հրամայեց մարդուն որ չուտէ անկէ :

Պ • Անիկայ փորձելու համար որ նայի թէ իր պատուիրանքները պիտի պահէ :

Հ • Թէ որ մարդը սիրէր Աստուած և անոր պատուիրանքները պահէր , ու ան ծառէն չուտէր , ի՞նչ շահ պիտի ունենար Աստուծմէ :

Պ • Աստուծոյ բարեկամութիւնը :

Հ • Եւ թէ որ Աստուած չսիրէր և անոր պատուիրանքները չպահէր , հապա աս ծառէն ուտէր , ի՞նչ պիտի շահէր :

Պ . « Մահը » . քանզի Տէրն ըսաւ , « Անկէ
կերած օրդ անշուշտ պիտի մեռնիս » : Հոով՛ջ .
Ե . 12 : Բ . 23 : Յօհ . Գ . 14—36 : Ե . 24 :
Ե կորնի . Բ . 9 : Յակ . Ե . 15 :

Հ . Աղամու Եւան կարող էին Աստուած
սիրել և առ պատուիրանքը կատարելապէս
պահել :

Պ . Հրամարես : Ժող . Ե . 29 .

Հ . Տէրը մեր առաջին ծնողքը միայն իրենց
համար փորձութեան մէջ ձգեց , թէ իրենց
մէ ետքը եղած տղաքներուն համար ալ :

Պ . Իրենց տղաքներուն համար ալ : Մհ .
Ե . 1 , 2 . Հոով՛ջ . Ե . 12—19 : Ե կորնի . Ժ . 1 .
15 , 21 : Գործ . Ժ . 29 :

Հ . Թէ որ մեր առաջին ծնողքը իրենց փոր
ձութեանը մէջ սուրբ ու երջանիկ մնային ,
անոնց տղաքները ինչ պիտի ըլլային :

Պ . Անոնք ալ սուրբ ու երջանիկ պիտի ըլ
լային :

Հ . Բայց թէ որ անոնք մեղաց ու թշուա
ռութեան մէջ խնային , մենք ալ ինչ պիտի
ըլլայինք :

Պ . Մենք ալ անշուշտ մեղքի՛ ու թշուա
ռութեան մէջ խնայու էինք . ինչպէս որ ե
զաւ .

Հ • Աստուած բարի ծնողքներուն որդւոցը ողորմութիւն կը ցուցնէ՞ :

Պ • Հրամարեա, մինչև անոնց հազար ազգը : Եւեց • Ի • 6 :

Հ • Եւ չար ծնողքներու չարութիւնը անոնց տղոցը կը հասուցանէ՞ :

Պ • Այո՛ . մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը : Եւեց • Ի • 5 .



Ադամին ու Եւային պաշտօնն էր Աստուած սիրել ու իրեն հնազանդիլ կատարելապէս՝ որ ստեղծեց անոնք ու բոլոր ունեցածնին ինքը տուաւ անոնց : Եւ Աստուած փորձեց անոնք Դրախտին մէջը , գիտնալու համար թէ արդեօք պիտի սիրէն ու հնազանդին իրեն թէ չէ : Անոնց մէկ պարզ ու զիւրին պատուէր մը տուաւ որ պահեն . և Աստուծոյ կամօջը սահմանադրութիւնն էր փորձել անոնք՝ չէ՛ թէ միայն իրենց համար , հասա իրենցմէ ետքը եղած իրենց տղաքներուն համար ալ : Աստուած ծնողքները իրենց տղոցը տեղը գրաւ . աս յայտնի կը տեսնենք , ինչու որ երբոր ծնողքներն ինկան , բոլոր տղաքներն ալ ինկան . որպէս թէ Տէրն ասանկ ըսած էր Ադամին ու Եւային : « Ես կը հաստատեմ՝ աս բարւոյ ու չարի գիտութեան ծառը պարտէզին մէջ , որ փորձեմ՝ ձեզ թէ արդեօք պիտի սիրէք ու հնազանդիք ինձի : Թէ որ աս ծառէն

չուտէք՝ հապա զիս սիրէք ու ինծի հնազանդիք, անա-
տենը ձեզի ու ձեզմէ ետքն եղած ձեր տղաքներուն
ալ Աստուած ես պիտի ըլլամ : Ոչ դուք՝ ոչ ալ ա-
նոնք բնաւ չար բան մը պիտի գիտնան, հապա բարի
ու միայն բարի : Բայց թէ որ աս ծառէն ուտէք և ա-
նանկ ինծի չհնազանդիք, ու իս ձեր Աստուածը մէկ
զի ձգելու ըլլաք, ես ոչ ձեզի՝ ոչ ալ ձեզմէ ետքը
եղած ձեր տղաքներուն Աստուած պիտի ըլլամ : Իմ
չնորհքս պիտի հեռանայ ձեզմէ . դուք և անոնք պիտի
կորսընցունէք բոլոր ձեր բարութիւնները և երջանկու-
թիւնները, ու շարունակ չարը պիտի գիտնաք : Ձեր բոլոր
սերունդը մեղք, աշխատութիւն, տրտմութիւն, ցաւ,
մահ պիտի ունենան թէ աս աշխարհիս մէջ ու թէ
դալու աշխարհին մէջ . ես ձեր առջևը կը դնեմ կեանքն
ու մահը ձեզի ու նաև ձեր տղաքներուն համար :

Աս էր մեր առաջին ծնողացը փորձութիւնը, և ա-
նոնք բոլորովին կարող էին անոր համբերել : Անոնք
կարող էին կայնելու, բայց թէ որ ուզէին՝ կրնային
լքնալ . ուստի անոնք որ ինկան՝ իրենց յանցանքովն
էր :

Ա . Ադամն ու Եւան փորձուեցան, և չէ թէ միայն
իրենց համար, հապա իրենց տղայոց համար ալ, այ-
սինքն՝ մարդոց ցեղին ամենուն համար : Թէ որ անոնք
կայնէին, մենք ալ անշուշտ պիտի կայնէինք . թէ որ
անոնք լինային, մենք ալ անշուշտ պիտի լինայինք,
ինչպէս որ եղաւ : Այսպէս մեր առաջին ծնողքներուն
հետ մենք ալ փորձուեցանք : Եւ անոնք փորձուեցան
բոլորովին բաց ու յայտնի դիւրին փորձութիւնով մը՝

որ մեծ ու երևելի փորձ մըն էր ան . ինչու որ չէ թէ միայն իրենց երջանկուծիւնը երկինքին մէջ կամ թշուառութիւնը դժոխքին մէջ անկէց կախում ունէր , հսկա իրենցմէ ետքը եղած իրենց միլիոնաւոր տղաքներուն ալ երջանկուծիւնը երկինքին մէջ՝ ու թշուառութիւնը դժոխքին մէջ :

Բ . Աստուած ասանկ հաճեցաւ որ անոնք փորձուին իրենց համար՝ ու մեզի իրենց տղաքներուն համար . ինքը մեզի չհարցուց . անատենը մենք ծնած չէինք . բայց թէ որ ծնած ըլլայինք , անշուշտ պիտի ընդունէինք աս բանը . ուրեմն զգանք որ Աստուծոյ կամքը անչափ խմաստուն ու արդար է , և թէ ամէն բաները շիտակ ըրած է :

Գ . Աստուած ան ատենէն մինչև հիմա միշտ այնպէս կ'ընէ , այսինքն ծնողքները իրենց զաւկըներուն տեղը բռնել կու տայ աւելի կամ նուազ աստիճանով մը . ինչպէս որ ծնողքներն են , անանկ ալ ընդհանրապէս տղաքները պիտի ըլլան . թէ որ ծնողք ենք՝ բարի ըլլանք , որ մեր տղաքներուն ալ բարի ըլլայ . թէ որ բարի ծնողաց զաւկըներ ենք՝ աշխատինք անոնց նմանիլ . և թէ որ չար ծնողաց զաւկըներ ենք , լանք Աստուծոյ առջև անոնց չարութեանը համար , և աղօթենք իրեն որ մեզ արգարացունէ ու յաւիտենական կենաց արժանի ընէ :

Դ . Տէրը փորձեց Ագամ ու Եւան Գրախտին մէջը . անոնք Աստուծոյ ստեղծութեաններն էին , և պարտաւոր էին սիրել Աստուած ու անոր հնազանդիլ .

մենք ալ անոնց տղաքները՝ Աստուծոյ կը վերաբերինք ե պարտինք զինքը սիրել ու իրեն հնազանդիլ . մենք ալ փորձութեան մէջ ենք , բայց մեր փորձը տարբեր է ա նոնց առաջին փորձութենէն : Աս է մեր փորձութիւնը . Աստուած կը սպասէ մեզի ամէն օր՝ տեսնելու թէ պի տի դառնա՞նք իրեն սպաշխարելով ու հաւատալով իր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի : Ուստի լաւ գործածենք սա փրկութեան սլառահոլութիւնը որ ունինք :

Գ . Ստորագրան առաջին Տեղին սա խնայւր :

Չ^{հինգ} . Գ : 1—13 :

Հ . Տէրը փորձեց Ադամ ու Եւան Ղրախ տին մէջը . անոնք ինկա՞ն թէ չէ :

Պ . Ինկան :

Հ . Անոնք որչափ ատեն կեցան պարտե զին մէջ իրենց մեղանչելէն ու խնայէն առաջ :

Պ . Չենք գիտեր ճշդիւ , բայց կերեաց թէ քիչ ատեն :

Հ . Ի՞նչ էր անոնց մեղքը :

Պ . Արգելեալ պտուղէն ուտելնին էր :

Հ . Անոնց որն առաջ կերաւ :

Պ . Եւան :

Հ • Եւան ինչպէս կերաւ ան :

Պ • Սատանայէն փորձուելով : Յօհ • Ը • 44 :

Հ • Սատանան ինչ կերպարանքով ցուցուց ինքզինքը Եւային՝ երբոր փորձեց անիկայ :

Պ • Օձի կերպարանքով : Մանգր • Գ • 1—3 :

Հ • Եղամ ինչպէս մեղանչեց :

Պ • Եւայէն փորձուելով : Մանգր • Գ • 6 :

Հ • Ենոնք արգելեալ պտուղն ուտելէն ետքը շուտով դիտցան որ մեղանչեցին :

Պ • Հրամերես . և ամչցան ու վախցան : Մանգր • Գ • 7 :

Հ • Երբոր Տէրոջը գալը լսեցին , ինչ ըսին :

Պ • Ինքզինքնին պահեցին : Մանգր • Գ • 8 :
Երեմ • ԻԳ • 24 :

Հ • Տէրն ինչ ըսաւ Եղամին :

Պ • « Ո՛ւր ես » :

Հ • Եղամ ինչ պատճառ բերաւ Տէրոջը՝ անկէց պահուելուն համար :

Պ • « Վախցայ , ինչու որ մերկ էի » Ե. Յօհ • Գ • 20 • Դ • 18 :

Հ • Երբոր Տէրն անոնց մեղք գործելուն վրայով հարցուց , խոստովանեցան եթէ ինքզինքնին արդարացուցին :

Պ • Ինքզինքնին արդարացունել ուզեցին : Մանգր • Գ • 11—13 :

Հ . Աղամ որուն վրայ ձգեց յանցանքը :

Պ . Եւ ային վրայ : Ն^{հնդ} . Գ . 12 :

Հ . Եւ ան որուն վրայ ձգեց յանցանքը :

Պ . Օձին վրայ : Ն^{հնդ} . Գ . 13 . Ե ՏԺԺ .
Բ . 14 : Բ Կրիթ . ԺԵ . 3 :

Հ . Անոնց ինքզինքնին արդարացունելը ՏԷ-
րը ընդունեց :

Պ . Չէ, չընդունեց :

Հ . Ի՞նչ պէտք էր որ ընէին :

Պ . Սեղքերնին խոստովանելու էին : Ղ Դ-Է .
ԺԲ . 13 : Ե ՅՕԿ . Ե . 9 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքը անոր վրա-
յով որ իր մեղքերը կը ծածկէ :

Պ . « Իր յանցանքները ծածկողը յաջո-
ղութիւն չգտներ . բայց պանոն⁺ խոստովա-
նողն ու մէկգի ձգողը ողորմութիւն կը գտ-
նէ : Ա-աԿ . ԻԲ . 13 :

Մէկը չկրնար ճշդիւ հաստատել թէ Աղամ ու Ե-
ւան դրախտին մէջը գրուելէն որչափ ատեն ետքը ար-
գելեալ պտուղէն կերան , և սրբութեան ու երջանկու-
թեան վիճակէն՝ մեղքի ու թշուառութեան վիճակի մէջ
ինկան . բայց կը կարծուի թէ շատ երկար ատեն պիտի
չըլլայ :

Աս լինալուն առաջին գրգողը Սատանան էր , որ

պատեհուածիւն գտնելով՝ ինքզինքը օձի կերպարանքով ծածկեց և փորձեց կնիկը երբոր մինակ էր : Եւան անոր փորձուածեանը մտիկ ըրաւ . ծառին վրայ նայեցաւ՝ որ սրտուղը գեղեցիկ էր տեսնելու , և ուտելու բարի կը թուէր . կը փափաքէր անիկայ ուտելու , և մանաւանդ ա՛նիկայ ուտելով կը կարծէր որ իմաստուն պիտի ըլլար , իր աչքերը պիտի բացուէին , և Աստուծոյ պէս պիտի ըլլար և բարին ու չարը պիտի գիտնար : Առաւ պտուղէն՝ ինք կերաւ և իր էրիտնն ալ տուաւ , և ան ալ կերաւ : Ադամ՝ կերաւ անիկայ գիտութեամբ , խոր հրդածութեամբ , կամաւ , ինչու որ « խաբուած չէր » : Ինք իր կնկանը խօսքին աւելի մտիկ ըրաւ , քան թէ Աստուծոյ պատուիրանքին . մեղք գործածնուն պէս աչքերնին բացուեցան . գիտցան յանցանքնին : Խիղճերնին տանջեց իրենք , ամչցան . և չէ թէ միայն ա՛մբչցան , հապա վախցան ալ . անոնք Աստուծոյ ներկայութենէն ստկացին , և իրմէն փախան . բայց անօգուտ էր անոնց փախչիլը . Աստուած կանչեց անոնք իր առջևը . անոնք ինքզինքնին արդարացունելու ջանք ընելով՝ աւելի շատցուցին իրենց մեղքերը : Անոնց պարտաւորութիւնը իրենց ըրած մեղքը խոնարհաբար խոստովանիլն ու ինքզինքնին Աստուածային ողորմութեանը յանձնելն էր . Աստուած չընդունեց անոնց ինքզինքնին արդարացունելը , ինչու որ մեղքը չկրնար արդարանալ :

Ա . Դուք հիմա հասկըցաք թէ ի՞նչպէս մեղքը աս աշխարհքը մտաւ մեր բոլոր տառապանքներովը , մեղքը

աստանային ձեռքովը բերուեցաւ՝ որ անիկայ ամէն ալ դարու թիւններուն թնամին է : Ինքն աշխարհի սկիզբէն մարդաստան է . երկնից ու երկրի մէջ մեղքին հայրն ինքն է . և ինկած հրեշտակներուն ու մարդոց չարութիւններուն համար՝ որ ինքն ըրաւ և կ'ընէ , պատասխան պիտի տայ դատաստանին օրը : Ինչպէս որ մեծագոյն մեղաւորը ինքն է , անանկ ալ բոլոր ատեղէնքի մէջ ամենաթշուառ էակն ինքը պիտի ըլլայ :

Բ . Զգոյշ կեցեք որ մէկու մը մտիկ չընէք երբոր կը փորձէ ձեզ գեշութիւն ընել տալու : Եւան մտիկ ըրաւ ու ինկաւ . թէ որ դուք ալ փորձութեան հետեւելու ըլլաք , դուք ալ պիտի լինաք : Մէկ դի՛ ձգեցէք չար փորձիչը , ո՛վ որ ըլլոյ թող ըլլայ , ձեզմէ հեռու թող կենայ , կամ՝ դուք ինքզինքնիդ հեռացուցէք անկէջ . մեր Փրկչին օրինակին հետեւեցէք : Մատթ . Գ . 1—11 : ԺԶ , 21 , 33 :

Գ . Դուք բուն ձեր ղօրութեանը մի ապաւինիր . եւ թէ Ագամ՝ ու Եւան սուրբ վիճակին մէջն ըլլալով ինկան , մենք որչափ դիւրութեամբ պիտի լինանք մեղանչական վիճակի մէջ ըլլալով . աղօթեցէք Աստուծոյ ըսելով , թէ « Տէ՛ր , մեզ փորձութեան մէջ մի ձգեր , հապա չարէն փրկէ մեզ » :

Դ . Եւային՝ Ագամը մեղք դործելու փորձելը կը ցուցընէ թէ ի՛նչպէս մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ մէկը մէկալին վրայ : Էրիկներն ու իրենց կնիկները մեծ ազդեցութիւն ունին իրարու վրայ՝ բարիի կամ չարի : Մեր շատ մօտ ու սիրելի բարեկամները և ազգականները

չատ անգամ մեր ամենայաջող փորձիչները կ'ըլլան . ա ղթեհք Աստուծոյ որ ոչ մէկը փորձէ մեզ , ոչ ալ մենք մէկէ մը փորձուինք . այլ ջանանք որ մենք ամէն մարդիկ դէպի Աստուած առաջնորդենք և չէ թէ Աստուծոյ հեռացունենք : Գ . Թագ . ԻԱ . 25 : Յոբ . Բ . 9 :

Ե . Աստուծոյ դէմ մեղանչող մարդ մը չկրնար երջանիկ ու բարեկաջող ըլլալ : Ստանան և իր հրեշտակները երկինքին մէջ մեղանչելուն պէս՝ շուտ մը ամօթով ու վախով լեցուեցան Աստուծոյ առջև , և յաւիտենական դատապարտութեան տակ ինկան : Ասանկ ալ մենք մեղքին համար կ'ամչնանք ու կը վախնանք , և թէ որ չապաշխարենք՝ միտքերնիս հանդարտութեան մէջ պիտի չըլլայ , և խորունկ արտմութեան մէջ պիտի թաղուինք յաւիտեան :

Զ . Մեղք մը չկրնար ծածկուիլ . զուր տեղը պիտի փախցնիք Աստուծոյ , կամ մեղքերնիս իրմէն պահենք : Ինքն ամէն տեղ ներկայ է , և ամէն բաները գիտէ ու կրնայ կանչել մեզ իր առջևը ամէն րոպէ :

Է . Մեղքը չկրնար անդատապարտ մնալ . մէկ մեղքը մէկալէն մեծ կրնայ ըլլալ , բայց մեղքը թէ՛ մեծ կամ թէ՛ սղտիկ՝ չկրնար անսպառիժ մնալ :

Ը . Եւ մեր պարտաւորութիւնն ու ապահովութիւնը մեղքերնիս խոստովանելէն ու մէկ դի ձգելէն կախում ունի : Թէ որ մենք խոնարհաբար խոստովանինք մեր մեղքերը և աղաչենք Աստուած որ Քրիստոսի համար թողութիւն շնորհէ մեզի , ինքը պիտի շնորհէ : Յոյս չկայ անոնց համար՝ որ չեն ուզեր խոստովանիլ ու մէկ դի ձգել իրենց մեղքերը :

Ե . Սէր աստուծին ծնողայն իշնալուան վրայ :

1 . Անոնք անիծուեցան ու Վրախտէն դուրս
ձգուեցան :

Նոյնդ . Վ . 1—24 :

Հ . Տէր Աստուած բարկացաւ Ադամին ու
Եւային իրենց մեղանչելուն համար :

Պ . Հրամարեա :

Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտ-
նուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և անիրաւու-
թեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ
բռնէր են : Հոով . Ա . 18 : Աստուած արդար դատա-
ւոր է . ու Աստուած Ռեշտորին ամէն օր բարկացած է :
Սաղ . Ի . 11 : Եւեց . ԼԴ . 6, 7 :

Հ . Առաջ որո՞ւ ցուցուց Աստուած իր բար-
կութիւնը, սատանայի՞ն՝ Եւայի՞ն՝ թէ Ադա-
մին :

Պ . Ամէնէն առաջ մեղանչող սատանային :

Հ . Տէրը ինչպէս անիծեց անիկայ :

Պ . « Ամէն անասուններէն և դաշտին ա-
մէն գազաններէն անիծեալ ըլլաս » : Նոյնդ .
Վ . 14, 15 :

Հ . Տէրը միայն օճն անիծեց թէ օճի կեր-
պարանք մտած սատանան ալ :

- Պ • Երկուքն ալ :
- Հ • Եւ ի՞նչ ըսաւ Աստուած կնկանը :
- Պ • « Քու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցունեմ » : Ծանոթ . Գ . 16 :
- Հ • Եւ ի՞նչ ըսաւ մարդուն :
- Պ • « Երկիրը քու պատճառովդ անիծեալ ըլլայ » : Ծանոթ . Գ . 17—19 :
- Հ • Երկիրն ի՞նչ պիտի բուսցունէր :
- Պ • « Փուշ ու տատասկ » :
- Հ • Ադամ ի՞նչպէս պիտի ստանար իր հացը :
- Պ • « Երեսին քրտինքովը » :
- Հ • Եւ ի՞նչ բանի պիտի դառնար :
- Պ • Հողի . « Հող էիր դուն ու հող պիտի դառնաս » :
- Հ • Տէրը անատենը ի՞նչ խոստմունք ըրաւ :
- Պ • Տէրը անատենը ողորմութեամբ փրկիչ մը խոստացաւ Ադամին ու Եւային և բոլոր իրենց կորսուած տղաքներուն :
- Եւ քուկին ու կնկանք մէջ տեղը , և քու սերունդիդ ու անոր սերունդին մէջ տեղը՝ թշնամութիւն պիտի դնեմ . ան քու գլուխդ պիտի ջախջախէ , և դուն անոր գարշապարը պիտի խայթես : Ծանոթ . Գ . 18 : Հասկա Քրիստոսի պատուական արիւնովը՝ որպէս Թէ ամբիծ ու անարատ դառի մը . որ առաջուց ճանչ

ցուած էր աշխարհիս սկիզբէն առաջ : Ա Պէր . Ա . 19 , 20 : Անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակողները , որոնց անունները աշխարհիս սկիզբէն 'ի վեր մորթուած Գառնուկին կենաց գրքին մէջը գրուած չեն : Յայր . ԺԳ . 8 :

Հ . Տէրը ինչ տեսակ հանդերձ շինեց Ադամին ու Եւային հազցունելու համար :

Պ . « Կաշիէ հանդերձ » : Ծննդ . Գ . 21 :

Հ . Տէրը Ադամն ու Եւան Դրախտին մէջը կենալու թողո՞ւց , ուր որ կենաց ծառէն պիտի ուտէին ու յաւիտեան ապրէին :

Պ . Չէ՛ . այլ դուրս վճռուեց անոնք : Ծննդ . Գ . 22—24 :

Հ . Եւ Ադամ՝ ապրելու համար ինչ պիտի ընէր :

Պ . « Երկիրը պիտի դործէր » :

Հ . Դրախտին մէջ ինչ գրաւ Աստուած կենաց ծառէն անոնք հեռու պահելու համար :

Պ . « Բերուլըէներն ու բոցեղէն սուր » :

Տէրը բարկացաւ Ադամին ու Եւային և իր բարկութիւնը ցուցուց անոնց . բայց կարգաւ սկսեց . առաջ խիստ հին ու չար մեղաւորին . և ամէն մէկը անիծե-

լէն ետքը, Ադամին ու Եւային կաշիէ հանգերձներ հագցուց, և ետքը անոնք Դրախտէն դուրս վճռուեց կէնաց Ծառէն չուտելու համար. անոնք կորսնցուցին Աստուծոյ շնորհքը և կենաց Ծառին համար ունեցած իշխանութիւննին, և բնաւ չկրցան նորէն հոն դառնալ հրեղէն սուրով պաշտպանող քերորեկին համար, որ կենաց Ծառը պահելու կեցեր էր: Մարդը հիմա երկիրը գործելու վրայ էր իր ապրուստը ձարելու համար, և Աստուած ալ հեռացուց Ադամէն իր բարեկամութիւնը:

Ա. Մեղանչելէն ետքը միշտ գիտցէք որ Աստուած պիտի բարկանայ ձեզի, և անշուշտ պիտի պատժէ ձեզ, թէ որ չապաշխարէք:

Բ. Եւ նախկին ու մեծ մեղաւորները թող խիստ վախնան, ինչու որ Աստուած բնդհանրապէս առաջ անոնք պատժել կը սկսի. ու շատ սաստիկ կը պատժէ:

Գ. Երբոր կը տեսնէք օձին երկրի վրայ սողալը, որ ատելի է մարդուն ու անասուններուն, որ ամէն մէկը անոր գլուխը ջախջախել կուզէ մեռցունելու համար, և անիկայ ալ կը ջանայ անոնք խայթել, անատելը յիշեցէք որ Աստուած անիծեց սատանան օձով. անէ՛քքը վնասեց օձին՝ անոր մէջէն սատանային անցնելով:

Դ. Սատանան անիծուեցաւ բոլոր էակներէն ցած ու անարդ՝ խիստ անգոմանելի և ատելի բլալու, և վերջապէս իր գլուխը ջախջախուելու ու ոտքի տակ կոխուելու համար: Բոլոր փեղերըք պիտի տեսնէ անէ՛քքին

կատարուիլը • ասանկ՝ սատանան և բոլոր իր չար գործքերը սոսկալի վախճան մը պիտի ունենան • ուստի հրաժարինք իրմէն ու իր բոլոր գործքերէն • Թէ որ իր կողմը դառնալու ըլլանք, մենք ալ իր հետը պիտի լսնանք :

Ե • Մարդը կնալէն ետքը շուտով Աստուծոյ ողորմութիւնովը Փրկիչ մը սրտորաստուեցաւ, որ Յիսուս Քրիստոս է • անիկայ կարող եղաւ սատանային գլուխը ջախջախել և անոր գործքերը վիճացնել • մենք սարտինք նայիլ իրեն մեր Ազատիչին պէս, և իր զօրութիւնովն ու օգնութիւնովը մեղքն ալ, սատանան ալ պիտի յաղթենք : Կը կարծուի որ մեր առաջին ծնողքը ասպաշխարեցին ու հաւատացին աս խոստացեալ Փրկիչին, և ասանկ մեռան ու երկինք գացին :

Զ • Բոլոր հիւանդութեան, արամութեան, ցաւերու, աշխատութեան, ու մահին պատճառը աս աշխարհին մէջ՝ մեղքն է • բոլոր թշուառութեան աղբիւրը մեղքն է :

Է • Երբոր Յէրը վռնակց Ադամն իր ներկայութեանէն և շնորհքէն, բոլոր անար սերունդն ալ կրնանք ըսել թէ վնասուեցան նոյն ատենը :

Ը • Աստուծոյ ներկայութիւնը և շնորհքը՝ որն որ Ադամ կորսնցուց ու իրմով մենք ալ կորսնցուցինք, նորէն կ'ընդունինք Յիսուս Քրիստոսով : Մենք միայն Քրիստոսով կրնանք Աստուծոյ դալ • Անիկայ է ճանապարհը, ճշմարտութիւնն ու կեանքը :

Թ • Բայց Աստուած իր ներկայութիւնը և իր շնորհքը

Յիսուս Քրիստոսով նորէն կու տայ միայն անոնց՝ ուրոնք որ բուն ինքը կ'ընարէ : Յօ . 2 . 37—44 . և այլն : Քանզի մարդ մը չգար Քրիստոսին՝ թէ որ Հայրը չառաջնորդէ անոր . ասանկ բոլոր մարդկային ցեղն Աստուծոյ դերագոյն ողորմութենէն կախում ունի :



2 : Մեր Առաջին Ծնողաց բոլոր սերունդը կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը :

Հոով . 1 . 12—19 :

Հ . Ադամ ու Եւան Դրախտէն վճատուեցնէն ետքը ինչ եղան :

Պ . Աստուծոյ դէմ մեղանչելնուն Համար իրենց արդարութիւնը կորսընցուցին ու Տէրօջը առջևը մեղաւոր եղան :

Հ . Իրենց սիրտը ինչպէս եղաւ :

Պ . Մեղանչելէն առաջ անոնք կատարելապէս սուրբ էին , անոնց սիրտերը բարի էին . բայց մեղանչելէն ետքը անոնց սիրտերը չար եղան :

Հ . Տէրը աս փոփոխութեանը Համար ինչպէս վարուեցաւ անոնց հետ :

Պ . Տէրը ետ.բաշուեցաւ անոնցմէ իր ներ-

կայուլթեանը և սիրոյն անարժան սեպելով
անոնք :

Հ . Յանցանքն որո՞ւնն էր որ անոնք իրենց
սրբուլթիւնն ու երջանկուլթիւնը և իրենց Աստուածը
կորսնցուցին :

Պ . Բուն իրենցն էր յանցանքը :

Հ . Աս իրենց յանցանքովը միայն իրե՞նք
ինկան :

Պ . Չէ՛, երբոր իրենք ինկան, բոլոր իրենց
տղաքներն ալ ինկան :

Ազամով ամէնը կը մեռնին : Ա Կորնթ . ԺԵ . 22 :
Մէկուն յանցանքովը շատերը մեռան : Հոմով . Ե . 15 :

Հ . Բարի սիրտերով աշխարհ կու գանք,
ինչպէս որ մեր Ազամ՝ նախահայրը մեղանչե-
լէն առաջ ունէր :

Պ . Չէ՛ . գէշ սիրտերով, ինչպէս որ ինքը
մեղանչելէն ետքն ունէր :

Հ . Որո՞ւն նմանուլթեամբը զաւակ ունեցաւ
կ'ըսէ Աստուածաշունչը :

Պ . Իր նմանուլթեամբը : Օհնոր . Ե . 3 :

Հ . Մեր Փրկիչն ի՞նչ կ'ըսէ անոր վրայով՝
որ մարմինէն ծնած է :

Պ . « Մարմինէն ծնածը մարմին է » : Յօհ .
Կ . 6 : Յօբ . ԺԿ . 4 :

Հ . Աղամինն աս մէկ մեղքը ինչ հետեանք
ունեցաւ մեր վրայ :

Պ . Աղամինն աս մէկ մեղքին համար է որ
մենք գէշ սիրտ և խանգարեալ բնութիւնն կ'ու-
նենանք ու ասանկ մեղքի տակ կ'ընանք , և
Աստուծոյ բարկութիւնը վրանս կու գայ , ու
հիւանդութիւն , տրտմութիւն , աշխատու-
թիւն , ցաւ ու մահ կ'ունենանք : Հոով՝ Վ .
12—19 : և Կորնթ . Ժ . 21 , 22 :

Հ . Երբոր մենք կը ծնանինք՝ թէ որ Աս-
տուած մեր սիրտերը չփոխէ , մեր ներսի դին
բարութիւնն կայ :

Պ : Չէ :

Գիտեմ որ իմ ներսիդիս՝ այսինքն իմ մարմինն
մէջ բարի բան մը չբնակիր , ինչու որ կամեցողու-
թիւնն կայ քովս , բայց բարին 'ի դործ դնելը չեմ գրտ-
ներ : Հոով՝ Ե . 18 : և Կորնթ . Բ . 14 :

Հ . Առանց աս խանգարեալ բնութեան
բնաւ մարդ մը ծնա՞ւ աշխարհիս մէջ :

Պ . Մի միայն մարդն Յիսուս Քրիստոս :
Ղուկ . Ե . 35 :

Հ . Աղամէն մինչև աս օրս մեղաւոր էին բո-
լոր մարդիկ :

Պ . Հրամերես :

Հ . Ի՞նչպէս կը նայի Աստուած աշխարհի
վրայ :

Պ . Մեղքով լեցուած ու կորսուած աշխարհի պէս :

Տերը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ որ տեսնէ թէ՛ կայ արդեօք խմաստուն մէկը որ ՂԱստուած մնտուէ : Ամէնքը խոտորեցան մէկ տեղ , անպիտան եղան . աղէկուածին ընող մը չկայ , մէկ մըն ալ չկայ : Մտղճ : ԺԳ . 2 , 3 :

Հ . Ամէն մարդ իր մեղաւոր ըլլալը կը զգայ :

Պ . Հրամբերես . մեր խղճմտանքը ինչպէս և Աստուածաշունչը միշտ կը զրուցէ մարդոց՝ իրենց մեղաւոր ըլլալը :

Հ . Ուրեմն բոլոր աշխարհի վիճակը ի՞նչ պէս է :

Պ . « Յանցաւոր՝ Աստուծոյ առջևը » : Հեռո՞ւմ . Ն , Ի , Գ : Երբէս . Ի . 3 :

Հ . Թէ որ առանց սրտի փոփոխութեան իրենց մեղքերուն մէջը մեռնին , ի՞նչպէս պիտի պատժուին :

Պ . Անոնք պիտի պատժուին Յաւիտենական կրակին մէջ : Մատթ . ԻԵ . 41—46 . Լայն :

Ագամ՝ ու Եւան կորսնցուցին իրենց արգարութիւնը և ճմարիտ սրբութիւնը՝ իրենց մեղք դործած ըուպին . անոնք ապականեալ ու չար եղան սիրտով ու կեանքով .

Աստուած երեսէ ձգեց անոնք, ու իրենց ամէն քաշած նեղութիւններուն պատճառը բուն իրենց մեղքն էր : Երբոր անոնք ինկան, իրենց տղաքներն ալ ինկան . ինչու որ մեր Առաջին Ծնողքը փորձուեցան նաև իւրենց տղաքներուն այսինքն մեղի համար :

Ուստի Ագամին՝ խանգարեալ ու մեղաւոր Ագամին զաւակ ծնաւ բուն իր խանգարեալ ու մեղաւոր օրի նակովը : Չար հայրը չար զաւակ ունեցաւ . մարմինէն ծնածը մարմին էր . քանզի միշտ նմանն զնմանը կը ծնանի . մենք աշխարհ կու գանք գէշ սիրտերով, հակառակ Աստուծոյ, ու չարին հակամիտեալ . մարդկային ցեղէ բնաւ մէկը Սուրբ չծնաւ աս աշխարհը, բայց միայն մարդն Յիսուս Քրիստոս . ու ան ալ յատուկ Աստուծոյ զօրութիւնովն էր : Եւ Ագամէն մինչև հիմա բոլոր մարդիկ մեղանչեցին, ինչպէս որ ամէն մարդ կը զգայ ու գիտէ իր մեղաւոր ըլլալը : Աստուած բոլոր աշխարհի վրայ՝ մեղաւոր ու կորսուածի պէս կը նայի, ու աշխարհ իր առջևը յանցաւոր կ'երևնայ իր բարկութեանը տակն ինկած : Բոլոր աս մեղքն ու թշուառութիւնը մեր Առաջին Ծնողացը մեղքին հետևութիւնն է . աս մեղքը կործանեց մարդկային սերունդը . Աստուած անանկ կը վարուի մարդոց հետ, որպէս թէ անոնք բուն Ագամին մեղքը գործած էին . քանզի ճիշտ ան որ Ագամին վրայ եկաւ, իր ինալէն ետքը՝ ճշգիւ իր տղաքներուն վրայ ալ կուգայ : Անոր գործին հետևանքները իրենց վրայ կ'ընդունին, ճիշտ որպէս թէ անոնք գործած էին ան . անոնք արդարութենէ ու

Աստուծոյ շնորհքէն զրկուած են . սարականեալ են ու տղէա , ցաւի ու փորձութեան տակ ինկած են , ու ենթակոյ անցաւոր և յաւիտենական մահին :

Ա : Մեր Առաջին Ծնողացը մեղանչելնուն ետքը իրենց վարքը և վիճակը արչափ փոխուած էին . անոնք կորսնցուցին իրենց սրբութիւնն ու իրենց երջանկութիւնը : Աստուծոյ տղաքներն ու Երկնից ժառանգներն ըլլալնուն տեղը՝ սատանայի տղաքներ ու Դժոխքի ժառանգներ եղան : Ի՛նչպէս հիանալի , ի՛նչպէս խորունկ , և ի՛նչպէս սոսկալի է անոնց կնիւրը :

Բ . Իրենց զաւկրներուն վարքն ու վիճակը ինչպէս փոխուեցան . երբոր անոնց Առաջին Ծնողքն ինկան , իրենք ալ ինկան . բոլոր մարդկային ցեղը սուրբ ու երջանիկ կրնային ըլլալ . ու բոլոր Երկիր օրհնութեան ու կենաց Դրախտ մը ընել : Բայց հիմա բոլոր մարդկային ցեղը մեղաւոր ու թշուառական են , և երկիր անիծեալ է , ու մ'թութիւնով և վայով ու մահով ծածկուած :

Գ . Բայց մեր Առաջին Ծնողացն ու մեզի իրենց տղայոցը համար փրկութիւն եղաւ : Աստուած Փրկիչ մը պատրաստեց . արդարն Յիսթա Քրիստոս . Աստուած ամէնքը մեզքի տակ դքաւ որ ողորմի ամենուն վրայ : « Ահա Աստուծոյ Գառնուկը , որ աշխարհի մեղքը կը վերցունէ » : Անանկ է նէ չտրանջանք . ահա պատրաստ դեղը , և անանկ մէկ դեղ մը՝ որ ամենուն բաւական է : Քրիստոս ետ կը դարձունէ մեզի ինչ որ Ագամ կորսնցուց : Պէտք է մեզի ուրախութեամբ ջնն

քը և իր փրկութիւնը, ու շնորհակալ ըլլալ Աստուծոյ
իր մեղի ցուցուցած սիրոյն համար: Ուստի պատուէնք
մեղի արուելու շնորհաց մեր ամէն միջոցները, այսինքն՝
Աւետարան կարդալը, աղօթք ընելը, և այլն:

Գ. Պէտք է մեղի որ մէկ մեղք մըն ալ դործելէն
վախնանք, որչափ չնչին որ երևայ ան: Երբոր մենք
մեղքի մէջ քայլ մը ընելու ըլլանք, չենք գիտեր
թէ ուրիշ ինչ քայլեր պիտի հետևին, կամ թէ ինչ
թշուառութիւններ մեր վրայ ու մեր ընկերներուն վրայ
պիտի բերենք: Միտոյն սրբութիւնն է խաղաղութիւն ու
ասպահովութիւն:

Ե. Բնաւ չմոռնանք որ մենք չար սիրտերով ասպա-
կանեալ ծնած ենք, որ բնականաբար սէր չունինք Աւ-
տուծոյ ու սուրբ բաներուն: Մենք մեղքին հակամի-
տեալ ենք. մենք ՚ի մանկութենէ մեղքին կը հետևինք.
Ինչ սոսկալի չարութիւններու հասնելու էինք՝ (որով
հետև մեր մէջը ամենևին բարի բան մը չունինք մենք մեղքի
առ Աստուած) թէ որ Տէրը ո՛ր և իցէ ճամբով մը մեղ-
եա չդարձունէր: Բնականաբար մեր ընթացքը ման-
կութեան օրորոցէն մինչև գերեզման՝ գէպի վար դը-
ժոխքը կ'իջնէ. մենք մեղքի ո՛չ զօրութիւն ո՛չ կարս-
ղութիւն ունինք, և ո՛չ ալ կամք ետ գառնալու առ
Աստուած. ուրեմն բնականաբար մարդիկ սաստիկապէս
չար ու կորսուած վիճակի մէջ են:

Զ. Աս ազահանեալ բնութիւնը պարտի փոխուիլ,
ու Սուրբ Հոգիին զօրութիւնովը փոխուիլ, թէ չէ
չենք կրնար Աստուած տեսնել:

Է • Ուստի պարտինք լալ Աստուծոյ առջևը մեր տա-
ռաջին ծնողաց խնայը, մեր սոսկալի տպականութիւնը
բնութեամբ ու կրթութեամբ • և պարտինք խոստո-
վանիլ Իրեն որ մենք անմաքուր ենք • և Սուրբ Հոգիին
զօրութիւնովը նոր սիրտ մը ունենալու՝ ու Տէր Յի-
սուս Քրիստոսով մեր մեղքերուն համար թողութիւն
դոնելու պարտինք խնդրել իրմէն :

Ը • Բոլոր աշխարհը մեղքի մէջ ու Աստուծոյ բար-
կութեանը տակ ինկած է : Մենք որչափ ջանալու ենք
որ անիկայ փրկութեան ճամբուն դիտուութեանը բերենք •
որչափ աղօթելու ենք Աստուծոյ՝ որ իր Աւետարանը
տարածէ բոլոր աշխարհի մէջ, ու Ագամին բոլոր կոր-
սուած տղաքները փրկելու հասցունէ :

Թ • Յատկապէս թող ծնողքները զգան թէ « մար-
մինէն ծնածը մարմին է » • և թէ շնորհքը բնութենէն
չջար, հապա Աստուծոյ պարգւն է ան • ու բնաւ
չքաղարին աղօթելէն որ իրենց տղայոց աստականութիւնը
վերցուի՝ ու Յիսուս Քրիստոսով նոր արարածներ ըլ-
լան : Կակ ամէն Քարողիչներն ու Վարժապետներն
ալ նոյնպէս զգալով, իրենց ունկնդիրներուն ու աշա-
կերաններուն ալ նոյնն ընեն : Փրկութիւնը Տէրօջմէն է,
մեր բաւականութիւնը Աստուծմէ է • (ա) :

(ա) • Ուրեմն ո՞վ է Պօղոսը՝ կամ ո՞վ է Ապողոսը •
սրաշտօնեաներ են, որոնցմով հաւատացիք • և ինտոր որ

Կ . Փրկումը և Բեան Ճանքոան Վրայ :

1 . Աստուած կը սխտրաստէ մեզի համար կատարեալ
փրկութիւն :

Եփե . Բ . 1—22 :

2 . Աղամ ու Եւան մեղանչեղէն ետքը
Տէրն անոնք ու անոնց տղաքները յաւիտեան
մեղքի ու Թշուառութեան մէջ կորսուելու
Թողնոց :

Պ . 2է :

2 . Ի՞նչ կ'ըսէ Տէրն ասոր վրայով :

Պ . « Ինչպէս ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը,
չեմ ուզեր մեղաւորին մեռնիլը, հասա չարը
դառնայ իր ճանապարհէն ու ապրի . դարձի
եկէք, դարձէք ձեր չար ճանապարհէն . ինչո՞ւ
մեռնիք, ո՞վ խորայելի տունը » : Եղե՛լ . Ժ .
23—32 : Ե Տե՛ճ . Բ . 4 : Բ Պե՞ր . Գ . 9 :

Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն : Ես անկեցի, Աստ-
ղոսը ջուր տուաւ, բայց Աստուած աճեցուց : Ուստի
ոչ անկողը բան մըն է, ոչ ջուր տուողը, հասա Աստ-
ուած՝ որ աճեցուց : Ա կրիթ . Գ . 5—7 :

Հ • Մեր առաջին ծնողքը մեղանչելէն ետքը, երբ Տէրը փրկիչ մը խոստացաւ անոնց :

Պ • Նոյն օրը : Ծանօթ . Գ . 1—15 :

Հ • Ո՞վ էր խոստացեալ փրկիչը :

Պ • Ըստուած իր մեծ ու մանաւանդ անհուն սիրովը մեզի փրկիչ ըլլալու տուաւ իր որդին Յիսուս Քրիստոսը : Յօհ . ԺԵ . 13 : Հոովժ . Ե . 6—8 : Ը . 32 : Եփես . Բ . 7 : Տեա : Գ . 4, 5 :

Հ • Ի՞նչ կ'ըսէ Տէրն մեր ասոր վրայով :

Պ • « Ինչու որ Ըստուած անանկ սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ . որ ամէն ո՞վ որ անոր հաւատայ՝ չկորսուի . հասցա յաւիտենական կեանք ունենայ » : Յօհ . Գ . 16 :

Հ • Ըստուած ո՞վ կը խրկէ մեր սիրտերը նորոգելու, և մեզ դէպի Քրիստոս մեր փրկիչն առաջնորդելու, ու մեզ երկինքին համար պատրաստելու :

Պ • Սուրբ Հոգին : Յօհ . Ե . 13 : Գ . 3—6 : Եկրինը . Բ . 7—16 :

Հ • Իրաւունքով Ըստուած մեզի պարտաւոր էր իր Որդին տալու՝ որ մեզ պատիժէն փրկի, և Սուրբ Հոգին տալու՝ որ մեր սիրտերը փոխէ, ու մեզ երկինքին համար պատրաստէ :

Պ . Չէ, մեր փրկութիւնը Աստուծոյ կողմանէ ձրի շնորհքով եղաւ :

Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդարութիւնը յայտնուած է, օրէնքէն և մարգարէներէն վկայուած ըլլալով . այսինքն Աստուծոյ արդարութիւնը՝ որ Յիսուս Քրիստոսի հաւատքէն է, ամենուն յայտնուած է, ու ամենուն վրայ՝ ՎԵՐԱՅ . և խտրութիւն չկայ : Ինչու որ ամէնքը մեզք գործեցին, և Աստուծոյ փառքէն սրտաւոր են : Եւ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկութեամբք . և այլն : Հոով՝ Պ . 21—28 : Որ մեզ փրկեց, ու սուրբ կոչու մով կանչեց՝ չէ թէ մեր գործքերուն նայելով, հաւսա իր դիտաւորութեանն ու շնորհքին նայելով, որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական դարերէն առաջ : Բ ՏԻՃ . Ա . 9 :

Հ . Ուրեմն որմէն շնորհակալ պարտինք ըլլալ և զինքը օրհնել մեր փրկութեանը համար :

Պ . Մեր Տէր Աստուծ մէն : Հայտ . Ե . 9—14 :

Եւ անոր՝ որ կարող է ձեզ անբիծ պահել, և իր փառքին առջևը անարատ կայնեցունել ցնծութիւնով, մի միայն Աստուծոյ մեր Փրկչին մեր Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքովը փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն բոլոր դարերէն առաջ, և հիմա ու բոլոր դարերու մէջ, Ամէն : Հոով . 24, 25 :

Նոյն օրը՝ որ մեր առաջին ծնողքներն ինկան, Աստուած գերազոյն ողորմութիւնով կատարեալ Փրկութիւն պատրաստեց անոնց՝ ու անոնց ինկած զաւկըներուն համար: Փրկիչ ալ պատրաստեց, Սրբարար ալ:

Ա. Փրկութիւնը Տէրօջն է, ո՛չ ուրիշ էակ մը, հասպա միայն Աստուած՝ ամենուն ինքնիշխան Տէրն իր իմաստութիւնովն ու զօրութիւնովը փրկութեան ճանապարհ մը սահմանեց ու բացաւ կորսուած մարդուն համար: Մարդը մեղանչելէն ետքը՝ բանը միայն Աստուծոյ մնաց, որ եթէ մարդն ապրելու ըլլայ՝ կամ թէ մեռնելու, Աստուած ինքը որոշէ, որ մարդը պատեհութիւն ունենայ փրկուելու, կամ կորսուի յաւիտեան:

Բ. Իր գերազանց սէրը զինքը շարժեց փրկութեան ճամբայ մը բանալ: Ինքը մեր կործանեալ ու թշուառ վիճակին մէջ մեզի գթացաւ, չուզելով մեղաւորին մահը:

Գ. Եւ ինքը մեր փրկութեանը համար պատրաստութիւն ըրաւ, առանց ծախքին նայելու: Որովհետեւ պէտք էր որ բուն իր միածին Որդին մեռնի մեր տեղը. վասն որոյ Աստուած իր Որդին չինայեց: Հռոմ. Ը. 32: Եւ որովհետեւ մենք բուն իր Սուրբ Հոգին կը կարօտինք, որ մեր սիրտերը փոխէ ու մեզ Քրիստոսին առաջնորդէ, վասն որոյ Աստուած չինայեց իր Սուրբ Հոգին. ուստի հիմայ բան մը պակաս չէ՛, այլ ամէն բան պատրաստ է: Յայտ. ԻԲ. 17:

Դ. Ուրեմն երբոր մենք մեր մտքին մէջը կը զգանք

մեր մեղքերը և անկէց հետեաժ կործանումը՝ փրկութեան համար Աստուծոյ նայինք ու միայն Աստուծոյ : Փրկութեան համար իր ցուցուցած ճամբան շիաակ է, ու միայն ան է ճամբան : Ան անանկ ապահով ու անսխալ է, որչափ որ անհուն իմաստութիւնը և զօրութիւնն ու սէրը և ողորմութիւնը կրնայ ընել անիկայ : « Ան որ հաւատայ՝ պիտի փրկուի » : Մարի . Ժ. 2 . 16 : Յով . 2 . 27—29 : Մէկը թող չվախնայ Աստուծոյ փրկութեանը ճամբան դիմելէն, բոլոր ուրիշ ճամբաները սուտ են և կործանման պատճառ :

Ե . Մենք պաշտելով յարգելու ենք Աստուծոյ աս սէրը, որ առանց անոր՝ Դեերուն պէս Դժոխքին մէջը կատարեալ թշուառութիւնով ու յուսահատութիւնով միշտ դոցուած մնալու էինք : Աստուծոյ մեր վրայ ունեցած սէրը մաշեցունելու է դէպի իրեն մեր ունեցած թշնամութիւնը, աս սիրոյն զրուութիւնը կտորտելու է մեր քարացեալ սիրտերը : Զանք ընենք աս մեծ փրկութիւնն ընդունելու, քանզի թէ որ մէկ դի ձգենք անիկայ, կործանման մէջ պիտի ընկղմինք՝ անիկայ չստղներէն աւելի խորունկ :

Զ . « Եւ թէ որ Աստուած մեզ այնչափ սիրեց, մենք ալ պարտինք մեկզմէկ սիրել » . մենք չարերուն ու ապերախտներուն ալ գթած ըլլալու ու ներելու ենք, ինչպէս որ մենք թողութիւն գտնել կը յուսանք . թող մեր կեանքը՝ սիրոյ կեանք մը ըլլայ արեւ Աստուած և առ մարդիկ :

2 . Յիսուս Քրիստոսի մեր Փրկչին ո՞վ ըլլալը :

Ե . Ինչն Աստուած է :

Յօհ . Ե . 1—18 :

Հ . Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը ո՞վ է . Աստուած է , թէ մարդ :

Պ . Աստուած ալ է՝ մարդ ալ է :

Հ . Ի՞նչպէս զիտէք թէ ինքն Աստուած է :

Պ . Աստուածաշունչը մեզի ասանկ կ'ըսէ :

Հ . Աստուածաշունչն անիկայ Աստուած կը կոչէ :

Պ . Հրամարես , Քրիստոս է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս :

Հոովժ . Թ . 5 : Ասայ . Թ . 1—3 Բաղրատէ

Յօհ . ԺԲ . 41ին 4ե* : Եբր . Ե . 10—12 :

Սաղժ . ՂԲ . 22—27ին 4ե* : Յօհ . Ե . 1 : Ե

Յօհ . Ե . 20 :

Հ . Աստուած յաւիտենական է . Քրիստոս ալ յաւիտենական է :

Պ . Հրամարես . ինչու որ Քրիստոսին վրայ Դաւիթ կ'ըսէ . « Դուն նոյնինքն ես , ու բու տարիներդ պիտի չպակսին » : Եբր . Ե . 12 :

Սաղմ. ՆԻ. 27 : Եսայ. Թ. 6 : ԻԻ. 6 : Զայս. Ե. 8 : ԻԻ. 13 : Զօհ. Ե. 1, 2 :

Հ. Մատուած ամէն տեղ ներկայ է. Քրիստոս ալ ամէն տեղ ներկայ է :

Պ. Հրամերես, ինտոր որ ինքը կ'ըսէ. « Ուր որ երկու կամ իրեք հոգի ժողովուած ըլլան իմ անունովս, հոն եմ ես անոնց մէջը » : Սաղմ. Ժ. 20 : Ի. 18—20 :

Հ. Մատուած ամէն բան զիտէ. Քրիստոս ալ ամէն բան զիտէ :

Պ. Հրամերես :

Հ. Կրկնէ նայիմ, Պետրոս Յիսուսին ինչ ըսաւ, երբոր Յիսուս հարցուց անոր, թէ « Օ՛րիս կը սիրես » :

Պ. « Տէր՝ դուն ամէն բան զիտես, դուն զիտես որ ես քեզ կը սիրեմ » : Զօհ. Ի. 17 : Ժ. 30 : Գործ. Ե. 24 :

Հ. Մատուած ամէն բանի ստեղծիչն է. Քրիստոսն ալ անա՛նկ է :

Պ. Հրամերես, Սուրբ Վիքթոր կ'ըսէ, « Ընով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքն ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ կ'երևնան՝ և անոնք որ չեն երևնար » : Կող. Ե. 15—17 : Զօհ. Ե. 1—3 : Եբր. Ե. 3, 10—12 :

Հ. Մատուած միայն մեզաց թողու թիւն

կրնայ տալ . Քրիստոս ալ կրնայ մեղաց թողուլ թիւն տալ :

Պ . Հրամե՛րես , « Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողուլ թիւն տալու » : Մատթ . Թ . 1—6 : Մարկ . Բ . 5 , 7—12 :

Հ . Միայն Աստուած կարող է աշխարհը դատելու . Քրիստոս ալ վերջին օրը ամենուն դատաւորն է :

Պ . Հրամե՛րես : « Վասն զի պէտք է որ ամէնքս ալ Քրիստոսի ատեանին առջևը ներկայանանք » : Բ . Կորնթ . Ե . 10 : Հռոմ . ԺԳ . 10—12 : 3օհ . Ե . 22 : Գործ . Ժ . 42 :

Հ . Միայն Աստուած սիրուելու ու պաշտուելու է Աստուծոյ պէս . Քրիստոս ալ Աստուծոյ պէս սիրուելու ու պաշտուելու է :

Պ . Հրամե՛րես , քանզի սուրբ Գիւրքը կ'ըսէ , թէ « Ամէնը պատուեն Որդին , ինչպէս որ Հայրը կը պատուեն » : 3օհ . Ե . 23 : Գործ . Ե . 24 . Ե . 50 , 59 : Ու նաև կ'ըսէ . « Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն » : Եբր . Ե . 6 : Փիլեպ . Բ . 9—12 :

Հ . Երկինքին մէջը բոլոր արարածները իրեն երկրպագութիւն կ'ընեն :

Պ . Հրամարեա : Յայտ . Ե . 8—14 Բաղդաստէ
Փիլիպ . Բ . 9—11ին հէտ :

Հ . Մարդիկ իրաւունք ունին Քրիստոսի
Աստուածութիւնն ուրանալու :

Պ . Չէ, շատ մեծ մեղք է : Յօհ . Ե . 23 : Ե
Յօհ . Ե . 20 , 21 :

Յիսուս Քրիստոս մեր Փրկիչն Աստուած է . ամե-
նուն վրայ մեծ ու ճշմարիտ Աստուած՝ և Զօրութեանց
Եհովան՝ Անմահ , Անփոփոխ , ամէն տեղ Ներկայ , ա-
մէն բաները Քիտցող , բոլոր տիեզերքին Ստեղծողն ու
Պահպանողը . մեղքերու Թողութիւն Տուող . Վերջին
օրուան Դատաւորը . երնկից ու երկրի մէջ եղած ամէն
արարածներն իրմէն վախնալու ու զինքը յարգելու են ,
իրեն երկրպագութիւն ընելու և զինքը պաշտելու են
յաւիտեանս յաւիտենից :

Ա . Մեծ դործ մը կատարուելու էր մարդոց վր-
կութեանը համար , և սա դործը կատարէին ալ Գե-
րադոյն Էակի մը կը կարօտէր . մէնք կը կարօտէինք
Աստուծոյ հետ հաւասար Փրկչի մը , անանկ Փրկչի
մը՝ որ զԱստուած կտտարելապէս իմանայ , որ Աստուծոյ
փառքն ու պատիւը՝ մեր վրկութեանը համար ինչ ը-
նել որ կը պահանջէր , ան ալ աղէկ գիանայ , և որ Ե-
րաւունք ու կարողութիւն ունենայ ան ընելու : Մէնք
անանկ Փրկչի մը կը կարօտինք որ կարենայ ազատել

մեզ մեղքին՝ մահին ու Դժոխքին զօրութենէն . կարեւորայ հաշտեցունել մեզ Աստուծոյ հետ և պահել մեզ Երկինքին մէջը յաւիտենական փառքով : Ահա Յիսուս Քրիստոսն է ան Փրկիչը , որ Մեծ Աստուած է . թէ որ ինքն Աստուած չըլար , մեր Փրկչին կողմանէ պահանջուած դործը չէր կրնար ընել :

Բ . Ուրեմն մեր Փրկիչը բոլորովին կարող է փրկելու ան ամէնը՝ որ իրմով Աստուծոյ կու գան :

Մենք մեղաւոր ենք , ինքն Աստուած է և կրնայ ջրն ջրէլ մեր մեղքերը ու մեզ սուրբ ընել : Մենք տկար ենք , ինքն Աստուած է ու յաւիտենական զօրութիւնը իրն է , և կրնայ մեզ զօրացունել : Մենք տգէ՞տ ենք , ինքն ամենիմաստ է , և կրնայ մեզ իմաստութիւն սորվեցունել : Աղքատ ենք , ինքն է ամէն բաներուն Տէրը , կրնայ մեզ հարստացունել : Մենք մահկանացու ենք , ինքը կենաց և մահուան վրայ զօրութիւն ունի , և կրնայ մեզ նորէն ասրեցունել : Մենք դատաստանի առջեւ լելելու ենք , ինքն է ամենուն արդար Դատաւորը , ու մեր Փրկիչը , և իր միջնորդութիւնովը մենք կրնանք արդարանալ : Մենք թշուառականներս թէ՛ ներկայ ժամանակինս՝ և թէ յաւիտենականութեան համար վատահումեամբ և ուրախութեամբ աս Փրկչին կրնանք ապաւինիլ որ անհուն է զօրութեամբ ու փառքով :

Գ . Եւ որչափ որ կարող է՝ նոյնչափ ալ կամեցող :

Կրնանք տարակուսիլ իր կամեցողութենէն , որ ինքը մեզի համար մեռաւ : Կը վախնանք իրեն ժօանալու ,

ար ինքը մարդասիրութեամբ կը հրաւիրէ մեզ, և կը հաստատէ մեզի որ ինքը դուրս պիտի չձգէ ան՝ որ իրեն կուգայ: Մատթ. ԺԱ. 28—39: Յով. 2. 37: Եւ թէ որ անգամ մը միաւորուելու ըլլանք իրեն հետ, ընաւ ալ չենք կրնար դատուիլ իրմէն: Հոով. Ը. 28—39: Յով. Ժ. 27—30:

Դ. Ուրեմն հաւատացողին հոգին ապահովէ. ուրեմն Աստուծոյ Եկեղեցին երկրի վրայ ապահով է Քրիստոսի ձեռքին մէջը, որ է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս: Սաղմ. Բ. 1—12: ՃԺ. 1:

Ե. Անոնք որ չեն հաւատար Տէր Յիսուս Քրիստոսին ու թշնամի են իրեն ու իր փրկութեամբը, իրաւունքով դողալու են իր առջևը:

Անոնք Աստուծոյ դէմ կը հակառակին, անոր դէմ՝ որ իր թշնամիներն իր ոտքին կոխելէքը պիտի ընէ. անոր դէմ՝ որ կարող է հոգին ալ մարմինն ալ յաւիտեան դժոխքին մէջը ձգելու: Ի՞նչպէս սոսկալի պիտի ըլլայ յատկապէս ան թշնամիներուն դատապարտութիւնը, որոնք Աստուծոյ պարզ խօսքերն իրենց ձեռքերնուն մէջն ունենալով՝ կ'ուրանան Քրիստոսի Աստուածութիւնը, և ասանկ ընելով իջը թէ կրկերցունեն զինքն իր տիեզերակալ Աթոռէն, և կորսուած մարդուն փրկուելուն մի միայն լոյսը և յոյսը կը կորսընցունեն:

Բ • Ինչը մարդ է :

Ղ Դ—Է : Բ • 1—52 :

Հ • Յիսուս Վրիստոս մեր զրկիչն Մատուած ու մարդ է • մենք Մատուածաշունչէն հասկը-
ցանք որ ինքն Մատուած է • դուք ինչպէս դի-
տէք որ մարդ ալ է :

Պ • Մատուածաշունչէն կը սորվինք՝ թէ աս-
տուածորդին Նրկիչքէն վար իջաւ ու ինքզին-
քը մարդկութեան հետ միաւորեց, անանկ
որ ինքն Մատուած և մարդ ալ է մէկ տեղ :

Հ • Մատարանն ինչ կ'ըսէ ասոր վրայով :

Պ • « Եւ Բանը մարմին եղաւ, ու մեր մէջը
բնակեցաւ » : Յօհ • Ե • 14 : Փիլիպ • Բ • 5—8 :

Հ • Ո՞ւր ծնաւ Յիսուս :

Պ • Բեթղէհէմին մէջ : Մեհե • Ե • 2 : Յօհ •
Ե • 42 : Մատթ • Բ • 1—6 : Ղ Դ—Է • Բ • 1—12 :

Հ • Ո՞վ էր իր մայրը :

Պ • Կոյս Մարիամ : Եսայ • Ե • 14 : Դանի •
Գ • 15 : Մատթ • Ե • 18—25 : Ղ Դ—Է • Ե • 26—
38 :

Հ • Իր կարծուած Հայրն ո՞վ էր :

Պ • Յովսէփ : Ղ Դ—Է • Գ • 23 •

Հ . Տէրոջը Հրեշտակն անոր անունը ինչ
դնել պատուիրեց՝ երբոր անհիկայ ծնանելու
բլայ :

Պ . Յիսուս, որ կը նշանակէ Փրկիչ :

Անոր անունը Յիսուս դնես, քանզի անհիկայ էր ժողովուրդն իրենց մեղքերէն պիտի փրկէ : Մատթ . Ա . 21 :

Հ . Սէր Փրկիչին ծնած օրէն մինչև հիմա
քանի տարի եղաւ :

Պ . Հազար ութը հարիւր յիսուն ու վեց
տարի :

Հ . Իր քարոզելէն առաջ իր ծնողացը հետ
քանի տարի բնակեցաւ :

Պ . « Երսուն տարիի չափ » : Ղուկ . Գ . 23 :

Հ . Իր ծնողացը հետ որ տեղ բնակեցաւ :

Պ . Նազարէթ քաղաքը : Մատթ . Բ . 23 :
Ղուկ . Բ . 4, 51 :

Հ . Քարոզելու սկսելէն ետքը շուտով ձգեց
Նազարէթը, և անատենը որ քաղաքը բնա-
կեցաւ :

Պ . Կախառնայում քաղաքը : Ղուկ . Գ .
16—31 : Մատթ . Գ . 13 :

Հ . Երբոր Յիսուսի քարոզելու ուստրվեցու-
նելու ժամանակը մօտեցաւ, լստուած անոր
առջևէն ո՞վ խրկեց ճամբան պատրաստելու :

Պ . Յօհաննէս Սկրտիչը :

Հ . Մեր փրկիչը խաչուելէն առաջ , քանի տարի քարոզեց ու սորվեցուց :

Պ . Իրեք կամ չորս տարիի չափ :

Հ . Բայց ինքը մարդու պէս երեցաւ , քնացաւ , կերաւ , պտրտեցաւ , քարոզեց , աղօթեց . ուրեմն ժողովրդոցը ինչպէս ճանչցուց ու հաւտացուց թէ ինքն Մատուածային էր . Մատուած ու մարդ՝ մէկ տեղ :

Պ . Իր շատ սքանչելի գործքերովը . քանզի լքած գործքերը անանկ գործքեր էին՝ որ միայն Մատուած կրնայ ընել : (Յօհ . Գ . 1 , 2 : Ե . 36 : Ժ . 37 , 38 : ԺԵ . 45 :

Հ . Իր սքանչելի գործքերուն մէկ քանիներն ինչ էին :

Պ . Մեռելները յարուց , հիւանդները բժշկեց , դևերը հանեց , ու կուրերուն աչքերը բացաւ : Մատթ . Գ . 23 , 24 : Ը . 13—34 : Թ . 20—35 : Ժ . Գ . 25 :

Հ . Ուրիշ պատճառ ունի՞ս ցուցրնելու թէ ինքն Մատուածոյ հետ հաւասար է :

Պ . Հրամարեա . զորօրինակ իր շատ անգամ և զանազան կերպերով զրուցելը , թէ ասանկ էր : Մատթ . ԺԵ . 27—30 : ԺԲ . 6—8 : ԺԸ . 20 : ԻԵ . 31—46 : ԻԸ . 20 : Մարկ . Բ . 1—12 : Յօհ . Ե . 17—29 :

Հ . Ի՞նչ կերպով մեռաւ մեր Փրկիչը :

Պ . Մեր Տէրը մեծ ամօթ կրելով ու սաստիկ չարչարուելով , խաչին վրայ՝ մեռաւ մեր զի համար :

Հ . Իր մարդ ըլլալով և չարչարուելոյն ու մեռնելովը սեզի համար ի՞նչ կը ցուցնէ :

Պ . Մեր վրայ ունեցած իր սիրոյն մեծութիւնը • Յօդ . ԺԳ . 34 : ԺԵ . 12 , 13 :

—

Մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս մարդ է , ինքը Կոյս Մարիամէն ծնաւ՝ Յուդային Բեթղէհէմին մէջը • Երսուն տարիի չափ իր ծնողացը հետ Գալիլեայի՝ Նազարէթ քաղաքը բնակեցաւ , իրեք կամ չորս տարի քարոզեց , և շատ սքանչելի գործքերով յայտնեց որ ինք Աստուծոյ Որդին էր ու աշխարհի Փրկիչը : Բուն իր քաղաքակից Հրեաները նախանձով լեցուեցան՝ ու իրեն դէմ ելան , և ինքը խաչուեցաւ Հռովմայեցի կառավարիչ Պոնտապի Պիղատոսին ատենը , թաղուեցաւ , և իրեք օրէն ետքը նորէն յարութիւն առաւ : Ծնաւ , ապրեցաւ , ու մեռաւ : Ուստի կը տեսնէք որ մարդու պէս ծնաւ , մարդու պէս ապրեցաւ և մարդու պէս մեռաւ :

Ա . Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը լոկ մարդ չէ , հապա Աստուած ալ և մարդ ալ է մէկ տեղ • Երկինքին կամ Երկրի մէջ իրեն նման մէկը չկայ • Իր ա-

նունը Իմմանուէլ է, որ ըսել է « Աստուած մեզի հետ » :
 « Աստուած մարմինով յայտնուած » : Մաթթ . Ա . 23 :
 Ա ՏԻՏ . Գ . 16 :

Ասոր համեմատ մենք կը տեսնենք Սուրբ Գեորգին
 մէջ որ Աստուծոյ վերաբերեալ ամէն բաները Քրիստոսի
 ալ կը վերաբերին . և մարդու վերաբերեալ ամէն
 բաները՝ Քրիստոսի ալ կը վերաբերին, մեզքէն 'ի
 զամ :

Բ . Իր անձը մեր գիտութենէն վեր է . իր անունը
 « Ս.բանչելի » սխտի կոչուի : Եսայ . Թ . 6 : « Մէկը
 չճանչնար Որդին՝ բայց Հայրը » : Մաթթ . ԺԱ . 27 : Հոս
 կը տեսնենք խորհուրդ մը որ Աստուած ու մարդ
 մէկ են . Յիսուս Քրիստոս բարձր է երկինքին պէս ու
 խոնարհ երկրի պէս : Ի՛նչ բարձրութիւն և ի՛նչ խո-
 րութիւն, ի՛նչպէս հեռու՝ և տակաւին ի՛նչպէս մօտ .
 եկէ՛ք իր առջևն լինանք, և պաշտենք ու երկրպագու-
 թիւն ընենք իրեն :

Գ . Իր մարդ ըլլալը կը յայտնէ մեզի իր հիանալի
 խոնարհութիւնը, իր անպատմելի սէրը, և մեր վերու-
 կութեանը համար իր ունեցած փափաքը : Ինքն իր
 փառքը մէկ դի թողուց, ինքն իր պատիւը չուղեց .
 ինքը մահին հնազանդեցաւ, ու ան ալ խաչին մա-
 հուանը . Փիլիպ . Բ . 5—8 : Յօհ . ԺԵ . 13 : Ինքն իր
 թշնամիներուն համար մեռաւ : Հոով . Ե . 5—8 : Իր
 ողորմութիւնը և սէրն անչափ են :

Դ . Մենք ուրախութիւնով, և երախտագիտութիւ-
 նով, սիրով և անկեղծ հնազանդութիւնով ընդունելու

ենք զինքը մեր Աստուծոյն ու մեր Փրկչին պէս : Պինտ
են անոնց սիրտերը և սոսկալի պիտի ըլլայ անոնց վախ
ճանը , որ ուրախութեամբ չեն ընդունիր Փրկիչը : Բ
Կորնթ . Ե . 14 , 15 : Բ Թէս . Ա . 7—10 :

Ե . Մենք օրինակ առնելու ենք մեզի Քրիստոսի
վարքն ու կեանքը՝ որ սամենաբարի ու անզուգական էր
երկրիս վրայ : Փիլիպ . Բ . 4 , 5 : Մենք իրեն պէս Աս-
տուծոյ փառքին համար և ուրիշներուն աղէկութիւն
ընելու համար ապրելու ենք : Այսպէս ապրելու հա-
մար կը կարօտինք ունենալ Փրկչին ունեցած ներողու-
թիւնը , խոնարհութիւնը , բարի նախանձը , սէրը , հա-
ւատքը , աղօթքը , համբերութիւնը և իր անձնուրա-
ցութիւնը : Սակայն միայն հոգին Սուրբ Աստուած
կրնայ աս շնորհքները մեզի պարգևել ու աւել-
ցունել :

—

3 . Ի՞նչու Քրիստոս մարդ եղաւ :

Եբր . Բ . 1—18 :

2 . Ի՞նչու Յիսուս Քրիստոս մարդ եղաւ :

Պ . Որ կարենայ մեռնիլ մեզի համար :
Յօհ . Գ . 16 : Ժ . 11 :

2 . Ինքը կրնա՞ր մեռնիլ մեզի համար , թէ
որ մարդ չըլլար :

Պ . Չէ՛ . « Քանզի բնաւ հրեշտակներուն ձեռք ջըններ, հապա Մըրահամի սերունդին ձեռք կը բռնէ . անոր համար պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըլլալ » . « Ու արիւն չթափուած թողութիւն չըլլար » :
Եբր . Ի . 16 , 17 : Թ . 22 :

Հ . Ո՞վ է Երկինքէն իջնող Մեծ վարդապետը՝ որ կատարեալ վարժութիւն կու տայ մեզի Աստուծոյ ու Երկինքին, Գթոխքին ու Փրկութեան ճանապարհին վրայով :

Պ . Զիտուս Քրիստոս :

Բայց դուք Ռաբբի մի կոչուիք . ինչու որ ձեր Ուսուցիչը մէկ մըն է , այսինքն Քրիստոս , և դուք աւմէնքդ եղբայր էք : Ու երկրի վրայ Դել ձեզի հայր մի կոչէք . ինչու որ ձեր հայրը մէկ մըն է , որ երկինքն է : Եւ դուք ուսուցիչներ մի կոչուիք՝ ինչու որ ձեր ուսուցիչը մէկ մըն է , այսինքն Քրիստոս : Մատթ . ԻԳ . 8—10 :

Հ . Զիտուս ի՞նչ կ'ըսէ իր վրայովը :

Պ . « Ես եմ աշխարհի լոյսը . ան որ իմ էտուէս կու գայ . խաւարի մէջ պիտի չքալէ , հապա կենաց լոյսը պիտի ունենայ » : Եօհ . Ը . 12 : Թ . 35 , 36 , 46 : Գլուհ . Ի . 32 :

Հ . Բնաւ մեր Փրկիչը մեզք գործէ՞ց :

Պ . Չէ՛ , ինքը՝ « սուրբ՝ անուեղ՝ անարատ՝

մեղաւորներէն զատուած » էր : Եհր . Գ . 15 :
Է . 26 : Ե Պէ . Բ . 22 :

Հ . Յիսուս երբոր աշխարհի մէջ էր , ինչպէս
կ'անցունէր իր ժամանակը :

Պ . « Բարիք ընելով » : Գործ . Գ . 38 :
Յօհ . Գ . 34 :

Հ . Ըս իր օրինակովը ինչ կը սորվեցունէ
մեզի :

Պ . Կը սորվեցունէ մեզի թէ ինչպէս պիտի
սիրենք ու պաշտենք Ըստուած , ու բարի ը-
նենք մեր ընկերներուն : Յօհ . ԺԳ . 14 , 15 ,
34 : ԺԵ . 12 , 13 :

Հ . Ինքը որ մարդ եղաւ ու աս աշխարհիս
մէջ ապրեցաւ , գիտէ՞ թէ ինչ է աս աշխար-
հը , և ինչպէս են մեր նեղուծիւններն ու
փորձուծիւնները :

Պ . Հրամարեա :

Թէ որ աշխարհ ձեզ կ'ատէ , գիտցէք որ ձեզմէ ա-
ռաջ իս ատեց : Թէ որ աշխարհէս եղած ըլլայիք , աշ-
խարհ իրենները կը սիրէր . բայց որովհետև աշխարհէ
էք՝ հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի , անոր համար
աշխարհ ձեզ կ'ատէ : Յօհ . ԺԵ . 18—20 :

Հ . Եւ Յիսուս մեզի հետ վշտակից կըլայ ,
և ինչպէս մեզ մխիթարել ու փրկել պէտք
է՞ գիտէ :

Պ . Հրամարեա :

Քանզի չէ թէ անանկ ֆաճանայասպետ մը ունինք որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու . հասպա ինքն ամէն կերպով մտորձն առած է Քուի նման , Բայց առանց մեղքի : Ուստի ալ համարձակութիւնով մտանանք շնորհաց աթուին առջևը , որ ողորմութիւն ընդունինք՝ ու շնորհք գանենք պէտք եղած ատենը Քուի օգնելու : Եբբ . Դ . 15 , 16 :

Հ . Երբոր իր Ղազարոս բարեկամը մեռաւ՝ ու ինքը Մարթային և Մարիամին հետ անոր գերեզմանը գնաց , ի՞նչ կերպով ցուցուց իր տրտմանից զգացումները :

Պ . « Զխուս լացաւ » : Ծօհ . ԺԵ . 35 : Ղուկ . ԺԹ . 41 :

Աստուածաշունչը կը սորվեցունէ մեզի թէ ինչու համար հարկաւոր էր՝ որ մեր երկրպագելի Փրկիչը Աստուծոյ Որդին մարդ ըլլայ :

Ա . Որ կարենայ չարչարուիլ ու մեռնիլ մեզի համար : Անոր համար մարդ ըլլալ հարկաւոր էր իրեն՝ որ կարենայ մեռնիլ :

Բ . Որ կարենայ մեր մեծ Ուսուցիչն ըլլալ : Ինքը միշտ « աշխարհի լոյսը » եղաւ ու միշտ պիտի ըլլայ : Ինքը կը սորվեցունէ մեզի իր հոգիովը և իր խօսքովը՝ որն որ կը կարգանք ու քարոզուած ատենը կը լսենք :

Կը սորվեցունէ մեզի թէ ինչպէս մեծ մեղաւորներ
ենք . թէ ինչպէս պատուական է իր Փրկութիւնը . թէ
ինչպէս ունայն է աս աշխարհը . թէ ինչպէս փառա-
ւորեալ է երկինքը : Քրիստոս մեզի Ուսուցիչ ունենալ
նուս համար , պարտինք զգալ որ առանց անոր յիմար
ենք . պարտինք սորվելու կամեցող ըլլալ , և պարտինք
ուրախութեամբ ու անկեղծ մտօք ընդունիլ և կատարել
ան ամէնը որն որ ինքը կը սորվեցունէ մեզի : Յօհ .
է . 17 : Ինքն արդարութեան մեծ Արեգակն է , անոնք որ
խաւարէն փախչիլ կ'ուզեն , պէտք է որ իր լոյսին գան :

Գ . Որ կարենայ գիտնալ ան աշխարհը որուն մէջ
մենք կը բնակինք , և մարդոց նեղութիւնները , փոր-
ձութիւններն ու տրամութիւնները : Ուր որ մենք կը
բնակինք՝ ինքն ալ բնակեցաւ . ինչ որ մենք կը զգանք
ինքն ալ զգաց , մեղքէն 'ի զատ : Ուրեմն կրնայ հա-
մախրութիւն ունենալ մեզի հետ , ու օգնել մեզի . և
մենք իրմէն ողորմութիւն ու շնորհք պիտի գտնենք
պէտք եղած ատենը : Փրկիչն իր եղբայրներուն նման
ըզալով եկաւ (Եբր . Բ . 17) մեզի շատ մօտ , և որ-
չափ որ մօտ է , այնչափ ալ պատուական է :

Դ . Եւ որ կարենայ բարի ու կատարեալ օրինակ
մը ցուցնել մեզի՝ որ Աստուած ու մեր ընկերները
սիրենք :

Իր օրինակէն կը սորվինք , թէ ինչպէս ապրելու ու
մեռնելու ենք : Իր օրինակը կատարեալ է . ու որչափ
որ մենք իր օրինակին կը հետեինք , այնչափ կը մօ-

տենանք հատարելութեան և ան ամէն հանգամանքնէրուն՝ որ ազնիւ ու առաքինի, սուրբ ու բարձրացեալ են Աստուծոյ ու բոլոր աշխարհի առջև :

Ե . Քրիստոս ինքն Աստուած էր ու մարդ ըլլալու հաճեցաւ , որ կարենայ չարչարուիլ ու մեռնիլ մեզի համար , մեր Ռւսուցիչն ըլլալ , և մեր կարեկից բարեկամն ու Փրկիչը , մեր հատարեալ օրինակն ու առաջնորդը պատուոյ ու անմահութեան . բայց թէ որ զինքը ասանկ չընդունինք , ի՞նչ օգուտ ունի մեզի : Թէ որ անարգենք Մեծ Աստուածն ու մեր Փրկիչը , ի՞նչ պիտի ըլլայ մեր վախճանը , ուրիշ բան չէ՛ բայց միայն կորուստ :

—

Կ . Քրիստոս մեզ պատիժէն հ'աղտտէ :

Եսայ . ԾԳ . 1—12 :

Հ . Մենք մեղաւոր ենք , Աստուած ալ մեզի բարկացեր է . ուրեմն ի՞նչ պիտի յուսանք իրմէն :

Պ . Պատիժ : Զայտ . ԻԲ . 12 :

Աստուած արդար դատաւոր է . ու Աստուած Քրիստոսին ամէն օր բարկացած է : Սաղ . Է . 11 : Վասն զի դուն անօրէնութիւն ուղող Աստուած չես . չարքքու քողք պիտի չընահի : Հսարաները քու աչքերուդ

առջին պիտի չկենան . բոլոր անօրէնութիւն գործող-
ները կ'ատեն : Մարտ. Ե . 4 , 5 : Վասն զի Որդին մար-
դոյ իր հօրը փառքովը պիտի դայ իր հրեշտակներուն
հետ . և ան ատենը ամէն մէկուն իր գործքերուն հա-
մեմատ հատուցում պիտի ընէ : Մատթ. Ժ. 2 . 27 : Տէ-
րը դիտէ բարեպաշտները փորձութենէ ազատելը , և ա-
նիրաւները տանջանքի համար դատաստանի օրուան սլա-
հելը : Բ. Պէթ . Բ . 9 :

Հ . Մեղաւորներուն պատիժը գալու աշ-
խարհին մէջ սրչափ պիտի տւէ :

Պ . Յաւիտեանս յաւիտենից : Մատթ. Ի. Ե .
46 : Բ. Թեո . Ե . 7—9 : Ղ. Գ . Ժ. 23—26 :

Հ . Ո՛րք տեղ :

Պ . Դժոխքին մէջ : Մարտ. Թ . 43—48 :
Մատթ. Ժ. Ը . 8 , 9 :

Հ . Թէպէտև մեղաւոր ենք , բայց մենք մեղ-
մէ արժանաւոր բան մը չե՞նք կրնար ընել՝ որ
Լստուած հաճեցունեն ու իրմէն թողութիւն
դանենք :

Պ . Չէ՛ :

Աս գիտնալով՝ որ մարդ օրէնքին գործքերէն չկր-
նար արդարանալ , հապա Յիսուս Քրիստոսի հաւատ-
քէն : Գառ . Բ , 16 : Չէ թէ արդարութեան գործքե-
րէն՝ որ մենք ըրինք , հապա իր ողորմութեանը համե-
մատ մեզ փրկեց : Տեթ . Գ . 5 :

Հ . Մենք տանջանքներուն տեղը երթալէն
 ետքը նորէն դուրս պիտի ելլէնք :

Պ . Զէ՛ . մեղքին պատիժը յաւիտենական
 է :

Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը ,
 իսկ արգարները՝ յաւիտենական կեանքը : Մատթ .
 ԻԵ . 46 :

Հ . Ուրեմն մենք յանցաւոր ու կորսուած
 ենք . բայց մէկը չկայ որ անհուն սիրով աշ-
 խարհ եկաւ մեզ փրկելու համար :

Պ . Հրամարես :

Հ . Ո՛վ է անիկայ :

Պ . Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին :
 Յօհ . Գ . 16 : Դ . 42 : Գլուհ . Ի . 11 : Գաղ .
 Դ . 4 , 5 : ԵՏԻՃ . Ի . 5 : Ե Յօհ . Գ . 5 : Դ . 10—
 14 :

Հ . Մեր մեղքերուն պատիժէն Յիսուս ի՛նչ
 կերպով կը փրկէ մեզ :

Պ . Ինքը մեր տեղը մեզի համար չարչար-
 ուեցաւ ու մեռաւ : Հատվճ . Գ . 23—26 : Ե .
 6—8 : Ե Պետ . Գ . 18 : Ե Կորնթ . ԺԵ . 3 : « Ինչ
 քը մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ ,
 և մեր անօրէնութիւններուն համար ծեծ-
 ուեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր
 վրայ եղաւ . և անոր վերքերովը մենք բժշկուե-

ցանք » : Եսայ . ԾԳ . 1—12 : Մատթ . ԽՕ . 31 : Յօհ . Ե . 29 : Հատվժ . Գ . 25 : Եբր . Ժ . 5—10 :

Հ . Մեր փրկուելուն ուրիշ ճամբայ մը կայ Յիսուս Քրիստոսէն զատ :

Պ . Չէ՞ : Յօհ . Ժ . 9 :

Ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու : Գործ . Գ . 12 . Ան որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի . և ան որ Որդիին չհնազանդիր , անիկայ կեանք պիտի չտեսնէ . հասլա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ : Յօհ . Գ . 36 : Քանզի մէկ Աստուած մը կայ , ու մէկ միջնորդ մը Աստուծոյ ու մարդոց մէջը՝ Քրիստոս Յիսուս մարդը . որ իր անձը ամենուն տեղը փրկանք տուաւ՝ իր ատենին վկայութիւն ըլլալու : Ա ՏԻժ . Բ 5 , 6 :

Հ . Ուրիշ Փրկչի մը կը կարօտի՞նք :

Պ . Չէ՞ , մե՞նք իրմով կատարեալ ենք :

Քանզի գիրքը կ'ըսէ . « Զգուշացէք՝ չըլլայ որ մէկը ձեզ կողմատէ փիլիսոփայութիւնով ու փուճ խաբէութիւնով , որ մարդոց աւանդութեան պէս է՝ ու աշխարհիս սկզբունքներուն պէս , և չէ՛ թէ Քրիստոսի վարդապետութեանը պէս . ինչու որ անոր մէջը կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը՝ մարմնապէս : Կող . Բ . 8 , 9 :

Իսկ դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով, որ ան մէ-
զէ Աստուծմէ իմաստութիւն՝ արդարութիւն՝ սրբութիւն
և փրկութիւն եղաւ . որ ինչպէս գրուած է, Ան որ
կը պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ : Ա կորնթ .
Ա . 30 , 31 :



« Աստուծոյ բարկութիւնը պիտի յայտնուի երկինքէն
մարդոց ամբարշտութեանն ու անօրէնութեանը դէմ » :
« Մեղքին վարձքը մահ է » :

Ա . Թէ որ մենք Փրկիչ մը չունենանք , յաւիտեանս
յաւիտենից կորսուած ենք . մենք ինքզինքնիս կրնանք
փրկել . չէ՛ , չենք կրնար . մենք ինքնիրեննուս Աստու-
ծոյ առջևը արժանաւոր բան մը չենք կրնար ընել , որ
բոլոր մեր գործած չարութիւններուն փոխարէն մը ըլ-
լայ , ու այնպէս իր շնորհքը և ներելը ծախու առնենք .
ինչու որ մեղանչեցինք . և թէպէտ ասկէ ետև մէյ մըն ալ
մեղք չգործենք , բայց մեր գործած մեղքերուն համար
պարտաւոր ենք պատիժ կրելու : Չենք կրնար տանջանայ
տեղը երթալ ու մեր մեղքերուն համար պատժուիլ , ու
ետքը նորէն գուրս գալ ու փրկուիլ . ինչու որ մեղ-
քին պատիժը անվախճան ու յաւիտենական է : Մե-
ղաւորը անգամ մը գժօխք երթալու որ ըլլայ , բնաւ
մէյ մըն ալ ան ահագին տեղէն գուրս պիտի չելլէ : Եւ
դատարկ բան է մեզի յուսալ թէ մենք ինքզինքնիս թէ
որ չկրնանք փրկել ալ՝ Աստուած մեր վրայ պիտի ու-
ղորմի ու մեզ պիտի չպատժէ : Քանզի ինք իմացուց

որ չարերը անպատիժ պիտի չմնան . ու ինքն ալ իր խօսքէն սիտի չանցնի :

Ուրեմն մենք Փրկչի մը կը կարօտինք , անանկ մէկու մը՝ որ մեզի համար մեր մեղքերը կրէ , և Աստուծոյ թողութիւնն ու սէրը պարգևէ մեզի :

Բ . Յիսուս Քրիստոս է աս Փրկիչը : Որ մեր ու Աստուծոյ մէջ տեղը կը մանէ մեր խաղաղարարին պէս : Որ կը հաճի անհուն սիրով մեր տեղը բռնել : Որ կը յայտնուի մեր Ազատիչին պէս : Որ կը կրէ մեր մեղքերը բուն իր անձին մէջ խաչին վրայ , ու Աստուած ալ հաճութեամբ զինքը կ'ընդունի մեր տեղը . ինքը մեզի համար կը չարչարուի . ինքը կը հաստեցանէ մեր մեղքին պարտքը . կը մեռնի « Արգարը անարդարներուն համար » :

Գ . Եւ ինքն է կատարեալ ու մի միայն Փրկիչը :

Մեր փրկութեան գործը ինքը կատարեց . մենք բան մը չենք կրնար ընել , ինքը մեզի համար ինքզինքը պատարագ ու զոհ մատուց Աստուծոյ՝ բոլորովին հաճելի և ընդունելի ըլլալով : Ուրիշով մը փրկութիւն չկայ . ուրիշի մը չենք կարօտիր , հասար իրմով կատարեալ ենք (ա) : Ո՛վ որ Յիսուս Քրիստոսէն աւելի ուրիշ

(ա) . Իսկ դուք անկէ էք Յիսուս Քրիստոսով , որ ան մեզի Աստուծմէ խմաստութիւն՝ արդարութիւն՝ սըրբութիւն և փրկութիւն եղաւ . որ ինչպէս գրուած է , Ան որ կը պարծենայ՝ Տէրովմով թող պարծենայ : Ա Կորնթ . Ա 30 , 31 : Եւ դուք ալ անով լցուած էք . որ ինքը գլուխ է բոլոր իշխանութեան ու պետութեան : Կող . Բ . 10 :

Ճամբայ մը կը փնտռէ, չկրնար փրկուիլ (ա) :

Դ • Թէ՛ մեղի և թէ բոլոր աշխարհի ամենէն մեծ ուրախարար աւետիս ան է, որ Աստուած իր՝ նախատես իննամբօլը մեղի Փրկիչ մը պատրաստեց մեզ մեղքէն ու Դժոխքէն ազատելու համար :

Ուստի խոնարհաբար խոստովանելով մեր մեղքերն ու մեր իրաւապէս դատապարտուած ըլլալը, խնդրենք Աստուծմէ թողութիւն ու իրեն հետ հաշտութիւն՝ միայն Քրիստոսով, միշտ անոր միջնորդութիւնովը՝ երթանք Աստուծոյ և մեր աղօթքներն ու շնորհակալութիւնները մատուցանենք անով, և անոր վրայ հաւատք ունենալով՝ բարիք • և երբոր պարծինք՝ անով պարծինք • կորսուելու մարդոց փրկութիւնը միայն Քրիստոսով է • քանզի ինքն է ամէնը՝ ամէն բանի մէջ :

Յ • Յիսուս Քրիստոս չարչարուեցաւ ու մեռաւ մեզի համար խաչին վրայ :

Մատթ. • ԻՆ • 1—36 :

Զ • Ո՞ր քաղաքը խաչուեցաւ մեր Փրկիչը :

Պ • Երուսաղէմ՝ քաղաքը :

(ա) • Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ • ինչու որ անկէ ՚ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տա կը մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու : Գործ • Դ • 12 :

Հ . Ի՞նչ էր ան տեղին անունը ուր որ ինքը
խաչուեցաւ :

Պ . Գողգոթա՛ ու Գազաթն : Մատթ . Ի . 33 : Յօհ . ԺԹ . 17 :

Հ . Որո՞նք զինքը խաչուելու դատապարտեցին :

Պ . Հրեաները բուն իրեն ազգը : Յօհ . Ե . 11 : Եսայ . ԿԳ . 1—3 :

Հ . Ո՞վ մատնեց իր Տէրը :

Պ . Յուդան : Մատթ . Ժ . 4 . Յօհ . ԺԳ . 21—27 :

Հ . Բահանայապետները քանի՞ կտոր արծաթ տուին Յուդային՝ որ Յիսուսն իրենց մատնէ :

Պ . Երսուն կտոր : Մատթ . ԻԳ . 14—16 : Յօհ . ԺԳ . 1—16 :

Հ . Ի՞նչ էր ան Պարտէզին անունը՝ որուն յէջն էր Յիսուս, երբոր Յուդան զինքը մատնեց :

Պ . Գէթսեմանի : Յօհ . ԺԸ . 1 , 2 :

Հ . Յուդան ի՞նչպէս մատնեց Յիսուսը :

Պ . Համբուրելով : Մատթ . ԻԳ . 48—50 :

Հ . Յիսուսին դէմ ի՞նչ վկայութիւն ըրին հրեաները :

Պ . Սուտ վկայութիւն : Մատթ . ԻԳ . 57—61 :

Հ . Ինչո՞ւ Հրեաները Յիսուսը մեռցունել ուզեցին .

Պ . Քանզի նախանձեցան անոր վրայ ու ատեցին զինքը : Մատթ . Ի՛ն . 18 :

Հ . Ո՞վ էր ան Հռովմայեցի կառավարը որն որ Հրեաները համոզեցին որ Յիսուսը խաչը հանէ :

Պ . Պոնտացի Պիղատոս : Մատթ . Ի՛ն . 2 :

Հ . Ի՞նչ յանցանք ձգեցին անոր վրայ Պիղատոսին առջևը :

Պ . Թագաւոր ըլլալ կ'ուզէ , ըսին : Ղ . Գ . 1 . Ի՛Գ . 1—3 :

Հ . Պիղատոս հաւտանց որ Յիսուս յանցաւոր է ու խաչուելու արժանի :

Պ . Չէ : Ղ . Գ . Ի՛Գ . 4—15 :

Հ . Պիղատոս Յիսուսը թող տալ ուզեց :

Պ . Այո՛ : Յօհ . ԺԹ . 4—12 :

Հ . Երբոր Պիղատոս անոնց ձեռքը տուաւ Յիսուսը որ խաչուի , ի՞նչ ըրաւ ժողովուրդին առջևը :

Պ . Զուր առաւ ու իր ձեռքերը լուաց : Մատթ . Ի՛ն . 24 , 25 :

Հ . Պիղատոս՝ Հերովդէսը և Քահանայապետներն ու զինւորները ի՞նչ ըրին Յիսուսը խաչ հանելու տանելէն առաջ :

Պ . Ծեծեցին ու ծաղր ըրին զինքը : Գլուհ .
ԻԳ . 11 :

Հ . Յիսուս ինքը կը վերցունէր իր խաչա-
փայտը :

Պ . Հրամերես, բայց ետքը մէկը բռնեցին
Սիմոն Կիւրենացին, որ Յիսուսի խաչը տա-
նելուն օգնէ : Գլուհ . ԻԳ . 26 :

Հ . Ո՞վ էին ան երկու մարդիկը՝ որ Յիսուսի
հետ խաչուեցան :

Պ . Երկու գողերը : Յօհ . ԺԹ . 18 :

Հ . Խաչելու թիւնով եղած մահը ինչպէս
մահ էր :

Պ . Շատ ցաւալի ու նախատալից :

Հ . Որո՞նց համար կրեց Յիսուս աս նախա-
տինքը :

Պ . Սեզի համար : Եսայ . ԾԳ . 10 : Ի
Կորնթ . Ե . 21 :

Հ . Իր թշնամիները որ զինքը խաչեցին ,
ինչպէս նախատեցին զինքը :

Պ . Կը նախատէին զինքը իրենց գլուխը
շարժելով : Սաղմ . ԻԿ . 39—44 :

Հ . Ինք ինչպէս աղօթեց անոնց համար :

Պ . « Հայր՝ թողու թիւն տուր ատոնց , ին-
չու որ չեն գիտեր ինչ կ'ընեն » : Գլուհ . ԻԳ .
34 :

Հ . Ո՛րչափ ատեն խաւար եղաւ բոլոր երկրի վրայ :

Պ . Իրեք ժամ : Մատթ . ԻՆ . 45 : Մարկ . ԺԵ . 33 :

Հ . Իններորդ ժամուն Յիսուս բարձր ձայնով ի՛նչ կանչեց :

Պ . « Լստուած իմ՝ Լստուած իմ , ինչո՞ւ զիս թողուցիր » : Մատթ . ԻՆ . 46 : Մարկ . ԺԵ . 34 .

Հ . Երբոր Յիսուս մեռնելու վրայ էր , ի՛նչ ըսաւ :

Պ . « Լ՛մէն բան կատարուեցաւ » : « Հայր , քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս » : Ղրւհ . ԻԳ . 46 :

Հ . Երբոր Յիսուս մեռաւ , ի՛նչ պատահեցաւ :

Պ . « Երկիրը շարժեցաւ , և քարերը պատռեցան . ու գերեզմանները բացուեցան » : Մատթ . ԻՆ . 50—53 :

Հ . Ի՞նչ էր ան հարուստ աշակերտին աւուներ՝ որ Քրիստոսի մարմինը խաչին վրայէն վար առաւ , ու իր գերեզմանին մէջը դրաւ :

Պ . Յովսէփ : Ղրւհ . ԻԳ . 50—53 :

Հ . Քրիստոս ո՞ր օրը մեռե՞լներէն յարութիւն առաւ :

Պ . Թաղուելուն երրորդ օրը՝ որ շաբաթին առջի օրն էր . այսինքն կիրակի օր : Մարտի . Ի . 62—66 :

Հ . Քրիստոս Երկինք համբառնալէն առաջ իր աշակերտներուն քանի՞ օր երեցաւ զանազան ատեն ու զանազան տեղեր :

Պ . Քառսուն օր . Գործ . Բ . 1—3 : Ե Կորնթ . Ժ . 4—8 : Գ Դմէ . Ի . 304 . Ի Ե Ի Ե :

Հ . Քրիստոս ո՞ր լեռնէն համբարձաւ :

Պ . Չիթենեաց լեռնէն : Մարտի . Ժ . 19 :

Հ . Յիսուս հիմա ո՞ւր կը նստի :

Պ . « Ըստուծոյ աջ կողմը » : Մարտի . Ժ . 19 : Ե Պետր . Գ . 22 :



Պէտք էր որ Աստուծոյ Որդին մեռնի մեզ վերկելու համար . և իր մահուան ժամանակն ու կերպը առաջուց սահմանուած էր Աստուծոյ անհուն խնայողութիւնովը :

Ա . Ինքը խաչին վրայ մեռաւ խիստ անարդ ու անողորմ մահով մը : Ինքը խաչելութեան ցաւերը և սաղնասաները կրեց անօրէն մարդոց ձեռքովը : Բայց աս ամենէն զատ՝ իր հօրը երեսը ծածկուեցաւ իրմէն , ու անոր բարկութիւնը իր վրան ինկաւ : Մեղքի համար կրած իր չարչարանքներուն մեծութիւնը Աստուած միայն գիտէ . նայեցէ՛ք իրեն՝ որ իր քաշելու չարչարանք .

ներն առաջուց տեսնելով, ինչպէս մեծ ահով ու դողով արիւնի մեծ կաթիլներ գետինը վազուց Գէթսէմանի պարտէզին մէջը : Լքէցէ՛ք նաև ան ցաւաղին կանչելը, որն որ մարդ չկրնար զգալ ու խմանալ, « Աստուած իմ՝ Աստուած իմ, իա ինչո՞ւ թողուցիր » :

Բ • Եւ հարկաւոր էր որ Աստուծոյ Որդին մեռնէր մեր վրիճակները համար : Այո՛ : Ուրեմն մենք կորսուած էինք : Եւ իր արիւնէն զատ ուրիշ արիւն մը չէ՛ր կրնար մեղքի քաւութիւն ընել : Ո՛չ ամենակին : Ուրեմն մեղքը իրաւցունէ չար ու լեզի բան մըն է : Աստուած անշուշտ կ'ատէ մեղքը և անշուշտ պիտի պատժէ, որովհետև բուն իր սիրելի Որդին չննայեց որ անիկայ չէ թէ ինքիրմէն մեղաւոր էր, հասա մեղաւորներուն տեղն անցնելուն, անոնց մեղքերն իր վրան տանելուն համար տանջուեցաւ, մինչև անգամ ինքզինքը ՚ի մահ մատնելով : Ուստի մեղքը չատե՛նք, և չարութիւնք անոր վրայ, ու չփախչի՛նք անկեց՝ բոլոր չարիքներուն ամենէն սոսկալին սեպելով անիկայ :

Գ • Եւ Յիսուս ազատաբար յանձնառու եղաւ • ու Հայրն ալ կամաւ թողո՞ւց իր Որդին որ ասանկ մահով մը մեզի համար մեռնի : Ուրեմն Հայրն ու Որդին կը սիրեն մեզ անհուն սիրով • (Յօ՛ւ • ԺԵ • 13 : Հոով՛ • Ե • 6—8 •) ասանկ սիրով մը՝ որ արժան է մեր քաւուցեալ ու ապստամբ սիրտերը կտրել ու բռնադատել որ մենք բողբոլին Աստուծոյ համար ապրինք (*) :

(*) • Եւ ամենուն համար մեռու է, որ կենդանի է •

Դ • Քրիստոս չարչարուեցաւ չար մարդոց ձեռքերէն, նախաախնք ու թուք, և ծեծ ու մահ ընդունելով մեղի համար: Թէ որ պէտք ըլլայ մենք ալ նոյն պէս թող չարչարուինք իրեն համար. և ինչպէս որ ինքն աղօթեց իր թշնամիներուն համար ու ներեց աւնոնց, մենք ալ նոյնն ընենք: Գործ. Է. 59:

Ե • Ինքը մեռելներէն յարուժիւն առաւ յաղթանալու իրեք օրէն ետքը: Իր յարուժիւնը փորձով ցուցուց որ ինքն իրաւցունէ Աստուծոյ Որդին էր ու աշխարհի Փրկիչը. որ մեռնելէն ետքը հոգին կ'ապրի. և որ բոլոր մեր մարմիններն ալ յարուժիւն պիտի առնեն Աստուծոյ սահմանած օրը: Կեանքն ու անմահութիւնը լոյսին գէմը կը բերուին Աւետարանով չէ թէ ուրիշ բանով:

Զ • Ինքը երկինք համբարձաւ ու Աստուծոյ աջ կողմը կը նստի: Բարձրացեալ Տէր ու Փրկիչ է ինքը՝ որ կարող է փրկել ան ամէնը որ Աստուծոյ կու գան իրմով: Միշտ հոն կը բնակի թագաւորելով, տիրելով, յաղթելով իր թշնամիները, և պահպանելով իր եկեղեցին ամէն տակն: Մատթ. ԻԳ. 20: Եփե. Ա. 18—23: Երջանիկ են սնոնք՝ որ իր պատուական արիւնին քաւութենէն բոժին ունին:

Ղովները՝ ալ իրենց անձերուն կենդանի չըլլան, հապաանոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարուժիւն առաւ: Բ. Կորնթ. Ե. 15: Բայց ես՝ քաւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը, որ անով աշխարհ ինձի խաչը ելած է, ես ալ աշխարհի Գաղ. Զ. 14:

6 . Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար :

Եսայ . ԾԵ . 1—13 :

Հ . Տէր Յիսուս բոլոր աշխարհի համար
մեռաւ՝ թէ միայն մէկ մասին համար :

Պ . Բոլոր աշխարհի համար :

Հ . Յիսուս իր աշխարհ խրկուելուն վրայով
ինչ կ'ըսէ :

Պ . « Հայրը իր Որդին խրկեց աշխարհի
Փրկիչ ըլլալու » : Ե. Յօհ . Դ . 14 :

Հ . Յօհաննէս Սկրտիչ ինչ ըսաւ Քրիստոս
ի վրայով :

Պ . « Ընտանիքի Գառն՝ որ աշխարհի
մեղքը կը վերցունէ » : Յօհ . Ե . 29 .

Հ . Տէր Յիսուս իր Առաքեալներուն հրա-
մայեց որ Աւետարանը բոլոր Աշխարհի քարո-
զեն՝ թէ մէկ մասին միայն :

Պ . Բոլոր աշխարհի :

Հ . Իր վերջին պատուիրանքն անոնց ինչ
էր :

Պ . « Գացէք բոլոր աշխարհ, ու Աւետարա-
նը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն » :
Մարկ . ԺԳ . 15 , 16 :

Հ . Ուրեմն Առաքեալները գացին ու քարոզեցին Աւետարանը բոլոր աշխարհի :

Պ . Հրամարես : Մարկ . ԺԳ . 20 : Գործ . Ի . 1—21 :

Հ . Տէր Յիսուս կը հրաւիրէ՞ ամէն մեղաւորներն իրեն դալու ու փրկուելու , թէ միայն անոնց մէկ մասը :

Պ . Ամէն մեղաւորները :

Հ . Իսէ նայիմ , ի՞նչպէս կը հրաւիրէ :

Պ . « Եկէք ինձի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ , և ես ձեզ պիտի հանգչեցունեմ : Իմ լուծս ձեր վրայ առէք . և ինծմէ սորվեցէք որ հեզ եմ ու սրտով խոնարհ , և ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք : Ինչու որ իմ լուծս քաղցր է , և իմ բեռս թեթեւ » : Մատթ . ԺԵ . 28—30 :

« Հայրը իր Որդին խրկեց աշխարհի Փրկիչ ըլլալու » . Յիսուս երեցաւ և յայտնեց թէ ինքն է Փրկիչը . և յարմար ստեղծեց ինքզինքը զոր մատուց « բոլոր աշխարհի մեղքերուն համար » : Ինքը մարդասիրութեամբ հրաւիրեց ամէն՝ որ իրեն գան , և պատուիրեց իր Առաքեալներուն , « Գացէ՛ք բոլոր աշխարհ , և Աւետարանը քարոզեցէ՛ք բոլոր ստեղծուածներուն » .

Ա . Յիսուս Քրիստոս աշխարհի Փրկիչն է . իր պատուական արիւնը բաւական է բոլոր աշխարհի մեղքերը

լուալու : Թող բոլոր աշխարհը դայ , և իր ըրած հաշտութիւնը ամենուն համար բաւական պիտի ըլլայ : Ինքը կարող է փրկելու որչափ որ ըլլան փրկութեան փափաքողները , ամէն տեղի մէջ , ամէն վիճակի մէջ , աշխարհի սկիզբէն մինչև վերջը : « Յիսուս Քրիստոս նոյն է երէկ և այսօր և յաւիտեան » :

Բ . Ուստի իրմով եղած փրկութիւնը ձրի է ամէն ուզողներուն համար : Հոգ չէ՛ աշխարհիս որ կողմը որ ըլլանք , թէ Արևելք ըլլանք , թէ Արևմուտք , թէ Հիւսիս , թէ հարաւ : Հոգ չէ՛ ինչ վիճակի մէջ որ ըլլանք , թէ հարուստ , թէ աղքատ , թէ իմաստուն , թէ յիմար , բարձր կամ ցած . հոգ չէ՛ ոչ ալ ինչ հասակի մէջ որ ըլլանք , թէ ծեր կամ պատանի , արու կամ էգ . ամէնքս ալ մեզաւոր ենք , ու Քրիստոս է Փրկիչ ամէն մեզաւորներուս համար :

Գ . Աւետարանը՝ որ անով միայն կը գտնուի փրկութիւնը , ամենուն ալ խրկուելու է : Մտնոք որ Աւետարանը ունին՝ պարտաւոր են խրկել անիկայ անոնց ալ՝ որ չունին , մեր Փրկչին վերջին պատուիրանքին համեմատ : Ամէն մարդոց պէտք է քարոզել՝ թէ Փրկիչ մը կայ , ու թէ կրնան փրկուել : Թէ որ մենք՝ որ Աւետարանը ունինք՝ զանց կ'ընենք կամ չենք հաճիր անիկայ անոնց ալ տալ որ չունին , կամ խափանելու կարողութիւնն ունենալով չենք թողուր անոնց որ իրենք ալ ստանան անիկայ ու կարգան , մեծապէս պատիժի արժանի ենք Աստուծոյ առջին : Ի՛նչ մեծ արածնութիւն է մարդուս որ Քրիստոսի գլխութիւնը

աարածէ ու հողիներուն փրկութեանը օգնութիւն ընէ .
 և անոնք որ չեն կրնար անձամբ երթալ ու Քրիստոս
 քարոզել, կրնան օգնել իրենց ազօրքովը, ու իրենց
 ուղորմութիւնովն ուրիշները խրկել որ քարոզեն, ու ա-
 նոնց հետ ալ Սուրբ Գիրքը խրկել: Ասիկայ արտօնու-
 թիւն ու պարտաւորութիւն է մեզի:

Դ. Իր փրկութիւնը անանկ ձրի, անանկ առատ է,
 որ ուրախութեամբ ու սրտանց ամենուն ընդունելի ըլ-
 լալ արժան է:

Յիսուս իր բոլոր սրտովը կը հրաւիրէ մեզ իրեն
 դալ. մենք իրեն հրաւերքը ընդունելու ենք, որ ասանկ
 մեր փրկութիւնը կատարուի: Վենաց հացը ձրի ու ա-
 ռատապէս պատրաստուեցաւ սուաջուց, «Ձեր ականջը
 խոնարհեցուցէ՛ք, ու ինծի եկէ՛ք, մտիկ ըրէ՛ք՝ ու ձեր
 հողիները սալրին պիտի»: Եսայ. ԾԵ. 3:

7. Անոնք միայն կը փրկուին՝ որ Յիսուսի կը հա-
 ւատան:

Յօհ. Գ. 14—36:

Հ. Տէր Յիսուսի ամենուն համար մեռնելու
 վը ամէնն ալ պիտի փրկուին:

Պ. Չէ՛. միայն անոնք պիտի փրկուին՝ որ
 կը հաւատան իրեն: Յօհ. Գ. 15—36:

Հ • Ի՞նչ կը պատուիրէ Լստուած մեզի՝ իր Որդիին հաւատալուն վրայով :

Պ • « Եւ ասիկայ է անոր պատուիրանքը որ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի անունին հաւատանք, ու մէկզմէկ սիրենք » : Ե. Յօհ. Գ. 23 : Սառ. Ժ. 5 :

Հ • Ի՞նչ կ'ըսէ մեր Տէրը, իրեն հաւատալու ու մկրտուելու վրայով :

Պ • « Լ՛ն որ հաւատայ ու մկրտուի, պիտի փրկուի, և ան որ չհաւատայ, պիտի դատաւարտուի » : Սառ. Ժ. 9. 16 : Յօհ. Գ. 47 :

Հ • Երբոր Բանտապետը հարցուց Պօղոսին ու Շիղային, թէ՛ « Տէրեր՝ ինձի ի՞նչ պէտք է ընել, որ փրկուիմ » . անոնք ի՞նչ պատասխան տուին անոր :

Պ • « Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ » : Գործ. Ժ. 9. 31 :

Հ • Ի՞նչպէս Լստուծոյ որդիքը կ'ըլլանք :

Պ • « Յիսուս Քրիստոսի հաւատալով » : Գաղ. Գ. 26 :

Հ • Ինչո՞ւ Քրիստոսը լսողներուն ամէնք չեն հաւատար իրեն որ յաւիտենական կեանք ունենան :

Պ . Ինչու որ չեն ուզեր : Յօհ . Ե . 40 : Գ . 19 , 20 : Մատթ . Ի . 1—14 :

Հ . Աստուած կ'ուզէ որ մէկը կորսուի :

Պ . Չէ :

Տէրը երկայնամիտ կ'ըլլայ . չուզեր որ մէկը կորսուի , հասկա որ ամէնքը ապաշխարանքի գան : Բ Պեթ . Գ . 9 : Ինչու որ Ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր Եհովան , որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր . հասկա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի . դարձէ՛ք՝ դարձէ՛ք ձեր չար ճամբաներէն . վասն զի ինչո՞ւ մեռնիք՝ ո՞վ Խորայէլի տունը : Եղեմ . ԼԳ . 11 :

Հ . Սեղաւոր մը՝ որ իրեն կուգայ , Յիսուս ալ անիկայ փրկելէն պիտի հրաժարի :

Պ . Չէ . քանզի Տէրը կ'ըսէ . « Ան ամէնը որ շայրը ինծի կու տայ , ինծի պիտի դայ . և ան որ ինծի կու գայ , բնաւ դուրս պիտի չհանեմ » : Յօհ . Թ . 37 : Ղ . Դ . Ե . 42 , 43 :

Հ . Ուրեմն թէ որ մենք կորսուինք , յանցանքը որո՞նն է :

Պ . Բուն մերն է յանցանքը : Առաւ . Ե . 24—33 : Հոռով . Գ . 6—11 :



Թէեւ Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար , և իր պատուական արիւնը բաւական է բոլոր աշխարհի մեղքերը լուսալու :

Ա . Բայց թող մէկը չկարծէ որ ամէնքն ալ պիտի փրկուին , ան ամէնը որ Քրիստոսի կը լսեն՝ մէկ բան մը ունին ընելու . և ամէն մէկը պարտին նոյն բանն ընել . այսինքն մենք պարտինք իրեն հաւատալ . թէ որ չհաւատանք , չենք կրնար փրկուիլ :

Բ . Մարդոյ կորսուելուն պատճառն ան չէ որ Աստուած կ'ուզէ անոնց կորուստը . հասլա բուն իրենք չեն ուզէր որ փրկուին . Աստուած չհաճիր մեղաւորներուն մահուանը կամ պատիժին . բայց մեղաւորն իր մեղքերն ու ներկայ աշխարհը աւելի սիրելով իր կամքովը կը մերժէ Քրիստոսը . և Աստուած արգար ըլլալով՝ մեղաւորը պարտի կորսուիլ :

Գ . Ուրեմն կորսուած մեղաւորը՝ իր կորսուելուն համար , բուն ինքը յանցաւոր պիտի սեպուի յաւիտեանս յաւիտենից :

Դ . Այնչափ մեծ է մեր բնական կուրուծիւնը և չարութիւնը որ Սուրբ Հոգիին կը կարօտինք որ մեզի ցուցունէ մեր մեղաւոր ու կորսուած ըլլալը , ու մեզ դարձունէ Քրիստոսի : Առանց անոր շնորհքին օգնութեանը մենք բնաւ Քրիստոսի չենք կրնար գալ :

8 . Ի՞նչ է Յիսուս Քրիստոսի հաւատալը :

Ղ Դ-ի . ԺԵ . 1—24 .

Հ . Երբոր տղաքը յանցանք մը գործեն , այսինքն՝ իրենց հօրը կամ մօրը չհնազանդին , ի՞նչ պէտք է որ զգան :

Պ . Տրտմութիւն :

Հ . Եւ ի՞նչ պարտին ընել :

Պ . Թողութիւն խնդրել ու մէկ մըն ալ աւանակ չընել :

Հ . Ըստուած ներող և ողորմած է :

Պ . Հրամարեա : Եւեյ . ԼԴ . 6—7 :

Սակայն ամէն բան Աստուծոյ է , որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքովը , ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը : Այսինքն Աստուած էր , որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց , և անոնց յանցանքները իրենց չսեպեց , ու հաշտութեան խօսքը մեր մէջը գրաւ : Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպալնութիւն կ'ընենք , իբրև թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով . կ'ազաւենք իւրի Քրիստոսի կողմանէ , հաշտուեցէ՛ք Աստուծոյ հետ : Վասն զի Աստուած անիկայ՝ որ մեզք չէր գիտեր , մեզի համար մեղաւոր սեպեց , որ մենք անոր միջոցովը Աստուծոյ արգարները ըլլանք : Բ . Կորնթ . Ե . 18—21 :

Հ • Ուստի՛ երբոր մենք Աստուծոյ դէմ՝ մեղանջենք, երբոր մեր Նրկնաւոր Հօրը Հնազանդինք, ի՞նչ պէտք է որ զգանք :

Պ • Խորունկ տրամուծիւն :

Հ • Եւ ուրիշ ի՞նչ ընելու ենք :

Պ • Թողուծիւն խնդրելու ու մէյմըն ալ ա՛նանկ ընելու չենք :

Հ • Ասոր վրայով ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքը :

Պ • « Թէ՛ որ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ՝ ու արդար է՛ անիկայ մեր մեղքերուն թողուծիւն տալու, և մեզ բոլոր անիրաւուծենէ սրբելու » : Ե. Յօհ. Ե. 9 : Հոով՝ Ժ. 9, 10 :

Հ • Պէնտէկոստէին օրը ժողովուրդները խորունկ մը զգացին թէ՛ մեղաւոր էին, և ըսին Պետրոսին ու բոլոր Առաքեալներուն թէ՛ « Սարգիկ Նղբայրներ, ի՞նչ ընենք », Պետրոս ալ ի՞նչ պատասխան տուաւ անոնց :

Պ • « Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղաց թողուծեան համար » : Գործ. Բ. 38 :

Հ • Ի՞նչ է մեր մեղքերուն վրայ ապաշխարելը :

Պ . Լնոնց վրայ տրամիլ , և անոնք խոստովանիլ ու անոնցմէ հեռանալ : Գործ . ԺԹ . 18 : Ի Կորնթ . Լ . 9—11 :

Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտնէր . բայց զանոնք խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ : Առաջ . ԻԸ . 13 :

Հ . Բայց մեր մեղքերուն համար տրամելէն և անոնք Լստուծոյ խոստովանելէն ու մէկդի ձգելէն ետև , որոնն արժանաւորութիւնով լը Լստուած պիտիներէ մեզի :

Պ . Միայն Քրիստոսի արժանաւորութեանը համար :

Հ . Ինչ կ'ըսէ Սուրբ Գիլբերտ ներողամիտը լալու վրայով :

Պ . « Եւ իրարու հետ քաղցր եղիք , գթած , ներելով իրարու , ինչպէս որ Լստուած՝ Քրիստոսով ներեց ձեզի » : Եփե . Դ . 32 : Կող . Դ . 13 :

Հ . Լստուած մեր աղէկ ըլլալուն կամ մեր բարեգործութեանը համար կը ներէ մեզի թէ քողորովին Քրիստոսի համար :

Պ . Բողորովին Քրիստոսի համար : Եփե . Ի . 5—8 :

Որդի մը պիտի ծնանի , ու անոր անունը Յիսուս դնես . քանզի անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն

պիտի փրկէ : Մատթ. Ա. 21 : Ինչու որ Որդին մարդոց
 եկաւ՝ կորսուածը փրկելու : Մատթ. ԺԲ. 11 : Անոր կը
 վկայեն բոլոր մարգարէները թէ ամէն իրեն հաւատա-
 ցողները իր անունովը մեղաց թողութիւն կ'անեն : Գործ .
 Ժ. 43 : Ինչու որ ամէնքը մեղք գործեցին , և Աստու-
 ծոյ փառքէն սրտիսած են : Եւ անոր շնորհքովը ձրի
 կ'արդարանան : Հոով . Գ. 23, 24 : Որ երբ որ գեւ մե-
 ղաւոր էինք , Քրիստոս մեզի համար մեռաւ . ուրեմն
 հիմա որ իր արիւնովը արդարացանք , որչափ աւելի իր-
 մով պիտի աղասինք բարկութենէն : Վասն զի թէ որ
 թըշնամի եղած ատեննիս Աստուծոյ հետ հաշտուեցանք
 իր Որդւոյն մահովը , որչափ աւելի մեր հաշտուած ա-
 տենը պիտի ապրինք անոր կեանքովը : Հոով . Ե . 8—10 :

Հ . Յիսուս իր կենաց ճանապարհ ըլլալուն
 վրայով ի՞նչ կ'ըսէ :

Պ . « Ես եմ՝ ճամբան ու ճշմարտութիւնն
 ու կեանքը . մէկը շօրը քով չգար , եթէ ոչ
 ինծմով » : Յօհ . ԺԴ . 6 :

Հ . Ուրիշ ի՞նչ կ'ըսուի ասոր վրայով :

Պ . « Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ .
 Ինչու որ անկէ ի զատ ուրիշ անուն մը չկայ
 երկինքին տակը մարդոց մէջ տրուած , որ անով
 կարող ըլլանք փրկուելու » : Գործ . Դ . 12 :

Հ . Յիսուս Քրիստոսի հաւատարը ի՞նչ կը
 պատճառէ մեղաւորին սրտին :

Պ . Խաղաղութիւն և ուրախութիւն :

Եւ զանոնք իր տունը տանելով անոնց առջևը սե-
ղան դրաւ, և բոլոր տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ
հաւատարմով: Գործ • ԺԶ • 34 • Բ • 8, 39: Հոռւի • ԺԵ •
13: Ա ԹԷս • Ա • 6:

Հ • Երկինքին մէջ յաւիտեանս յաւիտենից
մի պիտի օրհնենք՝ մեզ իր արիւննովը փրկե-
լուն համար:

Պ • Տէր Յիսուսը: Յայտ • Ե • 5, 6: Ե • 9—
14:

Քրիստոսով փրկութիւն ստանալու համար, պէտք է՝
Ա • Ապաշխարութիւն • ինչու որ առանց ապաշխա-
րութեան անկարելի է որ մէկը Քրիստոսի գայ: Մենք
պարտինք խորունկ ու սրտով տրամիլ մեր Աստուծոյ
դէմ՝ գործած մեղքերնուս համար, պարտինք բան մը
չծածկել ու չսպահել, հասա խոստովանիլ Աստուծոյ
առջևը բոլոր մեր մեղքերը, և յայանել թէ ինչպէս
սաստիկ ցաւ և զղջում կը զգանք անոնց համար • Ինչ-
պէս կ'ատենք անոնք • նաև պարտինք խօսք տալ Աստու-
ծոյ որ իր շնորհքին մեզի օգնելովը մէկ դի պիտի
չգենք անոնք, ու սուրբ կեանք մը պիտի վարենք,
ճիշդ ինչպէս որ ինքը կ'ուզէ ու կը պահանջէ:

Բ • Փրկուելու համար մեր բոլոր յոյսերը Քրիստոսի
վրայ, ու միայն Քրիստոսով պիտի ըլլան: Մենք պար-
տինք աղաչել Աստուած՝ որ մեզ ընդունի շնորհքով •

չէ թէ մենք մեզմէ բարի ենք ու կրնանք անանկ բարի գործքեր ընել՝ որով արժանի ըլլանք իրմէն թողութիւն ու շնորհք ընդունելու . ինչու որ մենք մեզմէ անարժան ենք , արժանի ըլլալով միայն բարկութեան , ու չենք կրնար բան մը ընել Աստուծոյ շնորհքին արժանաւոր ըլլալու համար . մէկ խօսքով կորսուած ենք , ու պարտինք Աստուծմէ թողութիւն ու շնորհք խնդրել միայն Քրիստոսի համար : Մենք չենք կրնար փրկել ինքզինքնիս , Քրիստոս կը փրկէ մեզ : Աւստի պարտինք Քրիստոսը մեզի Փրկիչ առնել և իրեն միայն ապաւինիլ փրկութեան համար : Ինքը քառութիւն ըրաւ մեր մեղքերուն համար և ինքը բարեխօսութիւն կ'ընէ մեզի համար Աստուծոյ առջև . Աստուած ալ զինքը մեղաւորներուն միջնորդ կ'ընդունի , և անոր ամէն ըրածներուն ու չարչարանքներուն համար կը ներէ : ու կը փրկէ մեզ : Ա Վ որնի . Գ . 11 : Հոռվ . Գ . 22—23 :

Գ . Երբոր մենք ասպշխարենք ու Յիսուսին հաւատանք , և թողութիւն գտնելու յոյս ունենանք ու զգանք որ Աստուծոյ սէրը մեր սրտին մէջը ունինք , շատ աղէկ իրաւունք պիտի ունենանք ուրախանալու , և իրաւ պիտի ուրախանանք : Հոռվ . Ե . 1—11 : Ը . 1—39 : Յօ4 . Ե . 27—30 :

Գ . Մեր արդարութեանն ու մեր փրկութեանը բոլոր փառքը և պատիւը Յիսուս Քրիստոսի տրուելու են յաւիտեան : Ան որ մեզ կը փրկէ , մեր փրկութեան փառքն ու պատիւը անշուշտ պէտք է որ ինք ունենայ : Մենք կ'աղաղակենք ' « 2է ' թէ մեզի , ո՛վ

Տէր՝ չէ՛ թէ մեզի, հասրա քու անուանդ փառք տուր » :
 Մաղ՝ ՃԺԵ • 1 : Ա Կորնթ • Ա • 30, 31 : Որչափ որ
 Սուրբ Հոգիին զօրութիւնովը մեր մեղքերը կը դռանք
 և Տէր Յիսուսը սիրով կ'ընդունինք մեր Փրկչին պէս,
 այնչափ աւելի կը խոնարհինք • ու կը փափաքինք որ
 բոլոր փառքը ինքն ունենայ : Փիլիպ • Գ • 7—9 :
 Դաղ • Զ • 14 :

Ե • Վտանգաւոր վիճակի մէջ են ու պիտի կորսուին
 յաւիտեան ամէն անոնք՝ որ Յիսուս Քրիստոսի հաւատա-
 քովը եղած արդարութիւնն ու փրկութիւնը կը մեր-
 ժեն, և արդարութեան ու փրկութեան համար բուն
 իրենց բարի գործքերուն՝ կամ իրենց արդարութեանը
 վրայ կը հաստատեն յոյսերնին : Անոնք չունեցած բա-
 ներնուն կը յուսան : Մարգիկ՝ բուն իրենք ըլլալ կ'ու-
 ղեն իրենց Փրկիչը, բայց ասիկայ անկարելի բան է (ս) :

(ս) • Ան որ Որդիին կը հաւատայ, յաւիտենական
 կեանք ունի • և ան որ Որդիին չհնազանդիր, անիկայ
 կեանք պիտի չտեսնէ • հասրա Աստուծոյ բարկութիւնը
 անոր վրայ կը մնայ • Յօհ • Գ • 36 : Ինչու որ ես կը
 վկայեմ՝ անոնց համար, թէ Աստուծոյ նախանձաւորու-
 թիւնը ունին, բայց ոչ թէ դիտութեամբ : Վասն զի ա-
 նոնք Աստուծոյ արդարութիւնը չգիտնալով, ու իրենց
 արդարութիւնը հաստատել ուղեով, Աստուծոյ արդա-
 րութեանը չհնազանդեցան : Քանզի օրէնքին վախճա-
 նը Քրիստոս է՝ ամէն հաւատացեալին արդարութեան
 համար : Ինչու որ Մովսէս օրէնքէն եղած արդարու-

1. • Մեր Քրիստոսի գալուստն բաւելինքն հա-
ճար պատրաստութեամբ լրացով :

1. • Մենք կամք չունինք Քրիստոսի դալու մեր վրը
կուժեանք համար . հասպա Աստուած է որ կը փոխէ
մեր սիրտերը ու իր հողիովք Քրիստոսի կ'առաջնոր-
դէ մեզ :

2. • Ըստուած իր Արդին մեզի համար
մեռնելու խրկած ըլլալը գիտնալովս՝ կամք
ունինք զինքը սիրելու ու իբրև մեր Փրկինչ
ընդունելու անիկայ :

Պ . Ը¹ . քանզի մեր սիրտերը խիստ չար
են :

Թիւնը կը ստորադրէ, թէ զանոնք կատարող մարդը
անոնցմով պիտի ապրի : Բայց հաւատքէն եղած արդա-
րութիւնը ասանկ կ'ըսէ . Մի ըսեր քու սրտիդ մէջը,
ո՞վ պիտի ելլէ երկինքը, (այսինքն Քրիստոսը իջեցու-
նելու .) կամ թէ՛ Ա՞՞վ պիտի իջնէ անդունդը, (այ-
սինքն՝ Քրիստոսը մեռելներէն հանելու :) Հասպա ինչ
կ'ըսէ . խօսքը մտ է, քու բերնիդ մէջը, և քու սրը
տիդ մէջն է, այսինքն հաւատքին խօսքը որ մենք կը քա-
րողենք : Ինչու որ՝ եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր
խոստովանիս, ու քու սրտիդ մէջը հաւատաս թէ Աս-
տուած անիկա մեռելներէն յարուց, պիտի փրկուիս .
(Վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու,
ու բերնով կը խոստովանի փրկուելու :) Քանզի գերբը
կ'ըսէ . Ամէն ով որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ :
Հասով . Ժ . 2—11 :

Միրաբ ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է : Երէ՛մ . ԺԷ . 9 :

Ինչու որ մարմնաւոր եղողները մարմինին բաները կը մտածեն , ու հոգևոր եղողները հոգիին բաները : Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է , և հոգևոր խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն : Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է . ինչու որ Աստուծոյ օրէնքին չհնազանդիր , մանաւանդ չկրնաք ալ : Վասն զի մարմինով եղողները , չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ : Հոռւ՛մ . Ը . 5—8 :

Այդ՝ մարմինին գործքերը յայտնի են , որ ասոնք են . շնութիւն , պոզնկութիւն , պղծութիւն , գիծութիւն , կռապաշտութիւն , կախարդութիւն , թշնամութիւններ , կռիւներ , նախանձներ , բարկութիւններ , հակառակութիւններ , երկպառակութիւններ , բաժանումներ , չար նայուածքներ , մարդասպանութիւններ , գինովութիւններ , անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են . որ հիմակուց ես ձեզի կը զրուցեմ , ինչպէս առաջուց ալ կը զրուցեի , որ ասանկ բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը սիտի չժառանգեն : Գոր . Ե . 19—21 :

Հ . Երբոր Յիսուս մեզ իրեն գալու ու փրկուելու կը հրաւիրէ , մենք ան ատենը ինչ ընել կը սկսինք :

Պ . « Ըմէնքս ալ ետ քաշուելու կը սկսինք » : Գոր . ԺԷ . 16—20 :

Հ . Մենք երբեմն չենք բարկանար անոնց՝

որ մեզ կը յանդիմանեն մեր մեղքերուն համար և կը ստիպեն որ մեր մեղքերը մէկ դի ձգենք ու Աստուծոյ ծառայենք :

Պ . Հրամարեա :

Աշխարհը ձեզ չկրնար ատել , բայց զիս կ'ատէ , ինչու որ ես անոր վրայով կը վկայեմ թէ իր գործքերը չար են : Յօհ . Է . 7 : Բայց հիմա կը փնտրուէք սպաննել զիս , անսկ մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ , որն որ Աստուծմէ լսեցի . Աբրահամ ատ բանը չորաւ : Յօհ . Ը . 40 :

Հ . Ուրեմն ի՞նչ ատեսակ սիրտերու կը կարօտինք :

Պ . Նոր սիրտերու :

Ո՛վ Աստուած , իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ , և իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ : Սաղմ . ԾԱ . 10 :

Հ . Մենք ինքնիրեննուս կրնա՞նք մեզինոր սիրտ նորոգել :

Պ . Չէ՞ ամենևին :

Բայց որոնք որ զինքը ընդունեցին , անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու , որոնք կը հաւատան իր անուանը , որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմնի կամքէ՝ ոչ ալ մարդու կամքէ , հասլա Աստուծմէ ծնան : Յօհ . Ա . 12 , 13 : Իսկ շնչաւոր մարդք Աստուծոյ հոգիին բաները չընդունիր . ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են , ու չկրնար ալ գիանալ , ինչու որ հոգևոր կերպով կը քննուին : Ա կորնթ . Բ . 14 :

Հ . Յիսուս ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով :

Պ . « Դուք չէք ուզեր ինձի գալ , որ կեանք ունենաք » : Յօհ . Ե . 40 :

Հ . Ի՞նչ է կ'ըսէ մարդոց դատապարտութիւնը :

Պ . « Եւ աս է դատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ էկաւ , ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին . ինչու որ իրենց գործքերը չար էին : Վասն զի ամէն ո՛վ որ չար կը գործէ , անիկայ լոյսը կ'ատէ , և լոյսին քովը չգար՝ որ իր գործքերը ջանդիմանուին : Յօհ . Գ . 19, 20 :

Հ . Մարդիկ կամ հրեշտակները կրնան փոխել մեր սիրտերը բուն իրենց զօրութիւնովը :

Պ . Չէ : Ե. Կորնթ . Գ . 5—7 :

Հ . Ուրեմն որով կը փոխուին մեր սիրտերը :

Պ . Միայն Սուրբ Հոգիով : Յօհ . Գ . 3—8 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ մեր Փրկիչն ասոր վրայով :

Պ . « Մէկը չկրնար ինձի գալ , թէ որ զիս խրկող Հայրը չքաշէ » : Յօհ . Ե . 44, 45 :

Հ . Հայրը մեզ ի՞նչպէս դէպի Քրիստոս կը քաշէ :

Պ . Սուրբ Հոգիով :

Հ . Ուրեմն ի՞նչ պիտի ըլլանք՝ թէ որ Լստուած մեր սիրտերը փոխելու ու մեզ դէպի Քրիստոս քաշելու համար Սուրբ Հոգին չխրկէ :

Պ . Պիտի կորսուինք յաւիտեանն :

Հ . Երբոր բանտապետին նոր սիրտ տրուեցաւ ու դէպի Քրիստոս քաշուեցաւ, ի՞նչ ըսաւ իր կորսուած մեղաւոր մը ըլլալը զգալէն ետքը :

Պ . « Ինձի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ » : Գործ . Ժ.Պ, 30 :

Հ . Ո՛վ ազգեց բանտապետին թէ Լստուած բարկացեր էր իրեն, և թէ ինքը կորսուած մեղաւոր մըն էր :

Պ . Սուրբ Հոգին :

Եւ ինքը երբ որ դայ՝ աշխարհը պիտի յանդիմանէ մեղքի համար, և արդարութեան համար, ու դատաստանի համար : Մեղքի համար՝ որ ինձի չեն հաւատարարդարութեան համար՝ որ ես իմ հօրս քով կ'երթայի, և ալ զիս չէք տեսներ . և դատաստանի համար՝ որ աս աշխարհիս իշխանը դատապարտուած է : Յօհ . Ժ.Ձ . 8—11 :

Հ . Եւ Պօղոս ու Շիղա ի՞նչ ըսին բանտապետին :

Պ . « Հաւատայ՛ Տէր Յիսուս Քրիստոսին ,
 ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ » :

Հ . Ո՛վ բանտապետին նոր սիրտ մը տուաւ
 ու զինքը Տէր Յիսուսի հաւատալու առաջ
 նորդեց :

Պ . Սուրբ Հոգին :

Հ . Աստուած իրմէն խնդրողներուն Սուրբ
 Հոգին կու տայ :

Պ . Հրամարեա :

Ուստի եթէ դուք՝ որ չար էք , ձեր զաւակներուն աղէկ
 ընծաներ տալ գիտէք , որչափ աւելի ձեր հայրը եր-
 կինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց , որ իրմէ կը
 խնդրեն : Ղ.Կ. ԺԱ. 13 :

—

Ի՛նչպէս հիանալի է որ Աստուած « Բուն իր Որդին
 չինայեց , հապա մեր ամենու համար մտանեց » • բայց
 տակաւին չենք երթար իրեն որ փրկուինք :

Ա . Ահա յայտնապէս կը տեսնենք մարդկային սրտին
 կատարեալ՝ խորունկ՝ կամակոր և անփոփոխ վատթա-
 րութիւնն ու չարութիւնը : Ասիկայ ամենակին մէկ կեր-
 պով մը չփոխուիր , բայց միայն Աստուած կրնայ փո-
 խել . քանզի թէ որ մէկը զգուշացնէ ու խրատէ
 մեզ , թէ որ վախցունէ մեզ Աստուծոյ սպառնալիքն ու
 մեզի տալու տանջանքներն խնցոնելով , ասոնց բոլորը

անօգուտ են ու չեն կրնար փոխել սիրաբ. և երբոր Աստուած խանդակաթ սիրով կը հրաւիրէ ու կը համոզէ մեզ, մէջք ամէնքս միաբանութեամբ կը սկսինք ետ քաշուիլ: Մէկը կ'ըսէ, « Ես շատ պզտիկ եմ »: Մէկայը՝ « Ես ալ շատ ծեր եմ »: Երրորդը՝ « Ես գործ ունենալու համար՝ ժամանակ չունիմ »: Չորրորդը՝ « Ես տակաւին շատ ժամանակ ունիմ, երբոր ուզեմ կրնամ »: Հինգերորդը՝ « Ես տակաւին աշխարհը չվայելեցի, ետքը կ'ապաշխարեմ »: Եւ ասանկ ամէն մէկը հրաժարելու բան մը կը դանկ մէկ դի ձը գելով իր խիստ հարկաւոր գործը՝ այսինքն հոգիին փրկութիւնը: Ծշմարխան աս է որ մարդիկ բնականաբար սէր չունին առ Աստուած, ու իրենց սրտերնուն մէջը կ'ըսեն Աստուծոյ, Քրիստոսի, Սուրբ Հոգիին, ու Աստուածաշունչին, « Մէկ դի՛ գացէք մեզմէ »: Անոնք թշնամի են Աստուծոյ, լոյսը կ'ատեն ու չեն ուզեր անոր գալ:

Բ. Թէ որ իրենց մնայ, մարդիկ բոլորովին սկստի կորսուն իրենց ապականութեան մէջը:

Գ. Անոնց սրտին փոփոխութիւնը Հոգին Սուրբ Աստուծոյ գործն է միայն. միայն ինքը՝ որ երկինքն ու երկիրը ստեղծեց, կրնայ մաքուր սիրտ մը ստեղծել մարդու սրտին մէջ (ա):

(ա) • Ասան դի Աստուած՝ որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել, ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց զխտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը: Բ. Կրնի. Գ. Ե:

Գ . Փրկութիւնը բոլորովին ձրի շնորհքէ է . Աստուծոյ շնորհքն է որ իր Որդին մեզի համար մեռնելու հոստայ . Աստուծոյ շնորհքն է որ իր Սուրբ Հոգին մեր սիրտերը փոխելու համար հու տայ . և Աստուծոյ շնորհքն է որ իր Սուրբ Հոգին որսւ որ ինք ուղէ հոստայ : « Մէկը Քրիստոսի չկրնար գալ , թէ որ Հայրը անիկայ չքաշէ » . ու որուն որ Հայրը հաճի , անիկայ կը քաշէ . այնչափ՝ որչափ որ ինք ընտրեց (ա) :

Ե . Թո՛ղ մեղաւորները ծեր ու պատանի սորովին իրենց սիրտերուն չբժշկուելու գէշութիւնը : Անոնք չեն կրնար ինքզինքնին աւելի աղէկ ընել , ոչ ալ ինքնիրեն նուն կրնան փոխել ինքզինքնին . անոնք ասանկ բան մը ընելու յոյս թող չունենան . և Թո՛ղ ինքզինքնին Յիսուս Քրիստոսով Աստուծոյ ողորմութեանը յանձնեն , ու աղօթեն Սուրբ Հոգին ընդունելու համար՝ որով կարենան նորոգուիլ ու փրկուիլ :

(ա) . Իր ուղելովը մեղ ծնաւ Ճշմարտութեան խօսքով՝ որ մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք : Յակ . Ա . 18 :

2 . Մենք սրտինք սրտի փոխոխութիւն ունենալ .
 առ սրտի փոխոխութիւնն ի՞նչ է , և ի՞նչպէս Սուրբ
 Հոգին իր գործը կը կատարէ ու Երկինքին համար կը
 պատրաստէ մեզ :

Յօհ . Գ . 1—21 :

Հ . Փարիսեցիներէն , ու Հրէից իշխան-
 ներէն ո՞վ եկաւ Յիսուսին գիշերով :

Պ . Նիկողեմոս : Յօհ . Գ . 1—9 :

Հ . Յիսուս ի՞նչ ըսաւ անոր :

Պ . « Ճշմարիտ Ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի .
 թէ որ մէկ մարդ մը նորէն չճաննի , չկր-
 նար Աստուծոյ թաղաւորութիւնը տեսնել » :

Յօհ . Գ . 3 :

Հ . Ի՞նչ է ան բանը , որ առանց անոր
 մէկը Տէրը չպիտի տեսնէ :

Պ . Սրբութիւն : Եբր . ԺԲ . 14 :

Հ . Ուրեմն անկարելի՞ է մեզի Երկինք
 երթալ առանց սրտի փոփոխութեան :

Պ . Այո՛ , անկարելի է :

Հ . Երբոր մարդ մը Սուրբ Հոգիով նո-
 րոգուի , մեծ փոփոխութիւն է :

Պ . Հրամարես . քանզի անով կը դառնայ

ասպաշխարհելու, Զիտուսի հաւատալու, Աստուած սիրելու, և բարի կեանք մը վարելու :

Անոնց աչքերը բանալու, խաւարէն՝ լոյսի, ու Սատանայի իշխանութենէն՝ Աստուծոյ դարձնելու, որ անոնք մեղաց թողութիւն ասնեն, և սուրբերուն հետ մասնակից ըլլան՝ ինծի հաւատալով : Գործ. ԻՉ. 18 :
 Վասն զի Աստուած՝ որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել, ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը : Ի Կորնթ. Գ. 6 :

Հ. Կորոզուած մարդը ի՞նչ տեսակ սիրտ ունի :

Պ. Կոր սիրտ :

Եւ ձեզի նոր սիրտ սլտի տամ, ու ձեր ներսիզին նոր հոգի սլտի գնեմ, և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը սլտի հանեմ, ու ձեզի մարմնեղէն սիրտ սլտի տամ : Եւբէ. 1, 2. 26 : ԺԱ. 19 :

Հ. Լինիկայ ի՞նչ տեսակ արարած մըն է :

Պ. Կոր արարած :

Ուրեմն թէ որ մէկը Քրիստոսի մէջ է, անիկայ նոր ստեղծուած մըն է. հիները անցան, և ահա ամէն բան նոր եղաւ : Ի Կորնթ. Ե. 17 : Ինչու որ Քրիստոս Յիսուսով ո՛չ թըլիատութիւնը բան մըն է, ո՛չ ալ անթըլիատութիւնը, հապա նոր ստեղծուած ըլլալն է բունը : Գաղ. 2. 15 : Եփէս. Գ. 23, 24 : Կաղ. Գ. 10 :

Հ . Ընանկ մէկը ի՞նչպէս ծնած կ'ըսուի Սուրբ Գրքին մէջը :

Պ . « Կորէն ծնած » . « Հողիէն ծնած » . « Ըստուծմէ ծնած » : Յօդ . Ե . 13 : Գ . 1—9 : Ե ՊԵՊ . Ե . 23 : Ե Յօդ . Գ . 9 :

Հ . Հիմա անիկայ որի՞ն որդին է :

Պ . Ըստուծոյ որդին : Հոգի . Ը . 14—17 :

Հ . Եւ ո՞ր պիտի երթայ :

Պ . Երկինք : Հոգի . Ե . 1, 2 :

Հ . Ի՞նչպէս կրնաս հասկրնալ թէ մէկը Սուրբ Հողիով իսկապէս նորոգուած է, թէ չէ :

Պ . Իր բռնած ճամբայէն , ու ամէն օրուան վարքէն :

Ամէն ո՞վ որ Աստուծմէ ծնած է , մեղք չգործեր , ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ , ու չկրնար մեղք գործել , քանզի Աստուծմէ ծնած է : Ասով յայտնի են Աստուծոյ որդիքը ու սատանայի որդիքը : Ա Յօդ . Գ . 9, 10 : Մաթթ . Է . 16—27 :

Հ . Կոր սիրտ ունենալէն առաջ ի՞նչպէս կեանք մը կը վարէր :

Պ . Չար կեանք :

Արդ՝ մարմինն գործքերը յայտնի են , որ ասոնք են՝ չնութիւն , պոռնկութիւն . . . բարկութիւններ , հաւառակութիւններ , երկպառակութիւններ , բաժանում

ներ, չար նայուածքներ, մարդասպանութիւններ, գի-
նովութիւններ, անառակութիւններ, ու ինչ որ ասոնց
նման են : Գաղ . Ե . 19—21 :

Հ . Նոր սիրտ մը ունենալէն ետքը ինչպէս
կեանք մը պիտի վարէ :

Պ . Բարի կեանք մը :

Գուք էք աշխարհի լոյսը . քաղաք մը՝ որ լեռան
վրայ կեցած է, չկրնար պահուիլ : Ու ճրագը չեն վա-
ռեր և գներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ,
և լոյս կու տայ բոլոր ամեր մէջ եղողներուն : Անանկ
Թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին, որ տեսնեն
ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր հայրը՝ որ
երկինքն է : Մատթ . Ե . 14—16 : ԺԳ . 23 :

Հ . Երբոր Հոգին փոխէ մեր սիրտերը, ան
ատենը մեզ կատարելապէս սուրբ կրնէ՞, ա-
նանկ որ մենք բնաւ մէյմըն ալ չմեղանջենք
որչափ որ ապրելու ըլլանք :

Պ . Չէ՞ . հապա միայն կը սկսի ան ատենը
մեզ սուրբ ընելու :

Ինչու որ ամէնքս ալ շատ յանցանքներ կ'ընենք . Թէ
որ մէկը խօսքով յանցանք չընէ, անիկայ կատարեալ մարդ
է, որ կարող է բոլոր մարմինն ալ սանձելու : Յակ .
Գ . 2 : Թէ որ ըսենք՝ Թէ մենք մեղք մը չունինք,
ինքզինքնիս կը խաբենք, ու մեր մէջը ճշմարտութիւն
չկայ : Ա Յօ4 . Ա . 8 : Ա կորնթ . Թ . 24—27 : Աս մասին
վստահ ըլլալով Թէ ան որ ձեր մէջը բարի գործ մը

սկսեց, մինչև Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ :
Փիւլի . Ա . 6 :

Հ . Ուրեմն Հոգին ինչ պէտք է որ մեզի ը-
նէ :

Պ . Պէտք է որ մեզի հետ մնայ ու մեր մէջը
իր սկսած բարի գործը լմնցունէ, մեզ բարե-
պաշտութեան մէջ յառաջացունէ քանի որ
կ'ապրինք, և այնպէս մեզ Երկինքին համար
պատրաստէ :

Բայց արգարներուն ճամբան՝ ծագող լոյսին պէս է,
որ երթալով կը լուսաւորուի, մինչև որ կատարեալ օր
ըլայ : Առաջ, Դ . 18 : Մաթթ . ԺԳ . 31—33 : Հուլի . Ը .
11 : Ա կորնթ . Գ . 16 :

Հ . Անանկ է նէ որի՞ն փառք տալու ենք
Երկինքին համար մեր պատրաստութեանը
վրայով :

Պ . Սուրբ Հոգիին :



Մեր Փրկիչը կ'ըսէ . « Թէ որ մէկ մարդ մը նորէն
չծնանի՝ չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել » .
« Պէտք է ձեզի նորէն ծնանիլ » :

Ա . Առանց սրտի փոփոխութեան մենք բնաւ Եր-
կինք չենք կրնար մտնել : Աստուած՝ սրբութեան
Աստուած է . ուրեմն չարերը պիտի վարնտէ իր ներ-
կայութենէն . ինքը Ճշմարտութեան ու արդարութեան

Աստուած է . ուրեմն պիտի պատժէ չարերը յաւիտեան դժոխքին մէջ : Երկինքը սրբութեան՝ ու Աստուծոյ հետ հաղորդութեան տեղ է . ուրեմն հարկաւոր է սրբութիւնը ան ամենուն՝ որոնք որ հոն պիտի երթան : Մեղաւորը չիրնար Աստուծոյ հետ հաղորդութիւն ունենալ, ոչ ալ սուրբերուն ու հրեշտակներուն հետ . ու թէ որ Երկինքը գտնուելու ըլլայ, հոն ուրախ և հանդիստ պիտի չըլլայ, ինչու որ ան սուրբ տեղին համար սրտի պատրաստութիւն պիտի չունենայ . պիտի զգայ թէ Երկինքը բուն իր տեղը չէ : Շատերը առանց սրտի փոփոխութեան՝ կ'ուզեն որ մեռնելէն ետքը Երկինք երթան, չէ թէ Երկինքը կը սիրեն ու անիկայ վայելելու յարմարութիւն ունին, հապա Դժոխքէն ազատելու կը փափաքին : Բայց թէ որ Երկինքը մտնելու վճռուած ըլլային ալ, թշուառական պիտի ըլլային հոն՝ իրենց մեղքով ու անհաւատութիւնով լեցուն հին սրտերուն պատճառաւ :

Բ . Թող աս աղէկ մտման անոնք որ տակաւին նորոգուած չեն . թէ որ ասանկ վիճակի մը մէջ մնալով մեռնին, պիտի իջնեն անոնք բուն իրենց տեղը, այսինքն Դժոխքը :

Յիշեցէ՛ք որ եթէ աս աշխարհիս մէջ չնորոգուիք, բնաւ ամենեկին ալ նորոգուելու չէք : Յայտ . ԻԲ . 11 : Դուք չէ՛ք գիտեր թէ երկաթ ատեն ապրելու էք՝ թէ կարճ . ուրեմն իմաստուն եղիք ու շուտով սկսեցէք և ինքզինքնիդ անհոգ մի թողուք, մինչև որ ան մեծ ու երջանիկ փոփոխութիւնը ստանաք :

Գ . Աս փոփոխութիւնը ճշմարտապէս մեծ ու էր .
 շանիկ է : Քանզի մեղաւորին ունեցած խաւարը լոյսի
 կը փոխուի , անոր տաւելութիւնը՝ սիրոյ , անոր մեղքը՝
 սրբութեան : Եւ ինքը սատանայէն հեռանալով կը մօ-
 տենայ Աստուծոյ , Դժոխքէն կը փրկուի՝ դէպի Եր-
 կինքը կ'առաջնորդուի : Եւ արդարեւ շատ երանելի է
 ան մեղաւորը , ինչու որ Աստուծոյ որդին կ'ըլլայ ա-
 նիկայ՝ Յիսուս Քրիստոսի հաւատքովը :

Դ . Աս սրտի ճշմարիտ նորոգութեան նշանը՝ վար-
 քի փոփոխութիւն մըն է : Կոր սիրաւ նոր վարքի մը
 կ'առաջնորդէ . մեղաւորը՝ չէ՛ թէ ինչ որ առաջ էր ,
 անանկ կը մնայ , հապա՛նոր արարած մը կ'ըլլայ . մեղ-
 քին ու յիմարութեան բոլոր հին ճամբաները մէկ դի
 կը ձգէ , և անոնց տեղը կը ստանայ աղօթքը՝ օրհնու-
 թիւնը՝ հաւատքը՝ և սէրը՝ ու սուրբ հնազանդութիւնը՝
 որ նոր բաներ են : Եւ անիկայ որչափ որ փորձու-
 թիւններ քաշելու ըլլայ , Աստուծոյ Հոգիին օգնու-
 թիւնովը այնչափ աւելի աղէկ կերպով կը յառաջանայ .
 իր շաւիղին լոյսը քիչ քիչ աւելնալով սլայծառ կը
 լուսափայլէ մինչև որ կատարեալ կ'ըլլայ կէս օրուան
 լուսին պէս , երբոր պիտի տեսնէ Աստուած փառքով :
 Եւ ո՛վ որ աս կերպով չյառաջանար առաքինութեան
 ճամբուն մէջ՝ անոր նորոգութիւնը ճշմարիտ չէ :

Ե . Քրիստոնէաները բնաւ մոռնալու չեն որ միայն
 Սուրբ Հոգիին շնորհքովը և օգնութեամբը կրնան յա-
 ռաջանալ դէպի երկինք երթալու ճամբուն մէջ . նոյն
 շնորհքը տուող ու կարող Հոգին՝ որ բարի գործը կը

սկսի յառաջ տանիլ մեր մէջը, պէտք է որ ինք
 յառաջ տանի ու կատարէ ան : Զգուշանանք ուրեմն
 Սուրբ Հոգիին գէտ հակառակելէն ու զինքը վշտացու
 նելէն . քանզի թէ որ ինքը հեռանայ մեզմէ, ամէն բան
 կ'ըլլայ մեզի խաւար ու մեղք, թշուառութիւն ու մահ :



3 . Սուրբ Հոգին կը խօսի մեզի Աստուածաշունչով :

Սաղմ. ԺԹ. 1—14 :

Հ . Ո՞ր գիրքին մէջ Սուրբ Հոգին կը խօսի
 մեզի :

Պ . Սուրբ Աստուածաշունչին մէջ :

Հ . Գլխաւորապէս Սուրբ Հոգին ի՞նչ կ'ըսէ
 մեզի աս Գրքին մէջ :

Պ . Գլխաւորապէս մեզի կը ծանուցանէ թէ
 մենք մեղաւոր ենք, և թէ Նրկինք ու
 դժոխք կայ, և թէ Քրիստոս մեռաւ մեզ
 փրկելու համար, և թէ մենք պարտինք նոր
 սիրտ ունենալ, թէ չէ՝ Նրկինքը չենք կրնար
 մտնել :

Հ . Բնաւ կրնայինք գիտնալ աս մեծ ճշշ
 մարտութիւններուն մէկը, թէ որ Աստուա
 ծաշունչը չունենայինք :

Պ . Չէ՞ :

Ան նոյն ժամուն Յիսուս հոգիով ուրախացաւ ու ըսաւ . Ընորհակալ էմ քեզմէ , ո՞վ Հայր , Տէր երկնի և երկրի , որ աս բաները ծածուկ սահեցիր իմաստուններէն և գիտուններէն , ու աղոց յայտնեցիր . այո՛ , ո՞վ Հայր , ինչու որ քու առջիգ ասանկ հաճելի եղաւ : Ղւմ . Ժ . 21 : Քանզի որովհետեւ Աստուծոյ իմաստութեամբը աշխարհ չճանչցաւ զԱստուած Իբ իմաստութիւնովը , Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները սարկեցունելու : Ա Կրկն . Ա . 21 :

Հ . Որքին խօսքն է Սուրբ Գիրքը . մարդոյ թէ Աստուծոյ :

Պ . Աստուծոյ . » Ի՛նչ որ գիրքը Աստուծոյ շունչն է , և օգտակար է սորվեցունելու , յանդիմանելու , և շտկելու , ու արդարութեան խրատելու համար » : Ի Տե՛Տ . Դ . 16 :

Հ . Պօղոս ի՛նչ կ'ըսէ Տիմոթէոսին՝ Սուրբ Գիրքին վրայով :

Պ . « Եւա զո՞ւ մանկութենէդ ի վեր Սուրբ Գիրքերը զխտես , որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը » : Ի Տե՛Տ . Դ . 15 :

Հ . Պետրոս ի՛նչ կ'ըսէ Աստուածաշունչը գրողներուն վրայով :

Պ . « Ինչու որ մարդարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չտրուեցաւ . հասկա Աս-

տուճոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շար-
ժուած՝ խօսեցան » : Ի Պէր . Ե . 21 :

Հ . Ի՞նչ կերպով խօսեցան :

Պ . Սուրբ Հոգին ըսաւ անոնց ինչ զրեւնին
ու ինչ խօսելնին , և միշտ անոնց հետ էր՝ ա-
նոնք սխալ ընելէն պահելու համար :

Ես ալ հօրը պիտի աղաչեմ , և ուրիշ Մխիթարիչ
մը պիտի տայ ձեզի , որ յաւիտեան ձեզի հետ
բնակի . Ճմարտութեան Հոգին , որ աս աշխարհս ա-
նիկայ չիրնար ընդունիլ . ինչու որ չտեսներ անիկայ , ու
չճանչնար անիկայ . բայց դուք կը ճանչնաք անիկայ ,
ինչու որ ձեր քովը կը բնակի , և ձեր հետը պիտի
ըլլայ : Յօհ . ԺԴ . 16 , 17 : Բայց Մխիթարիչք՝ Սուրբ
Հոգին՝ որ հայրը իմ անունովս պիտի խրիէ , անիկայ
ձեզի բոլորը պիտի սորվեցունէ , և ինչ որ ձեզի ըսի՝
միտքերնիդ պիտի բերէ : Յօհ . ԺԴ . 26 :

Հ . Փրկուելու ուրիշ ճամբայ մը կայ ան
ճամբայէն զատ , որն որ Սուրբ Հոգին կ'իմա-
ցունէ մեզի Աստուածաշունչին մէջը :

Պ . Չէ՞ :

Գիւրքերը քննեցէ՛ք . ինչու որ դուք անոնցմով կը
սեպէք յաւիտենական կեանքը ունենալ . և բուն ա-
նոնք են որ ինծի համար կը վկայեն : Յօհ . Ե . 39 :
Եւ ուրիշ մեկով մը փրկութիւն չկայ . ինչու որ ան-
կէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը

մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուել ըստ : Գործ . Դ . 12 :

Հ . Աստուածաշունչը կարդալէն զատ ի՞նչ ուրիշ միջոց սահմանած է Աստուած, որ մարդիկ սորվին Սուրբ Գիրքին վարդապետութիւնները և փրկութեան ճամբան :

Պ . Աւետարանին քարոզութիւնը՝ որ յատուկ պաշտօն մըն է և Սուրբ Հոգիէն կանչուած մասնաւոր մարդոց կը յանձնուի :

Զգուշացէ՛ք ձեր անձերուն և բոլոր հօտին, որուն վրայ Հոգին Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ Աստուծոյ եկեղեցին հովուելու, որն որ իր արիւնովը ստացաւ : Գործ . Ի . 28 : Աստուծոյ հօտը որ ձեր մէջն է՝ արածեցէ՛ք, վերահացու ըլլալով չէ՛ թէ ահամայ՝ հապա կամաւ . չէ՛ թէ անարգ շահախնդրութեամբ, հապա յօժարութեամբ . չէ՛ թէ վիճակներուն վրայ տիրելով, հապա հօտին օրինակ ըլլալով . և հովուապետին երեցած ատենը փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք : Ա Պեփ . Ե . 2, 3, 4 : Խօսքը քարոզէ՛ . մտադրութեամբ գործիչ պարապէ՛ ատենին ու ատենէ դուրս, յանդիմանէ՛, սաստէ՛, յորդորէ՛ ամէն երկայնմտութիւնով ու վարդապետութիւնով : Բայց դուն ամէն բանի մէջ արթուն կեցիր, նեղութիւններու համբերէ՛, աւետարանիչի գործ գործէ՛, քու պաշտօնդ կատարէ՛ : Բ ՏԻ՛ . Դ . 2, 3 : Եւ ինքը պատուիրեց մեզն՝ որ ժողովուրդի մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուել ըստ : Գործ . Դ . 12 :

ղովորդին քարոզենք ու վկայութիւն տանք, [Թէ՛ անխ-
կայ է Աստուծո՛վ սահմանուած՝ կենդանիներուն ու մե-
ռելներուն դատաւորը : Գործ . Ժ . 42 : Մենք կը քա-
րոզենք խաչեալ Քրիստոսը՝ Հրեաներուն դայ[Թակղու-
թիւն ու Յոյներուն յիմարութիւն . բայց անոնց՝ որ
կանչուած են, [Թէ՛ Հրեաներուն ու [Թէ՛ Յոյներուն,
Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը, և Աստուծոյ ի-
մաստութիւնը : Ա. Կորնթ . Ա . 23, 24 :

Հ . Ուստի յատուկ քարոզիչներէն զատ՝
հասարակ մարդիկ չէ՞ն կրնար աւետարանը
քարոզել իրենց խօսակցութեանը մէջ :

Պ . Կրնան քարոզել . քանզի հիմա պէտք
է որ ամէն մարդ սորվեցունէ իր քաղաքացի-
ին ու իր եղբօրը՝ Տէրը ճանչնալու ճամբան :
Եբր . Ը . 11 :

Եւ ան որը մեծ հալածում՝ եղաւ Երուսաղէմի մէջ
եղող եկեղեցիին վրայ, և առաքեալներէն ՚ի զատ՝ ա-
մէնն ալ ցիրուցան եղան Հրեաստանի ու Սամարիայի
երկիրներուն մէջ : Եւ ան ցիրուցան եղածները կը պը-
տրտէին՝ ու խօսքը կը քարոզէին : Գործ . Ը . 1, 4 : Եւ
ան որ կը լսէ՝ [Թող ըսէ, Եկնուր : Յոյս . ԻԲ . 17 :
Տե՛ս նաև Գործ . ԺԱ . 19, 20, 21 : Մոսթ . Ե . 19 : Գործ .
ԺԸ . 2, 3, 24—26 : Հռոմէ՛ . ԺԶ . 3, 12 :

Հ . Մեր փրկուելուն համար յոյս մը կայ
[Թէ՛ որ անարդէնք Աստուածաշունչ կարդալն
ու քարոզ լսելը :

Պ . Չէ :

Եւ Աբրահամ ըսաւ անոր . Անոնք Մովսէսը ու Մարգարէները ունին , թող անոնց մտիկ ընեն : Ան ալ ըսաւ . Չէ՛ հայր Աբրահամ , հապա թէ որ մեռելներէն մէկը անոնց երթայ , պիտի ապաշխարեն : Եւ անիկայ ըսաւ անոր . Թէ որ Մովսէսին ու Մարգարէներուն մտիկ չեն ընէր , ո՛չ ալ թէ որ մեռելներէն մէկը յարուժիւն առնելու ըլլայ , պիտի համազուին : Ղաւ . ԺԶ . 29—31 : Մէկը թէ որ Մովսէսին օրէնքը անարդէր , առանց ողորմութեան երկու կամ իրեք ղկաներով կը մեռնէր . ալ սրբաբար սաստիկ սպառօրէն արժանի պիտի սեպուի անիկայ , որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ , և ուխտին արիւնը անմաքուր սեպեց , որ անով ինքը սրբուեցաւ , և շնորհաց Հոգին նախատեց : Եբր . Ժ . 28 , 29 :

Հ . Երբ որ մեր Հոգիին փրկուելու ճամբան գիտենք , ի՞նչ պարտինք ընել :

Պ . Պէտք է որ ուրախութեամբ և մեր բոլոր ջանքովը անոր փրկութեանը ջանանք :

Հ . Երբ որ գիտենք թէ Սուրբ Հոգի մը կայ՝ որ կընայ առաջ տանիլ մեզ փրկութեան մեծ ու երևելի գործին մէջը , ի՞նչ պէտք է որ ընենք :

Պ . Պէտք է որ շնորհակալութեամբ ջանանք և աղաչենք Աստուած Սուրբ Հոգիին

Համար՝ որ մեր սիրտերը փոխէ ու մեզ Քրիստոսի տանի, [Թէ չէ պիտի կորսուինք յաւիտեան : Լուսն. Ե. 24—27 :

Հ . Երբոր մէկը քրիստոնեայ կ'ըլլայ Սուրբ Հոգին նորոգելովը, անատենն ալ օգուտ ունի իրեն Լստուածաշունչը :

Պ . Հրամերես . քանզի Լստուածաշունչին միջոցովը Սուրբ Հոգին կը քաջալերէ անկեայ ու կը սորվեցունէ անոր բոլոր իր պարտաւորութիւնները :

Տէրօջը օրէնքը կատարեալ է . հոգին կը նորոգէ . Տէրօջը վկայութիւնը ճշմարիտ է . տգէտը իմաստուն կ'ընէ : Տէրօջը կանոնները շիտակ են . սիրտը կ'ուրախացունեն . Տէրօջը պատուիրանքները պայծառ են , տչքերուն լոյս կու տան : Տէրօջը վախը սուրբ է , յաւիտեան կը մնայ . Տէրօջը դատաստանները ճշմարիտ ու բոլորովն արգար են : Յանկալի են անոնք ոսկիէն , ու շատ փորձուած ոսկիէն . ու խորիսիէ կաթած մեղրէն անուշ են : Նաև քու ծառագ անոնցմով կը խրատուի , ու զանոնք պահելուն վարձքը շատ է : Սաղ. ԺԹ . 7—11 :

Հ . Ուրեմն ի՞նչպէս պարտինք դործածել Լստուածաշունչը :

Պ . Մէնք պարտինք սիրել անիկայ և սորվիլ , ու հնազանդիլ անոր՝ բոլոր մեր կենացը մէջ :

Աս օրինաց գիրքը քու բերնէդ չզատուի, հապա գիշեր ցորեկ անոր վրայ մտածես, որ բոլոր անոր մէջի գրուածները պահես ու կատարես. քանզի ան ստեղծ քու գործքերդ առաջ կը տանիս, և ան ստեղծ յաջողութիւն կը գտնես: Յէս. Ա. 8: Երանելի է ան մարդը՝ որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքալեր, ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար, և ծաղր ընողներուն նստած տեղը չնստիր: Հապա անոր կամբը Աստուծոյ օրէնքին մէջն է, և ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ: Եւ անիկայ ջուրի ճամբաները անկուած ծառի մը պէս պիտի ըլլայ, որ իր ժամանակին իր պտուղը կու տայ. ու անոր տերեւը պիտի չլծափի, և ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի: Սաղմ. Ա. 1—3:

Հ. Եւ մեր բոլոր կենացը մէջ ո՞ր Հոգիին կը կարօտինք՝ որ մեզի սիրել տայ Աստուածաշունչն ու սորվեցունէ, և հնազանդեցունէ անոր:

Պ. Սուրբ Հոգիին:

Իսկ մենք չէ թէ աս աշխարհիս հոգին առինք, հապա ան Հոգին՝ որ Աստուծմէ է. որ մենք ճանչանք ան բաները որ Աստուծմէ տրուեցան մեզի. որոնք նաև կը խօսինք, չէ թէ մարդկային խմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա Հոգիին սորվեցուցածներովը. և հոգևոր բաները հոգևորի հետ կը յարմարեցունենք: Իսկ շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր. ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են, ու

չկրնար աւ գիտնալ, ինչու որ հոգևոր կերպով կը քընն-
նուին : Բայց ան որ հոգևոր է՝ ամէն բան կը քննէ,
ու ինքը մէկէ մը չքննուիր : Քանզի ո՞վ գիտցաւ Տէրոջը
միտքը, որ անոր խրատ տուող աւ ըլլայ • Բայց մենք
Քրիստոսի միտքը ունինք : Ա կորնթի • Բ • 12—16 :



Սուրբ Հոգին մեզի հետ կը խօսի Աստուածաշունչ-
չով, որն որ Իրմէն ընտրուած սուրբ մարդիկներէն
գրուեցաւ • ու անոնք իրմէն այնչափ սորված և օգ-
նութիւն ընդունած էին ան գրելու համար՝ որ Աս-
տուածաշունչը Սուրբ Հոգիին ճիշտ ուղածին պէս է-
ղաւ : Ան կատարեալ է • ան է միայն ու ամենաբաւա-
կան կանոնը հաւատքին • ան՝ հաւատալու և ընելու
բաները մեզի կը սորվեցունէ • ան Աստուծոյ խօսքն է :

Ա • Մենք ամենէն աւելի պատուելու ենք Աստուա-
ծաշունչը • որ ամենագերազանց գիրք մըն է • ամէն
ուրիշ գիրքերը՝ մարդոցմէ եղած գիրքեր են, բայց աս
գիրքը Աստուծմէ եղած է • որն որ Աստուած ու Յա-
ւիտենականութիւնը աչքի առջև կը բերէ : Ան կը սոր-
վեցունէ մեզի բուն մեր անմահութիւնը և մեր փրկ-
կուելու ճամբան • ան է կենաց գիրքը : Ուր որ Աս-
տուածաշունչը ճանչցուած է և կը կարգացուի ու կը
քարոզուի, և կը հաւատան ու կը հնազանդին անոր,
հոն կայ գիտութիւն ու սրբութիւն, խաղաղութիւն ու
յաջողութիւն : Եւ ո՞ւր որ չկայ, հոն կայ աղիտու-

Թիւն ու մոլորութիւն, խռովութիւն ու կործանումն :
Ուստի Աստուածաշունչը շատ հարկաւոր է մեզի :

Բ • Մենք պարտինք ընդունել Աստուածաշունչը մեր մի միայն ու ամենաբաւական հաւատոյ ու վարքի կանոնն սէս • ամէն ինչ որ Սուրբ Հոգին ատ գիրքին մէջը մեզի կը հրամայէ հաւատալ՝ մենք պարտինք հաւատալ • ամէն ինչ որ ատ գիրքին մէջը մեզի կը սատուիրէ ընել՝ մենք պարտինք ընել անիկայ : Թէ որ մէկը Աստուածաշունչին հակառակ հաւատք ունենայ կամ սորվեցունէ կամ քարոզէ կամ գործէ, անիկայ սխալ կը հաւատայ և կը սորվեցունէ ու կը քարոզէ և կը գործէ : Եւ ամէն մէկ զգացումներուն և գործքերուն ուղիղ կամ սխալ ըլլալը Աստուածաշունչով պիտի քննուի :

Գ • Բայց ի՞նչ օգուտ պիտի ընէ մեզի աս Գիրքը, թէ որ մենք զգուշութեամբ անոր չհետևինք ու անկից ընդունելու խրատներուն պատեհութիւնները անհոգութեամբ կորսնցունենք : « Գիրքերը քննեցէ՛ք » կը սատուիրէ մեզի Փրկիչը : Փրկութեան ճամբան թէպէտև այնչափ զխրին ու պայծառ է Աստուածաշունչին մէջը՝ որ պզտիկ տղաքներն ալ կրնան սորվիլ, բայց Աստուածաշունչը իր բարձրութիւնովն ու խորունկութիւնովը բոլոր գիտութիւններէն գերազանց է : Թէ որ մարդիկ բոլոր իրենց կեանքերնուն մէջ անոր հետևին, թէ որ մինչև վերջին կէտը անոր պարապին, տակաւին անոր մէջը սորվելու բաներ կը մնան : Ան գիրքը Աստուծոյ Գիրքն է :

Բայց աս Սուրբ Գիրքը կարդալու ժամանակնիս՝ պէտք է որ խոնարհութեամբ և հեղութեամբ ընդունինք ինչ որ մեզնի կը սորվեցունէ, թէ չէ՝ անօգուտ կ'ըլլայ մեր կարգալը :

Դ . Ճշմարիտ քրիստոնէաները որչափ որ կ'ապրին՝ այնչափ ալ իրենց սէրը կ'աւելնայ Աստուածաշունչին վրայ : Սաղմ . ՃԺԹ . 97—104 կայն : Եւ որչափ երկար որ ապրին, այնչափ աւելի կը զգան իրենց ունեցած Սուրբ Հոգիին կարօտութիւնը որ կարող ըլլան Սուրբ Գիրքը իմանալու ու անոր հնազանդելու :

Ե . Եւ գիտնալով հիմա՝ որ կորսուած մարդիկը միայն Աստուածաշունչով Փրկութիւն կը գտնեն, կը վախաբին որ ամէն մարդիկ ան Կենաց Գիրքը ունենան, ու կը ջանան որ անիկայ ամէն ազգաց մէջ տարածեն :

Անոնք՝ որ իրենց պէս եղբայրները Աստուածաշունչ կարգալէն կը զրկեն, Աստուծոյ ու մարդոց թշնամիներն են . քանզի Աստուածաշունչը իրաւունքով ամէն մարդու կը վերաբերի . ու բոլոր աշխարհի համար գրուեցաւ :

Զ . Անոնք որ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքը ըլլալ չեն ընդունիր, հապա ծաղը կ'ընեն անիկայ, և չեն պարապիր անոր ընթերցմանը, չեն հաւատար, չեն հնազանդիր անոր, ամէն ասոնք՝ թէ որ աս ըրածներնուն վրայ չապաշխարեն՝ պիտի կորսուին յաւիտեան :

4. Սուրբ Հոգին ո՛վ ըլլալը :

ՅՕԿ. ԺԴ. 15—31 :

Հ. Ո՞վ է Սուրբ Հոգին :

Պ. Ընդհանր Մատուած է. ինչպէս որ կը խոստովանինք Մենասուրբ Երրորդութիւնը, Հայր՝ Որդի՝ և Սուրբ Հոգի, իրեք անձն ու մէկ Մատուած :

Հ. Ի՞նչպէս գիտէք թէ ինք Մատուած է :

Պ. Մատուածաշունչին մէջ անիկայ Մատուած կը կոչուի : Գործ. Ե. 3, 4 : Ի Տիճ. Գ. 16 :

Հ. Քրիստոնէական մկրտութիւնը որո՞ւ աւանտով կը կատարուի :

Պ. Ինչպէս Հօրը ու Որդիին անունովը՝ աւանակ ալ Սուրբ Հոգիին անունովը : Մատ. ԻԸ. 19 :

Հ. Ժողովուրդը եկեղեցիէն արձակուելուն ինչ կ'ըսուի իրենց :

Պ. « Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը՝ և Մատուածոյ սէրը՝ ու Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր ամենուն հետը ըլլայ. Ըմէն » : Ի Կորնթ. ԺԳ. 13 :

Հ . Աստուած միայն գիտէ ամէն բաները .
Սուրբ Հոգին ալ գիտէ ամէն բաները :

Պ . Հրամարեա . « Հոգին ամէն բան կը
քննէ , Աստուծոյ խորունկ բաներն ալ » :
Ե. Կորնթ . Ի . 10 :

Հ . Աստուած միայն գիտէ գալու բաները .
Սուրբ Հոգին ալ գիտէ :

Պ . Հրամարեա :

Երբոր ինքը՝ ճշմարտութեան Հոգին գայ , ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ . ինչու որ չէ թէ ինքիրմէն պիտի խօսի , հասպա ինչ որ լինի պիտի խօսի , ու գալիքները ձեզի պիտի սլատմէ : Յօհ . ԺԶ . 13 : Եսայ . ԽԶ . 9 , 10 :

Հ . Աստուած միայն ներկայ է ամէն տեղ .
Սուրբ Հոգին ալ ամէն տեղ ներկայ է :

Պ . Հրամարեա :

Ո՛ր երթամ քու Հոգիէդ , և քու երեսէդ ո՛ր փախչիմ : Թէ որ երկինքը ելեմ , դուն հոն ես , թէ որ դժոխքը անկողինս ընեմ , ահա՛ դուն հոն ես : Թէ որ արշալոյսին թևերը աննեմ , և ծովուն վերջի ծայրերը բնակիմ , հոն ալ քու ձեռքդ ինձի պիտի առաջնորդէ , և քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ : Սող . ՇԼԹ . 7—10 :

Հ . Աստուած միայն Ամենակարող զօրութիւն ունի . Սուրբ Հոգին ալ Ամենակարող զօրութիւն ունի :

Պ . Հրամներես . քանզի Առաքեալները անոր զօրութիւնովն ամէն տեսակ հրաշագործութիւններն ըրին : Ե. Կորնթ . ԺԲ . 8—11 : Եբր . Ի . 4 : Գործ . Ի . 4, և այլն :

Հ . Ո՛րն է ան մեղքը որն որ Աստուած բնաւ պիտի չներէ ո՛չ աս աշխարհիս մէջ և ո՛չ գալու աշխարհին մէջը :

Պ . Սուրբ Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը : Մատթ . ԺԲ . 24—32 : Ղուկ . ԺԲ . 10 : Մարկ . Գ . 22—30 :



Սուրբ Հոգին՝ որ կը փոխէ մեր սիրտերը՝ մեզ Բրիստոսին կը քաշէ, ու Երկինքին համար կը սրտրաստէ՝ ճշմարիտ Աստուած է, երկրպագելի Երբորդութեան երրորդ անձը :

Ա . Ուստի մենք վախնալու՝ սիրելու՝ երկրպագութիւն ընելու ու ծառայելու ենք իրեն Աստուծոյ պէս : Ինքն է Աստուծոյ Գիրքին հեղինակը, ու ինք աս գիրքին մէջը մեզի յայանեց ամէն եղածներն ու գալիքները մինչև աս աշխարհիս վերջը, ան ամէն բաները՝ որ մենք պարտինք հաւատալ ու ընել մեր փրկութեանը համար : Ինքն է որ Մարգարէներուն ու Առաքեալներուն ձեռքովը զօրաւոր հրաշքներ գործեց : Ինքն է որ աշխարհի ամէն կողմերը ներկայ է մի և նոյն ըոպէին՝

մարդոց մեղքերը յանդիմանելով, անոնց սիրտերը փոխելով, անոնք դէպի Վրիստոս առաջնորդելով, Վրիստոնեաներուն սրտին մէջը բնակելով ու անոնք սրբելով, Պաշտօնեաներ որոշելով ու անոնց խօսել տալով, և եկեղեցիներուն հոգ տանելով :

Բ • Իր սեսլահան գործն է մարդոց սիրտերը փոխել ու սրբել : Մենք չենք կրնար փոխել բուն մեր սիրտերը, ինչու որ բոլորովին մենք չար ենք, ու մեր սիրտերը միշտ չարութիւն ընելու պատրաստ են : Մենք զգալով մեր ակարութիւնն ու չարութիւնը՝ պարտինք իրեն երթալ ճիշդ տա դիտաւորութեամբ : Աշխարհիս դէպի Վրիստոս դառնալու բոլոր յոյսերը՝ Աստուծոյ հոգիին շնորհքէն կախում ունին :

Գ • Մենք ամէն պէտք եղածն ընելու ենք Սուրբ Հոգին հրաւիրելու, որ դայ մեր սիրտը բնակի, միանգամայն հեռու կենալով ան ամէն բաներէն՝ որ զինքը մեզմէ կը հեռացունեն : Կարելի է որ ինքն իր սրբազան ներգործութիւնը մեր սիրտերէն դադրեցունէ, կարելի է որ ինքը վշտանայ ու մեզմէ մէկ զի քաշուի յաւիտեան : Ուրեմն չուրանանք իր Աստուածութիւնն ու իր ամենակարող զօրութիւնը • Երդում չընենք իր Սրբազնասուրբ անուշովը, չանարգենք իր ոտուր Խօսքը՝ իր պաշտօնեաները և իր Ժողովուրդը : Իր կամքին դեմ եղածը չընենք, ինչու որ չկրնար բնաւ մէկ կերպով մը մեղքին հետ հաղորդութիւն ունենալ :

Դ • Ինքը բարեգութ ու երկայնամիտ է դէպի ամէն մարդիկ : Թէ որ ինքը մարդասէր ու երկայնամիտ չըլ-

լար, բնաւ չէր բնակեր աս գէշ աշխարհիս մէջը, բնաւ չէր բնակեր մարդոց սրտին սլէս ապականեալ տեղ մը: Եւ երբոր ինքը շնորհաց գործ մը սկսի մեր մէջը՝ թէսլէտև մենք շատ անգամ անոր կամքին դէմ կը կենանք, այսու ամենայնիւ կը համբերէ և իր սկսած գործը չգաղբեցունելով՝ շարունակ յառաջ կը տանի մինչև վերջին կէտը: Ինքը Շնորհաց Հոգի է. Ճիշդ անանկ Հոգի՝ որուն մեղաւորները կը կարօտին:

Ե. Ճամարիս Քրիստոնեան ինչպէս զօրաւոր և ինչպէս երջանիկ է: Անոր հայրը՝ Աստուած է. անոր Փրկիչը՝ Աստուած է. և անոր Սրբարարն ալ՝ Աստուած է. « Թէ որ Աստուած մեր կողմն ըլլայ, ո՞վ սլէտի ըլլայ մեզի հակառակ »:

Զ. Բայց չարերն ու անզեղները՝ անզօր ու թշուառական են. անոնք ո՛չ Երկնաւոր Հայր ունին, ո՛չ սրատուական Փրկիչ, ո՛չ ալ բարեգութ Սրբարար: Անոնք՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ հակառակ են. և Հայրը՝ Որդին՝ և Սուրբ Հոգին ալ անոնց հակառակ է: Աստուծմէ մեզի համար նախապատրաստուած մեծ Փրկութենէն անոնք մասն ու բաժին չունին:

Ը • Ստակրուտն Վրայ :

1 • Մարմինն մեռնելուն վրայ :

Յօհ • ԺԲ • 1-44 •

Հ • Ի՞նչ է պատճառը՝ որ մէնք ամէնքս կը մեռնինք :

Պ • Քանզի մէնք ամէնքս ալ մեղաւոր ենք :
Սինդ • Բ • 17 : Սաղմ • ՉԹ • 48 : Հոովմ • Ե • 12 :

Հ • Թէ որ բնաւ մեղք մը չըլլար աշխարհի մէջ, մահ պիտի ըլլար :

Պ • Չէ :

Քանզի մեղաց վարձքը մահ է • բայց Աստուծոյ ձրի պարգևը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը : Հոովմ • Զ • 23 :

Հ • Գիտէ՞ք որ ատեն պիտի մեռնիք :

Պ • Չէ • միայն Մատուած գիտէ ան ատենը :

Մեռցունողը ու ողջացունողը, գերեզմանը իջեցունողը ու վեր հանողը՝ Տէրն է : Ա թագ • Բ • 6, 7 : Որ ամէն ասարողին անձը՝ ու բոլոր մարդկային մարմնոյ հոգին անոր ձեռքն է : Յովմ • ԺԲ • 10 : Երբոր քու երեսդ կը ծածկես, կը խռովին : Երբոր անոնց հոգին կ'առնես, կը մեռնին, և իրենց հողը կը դառնան : Սաղմ • ԸԴ • 29 :

Հ . Պիտէք արդեօք թէ ինչ տեսակ մահուամբ պիտի մեռնիք :

Պ . Չէ, միայն Մատուած դիտէ ան :

Հ . Մենք ընդհանրապէս աս աշխարհիս մէջ շատ կասարինք՝ թէ քիչ :

Պ . Քիչ ժամանակ :

Ի՞նչ է ձեր կեանքը . յիրաւի շոգի մըն է, որ քիչ մը ատեն կ'երևնայ, ու ետքը կ'ոչնչանայ : Յակ . Դ . 14, 15 : Այսն զի ամէն մարմին խոտի պէս է, և մարդուն բոլոր փառաւորութիւնը խոտի ծաղիկի պէս . խոտը կը չորնայ, ու անոր ծաղիկը կը թափթըփի : Ա Պետ . Ա . 24 : Յոբ . ԺԳ . 1, 2 : Սաղմ . Դ . 5 : ԼԹ . 5 :

Հ . Մեր տեսած ամենէն ծեր անձիւքը քանի՞ տարեկանի չափ կան :

Պ . Եթէ անասուն կամ ութսուն տարեկանի չափ :

Մեր տարիներուն օրերը եօթանասուն տարի են . ու թէ որ զօրութիւնով ութսուն տարի ըլլան, տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է . ինչու որ անոնք շուտով կ'անցնին, ու մենք կը թաչինք : Սաղմ . Դ . 10 :

Հ . Զքհեղեղէն առաջ մարդիկ քանի՞ տարի կ'ապրէին :

Պ . Ութը կամ ինը հարիւր տարի :

Հ . Մատուածաշունչին մէջ ըստած ամենէն ծեր մարդը ո՞վ էր :

Պ . Մաթուսաղայ : Ծանոթ . Ե . 1—32 :

Հ . Ինչո՞ւ Մատուած կարճեցուց մարդկային կեանքը :

Պ . Մարդոց մեղքին համար :

Հ . Երկու բարի մարդիկ կային, որոնք բնաւ չմեռան . Մատուած անոնք աշխարհքէն դուրս հանեց և Երկինք տարաւ : Ի՞նչ էին անոնց անունները :

Պ . Ենովք և Եղիա : Ծանոթ . Ե . 24 : Եբր . ԺԵ . 5 : Դ Թագ . Ի . 11 :

Հ . Երբոր մարդ մը մեռնի, ի՞նչ կ'ընենք անոր մարմինը :

Պ . Հողին մէջը կը թաղենք անիկայ :

Հ . Ետքը ի՞նչ կ'ըլլայ ան մարմինը :

Պ . Հող կը դառնայ :

Հ . Աղամ մեղանչելէն ետե՛ւ Մատուած ի՞նչ ըսաւ :

Պ . « Հող էիք դուն և հող պիտի դառնաս » : Ծանոթ . Գ . 19 :

Հ . Սոսկալի բան մըն է մեռնիլը, ո՞վ կրնայ մխիթարել մեզ խաղաղութեամբ մեռնելու :

Պ . Մատուած :

Ո՞ր է, ո՞վ մահ՛քու խայթոցդ, ո՞ր է, ո՞վ գերեզման, քու յաղթութիւնդ : Բայց գոհութիւն Աստուծոյ . որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս

Քրիստոսի ձեռքովը : Ա Կորնթ . ԺԵ . 55 , 57 : Ծնկանս վրայ դալով՝ բարձրաձայն աղաղակեց , Տէ՛ր՝ աս մեղքը մի՛ սեպեր ատոնց . և աս ըսելով՝ ննջեց : Գործ . Ի . 59 : Եւ թէ որ երթամ ու ձեզն տեղ պատրաստեմ , նորէն կու գամ՝ և ձեզ քովս կ'անեմ . որպէս զի ուր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք : Յօհ . ԺԴ . 3 :

Հ . Ի՞նչ կերպ մահով մեռնելու պարտինք փափաքիլ :

Պ . « Յակոբին փոշին ո՞վ կրնայ համրել , և Իսրայէլին քառորդը ո՞վ կրնայ հաշուել . թող իմ անձս արդարներուն մահովը մեռնի , ու իմ վախճանս անոնց Վախճանի՞ն պէս ըլլայ » : ԹԻՄՈՅ . ԻԳ : 10 :

Հ . Որովհետեւ մեր մեռնելուն ժամանակը կամ ինչ մահով մեռնելնիս չէնք գիտեր , միշտ ինչպէս ապրիլ պարտինք :

Պ . Միշտ մահուան պատրաստ ըլլալով :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Յիսուս Փրկիչը ասոր վրայով :

Պ . « Դուք ալ պատրաստ կեցէք , քանզի Որդին մարդոյ կու գայ անսակ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր » : ՂԵՆԷ . ԺԻ : 40 :

Աս աշխարհիս մէջի բոլոր կենդանիները մահուան ենթակայ են, և բուն աշխարհն ալ իր վախճանին կը մտնայ: Մահը թագաւորեց մարդոց վրայ Ադամէն մինչև աս օրս, և սխաի թագաւորէ մինչև վերջին օրն ալ:

Ա. Աս բաներէն կը սորվինք թէ ինչ գէշ ու լէղի բան մըն է մեղքը. մահը և բոլոր վայերը անիկայ բերաւ մեր ամենուս վրայ. թէ որ մեղք չըլլար, մահ ալ սխաի չըլլար, մեղքն ու մահը իրարու հետ կապուած են:

Բ. Դուք մեռնելու համար ծնած էք: « Հող էի դուն, ու հող սխաի դառնաս » կ'ըսէ Ամենակարողը: Ուրեմն մի հպարտանաք ձեր անձին գեղեցկութեանը կամ զօրութեանը կամ առողջութեանը վրայ: Մի հաւ զանգիք աս մարմինին ցանկութիւններուն: Մարմինը ուրիշ բան չէ՝ բայց միայն հող. խոնարհ և խորհրդածու եղիք մահուան վրայ:

Գ. Չէք գիտեր թէ երբ սխաի մեռնիք. կարելի է մահը ձեզ յափշտակէ տարիէ մը ետքը, կամ թէ ա միսէ մը ետքը, կամ թէ գալ շաբթու, կամ վաղը և կամ դուցէ այսօր: Կարելի է որ մեծութեան հասակնուդ հասնիք, և կամ տղայութեան ժամանակնիդ մեռնիք: Գացէ՛ք գերեզմանատունը, ու հոն սխաի գտնեք սղախ տղայոց գերեզմաններ՝ ինտոր նաև սրտանիներու՝ և մեծ մարդոց գերեզմաններ: Կեանքէն աւելի փոխոխական բան մը չկայ: Վաղուան վրայ դուք ձեզ մէ մի սարծիք, ըսելով թէ՛ վաղը աս կամ ան բանը

ընենք . գալ տարի հոս կամ հոն պիտի երթանք :
Յտի . Դ . 13 , 14 : Դուք միշտ զգալու և ըսելու էք
« Թէ որ Տէրը կամենայ՝ ու ապրինք , աս կամ ան
բանը ընենք » :

Դ . Չէք ալ գիտեր թէ ինչ մահով պիտի մեռնիք :
Հազար կերպ ճամբաներ կան մեռնելու . մահը մեր
բոլորսիքը և մեր մէջն է . միշտ միտքերնիդ բերէք որ
ձեր կեանքը Աստուծոյ ձեռքն է , և ինքը կրնայ երկըն-
ցունել կամ կարճեցունել անկիայ , որ ատեն կամ ինչ
կերպով որ ինքը հաճի :

Ե . Ուրեմն թող ձեր կեանքին մեծ գործը ըլլայ
մահուան համար պատրաստ ըլլալը : Քանզի ձեր մա-
հուան ատենը պիտի չսեպէք թէ ձեր ըրած պատրաս-
տութիւնները շատ են : Եւ թէ որ առաջուց սկսած չէք ,
հիմա սկսեցէք պատրաստուիլ : Միտքերնիդ բերէք ան
ժամերը՝ որ արդէն կորսընցուցած էք . և ան վտանգը՝
որուն ձեր հոգիները մինչև հիմա ենթակայ եղած են :
Մեծ զարմանք չէ՞ որ դուք մինչև հիմա մահուանէ
ազատ մնացեր էք , ու յաւիտենական թշուառութեանը
չէք խրկուեր : Ուրեմն ձեր հոգին փրկութիւնը մա-
հուան օրին մի՛ թողուք , ինչու որ ասանկ ընելը մե-
ծագոյն չարութիւն և յիմարութիւն է : Չեր ամենէն
աղէկ ժամանակը ամենաչաւ բաներու հետևելով ան-
ցուցէ՛ք : Եւ թէ որ միամիտ սրտիւ ապաշխարէք ու
Յիսուսին հաւատաք և իրեն ծառայելու համար ապ-
րէք , դուք պիտի պատրաստ ըլլաք մահուան համար ,
և Աստուծոյ շնորհքովը մահը ձեզ պիտի չկրնայ
վախցունել :

2 . Հողին ինչ կ'ըլլայ երբոր մարմինը [մեռնի :

Ղ Գ . Ժ . 19—31 :

Հ . Երբոր մարմինը մեռնի՝ ինչ կ'ըլլայ հողին :

Պ . Ըն լստուած կ'երթայ :

Հ . Ինչո՞ւ առ լստուած կ'երթայ :

Պ . Որ լստուած անոր գործքերուն համեմատ դատէ անիկայ, կամ՝ Երկինք ընդունելով, և կամ՝ Դժոխք խրկելով :

Հ . Ուրեմն բարի մարդը մեռածին պէս Երջանիկ կ'ըլլայ արդեօք Երկնից մէջ :

Պ . Հրամերես :

Հ . Դուք ի՞նչպէս գիտէք աս :

Պ . Լստուածաշունչէն :

Ու եղաւ որ ան աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամին գողը տարին զանիկայ . հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ : Ղ Գ . Ժ 2 . 22 : Իմ հօրս տունը շատ բնակարաններ կան . ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի . հի՞՞՞՞մ կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ : Եւ թէ որ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կու գամ՝ և ձեզ քովս կ'առնեմ . որպէս զի ուր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք : Յօհ . ԺԴ . 2, 3 :

Հ • Մեր Փրկիչը խաչին վրայ ինչ ըսաւ աւաղակին :

Պ • « Դուն այսօր իմ հետս Դրախտին մէջը պիտի ըլլաս » : Դ յաւ. ԻԿ. 43 : Գործ. Ե. 58 :

Հ • Գէշ մարդ մը մեռածին պէս ո՛ր կ'երթայ :

Պ • Դժոխք :

Հ • Մեծատունը մեռնելէն և թաղուելէն ետքը տանջանքի մէջ ըլլալով՝ ո՛ր բացաւ իր աչքերը :

Պ • Դժոխքին մէջը : Դ յաւ. Ժ.Օ. 23 :

Հ • Յուդան ինքզինքը կախելէն ետքը ո՛ր դնաց :

Պ • « Իր տեղը » • Գործ. Ե. 25 : Յօդ. Ժ.Ե. 12 :

Հ • Ուրեմն մենք մեռածնուս պէս, մեր հոգիները ո՛ր պիտի դանուին :

Պ • Կամ՝ Երկինքը, կամ Դժոխքին մէջը :

—

Մահով հոգին մարմինէն բաժնուած կը մնայ մինչև Յարուժեան օրը : Մարմինը երկրի մէջ կը թաղուի և հող կը դառնայ • և հոգին առ Աստուած կ'երթայ ու կը դատուի • և անոր վարքին համեմատ կամ՝ Երկինց մէջ կ'ընդունուի, կամ Դժոխք կը խրկուի :

Ա . Աս ներկայ կեանքն է միայն Շնորհաց օրը : Թէ որ չապաշխարենք և Յիսուս Քրիստոսի չհաւատանք քանի որ աս աշխարհիս վրայ ենք , մենք յաւիտեան կորսուած ենք : Հոգին փրկելու համար պատեհութիւն չկայ մէկաւ աշխարհին մէջ : Մահէն ետև դատաստան կու գայ : « Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք , ձեր սիրտերը մի խասացունէք » : Ահով ու դողով աղէկ մտմտայէ՛ք մահին վրայ՝ ու անոր համար պէտք եղած պատրաստութիւնը ատէք : Արդ՝ ո՞րչափ պատուական է աս ժամանակաւոր կեանքս , որ անոր աղէկ գործածուելէն կախում ունի մեր յաւիտենական երջանկութիւնը :

Բ . Արդարները շատ մօտ են Երկինքին և բոլոր աւար երջանկութիւններուն մէջը մանելու : Ինչու որ իսկոյն իրենց մեռած կէտին՝ Քրիստոսի հետը կ'ըլան երկինքը : Ո՛հ , անոնք ի՞նչ մեծ իրաւունք ունին ուրախանալու : Քանզի մահն է ճշմարիտ հաւատացեալներուն մեծ շահը : Փիլիպ . Ա . 21 : Պէտք է որ անոնք հաւատարմութեամբ բարի ընեն բոլոր մարդոց՝ ինչպէս որ պատեհութիւն ունին . և որ յօժարութեամբ համբերեն աս կեանքին նեղութիւններուն , փորձութիւններուն , վիշտերուն և աշխատութիւններուն՝ գիտնալով թէ իրենց ժամանակը կարճ է , և թէ մահը շատ չանցած իրենց վարձքին և իրենց հանդատութեանը պիտի հասցունէ : Ղուկ . ԺԲ . 35—40 :

Գ . Չարերը շատ մօտ են Գժոխքին և բոլոր անոր տանջանքներուն մէջը մանելու : Թէ որ անոնք այսօր

մեռնելու ըլլային, այսօր անոնք իրենց աչքերը տանջանքներուն մէջը պիտի բանային : Ո՛հ, ի՞նչ մեծ իրաւունք ունին չարերը իրենց վիճակին մէջը դողալու, իրենց մեղքերը և յիմարութիւնները մէկ դի ձգելու և ինքզինքնին ապաշխարութեան և աղօթքի տալու, որ դուցէ Աստուած ներէ անոնց Յիսուսի համար . քանզի ոչ այլ ինչ, բայց միայն Աստուծոյ ողորմութիւնը կրնայ սրտէկ անոնք կորստեան անդունդէն :

Թ . Յարութեան վրայ :

Ե. Կորնթ . ԺԵ . 1—58 :

Հ . Մեր մարմինները՝ որ իրենց գերեզմաններուն մէջը հող կը դառնան, հոն մնալու են . և բնաւ մէյմըն ալ տեսնելու կամ լսելու չեն :

Պ . Ըլ՛. անոնք նորէն ապրելու համար յարութիւն պիտի առնեն :

Հ . Ի՞նչպէս գիտենք առ բանը :

Պ . Քանզի այսպէս կը կարգանք Աստուածաշունչին մէջը, զորօրինակ՝ Ե. Կորնթ . ԺԵ . և Ե. ԹԵՍ . Դ Գլուխ :

Հ . Մեր մարմինները երբ յարութիւն պիտի առնեն :

Պ . Դատաստանին օրը :

Հ . Ո՞վ պիտի յարուցանէ անոնք :

Պ . Տէր Յիսուս Քրիստոս : Յօհ . ԺԵ . 25 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիորգը յարութեան վրայով :

Պ . « Ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն, ու դուրս պիտի գան . անոնք որ բարի գործեր են, կենաց յարութեան համար, և անոնք որ չար գործեր են, դատապարտութեան յարութեան համար » : Յօհ . Ե . 28, 29 :

Հ . Ո՞վ ասեցէն առաջ մեռելներէն յարութիւն առաւ ու նորէն չմեռաւ :

Պ . Տէր Յիսուս Քրիստոս :

Հ . Ենթոյ մեռելներէն յարութիւն առնելը մեզի ալ վկայութիւն կու տայ՝ արդեօք՝ թէ մենք ալ յարութիւն պիտի առնենք :

Պ . Այո՛ . քանզի Սուրբ Գիորգը կ'ըսէ :

Եւ թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր քարոզութիւնը պարաս է, ու ձեր հաւատքն ալ պարաս է . և մենք ալ Աստուծոյ սուս վկաները դանուած կ'ըլլանք . որովհետեւ Աստուծոյ համար վկայութիւն տուինք, թէ Ինքը Ռեւելեիէն յարուց Քրիստոսը . որ իրաւ չյարուց անիկայ, թէ որ մեռելները յարութիւն

չեն առներ . քանզի թէ որ մեռելները յարութիւն չեն առներ , Քրիստոս ալ յարութիւն առած չէ : Եւ թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ , ձեր հաւատքը պարսպ է , ու տակաւին ձեր մեղքերուն մէջն էք : Ա Վրեի . ԺԵ . 14—17 :

Հ . Բայց մեր մարմինները ճիշդ մեր հիմա կուան միս ու արիւն ունեցող մարմիններուն պէս պիտի ըլլան , որ ուտելու և խմելու և հանդերձի կը կարօտին , և որ կը հիւանդանան և կը չարչարուին ու կը մեռնին :

Ո՛ր . Չէ՛ . անոնք պիտի փոխուին փառաւոր ու սքանչելի կերպով մը :

Քանզի երբոր մեռելներէն յարութիւն առնեն , ոչ կնիկ կ'առնեն , և ոչ էրկան կը տրուին . հասա երկինքի հրեշտակներուն պէս են : Մարի . ԺԲ . 25 : Որովհետեւ ալ չեն կրնար մեռնիլ . քանզի հրեշտակներուն հաւասար են , ու Աստուծոյ որդիք են . ինչու որ յարութեան որդիք են : Ղուի . Ի . 36 : Ասանկ ալ է մեռելոց յարութիւնը . Տարի՛նը ասպականութիւնով կը սերմանուի , ու անասպականութիւնով յարութիւն կ'առնէ . անարդութիւնով կը սերմանուի , ու փառքով յարութիւն կ'առնէ . տկարութիւնով կը սերմանուի , ու զօրութիւնով յարութիւն կ'առնէ . կը սերմանուի շնչաւոր մարմին , և յարութիւն կ'առնէ հոգեւոր մարմին . շնչաւոր մարմին կայ , հոգեւոր մարմին ալ կայ : Այսան զի պէտք է որ աս ասպականացու Տարի՛նը անասպականութիւն հաղնի , ու

աս մահկանացուս անմահութիւն հագնի : Ա. Կորնթ. ԺԵ . 42—44 , 53 :

Հ . Սէր յարութիւն առած մարմինները որո՞նք մարմինին պիտի նմանին :

Պ . Քրիստոսի փառաւորեալ մարմինին :

Առջի մարդը երկրէն է՝ հողեղէն . բայց երկրորդ մարդը՝ Տէ՛ր է՝ երկինքէն : Եւ ինտոր որ հողեղէնին կերպարանքը հագեր ենք , երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք : Ա. Կորնթ. ԺԵ . 47 , 49 : Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու , ան զորութիւնովը՝ որ կարող է ամէնը իր տակը հնազանդեցունելու : Փիլիպ. Գ . 21 : Տէս նոս Մատթ. ԺԵ . 1 , 2 : Յայտ . Ա . 12—16 :

Հ . Սուրբ Հոգւոյն ազդեցութեամբը ի՞նչ պէս կը պատմէ Պօղոս կենդանիներուն փոխուիլը և մեռելներուն յարութիւն առնելը :

Պ . « Ը՛հա՛ ձեզի խորհուրդ մը կը զրուցեմ . Ը՛մէնքս պիտի չննջենք , բայց ամէնքս ալ պիտի փոխուինք , յանկարծակի աչք զոցել բանալու մէջ՝ վերջին փողին հնչուելու ատենը . որովհետև փողը պիտի հնչուի , ու մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ասպականութեան . և մենք ալ պիտի փոխուինք : Վասն զի պէտք է որ աս ասպականացու ճարմիքը անասականութիւն հագնի , ու աս մահկանացուս

անմահութիւն հազնի» : Ե. կրթեթ. ժ. Ե. 51, 52, 53 :

Հ. Ի՞նչ կրտէ նաև թե սաղոնիկեցւոց թըղթոյն մէջ :

Պ. « Թէ որ կը հաւատանք թէ Յիսուսը մեռաւ ու յարութիւն առաւ, անանկ ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ : Վասն զի աս կը զրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը, թէ մենք որ մինչև Տէրոջը գալուստը ողջ կը մնանք, քնաւ ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք : Ինչու որ ինքը Տէրը ազդարարութեան հրամանով՝ հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն : Ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկ տեղ պիտի յաիշտակուինք ամպերով Տէրոջը առջևը ելլելու օգին մէջը. և անանկ յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք : Ուստի մէկզմէկ մխիթարեցէք աս խօսքերով » : Ե. թե. Ի. 13—17 :

Թեպէտ և մեր մարմինները կը մեռնին և հող կը դառնան, բայց վերջին մեծ օրը նորէն յարութիւն պի-

տի առնեն Տէր Յիսուս Քրիստոս մեր Ամենակարող Փրկիչով: Եւ ինչպէս որ ինքը մեռելներէն յարուժիւն առաւ, այնպէս ալ մենք պիտի առնենք:

Ա. Աս վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի, որ մեր մարմինները Տէրոջն են. և թէ անոնք թանկագին են. մենք անոնք սուրբ պահելու ենք իրեն ծառայելու համար: Մեր պարտքն է անոնց առողջութեանն ու զօրութեանը. և մաքրութեանը համար հոգ տանիլ. և միշտ մեր հանդերձն ալ մաքուր պահել որչափ որ կըրնանք: Մեր պարտքն է մեր անձը միշտ մաքուր պահել պտոնկութենէն, շնութենէն, որկրամուլութենէն, գինովութենէն և ամէն մեղքերէն: Ա. Կորնթ. Զ. 9—20: Ա. Թէս. Դ. 7: «Քանզի գնով ծախու անուեցաք. ուստի փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջը, որ Աստուծոյ են»: Ա. Կորնթ. Զ. 20:

Բ. Աս վարդապետութիւնը կը վերցունէ մահուան երկիւղը և տրամուլութիւնը: Թէպէտ մենք կը մեռնինք, բայց պիտի ապրինք. թէպէտ մեր մարմիններէն կը հրաժարինք, բայց ոչ յաւիտեան: Յովբ. ԺԹ. 25, 26: Անոնք որ ապականութեամբ սերմանուած են, անապականութեամբ յարուժիւն պիտի առնեն. անպատուութեամբ սերմանուած են, փառքի մէջ յարուժիւն պիտի առնեն. տկարութեամբ սերմանուած են, զօրութեամբ յարուժիւն պիտի առնեն: Անոնք շնչաւոր մարմիններով սերմանուած են, յարուժիւն պիտի առնեն հոգևոր մարմիններով: Քրիստոսի փառաւոր մարմինին

նմանած պիտի փոխուին :

Գ . Աս վարդապետութիւնը կը մխիթարէ մեզ մեր քրիստոնեայ ազգականներուն ու բարեկամներուն մա-
հուանը վրայով : Մեր հօրը կամ մօրը , մեր էրկանը
կամ մեր կնիանը , մեր տղուն կամ մեր աղջկանը , մեր եղ-
բօրը կամ մեր քրոջը թաղման ատենը՝ անոնց ետևէն
մինչև գերեզմանը երթալով՝ կրնանք մտմտալ ու ըսել ,
հիմա ասիկայ որ Քրիստոսի կը հաւատար՝ ուրեմն յա-
ւիտեան երկինքին մէջը պիտի տեսնենք և սիրով պիտի
դրկենք անիկայ նոյն մարմինով աւելի գեղեցիկ ու փա-
ռաւոր եղած , որն որ այնքան շատ կը սիրէինք երբօր
երկրի վրայ էր . թէպէտ հիմա կը բաժնուինք անկէ ,
բայց նորէն պիտի միաւորինք . անանկ միաւորութեամբ՝
որ յաւիտեան անբաժանելի է :

Դ . Աս վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի թէ
չաբերուն մարմինները յարութիւն պիտի աւնեն , միայն
ասոր համար որ հողիով ու մարմինով Գժոխքը ձգուին
յաւիտեան : Անոնց մէկըմէկ տեսնելը՝ տրամուծեան աչ-
խարհին մէջ պիտի ըլլայ ու չէ թէ ուրախութեան :
Անոնք հողիով ու մարմինով աս երկրիս մէջը մեղքին
ծառայեցին , Աստուծոյ դէմ ապստամբելով : Ուրեմն
ասկից ետքը անոնք հողիով ու մարմինով իրենց մեղքին
ու ապստամբութեան պատիժը պիտի քաշեն . ինտոր
ան հարուստը որ առաջ իր կեանքը բաղմածախ հան-
դէսով կ'անցունէր ամէն օր՝ ետքը իր պապակեալ լե-
ղուն զովացունելու համար կաթիլ մը ջուր կը խնդրէր :

Ե . Աս վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի որ

Յիսուս Քրիստոս մեր Տէրը ամենուն բաւական ամենակարող Փրկիչ մըն է : Ի՞նչ սոսկալի , և ի՞նչ սարսափելի կերպով էր հրամանովը ծո՞խ ու ցամաքը իրենց խորունկութիւնովը դողալով խակոյն իրենց մէջը եղած մեռելները դուրս կու տան : Ի՞նչ հիանալի տեսարան՝ ուր երկիրը անթիւ բազմութիւնով ծածկուած՝ ամէն ժարդիկ աչքերնին շտակ դէպի ան մեծ լուսափայլ Աթոռին կը վերցունեն՝ ուր որ Յիսուս փառաց Թագաւորը մեծ յաղթութիւնով կը նստի : Ան ատենը ո՞վ պիտի տարակուսի իր Աստուած ըլլալուն վրայ : Մարդուն վերջին թշնամին որ պիտի խափանի՝ մահն է . հոգին ու մարմինը երկուքն ալ Քրիստոս ինքը կը փրկէ : Մենք էր մէջը բովանդակեալ ենք . Ինքը կը յաղթէ մեղքին , մահուան և Գժոխքին . երանի ա՛նոնց՝ որ իրենց յոյսը Անոր վրայ կը դնեն :



Ժ . Դատաստանին վրայ :

Մատթ . Ի . 31—46 :

Հ . Դատաստանի համար սահմանուած յատուկ օր կայ :

Պ . Հրամարես :

Ինչու որ ինքը (Աստուած) մէկ օր մը սահմանեց , ու բուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ՝ ան մարդուն (Քրիստոսի) ձեռքովը : Գործ . Ժ . 31 :

Հ • Ո՞վ Քրիստոսի ատեանը պիտի ելլայ :

Պ • « Վասն զի ամէնս ալ Քրիստոսի ատեանին առջևը պիտի կայնինք » : Հոռվճ. ԺԴ. 10 :

Հ • Դատաստանի օրուան երբ գալը ո՞վ գիտէ :

Պ • Միայն Աստուած գիտէ :

Իսկ ան օրուան և ան ժամուն համար՝ մէկը չգիտեր ոչ ալ երկնից հրեշտակները, հասար միայն իմ Հայրս : Մատթ. ԻԴ. 36 :

Հ • Ա՞ն օրուան գալուն վրայ Սուրբ Գերբը ի՞նչպէս կ'ըսէ :

Պ • « Գողի պէս պիտի գայ » : Ի Պեթ. Գ. 10 : Գործ. Ե. 11 :

Հ • Երբոր ատ օրը գայ, աշխարհը որո՞նք գալը պիտի տեսնէ ամպերուն մէջ մեծ զօրութիւնով ու փառքով և Սուրբ Հրեշտակները իրեն հետ :

Պ • Տէր Յիսուս Քրիստոսի գալը : Մատթ. ԻԵ. 31 : Մարկ. Ը. 38 : Ի Թեո. Ե. 7 : Յոհ. 14 :

Հ • Տէրը ի՞նչպէս պիտի իջնէ Երկինքէն .

Պ • « Ինչու որ ինքը Տէրը ազդարարութեան հրամանով հրեշտակապետին ձայնովը ու Աս-

տուժոյ փողովը երկինքէն պիտի իջնայ » : Ե. Թեա. Գ. 15 :

Հ . Երբօր փողը հնչուի՝ մեռեալներն ու կենդանիները ինչ պիտի ըլլան :

Պ . Մեռեալները յարութիւն պիտի առնեն և կենդանիները պիտի փոխուին : Յօհ. Ե. 27—29 : Ե. Կորնթ. Ժ. Ե. 51, 52 :

Հ . Յարութեան օրը ինչ պիտի ըլլայ աս երկրիս :

Պ . « Տարերքները բարնկած պիտի լուծուին, երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կը գտնուին » : Ի. Պեա. Գ. 10 : Յայտ. Ի. 11 :

Հ . Նորէն ըսէ՛ նայիմ, թէ՛ Տէրօջը գալը ինչպէս պիտի ըլլայ :

Պ . « Սակայն Տէրօջը օրը գողի պէս պիտի գայ, որ ան ատենը երկինքը սաստիկ շառաչիւնով պիտի անցնի, ու տարերքները բարնկած պիտի լուծուին, երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կը գտնուին » : Ի. Պեա. Գ. 10 :

Հ . Քրիստոս ինչ տեսակ Լթուի վրայ պիտի նստի աշխարհը դատելու համար :

Պ . Մեծ ճերմակ ակթուի մը վրայ : Յայտ. Ի. 11 : Սաաթ. Ի. Ե. 31 :

Հ . Ո՞վ պիտի ժողվուի իր առջևը :

Պ . « Բողոք ազգերը » : Մատթ . ԻԵ . 32 :

Յայտ . Ի . 12 :

Հ . Ըն առենը ի՞նչ պիտի բացուի :

Պ . « Գիրքերը » :

Հ . Եւ ամէն մարդիկ ի՞նչպէս պիտի դատուին :

Պ . Ըմէն մէկը իրենց գործքերուն համեմատ : Հուով . Ի . 16 : Ե կորնի . Գ . 5 : Ի կորնի . Ե . 10 : Յայտ . Ի . 12 :

Հ . Քրիստոս Ըրդարները ո՞ր կողմը պիտի նստեցունէ :

Պ . Իր աջ կողմը : Մատթ . ԻԵ . 32 , 33 :

Հ . Եւ չարերը ո՞ր կողմը պիտի նստեցունէ :

Պ . Չախ կողմը :

Հ . Դևերն ալ հոն պիտի ըլլան , և պիտի դատուին :

Պ . Հրամարեա :

Վասն զի թէ որ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չինայեց , հասա խաւարի կապերով տարտարոսը ձգած՝ դատաստանի պահել տուաւ , և այն : Բ Պէտ . Ի . 4 :

Հ . Յիսուս ի՞նչ պիտի ըսէ Ըրդարներուն :

Պ . « Ե՛կէք իմ հօրս օրհնածները , աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժողանգեցէք » : Մատթ . ԻԵ . 34 :

Հ • Եւ ինչ պիտի ըսէ չարերուն :

Պ • « Մէկ դի՛ գացէք ինձմէ, անիծեալներ՝
յաւիտեանական կրակին մէջը, որ պատրաս-
տուած է սատանային՝ ու իր հրեշտակներուն » :

Սաաթ • Ի • 41 :

Հ • Երբոր դատաստանը լմենայ, բոլոր աչ-
խարհ ինչ պիտի ընէ :

Պ • Փառք պիտի տայ իմաստուն՝ սուրբ՝ ար-
դար և բարի Աստուծոյն : Յայտ • Լ • 9—12 :



Աստուած օր հաստատեց՝ որն որ մեկը չգիտեր ,
բայց միայն ինքը , որ ան օրը արդարութեամբ Յիսուս
Քրիստոսի ձեռքով պիտի դատէ աշխարհը • ինչու որ
ինքը բոլոր դատաստանը Որդիին յանձնեց :

Ա • Դատաստանին օրը Աստուծոյ սահմանած օրն է ,
երբոր ինքը բոլոր տիեզերքին առջևը յայտնի պիտի
դատէ մարդկային սեռը արդարութեամբ , իր փառքին
օրհնութեանը համար :

Միլլոնաւոր մարդիկ արդէն դատուած են՝ Երկինք
կամ Դժոխք երթալու , դատաստանին օրը չեկած • և
միլլոնաւոր մարդիկ ալ դատաստանին օրը պիտի դա-
տուին Երկինք , կամ Դժոխք երթալու : Ամէնքն ալ հոն
պիտի ներկայանան , և Աստուած պիտի ցուցնէ՝ թէ
իր դատաստանը ամէն մարդու վրայ արդար եղաւ , և

արդար է : Դատաստանին օրը հանդիսաւոր օր մը պիտի ըլլայ (հոգի . Բ . Տ .) , բոլոր աշխարհի բանաւոր արարածներուն ջուջունելու համար որ աս աշխարհիս վերաբերեալ՝ Աստուծոյ ըրած բոլոր բաները , և իր բոլոր դատաստանները , իր բոլոր վարձքերը , ու իր պատիժները , կատարելապէս արդար ու իրաւունքով են : Ինք իր բոլոր ճամբաներուն մէջ փառաւորեալ պիտի յայտնուի իբրև Արարիչ՝ Պահպանիչ՝ Փրկիչ և Դատաւոր : Ան ատենը միաբան պիտի ըսեն բոլոր ներկայ գտնուողները , « Հնորհակալ ենք քեզմէ , ո՛վ Տէր Աստուած Ամենակալ , որ դուն ես՝ և էիր՝ ու պիտի դաս . ինչու որ մեծ զօրութիւնը դուն ունիս և դուն թաղաւորեցիր » . բարձրացիր , ո՛վ Աստուած , յաւիտեանս յաւիտենից . Ալելուիա Տէր Աստուած ամենակալ թաղաւորին :

Բ . Դատաստանին օրը՝ Քրիստոսի բարձրութեան ու փառքին օրը պիտի ըլլայ . ամէն աչքերը պիտի տեսնեն զինքը . ամէն ծունկ պիտի խոնարհի . և ամէն լեզու զինքը պիտի խոստովանի : Ան օրը մեր Փրկիչը պիտի երևնայ թէ ինքը մեծն Աստուած է անբաւ զօրութիւնով՝ բարութիւնով և ճշմարտութիւնով . իր բարեկամներուն զարմանք , վստահութիւն և փառք պիտի ըլլայ , և իր թշնամիներուն՝ սոսկում , խոտովութիւն և կործանում :

Գ : Դատաստանը՝ աշխարհի և անոր մէջը եղած բոլոր բաներուն վախճանը պիտի ըլլայ : Ուրեմն ինչո՞ւ որքենք աշխարհը և անոր ամէն բաները , քանզի շու-

տով պիտի մեռնինք • և մեր բոլոր սիրած բաները և տենիս պիտի ձգենք , որ անոնք վերջապէս պիտի այրին : Աշխարհիս ամէն բանը ունայնութիւն է • ուրեմն եկէ՛ք պատրաստուինք ան խիստ լուսապայծառ և յաւիտե նական աշխարհին համար , ուր որ Քրիստոս գնաց և ուր որ վննքը սիրողներուն ամէնքն ալ երջանիկ պիտի ըլլան յաւիտեան :

Դ • Դատաստանին օրը՝ վերջին վարձատրութեան օրը պիտի ըլլայ ամէն մարդուն իր գործքին համեմատ : Բոլոր սիրտերուն գաղանկքները , բոլոր անձանց գործքերը պիտի յայտնուին : Աստուած մէկու մը աչառութիւն պիտի չընէ , հապա ամէն մէկը իր արգար վարձքը պիտի ընդունի իր ըրածին պէս՝ թէ՛ բարի ըլլայ՝ և թէ՛ չար :

Ե • Յոյսէն զրկուելու և բաժնուելու , ողբի ու վայելքու սոսկալի օր մը պիտի ըլլայ գատաստանին օրը : Անոնք որ իրենց յոյսը միայն Քրիստոսի վրայ դրած չեն , պիտի ողբան ան օրը : Կեղծաւորները պիտի ըսեն , « Տէ՛ր Տէ՛ր » • բայց Ինքը պիտի պատասխանէ թէ՛ « Ես բնաւ ձեզ չէի ճանչնար • մէկ դի՛ գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք » : Ետքը ան օրը քահանաներն ու ժողովուրդը , վարժապետներն ու Աշակերտները , Էրեւններն ու Կնիկներն , Ծնողքներն ու Տղաքները , Եղբայրներն ու Քոյրերը , Բարեկամները ու Ծանօթները պիտի բաժնուին՝ ու մէյ մըն ալ իրարու պիտի չհանդիպին :

Երբոր չարերը Աստուծմէ և Քրիստոսէն բաժնուին , ու սատանային և իր հրեշտակներուն հետ դուրս յա-

Վիտենական թշուառութեան և յուսահատութեան մէջ
ձգուին, հոն պիտի ըլլայ լալ ու ակոյայ կըճոցունել :

Զ . Ամէն մէկին պարտքն է ապաշխարութիւնով ու
Տէր Յիսուս Քրիստոսի հաւատարմով, բարի ընթաց-
քով, պարկեշտութիւնով, զգաստութիւնով և աղօթքով
դատաստանի համար պատրաստ ըլլալ . « Որ ան ձեզ
անբիծ և անարատ գտնէ (կ'ըսէ) խաղաղութիւնով » :
Բ Պէք . Գ . 11—14 : Ո՛վ կարդացող, այսպէս պատ-
րաստ ևս Աստուծոյ գէմը ելլելու :

—

ԺԵ . Երկենի Վրայ :

Յայտ . ԻԵ, ԻԲ :

Հ . Դատաստանը լմնալէն ետքը՝ Ար-
դարները ո՞ր կերթան :

Պ . Երկինքը :

Հ . Ի՞նչպէս տեղ է Երկինքը :

Պ . Ըմենափառաւոր ու երջանիկ տեղ մը :
Սաղմ . Ժ.Օ. 11 : Սաաթ . ԻԵ. 21 : Յոպ . 24 :

Յայտ . ԻԵ, ԻԲ :

Հ . Ո՛վ կը բնակի Երկինքին մէջը :

Պ . Ըստուած ու բարի շրէշտակները :

Հ . Հոն մենք գէմ՝ առ գէմ՝ Ըստուած պի-
տի տեսնե՞նք :

Պ . Հրամարեա :

Երանի՛ անոնց որ սրտով մնաբուր են , ինչու որ ա-
նոնք պիտի տեսնեն զԱստուած : Մատթ . Ե . 8 : Գի-
տենք որ երբ անիկայ յայտնուի , անոր պէս պիտի ըլ-
լանք . վասն զի անիկայ պիտի տեսնանք՝ ինչպէս որ է :
Ա Յօ . Գ . 2 :

Հ . Երկինքին մէջը մեր ժամանակը ինչպէս
պիտի անցունենք :

Պ . Աստուած օրհնելով և իր կամքը կատա-
րելով :

Ասկէ ետքը տեսայ , և ահա՛ մեծ բազմութիւն՝ որն
որ մէկը չէր կրնար համբել , բոլոր ազգերէն՝ ու ցե-
ղերէն և ժողովուրդներէն , որոնք աթոռին առջևը ու
Գառնուկին առջևը կեցեր էին՝ ճերմակ հանդերձներ
հագած , և ձեռքերնին արմաւենիներ բռնած : Եւ մե-
ծաձայն կ'աղաղակէին ըսելով . Փրկութիւնը մեր Աս-
տուծոյ՝ որ աթոռին վրայ կը նստի , ու Գառնուկին :
Եւ բոլոր հրեշտակները աթոռին ու երեցներուն և
չորս կենդանիներուն բոլորաբար կեցեր էին , ու իրենց
երեսներուն վրայ աթոռին առջևը ինկան՝ ու Աստու-
ծոյ երկրպագութիւն ըրին , ըսելով . Ամէն . օրհնու-
թիւն ու փառք և իմաստութիւն ու գոհութիւն և պա-
տիւ ու զօրութիւն և կարողութիւն մեր Աստուծոյն՝
յաւիտեանս յաւիտենից . Ամէն : Յայտ . Է . 9—12 :
ԺԵ . 3 : ԻԲ . 3 :

Հ . Յիտուա մեր փրկիչը պիտի տեսնենք
Երկինքը :

Պ . Հրամեղես, պիտի տեսնենք անիկայ, և գոհութիւն պիտի տանք անոր, և պիտի օրհնենք զինք բոլոր Իր սիրոյն և փրկութեանը համար : Յօհ . ԺԼ . 4 : Կող . Գ . 3, 4 : Յայտ . Գ . 4, 5 : Ե . 9—14 :

Հ . Ի՞նչ պիտի դրուի մեր զխոն վրայ :

Պ . Կենաց պատկը :

Երանելի է ան մարդը որ փորձութեան կը համբերէ, ինչու որ եթէ փորձուելով ընտիր գանուի, կենաց պատկը պիտի առնէ, որն որ Տէրը զինքը սիրողներուն խոստացաւ : Յակ . Ա . 12 : Եւ Հովուապետին երեցած ատենը փառաց անթառամ պատկը պիտի ընդունիք : Պեք . Ե . 4 : Բ ՏԷՃ . Գ . 8 : Յայտ . Բ . 10 : Գ . 4—11 :

Հ . Ի՞նչպէս պիտի զգեստաւորուինք :

Պ . Արդարութեան ճերմակ հանդերձներովը : Յայտ . Գ . 2—14 : ԺԹ . 8 :

Հ . Ուրեմն ի՞նչպէս փառաւորեալ պիտի ըլլանք, և մեր Հօրը Թագաւորութեանը մէջ լուսաւորուինք :

Պ . «Արևիպէս» : Մատթ . ԺԳ . 43 : Ե Կորնթ . ԺԵ . 49 :

Հ . Արկինքին մէջ արդարները մէյմըն ալ նեղութիւն պիտի քաշէն :

Պ . Չէ՞ . « Ոչ պիտի անօթեանս՝ ու ոչ ծաւ

ըաւին . ոչ ալ արեւը՝ կամ մէկ տաքութիւն մը անոնց վրայ պիտի իյնայ . վասն զի գառնուկը որ աթուռին մէջն է, պիտի հովուէ զանոնք, ու կենդանի ջուրերու աղբիւրները պիտի առաջնորդէ զանոնք . և Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ անոնց աչքերէն » :
Յայտ . Լ . 16 , 17 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքը իրենց արցունքներուն վրայով :

Պ . « Եւ ինքը անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, ու ալ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ՝ և ոչ աղաղակ, և ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետեւ . ինչու որ առջի բաները անցան » : Յայտ . ԼՎ . 4 :

Հ . Արդարները դիտութիւնով, և սրբութիւնով ու երջանկութիւնով՝ պիտի աճին յաւիտեանս յաւիտենից :

Պ . Հրամարես . քանզի Երկինքն իրենց յաւիտենական բնակարանը պիտի ըլլայ և միշտ պիտի աճին ամէն բարիքներով : Մատթ . ԼԵ . 46 : Յօհ . ԺԴ . 2 , 3 :

Հ . Բոլոր ուրիշ տեղերէն աւելի՝ որ տեղը երթալու պարտինք փախաքիլ ու ջանալ :

Պ . Երկինք : Մատթ . Թ . 33 :

Հ . Ո՞վ ստացաւ Երկինքը մեզի համար, և

պիտի ցուցնէ մեզի հոն երթալու ճամբան :

Պ • Տէր Յիսուսը :

Ուրեմն ե'ղբայներ՝ համարձակութիւն ունենալով սուրբ տեղը մանելու Յիսուսի արիւնովը, ան նոր ու կենդանի ճամբովը՝ որ բացաւ մեզի վարագուրին մէջէն՝ որ է իր մարմինը : Եբբ • Ժ • 19, 20 : Յօ4 • ԺԴ • 1—6 : Ժ • 27, 30 : ԺԷ • 2 :

Հ • Ո՞ր մարդիկները յաւիտեան Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն :

Պ : « Ոչ պոռնիկները՝ ո՛չ կուսպաշտները՝ ո՛չ շնացողները, ո՛չ իգացեալները՝ ո՛չ արուաբէտները՝ ո՛չ գողերը՝ ո՛չ ագահները՝ ո՛չ զիւնովները՝ ո՛չ նախատողները ու ո՛չ յախշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն : Եւ Կորնթ. • Գ • 9 :

Դաստաստանէն ետքը՝ Արդարները Երկինքը կը մանեն :

Ա • Ան թագաւորութիւնը՝ որն որ Աստուած աշխարհիս սկիզբէն պատրաստեց անոնց համար, Երկինքն է • որ հոն հաստատեց իր Աթոռը : Ան է ատմեծ ու գեղեցիկ Քաղաքը, նոր Երուսաղէմը, որուն շինողը և սակզծողն Աստուած է, և որ յաւիտենական հիմերունի : Հոն՝ Որդւոյն Աստուծոյ Հօրը տանը մէջը հանգատութեան շատ բնակարաններ կան, որոնք որ Յիսուսինքը պատրաստեց անոնց համար՝ որ զինքը կը սիրեն :

« Ան Քաղաքը Արևի ու լուսնի պէտք չունի, որ զանիկայ լուսաւորեն • ինչու որ Աստուծոյ փառքը կը լուսաւորէ զանիկայ • ու անոր ճրագը Գառնուկն է » : Աստուծոյ խիստ փափկութեան դրախտը Երկինքն է, ուր որ ինքը կը բնակի և իր փառքը կը յայտնէ, և կը հաղորդակցի դէմ առ դէմ օրհնեալ բնակիչներուն հետ • իր « Երեսին առջին լէցուն ուրախութիւն կայ • իր աջ կողմը միշտ հաճութիւններ կան » : Աչք չտեսաւ, ախանջ չսեց, ոչ ալ մարդու սիրտ ինկաւ աս տեղին յաւիտենական փառքերը :

Բ • Աստուծոյ Ժողովուրդին համար մնայուն հանգստութիւն մը կայ Երկինքին մէջը : Պէտք չէ որ աշխարհը սիրենք : Պէտք չէ որ միշտ հոս բնակելու փափաքինք • ինչու որ ասանկ շատ աշխարհներ կ'արժէ Երկինքը : Հոն զիղենք մեր դանձերը • Հոն հաստատենք մեր յօժարութիւնները (ա) :

Մեր աչքերը աս աշխարհիս վրայ հաստատելուս համար, Երկինքը կը կորսնցունենք : Պէտք չէ որ մեր ճամբուն վրայէն մինչև հոն մեր քաշած նախատինքը,

(ա) • Մի սիրէք աշխարհս, ոչ ալ ինչ որ աշխարհիս մէջ է : Թէ որ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսի դին Հօրը սէրը չկայ • քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է, մարմնոյ ցանկութիւնը, ու աչաց ցանկութիւնը և ա կեանքիս ամբարտաւանութիւնը, Հօրմէն չէ՛, հապա առ առ աշխարհէս է : Ա Յօհ • Բ • 15, 16 : Հապա ձեզի դանձեր զիղեցէք Երկինքը, ուր որ ո՛չ ցեցը և ո՛չ Ժանկը կ'ապականէ, ու ո՛չ գողերը պատ կը ծակեն և կը գողնան : Մաթթ • Զ 20 :

հալածանքը և տառապանքը մեծ բան մը սեպեկը : « Վասն զի էս այսպէս կը դատեմ՝ որ աս ժամանակիս չարչարանքները բան մը չեն գալու փառքին քովը , որ մեզի պիտի յայտնուի » : Հոով՝ Ը . 17 , 18 : Մատթ . Ե . 10—12 : Բ Կորնթ . Գ . 16—18 : Եբբ . ԺԱ : 24—27 :

Պէտք չէ որ տրտմանք աս աշխարհիս մէջ աշխատութիւն , յուսահատութիւն , նեղութիւն , լաց ու մահ ունենանուս համար . ինչու որ բոլոր աշխատութիւնները պիտի դադարին ան լուսապայծառ աշխարհքին մէջ՝ ուր որ մենք կ'երթանք . մահը չկրնար մանկէ հոն . տրտմութիւնը և հառաջանքը հեռու պիտի մնան անկից , և յաւիտենական ուրախութիւնը պիտի ըլլայ մեր բաժինը : Յայտ . Է . 14—17 : ԻԱ . 3 , 4 : Հոգ չէ թէ որ քիչ մը տաեն կը հառաջենք կերպ կերպ փորձութիւններով . ինչու որ մենք պիտի պտըտինք սրայծառութեան մէջ Աստուծոյ Գառին հետ , և սուրբ պիտի ըլլանք ինչպէս որ ինքը սուրբ է . և անոնք միայն պիտի մանեն քաղաքին գոնեւէն՝ որոնք որ իր պատուիրանքները կը կատարեն : Ուրեմն աշխատինք հանգստութեան մէջ մըտնելու . մեր բոլոր ցաւերուն և նեղութիւններուն արժէքը Երկինքն է : Երկինքին յոյսը մեր ուրախութիւնը և մխիթարութիւնն է ասկէ ետե . հոն պիտի զարգանանք մենք յաւիտենական սրբութեան ու երջանկութեան մէջ :

Գ . Յիսուս Քրիստոս ստացաւ Երկինքը մեզի համար . մենք Երկինքը կը մանենք իր արժանաւորու-

Թեանը պատճառաւ, որուն ըլլայ բոլոր փառքերը :
Յայտ. Գ. 5, 12, 21 : Ե. 9—14 : ԻԱ. 27 :

Դ. Թէ որ պատրաստ ենք երկինքին համար, պէտք
չէ որ մեռնելէն վախնանք. և երբոր արդարները մեռ-
նին՝ թէ՛ ծեր ըլլան անոնք՝ թէ՛ պատանի, մենք պէտք
չէ որ լանք այնպէս՝ իբր թէ մահը վնաս մը եղաւ
անոնց. վասն զի մահը՝ իրենց մէկ մեծ ստացուած մըն
է : Ո՛չ ալ անոնց վրայ տրամելով ըսենք, երանի՛ թէ
չմեռնէին. անոնք մեծապէս երջանիկ են. ինչու որ
Քրիստոսի հետ երկինքին մէջն են :

Ե. Երկինքը սուրբ տեղ մըն է, և Աստուծոյ բնա-
կարանը. անոր համար մէկը չկրնար վայելել երկինքը
բաց ՚ի անոնցմէ՝ որոնք որ սուրբ են՝ ու Աստուծով
կ'ուրախանան (ա) : Չարերը յաւիտեան դուրս ձգուած
են : Սաղմ. Ե. 4, 5 : Թո՛ղ ամէն մէկը քննէ ինքզինքը
թէ արդեօք Երկինքին համար պատրաստ է, թէ չէ (բ) :

(ա) . Խաղաղութեան ետեւէ եղիք ամէնուն հետ՝ և
սրբութեան, որ առանց ասոր՝ մէկը պիտի չտեսնէ Տէ-
րը : Եբր. ԺԲ. 14 :

(բ) . Փորձեցէ՛ք ձեր անձերը՝ թէ հաւատքին մէջն
էք. քննեցէ՛ք ձեր անձերը. չէ՞ք գիտեր ինքզինքնիդ,
որ Յիսուս Քրիստոս ձեր մէջն է. միայն թէ որ խո-
տելի չըլլաք : Բ Կորնթ. ԺԳ. 5 :

Ժ . Դժոխքին Վրայ :

Ղրուհ . ԺԹ . 19—31 :

Հ . Չարերը ո՛ւր պիտի ձգուին :

Պ . Դժոխքը :

Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան , եւ ամէն ազգերը՝ որ զԱստուած կը մոռնան : Սաղ . Թ . 17 :
Յայտ . ԻԱ . 8 :

Հ . Ի՞նչպէս տեղ մըն է Դժոխքը :

Պ . Ահագին տանջանքներու տեղ մըն է :
Մարկ . Թ . 43—48 : Մատթ . ԺԳ . 40—42 :

Հ . Ինչո՞վ պիտի վառի :

Պ . Յաւիտենական կրակով : Մատթ . ԻԵ . 41 :
Մարկ . Թ . 43—48 : Ղրուհ . Գ . 17 :
Յոտ . 7 :

Հ . Չարերէն զատ որո՞նք Դժոխքը պիտի ձգուին :

Պ . Սատանան և իր հրեշտակները :

Մէկ դի գայէ՛ք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է աստանային՝ և իր հրեշտակներուն : Մատթ . ԻԵ . 41 : Վասն զի թէ որ Աստուած մեզք դործող հրեշտակներուն չինայեց , հասցախաւարի կապերով տարտարոսը ձգած դատաստանի պահէլ տուաւ , և այլն : Բ Պէտ . Բ . 4 :

Հ . Դժոխքին տանջանքները ինչ ընել
պիտի տան չարերուն :

Պ . Եւ ու հեծել և իրենց ակռաները
կճրոցունել : Մատթ . Ը . 12 : ԺԿ . 40—42 :
ԻԲ . 13 :

Հ . Ի՞նչ խնդրեց մեծատունը երբոր տան
ջանքներուն բոցովը կը տանջուէր :

Պ . Ի՞ր լեզուն զովացունելու համար կա
թիլ մը ջուր : Ղրբ . ԺԳ . 24 :

Հ . Չարերը Դժոխքին մէջը օգնութիւն
կամ մխիթարութիւն պիտի ունենան :

Պ . Չէ :

Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը ,
իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը : Մատթ . ԻԵ .
46 : Մարկ . Թ . 43—48 :

Հ . Բնաւ անոնք Դժոխքէն դուրս պիտի
ելլէն :

Պ . Ըմենեին պիտի չելլեն , հապա Մատու
ծոյ բարկութիւնը անոնց վրայ պիտի մնայ :
Յօհ . Դ . 36 .

Հ . Մէկը կրնայ Երկինքէն Դժոխք եր
թալ կամ Դժոխքէն Երկինք :

Պ . Չէ , քանզի Երկինքին ու Դժոխքին
մէջ տեղը մեծ անդունդ մը հաստատուած
կայ : Ղրբ . ԺԳ . 26 :

Հ . Դժոխքին մէջը չարերուն քաշած պատիժը ի՞նչ կը կոչուի :

Պ . Յաւիտենական պատիժ :

Հ . Աս պատիժը զո՞րք ու ապաշխարել կուտայ՝ անոնց :

Պ . Չէ :

Ա՛ն որ անիրաւութիւն կ'ընէ՛ալ անիրաւութիւն թող ընէ . ու ան որ աղտո՞ւ է՝ ալ աղտո՞ւ ըլլայ : Յայտ . ԻԲ . 11 :

Հ . Պօղոս Առաքեալ ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով :

Պ . « Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը լինալը » : Եբր . Ժ . 31 :

Հ . Աստուած չարերուն ի՞նչ պիտի ըլլայ :

Պ . « Սաշող կրակ » : Եբր . ԺԲ . 29 :

Հ . Ամէն ուրիշ բաներէն աւելի՞ ո՞ւրկից վախնալու ենք՝ և փախչելու ջանալու ենք :

Պ . Դժոխքէն : Մատթ . Ժ . 28 :

Հ . Աստուած կ'ուզէ՞ որ մեզմէ մէկը թըշուառաբար կորսուի յաւիտեանս Դժոխքին մէջը :

Պ . Չէ :

Ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր Եհովան , որ ամբարը ըլլին մեռնիլը չեմ ուզեր . հասա որ ամբարը իր ճամբայէն դառնայ ու սպրի : Եւէի . ԼԳ . 11 : Տէրը չուշացուներ իր խոստմունքը , ինչպէս ոմանք ուշացու-

ցած կը սեպեն , հապա մեզի երկայնամիտ կ'ըլայ . ինչու որ չուզեր որ մէկը կորսուի , հապա որ ամէնքը ապաշխարանքի գան : Բ Պէտ . Գ . 9 :

Հ . Թէ որ անանկ է , ինչո՞ւ հոն կը խրկուին շատերը :

Պ . Քանզի կը մեղանջեն իրեն դէմ և կ'արհամարհեն Տէր Յիսուսը : Սարկ . Ժ.Օ . 16 : Հոովժ . Բ . 4—10 : Բ Թէտ . Ե . 6—9 :

—

Դատաստանէն ետքը չարերը Դժոխքը պիտի երթան :

Ա . Դժոխքը երկինքին խիստ հակառակ տեղ մըն է . անոր ու երկինքին մէջ տեղը մեծ անդունդ մը կայ հաստատուած , որուն վրայէն մէկը չկրնար անցնիլ : Դժոխքը անդնդային փոսն է , ուր մթութիւնը և խաւարն ու սոսկումը կը թաղաւորէ : Վրակի ու ծծումբի լիճ մըն է յաւիտեան վառած . հոն ձգուած են ամէն կերպ չարերը , և հոն յաւիտենական անարգանքով ծածկուած կը մաշին . հոն բարկութեան տակ ինկած պիտի կորսուին և պիտի անիծուին Աստուծմէ , և պիտի լան ու հեծեն և կըճոցունեն իրենց ակռաները տանջանքով յաւիտեանս յաւիտենից՝ բնաւ միտիթարութիւն մը չգանելով :

Բ . Աստուած իր անհուն արդարութիւնովը պատրաստեց ան տեղը , մինչև վերջը անզեղ մնացողներուն հա-

մար, [Թէ՛ ծեր ըլլան անոնք՝ [Թէ՛ պատանի : Ինչպէս որ ինքն արդարները կը վարձատրէ, անանկ ալ չարէրը կը պատժէ : Մէկին վարձքը և մէկալին պատիժը՝ երկուքն ալ յաւիտենական պիտի ըլլան : Մարդոց լեզուն չկրնար պատմել յաւիտենական կորուստին վայերը և տագնասպները . Աստուած հուր ծախիչ է իր [Թշնամիներուն :

Գ . Աս սոսկալի տանջանքներուն տեղը կը ցուցունէ Աստուծոյ մեղքին դէմ՝ բարկանալը, և մեղքին Աստուծոյ ինչ պատիժի արժանաւոր ըլլալը : Մեղքը Աստուծոյ անհուն կարողութեանը և մեծութեանը դէմ յանցանք մըն է : Ինքը կ'ատէ մեղքը . մեղքը խաղալիկ չէ՛ : Անիկայ՝ որ կը բարկացունէ Աստուած՝ մեծապէս աւնարդ ու անպիտան է : Մեղաւորները [Թէև հիմա [Թեթևութեամբ մեղք կը դործեն, բայց աս պատճառով՝ ետքը պիտի վառին լիճին մէջը և պիտի լան ու հեծեն յաւիտեան, [Թէ որ չսպաշխարեն :

Դ . Թէ որ Դժոխքը պիտի ըլլայ վայերուն տեղը և չարերուն բաժինը, ուրեմն ձեր մեղքին մէջ մնալով ու այնպէս մեռնելով՝ մեծ անիրաւութիւն ու մեծ չարութիւն կ'ընէք ձեր անձին . ինչու որ ձեր հոգին կը կորսուի և կորուսան ալ յաւիտենական է :

Ե . Ուրեմն ի՛նչ յիմարութիւն ու անխելքութիւն կայ մեղքին մէջը : Ի՞նչու մեղքի մէջ շարունակենք, որ բարի անունը կ'ատրականէ և հոգին կը կորսնցունէ, և վերջապէս անոր [Թոշակը մահն է : Ի՛նչպէս անցաւոր են անոր հեշտութիւնները և ի՛նչպէս անանցանելի են անոր վիշտերը : Մատթ . ԺԼ . 8 :

Զ • Աստուած ողորմածութեամբ զգուշացուց չարերը իրենց սոսկալի վախճանէն : Ինքը չուզեր որ անոնք կորսուին, հապա որ ապաշխարեն և իր Որդիին հաւատան ու ապրին : Անոր համար ինքը շատ երկայնամիտ կ'ըլլայ անոնց : Ուստի թող չարերը դառնան իրենց չար ճամբայէն ու ապրին : Թէ որ անոնք կորսուին, յանցանքը միայն իրենցն է :

Ի • Որովհետեւ չարերը ասանկ յաւիտենական կործանման վտանգին մէջն են, բոլոր քահանաներուն, վարժապետներուն և ծնողքներուն կ'լինայ իրենց ժողովուրդը, աշակերտները և տղաքները ստիպել, և անոնք թախանձել, որ վնասուեն Տէրը քանի որ կրնան դուրսէլ անիկայ : Պէտք է որ աս վախճանին համար իրենց բոլոր զօրութիւնովն աշխատին, և աղօթեն Սուրբ Հոգիին որ յաջողէ իրենց աշխատանքը :

Ը • Պէտք է որ միշտ գթութեամբ յիշենք աս աշխարհի մէջ մեր միլիոնաւոր ընկերները, որոնք Փրկութեան ճամբուն վրայով տեղեկութիւն չունին, ու անհոգ ըլլալով ատ բանին վրայ՝ կը մեռնին ամէն օր ու զրոյսը կ'իջնեն : Խրկենք անոնց սուրբ Աւետարանը, և աղօթենք Տէրոջը որ իր հաւատարիմ պաշտօնեաները խրկէ ատ Աւետարանը անոնց քարոզելու, որ վրկուին :

Մ Ա Ս Ն Դ

Ա Ս Տ Ո Ի Ծ Ո Յ Օ Ր Է Ն Ք Ի Ն Վ Ր Ա Յ

Ե . Օրէնքը արուելուն վրայ :

Եւեղ ժԹ . Լ Ի Գլուխ :

Հ . Աստուած ինչ յատուկ Օրէնքներ կամ Պատուիրանքներ տուաւ՝ մեր պարտաւորութիւնը մեզի սորվեցունելու համար :

Պ . Տասը Պատուիրանքները :

Ու սախտակներուն վրայ՝ առջի գրուածքին պէս՝ ան տասը խօսքերը գրեց , որոնք Տէրը ձեզի լեւան վրայ կրակին մէջէն խօսեցաւ ժողովքին սրը : Բ . Օրէն . Ժ . 4 :

Հ . Ո՞վ էր ան երևելի ու քարի մարդը որ ընդունեց աս Տասը Պատուիրանքներն Աստուծոյ ձեռքէն :

Պ . Մովսէս :

Հ . Աստուած ինչ բանի վրայ գրեց անոնք :

Պ . « Երկու քարէ Տախտակներու վրայ » .

Եւեղ . ԼԵ . 18 :

Հ . Ան Տախտակները ինչի՞ մէջ պահել պատուիրեց Աստուած Մովսէսին :

Պ . Տապանակի այսինքն Մատուկի մէջ : Եւ
 Լեյ . Ի . 10—22 :

Հ . Տէրը որ ժողովուրդին տուաւ աս Պատուիրանքները, որ իրենց ու մեզի՝ և ամէն մարդոց համար պահուին :

Պ . Հրէաներուն :

Հ . Երբոր Ըստուած՝ աս Պատուիրանքները գրեց ու Մովսէսին տուաւ, Ինքը լեռան վրայ որ իջաւ, ի՞նչ էր ան լեռան անունը :

Պ . Սինայ : Եւ Լեյ . Ժ . 9—20 :

Հ . Հրէից ժողովուրդը ո՞ւր կայնեցաւ :

Պ . Լեռանը տակը : Եւ Լեյ . Ժ . 17 :

Հ . Երբոր Տէրը Սինայ լեռանը գազաթն իջաւ՝ ի՞նչ եղաւ :

Պ . « Որոտումներ ու կայծակներ կ'ըլլային, թանձր ամպ մը կար լեռանը վրայ, ու խիստ սաստիկ փողի ձայն մը . լեռը բոլորովին կը մխար, ու անոր մոլխը հնոցի մոլխի պէս կ'ելլէր, և բոլոր լեռը սաստիկ կը դողար : Եւ Լեյ . Ժ . 16, 18 : Ի . 18 :

Հ . Երբոր Մովսէս տեսաւ աս սոսկալի տեսարանը՝ ի՞նչ ըսաւ :

Պ . Ըսաւ թէ՛ « Սաստիկ կը վախնամ ու կը դողամ » : Եւ Լեյ . Ժ . 21 :

Հ . Եւ ժողովուրդը ո՞ւր գնաց :

Պ . Ընտնը հեռու տեղ մը գացին կայնե-
ցան :

Հ . Մովսէս դէպի Թանճը խաւարին մէջը
գնաց, ուր որ Աստուած էր :

Պ . Հրամարեա : Եւեյ . Ի . 21 :

Հ . Որչափ ատեն լեռը սպասեց որ Տէրոջ
մէն Տասը Պատուիրանքները և ուրիշ սատ-
ուէրներ ընդունի :

Պ . « Բառսուն օր ու քառսուն գիշեր » : Ե-
ւեյ . Ի . 18 :

Հ . Այսչափ ատենին մէջ բնաւ բան մը
կերաւ կամ խտեց :

Պ . Չէ : Ի . Օրէն . Թ . 6 :

Հ . Ո՞վ ողջ առողջ սպահեց անիկայ :

Պ . Աստուած :

Գրուած է Թէ, ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հա-
պա ան ամէն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ'ելէ :
Բ . Օրէն . Ը . 3 : Մատթ . Գ . 4 :

Հ . Երբոր անիկայ լեռնէն վար իջաւ, ի՞նչ
պէս էր իր երեսը :

Պ . Կը լուսափայլէր : Եւեյ . Լ . 29—35 :

Հ . Մովսէս ի՞նչ կը ձգէր իր երեսին վրայ
ան լոյսին պատճառովը :

Պ . Ծածկոց մը : Ի . Կորնթ . Գ . 13 :

Հ . Բանի՞ տարի առաջ աս Պատուիրանք-
ները Մովսէսին տրուեցան :

Պ . Փրկչին թուականէն հազար հինգ հարիւր տարիի չափ առաջ :



Աստուած իր ողորմութիւնովը չթողուց մեզ որ ինքիւրենն թանկութիւնը սորվինք մեր պարտաւորութիւնը . քանզի մարդս իր տգիտութեանը և մեղքին մէջը՝ չկրնար և չուզեր ընել աս բանը : Ուստի Աստուած մեզն յայտնեց իր կամքը՝ տալով մեզն Տասը Պատուիրանքը որ շատ կարճ են , անանկ որ՝ մենք կարենանք զիւրութեամբ մտքերն իս բերել անոնք . և բոլորովին կատարեալ են . որ եթէ մենք զգուշութեամբ հետեւինք և ուղղութեամբ հասկընանք անոնք՝ պիտի գիտնանք մեր բոլոր պարտաւորութիւնները թէ՛ Աստուծոյ և թէ՛ մարդոց վերաբերեալ :

Ա . Բոլոր աշխարհի Ստեղծիչը և Տէրը՝ Աստուած է : Ինքը գերագոյն իշխանութիւն ունի իր բոլոր իմաստուն արարածներուն վրայ : Ինքն է օրէնսդիրը , և մենք պարտաւոր ենք միշտ զինքը սիրելու և իրեն հնազանդելու :

Բ . Իր Պատուիրանքները տուաւ ան երեւելի ու ահագին կերպովը , որ ամէնքն ալ վախնան ու մտդնեն և հնազանդին անոնց :

Գ . Թէ որ Օրէնքը տալու համար՝ իր վար իջնելուն միայն տեսները և լսելը այսչափ ահագին էր և առանկ վախով լեցուց ժողովուրդը , ուրեմն ինչ պիտի

ըլլայ մեզն թէ որ ատ Օրէնքը չպահենք, ու Աստուած իջնէ մեզ պատժելու :

Դ • Մարդոյս պարտաւորութեան միայն կատարեալ կանոնը՝ Աստուծոյ օրէնքն է : Երկրի վրայ եղած ամէն մարդ և ամէն ազգ՝ Աստուծոյ Օրէնքին կը կարօտին, որ գիտնան թէ որն է շիտակ և որն է սխալ : Եւ Օրէնքը սուրբ է՝ արդար ու ճշմարիտ • քոնենք անիկայ մեր պարտաւորութեան կանոնին պէս և ալօթենք շնորհք ընդունելու համար, որով կարենանք սիրել ու հնազանդիլ անոր : Աշխարհիս վրայ ամենէն երևելի ու վառաւոր մարդը անիկայ է, որ աւելի կը մտենայ կատարելապէս Օրէնքին հնազանդելու սրտով ու վարքով :

Ի • Տասը Պատուիրանէն Վրայ :

Առաջին պատուիրանքը :

Գ թ. ա գ • Ժ. 1—40 :

Հ • Ո՛րն է Առաջին Պատուիրանքը :

Պ • « Ի՞մ առջեւ ուրիշ աստուածներ չունենաս » :

Հ • Քանի՞ Աստուած կայ :

Պ • Կենդանի ու ճշմարիտ միայն մէկ Աստուած մը կայ :

Հ • Ի՞նչ ըսել կ'ուզէ մեր Տէր Աստուածը, երբոր կ'ըսէ մեզն, որ « Ի՞մ առջև ուրիշ աստուածներ չունենաս » :

Պ . Բսեւ կ'ուզէ որ մեզի Մատուած՝ զինքը ու միայն զինքը պիտի ընդունինք :

Հ . Օրինքը ի՞նչպէս սիրել կը պահանջէ մեզմէ :

Պ . « Բու Տէր Մատուածդ՝ բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես » : Ի Օրին . Գ . 4, 5 : Մատ . ԻԲ . 35—38 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով Սուրբ Գիրքը :

Պ . « Բու Տէր Մատուածոյդ երկրպագութիւն ընես, ու միայն Մնիկայ պաշտես » : Ի Օրին . Գ . 13 : Մատ . Գ . 10 :

Հ . Որո՞ւ յուսալու ենք :

Պ . « Բու բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ » : Մատ . Գ . 5 : Մատ . ԼԵ . 19 :

Հ . Գիցուք թէ մենք Մատուծմէ աւելի ինքզինքնիս սիրենք ու ինքզինքնուս ապաւինինք, կամ ուրիշ մարդու մը, կամ հարստութեան, կամ մարմնաւոր զուարճութեան կամ ինչ և իցէ բանի մը . աս պատուիրանքը չե՞նք անարգեր :

Պ . Հրամարես :

Լաւ է Տէրոջը յուսալ, քան թէ մարգոց ապաւինիլ : Լաւ է Տէրոջը յուսալ, քան թէ իշխաններուն ապաւինիլ : Մատ . ՃԺԸ . 8, 9 : Աս աշխարհիս մէջ

հարուստ եղողներուն պատուէր տուր՝ որ չհպարտանան, և անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կենդանի Աստուծոյ վրայ՝ որ ամէն բանը մեղի առաստօրէն կու տայ վայելելու : Ա ՏԻՏ . 2 . 17 : Տէրը այսպէս կ'ըսէ . Անիծեալ ըլլայ ան մարդը՝ որ մարդու կ'ապաւնի, ու մարմինը իրեն բազուկ կ'ընէ, և իր սիրտը Տէրոջմէ կը խոտորի : Եբե՛ . ԺԷ . 5 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Քրիստոս, Աստուծոյ ու մամոնայի ծառայութիւն ընելու վրայով :

Պ . « Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն ընել . ինչու որ կամ մէկը պիտի առէ և միւսը սիրէ, կամ մէկը պիտի մեծարէ և միւսը արհամարհէ . չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի » : Մատթ . 6 . 24 : Ժ . 27—39 :

Հ . Ի՞նչ կ'երսով ծառայութիւն ընելու է Աստուծոյ :

Պ . « Արդ՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝ և թէ ի՞նչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք » : Ե Կորնթ . Ժ . 31 : Կող . Գ . 17 : Ե Պետ . Գ . 11 :

Հ . Աստուծոյ ծառայութիւն ընելու վրայով ի՞նչ հաստատուն միտք ունէր Յեսու :

Պ . « Բայց ես ու իմ տունս Եհովան պիտի պաշտենք » : Յե . ԻԳ . 15 :

Տ . Ի՞նչ ըսաւ Դաւիթ իր Սողոմոն արդւոյն՝
Տէրը խնդրելուն վրայով :

Պ . « Թէ որ զանիկայ վնասուես, պիտի գրա-
նես, և թէ որ զանիկայ թողուս, ան ալ ըէզ
յաւիտեանս պիտի մերժէ » : Եւ Ս^ոապ . ԻՆ . 9 :

—

Առաջին Պատուիրանքը կ'իմացունէ մեզի՝ թէ միայն
մէկ կենդանի ու ճմարիտ Աստուած կայ . և կը պա-
հանջէ մեզմէ՝ որ զինքը ճանչնանք, և միայն զինքը մե-
զի Աստուած ընդունինք : Աս պատուիրանքէն կը կա-
խուի բոլոր մէկաշնորուն հաստատութիւնը :

Ա . Անոր համար աս պատուիրանքը կը պահանջէ
մեզմէ գիտնալ թէ ինչ՝ և ո՞վ է Աստուած, և ինչ
ըրաւ մեզի համար : Աս գիտութիւնը մենք յատկա-
պէս Սուրբ Գիրքէն կը ստանանք . նաև կը պահանջէ
մեզմէ զինքը սիրել բոլոր սրտով և մտքով և զօրու-
թիւնով, և հնազանդիլ իրեն խօսքով ալ՝ ու գործ-
քով ալ, առանց կեղծաւորութեան կամ ամբնայութեան,
ամէն բանի մէջ, ամէն տեղ, և ամէն ժամանակ, և
ամէն պարագաներու մէջ : Մենք պարտինք զինքը ընտ-
րել մեզի՝ և մեր տանը համար Աստուած, ինչպէս որ
Յեսուս ըրաւ : Մեր գլխաւոր երջանկութիւնը իրեն եր-
կրոպագութեան և իր պաշտօնին մէջ պարտինք գրա-
նել : Աստուած պիտի ըլլայ մեզի մեր ամէնը, և մեր
հոգիներուն բաժինը հիմա՝ և յաւիտեանս յաւիտենից :

Բ • Աս Պատուիրանքը չեն պահեր նախ անոնք՝ որ կ'ըսեն թէ Աստուած չկայ : Երկրորդ՝ որ անհոգ են ու Աստուծոյ վրայով չեն ուզեր տեղեկանալ : Երրորդ՝ որ կը ճանչնան Աստուած , բայց չեն սիրեր զինքը , ոչ ալ իրեն Աստուծոյ պէս կը ծառայեն : Աս կերպով է որ քրիստոնէից մէջը շատ մարդիկ թէ՛ ծեր՝ ու թէ՛ պատանի՝ կ'անարդէն աս Պատուիրանքը և ինքզինքնին յաւիտեանական բարկութեան տակը կը ձգեն : Չորրորդ՝ որ ուրիշ Աստուած մը իրենց կը ձևացնեն թէ՛ հեթանոսներուն պէս կուռք մը շինելով , և թէ՛ իրենց մտքին մէջը անանկ գաղափար ունենալով Աստուծոյ վրայ՝ որն որ Սուրբ Գիրքը չսորվեցուններ : Հինգերորդ՝ որ հրեշտակներուն , սուրբերուն կամ դեերուն կ'ասպաւինին ու կ'աղօթեն : Վեցերորդ՝ մահկանացու մարդիկներուն , ինչպէս մոգերուն՝ կախարդներուն՝ երազ մեկնողներուն ու բաղդ նայողներուն կը հաւատան ու կ'ասպաւինին՝ Աստուծոյ գիտութիւնը և զօրութիւնը ունեցողներու պէս • և կ'երթան անոնց՝ որ գալու բաները իրենց խմացունեն , կամ գեղատուութիւն ընեն իրենց՝ չարի կամ բարիի համար , և ուրիշ ասոր նման բաներ : Եւ վերջապէս՝ որ կը սիրեն ինչ և իցէ բան մը , և կը ծառայեն ո՛ր և իցէ բանի մը Աստուծու աւելի : Եւեո • ԻԲ • 18 : ՂԿ • Ի • 27 • ԱԹԹԳ • ԻԸճԳԼԽ :

Գ • Թող ամէն մէկերնիս իր սիրաբ քննէ ու հարցունէ թէ՛ Եհովայ ճշմարիտ Աստուծու ՚ի զատ ուրիշ Աստուածներ ունի՞ , իր բոլոր սրտովը , մտքովը եւ զօ-

բուժիւնովն անկկայ կը սիրէ՞ . Ճշմարտապէս կը փափաքի՞ ու ժրուժեամբ կ'աշխատի՞ անոր փառքին համար ապրելու և անկկայ վայելելու՝ թէ՛ աս աշխարհիս մէջ և թէ՛ հանգերձեալին : Բ Մնաց . ԺԵ . 2 :



Երկրորդ պատուիրանքը :

Դանձեւ . Գ . 1 — 30 :

Հ . Ո՞րն է Երկրորդ Պատուիրանքը :

Պ . « Դուն քեզի կուտայ շնորհքս , ո՛չ աւելբը Երկնիսի մէջ՝ կամ վարը Երկրի վրայ՝ կամ Երկրին քաջի շուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութեանը : Անոնց Երկրպագութեան չընես , ու զանոնք չպաշարես . Ինչու որ էս քո Տէր Աստուածդ՝ նախանշոյ Աստուած է՞ որ կը հաստատանէ՞ հայրերուն անօրէնութեանը որդւոցը վրայ՝ մինչև անոնց Երրորդ ու չորրորդ ապօրէ՛ որ կ'ատեն զիս . Եւ կ'ողորմի՞ անոնց մինչև հապար ապօրէ՛ որ կը տրեն զիս ու ի՞նչ պատուիրանքներս կը պահեն :

Հ . Բնաւ մէկը Աստուած տեսած է :

Պ . Չէ՞ :

Եւ Տէրը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ . զուք անոր խօսքերուն ձայնը լսեցիք . ու նմանութիւն մը չտեսաք :

բայց միայն ձայն անշիտ : Ուրեմն ձեր հոգիներուն ազեկ զգուշութիւն ըրէք . որովհետեւ ան օրը որ Տէրը Քորեբ լեռը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ , բնաւ նմանութիւն մը չտեսաք : Բ Օրին . Գ . 12 , 13 : Մէկը երբէք զԱստուած տեսած չէ , Բայց միածին Որդին՝ որ հօրը ծոցն է անկիայ պատմեց : Յօհ . Ա . 18 :

Հ . Ուրեմն կրնա՞նք գիտնալ թէ Աստուած ի՞նչ կերպարանք ունի , կամ կրնա՞նք փայտէն՝ քարէն՝ ոսկիէն և արծաթէն բան մը շինել իրեն նմանութեամբը :

Պ . Ը՞նչ :

Ուստի՝ որովհետեւ Աստուծոյ ցեղէն ենք՝ սէտք չէ որ անանկ սեպէնք թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդուս վարդէտութիւնովն ու խելքովը քանդակուած է : Գործ . Ժ . 29 : Եսայ . Խ . 1—31 :

Հ . Ուրեմն աս Պատուիրանքով Աստուած ի՞նչ կ'արգիլէ :

Պ . Բոլորովին մեզ կ'արգիլէ բան մը շինելէն՝ Աստուծոյ նմանութիւնով :

Հ . Եւ անկէց զատ ի՞նչ բան կ'արգիլէ Աստուած երկրորդ Պատուիրանքին մէջ :

Պ . Կ'արգիլէ երկինքին՝ կամ երկրի՝ և կամ ջուրի մէջ եղած արարածներուն մէկին նման բան շինելը , ու անոր առջին

երկրպագութիւն ընելը՝ Մատուծոյ երկրպագութիւն ընելու պէս :

Հ . Ուստի պատկերներուն ու արձաններուն երկրպագութիւն ընելը՝ աս Պատուիրանքը կ'արգիլէ :

Պ . Հրամարես , անշուշտ կ'արգիլէ :

Հ . Աս Պատուիրանքն արդեօք մեզի չըստրլեցընէր որ մենք Մատուծոյ երկրպագութիւն ընելու ենք , պարզ՝ անզարդ ու հոգևոր կերպով մը , ինչպէս որ կը վայելէ Հոգիի մը՝ որ մենք չենք տեսներ , և միայն աս գիտենք որ մեծ ու բարի է , ու ամէն տեղ ներկայ է :

Պ . Հրամարես , և միայն անանկ մէկ երկրպագութիւն մը կը վայելէ մեզի որ ընենք Մատուծոյ՝ ու անոր ալ կը վայելէ որ ընդունի մեզմէ :

Հ . Ի՞նչ կը կոչուին ան մարդիկը՝ որ ճշմարիտ Մատուածը չեն ճանչնար , ու երկնից՝ երկրի՝ կամ ջուրին մէջ եղած բաներուն նմանութիւնը կը շինեն , ու անոնց երկրպագութիւն կ'ընեն և կը ծառայեն՝ իրենց Մատուածներուն պէս :

Պ . Անոնք Հեթանոս կ'ըսուին : Հոով՝ .

Հ . Ըշխարհիս մէջ շատ հեթանոս ազգեր կան :

Պ . Ըյո՛, անոնց թիւը կը հասնի մինչև վեց հարիւր միլիոնի :

Հ . Սուրբ Գիրքը ի՛նչ անուն կու տայ՝ անոնց փայտեղէն ու քարեղէն չաստուածներուն :

Պ . Կուռք կ'անուանէ :

Հ . Եւ կուռքերուն պաշտօն մատուցանողին ի՛նչ անուն կու տայ :

Պ . Կռապաշտ :

Հ . Կռապաշտները կրնան Երկինք երթալ :

Պ . Չէ :

Չէ՞ք գիտեր որ, . . . ո՛չ կռապաշտները՝ ո՛չ շնացողները, ո՛չ խոսքեալները՝ ո՛չ արուագէտները՝ ո՛չ գողերը՝ ո՛չ ազահները՝ ո՛չ գինովները՝ ո՛չ նախատաղները՝ ո՛ւ ո՛չ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն : Ա Կորնթ . Զ . 9—10 : Բայց վախճաններուն՝ ու անհաւաստներուն՝ և պիղծերուն՝ ու մարդասպաններուն՝ ու սրտնիկներուն և կախարգներուն ու կռապաշտներուն՝ և բոլոր ստախօսներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճին մէջը պիտի ըլլայ որ է երկրորդ մահը : Յայտ . ԻԱ . 8 :

Հ . Թի՛ որ մարդիկ աս Պատուիրանքը չպահեն, Ըստուած որին վրայ պիտի հատուցանէ իրեն անօրէնութիւնը :

Պ . Իրենց վրայ և իրենց որդւոցը վրայ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը :

Հ . Եւ ինչ պիտի ցուցնէ Մատուած աւնոնց մինչև հազար ազգը, որ զինքը կը սիրեն և իր պատուիրանքները կը պահեն :

Պ . « Ողորմութիւն » :

Հ . Մա պատուիրանքին մէջ Տէրը ինչ ըսել կ'ուզէ, երբոր կ'ըսէ թէ՛ « Ես քու Տէր Մատուածդ նախանձոտ Մատուած եմ » :

Պ . Ըն ըսել կ'ուզէ որ ինքը պիտի չթողու մեզ որ իրմէն զատ ուրիշ Մատուած մը ունենանք :

Ես Եհովայ եմ . իմ անունս աս է . ու իմ փառքս ուրիշի չեմ տար, ոչ ալ իմ պատիւս կուռքերուն :
Եսայ . ԽԲ . 8 : ԽԸ . 11 :



Ա . Աս պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ որն է Աստուծոյ մեր ընելու ճշմարիտ երկրպագութիւնը, և ինչ ձևով կ'ըլլայ աս երկրպագութիւնը : Մենք երկրպագութիւն ընելու ենք Աստուծոյ անկեղծութեամբ, յարգութեամբ և խոնարհութեամբ իբրև Հոգիի մը՝ որ մեր մարմնաւոր աչքին անտեսանելի է . բայց մեծ ու բարի է և ամէն տեղ ներկայ է :

Բ . Մենք կ'անարգենք աս պատուիրանքը նախ՝ եր

բոր Աստուծոյ նմանութիւնը կը ձևացրնենք, կամ ան-
երևոյթ կերպով մեր երևակայութեանը մէջ, և կամ
արտաքին կերպով ձեռագործ բաներու մէջ: Երկրորդ
երբոր կը շինենք վերը երկինքին մէջ, կամ վարը երկ-
րի մէջ, կամ երկրի տակը ջուրի մէջ ելող ո՛ր և իցէ արարա-
ծի մը նմանութիւնը կամ պատկերը, կամ անոր երկըր-
պագութիւն ընելու համար և կամ անոր միջոցոն Աս-
տուծոյ երկրպագութիւն ընելու: Աստուած հոգի ըլլա-
լով անոր պաշտօնին նուիրուած շէնքերը պէտք է որ աս-
տեսակ բաներէն բոլորովին ազատ ըլլան: Եւ թէ՛ ներ-
սի կողմը, և թէ՛ գուրսի կողմը՝ անոնց գեղեցկու-
թիւնն ալ պէտք է որ պարզ ու անզարդ ըլլայ:

Գ. Սէրը և հնազանդութիւնն իրարու հետ կապուած
են. թէ որ մէնք Աստուած սիրենք, պիտի պահենք իր
պատուիրանքները (ա):

Դ. Անոնք կ'ատեն Աստուած, որ կուռքերու երկըր-
պագութիւն կ'ընեն, և ճշմարիտ Աստուածը ճանչնալ չու-
զելով, սուտ Աստուածներ կը շինեն իրենց: Սրաի գէ-
շութիւնը կուսապաշտութեան մայրն է: Տէ՛ս հոռի՛ւ. Ա.
Գլուխը:

Ե. Մեր միլիոնաւոր ընկերներուն վիճակը, որոնք
որ հեթանոս և կուսապաշտ են՝ խիստ առատիկ ու ող-

(ա) . Թէ որ իս կը սիրէք՝ իմ պատուիրանքներս
պահեցէք: Յօ4 . ԺԴ . 13: Դուք իմ բարեկամներս
էք, թէ որ ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի կը պա-
տուիրեմ: Յօ4 . ԺԵ . 14:

քայլի վիճակ է : Անոնք թաղուած են իրենց տգիտութեանը և մեղքին մէջ , ամենայն ժամ մեղքերուն մէջը թաթխուած են : Անոնց կուսառնները չարութեան տաճարներ են : Անոնք տառապանքներու և թշուառութեան տակ են , ու ասանկ ասպականեալ և մէկըմէկ ասպականող պիտի ասլին մինչև աշխարհիս վերջը՝ թէ որ Աստուածաշունչը՝ փրկութեան Աւետարանը անոնց չխրկուի : Երանի՛ թէ Աստուած հաճէր կանչել մեզմէ մէկ քանինները՝ որ Աւետարանը տանելնիք անոնց : Բայց թէ որ աս արտօնութիւնը մեզի չորուի՝ պէտք է որ գոնէ ամէն միջոցները գործածենք՝ մեր օգնութիւնովը Աւետարանն անոնց խրկելու համար • յատկապէս աղօթելով՝ որ Աստուած կամենայ ճամբան բանալ և յառաջ տանիլ իր ճամբարութիւնը՝ մինչև որ բոլոր երկիրը լցուի իր գիտութիւնովը : Յարգենք Աստուածաշունչը մեծ յարգութիւնով , յակից կ'ընդունինք ան միտարարութիւնը և խաղաղութիւնը՝ որն որ հիմա կը վայելենք , ու նաև ան գալու երջանկութիւնը որուն կը յուսանք : Եւ առատօրէն երախտագիտութիւն ու շնորհակալութիւն տանք Աստուծոյ՝ որ ինքը իր դերագոյն ողորմութիւնովը անոնցմէ աւելի լաւ վիճակի մէջ հաստատեց մեզ :

2 . Աստուած՝ նախանձոտ Աստուած մըն է • Ինք իր պատիւն ու փառքը կուռքերուն չտար • Ինքը պիտի պատժէ անոնք՝ որ ասանկ ունայնութիւնները կը պաշտեն , ու նաև իրենց անօրէնութիւնը որդիներնուն պիտի հասուցանէ մինչև անոնց իրեք և չորս ազգը •

բայց ուրբմուծիւն պիտի ցուցնէ անոնց հազար ազգին՝ որոնք որ զինքը կը սիրեն և իր պատուիրանքները կը պահեն :



Երրորդ Պատուիրանքը :

Պ Լուս. Ժ.Թ. 11—18 .

Հ . Ո՞րն է Երրորդ Պատուիրանքը :

Պ . « Տէրո՛ւնը քո՝ Լստուծոյդ անունը պարապ առէ՛ր բերանդ չառնես . ինչո՞ւ որ Տէրը՝ իր անունը պարապ առէ՛ր բերան անողը՝ անմեղ պէտէ չառնէ » :

Հ . Ի՞նչպէս պարտինք գործածել Լստուծոյ անունը :

Պ . Լինկեղծ ու խոնարհ սրտով և միշտ պատուելով :

Հ . Ի՞նչ կը նշանակէ « Լստուծոյ անունը պարապ տեղը բերան առնելը » :

Պ . Կը նշանակէ Լստուծոյ անունը սուտ՝ անարդ՝ կամ թեթեւ կերպով մը գործածել :

Հ . Երբոր մենք երդում կ'ընենք, չէ՞ որ Լստուած վկայ կը կոչենք մեր խօսքին ճշմարիտ ըլլալը հաստատելու համար :

Պ . Հրամարեա :

Հ . Ուրեմն երբոր մեր ըսածին սուտ ըլլալը գիտնանք՝ ու ան իրաւեցունելու համար վկայ կոչենք Մատուած, առ պատուիրանքը չենք անարգեր :

Պ . Հրամարեա, սոսկալի կերպով մը կ'անարգենք : Ղ Խ. Գ. 3 :

Հ . Մ պատուիրանքը ի՞նչ կ'արգիլէ :

Պ . Կ'արգիլէ անիծելը և զուր տեղը երդում ընելը, և կեղծաւորեալ թեթեւ ու չընչին կերպով Մատուծոյ անունը զործածելը : Ի Օրէն . ԻԸ . 58 : Մատ. Ե . 34—37 :

Հ . Ի՞նչ կը նշանակէ Մատուծոյ « անմեղ չեպելը անիկայ, որ իր անունը պարապ տեղը կ'առնէ » :

Պ . Կը նշանակէ թէ Մատուած անիկայ պիտի պատժէ : Ղ Խ. Ի. 16 :

—

Աս պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ ինչպէս զործածելու ենք Աստուծոյ մեծ ու բարի անունը :

Ա . Մենք Աստուծոյ վրայ խորհելու ու խօսելու, և աղօթելու ենք իրեն, անկեղծ՝ խոնարհ ու յարգական մտքով . յիշելով միշտ թէ ինչպէս անչափ սուրբ ու բարձրացեալ է Ինքը, և թէ մեզի պէս ասանկ նուազ ու անարժան ստեղծուածներուն կը վայլէ որ վախ-

Նանք իր պատուական ու ահաւոր անունէն : Բ Օրին Ե
ԻԸ . 58 : Մարթ . 2 . 9 :

Բ . Մենք կ'անարգենք աս պատուիրանքը նախ՝
երբոր սուա երդում կ'ընենք , երբոր մեր ստուգիւնը
իրաւցունելու համար Աստուած վկայ կը կոչենք . աս-
կէ աւելի մեծ նախասինք չկրնար ըլլալ ճշմարտու-
թեան Աստուծոյ դէմ : Երկրորդ՝ երբոր Աստուծոյ
անունը թեթեւ ու ջնջին կերպով մը կը գործածենք
մեր հասարակ խօսակցութեանը մէջ , զոր օրինակ՝ « Ա
աջ Աստուած , Աստուծոյ յայննի է , Աստուած վկայ ,
Աստուած գիտէ որ » , կայն : Երրորդ՝ երբոր կ'անի-
ծենք և երդում կ'ընենք ու կը հայհոյենք Աստուծոյ
սուրբ անունովը , ինչպէս որ չարագործ հայհոյիչները կ'ը-
նեն : Չորրորդ՝ երբոր երկրպագութիւն կ'ընենք Ա-
ստուծոյ՝ թեթեւ ու անհոգ կերպով մը , կամ կեղ-
ծաւորութեամբ :

Գ . Տէրը իր անունը պարսպ տեղը բերանն առնու-
ղը անմեղ պիտի չսեպէ : Ինք՝ աս պատուիրանքին դէմ
ամէն յանցանքները ջնունար : Երբեմն հայհոյիչները՝
սակաւին իրենց հայհոյութիւնը չմնցուցած՝ Աստուած
յանկարծ պատժեց անոնք՝ ու խնայն մեռան : Ան մե-
ծաշուք ու ահագին օրը հասնելու վրայ է , որ մենք
հաշիւ պիտի տանք ամէն պարսպ խօսքերնուս համար :

Չորրորդ Պատուիրանքը :

Եսայ . ԾԹ . 13 , 14 :

Հ . Ի՞նչ է Չորրորդ Պատուիրանքը :

Պ . « Հանգստութեան օրը մտադ էր՝ անհնայ տուրք պահելու համար : Վէջ օր պիտի աշխատես , ու բոլոր գործեր ընես . բայց եօթներորդ օրը՝ Տէրու ջրհեղեղի Լուսնաօրու հանգստութեան օրն է . ան օրը գործ ճշ պիտի չգործես , ոչ դռան՝ ոչ դուռիդ՝ ոչ դուռնակիդ՝ ոչ դուռնակիդ՝ ոչ քանակիդ . քան զի Տէրը վէջ օրուան մէջ ըրաւ երկնին ու երկերը , ծովն ու բոլոր անոնց մէջ եղածները , եւ եօթներորդ օրը հանգստացաւ . անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու արեց զանհնայ » :

Հ . Ի՞նչ նշանակել կ'ուզէ Լուսնաօր , ըսելով թէ՛ մենք պարտինք Հաբաթ օրը « սուրբ պահել » :

Պ . կ'ուզէ ըսել որ մենք բոլոր ան օրը պարտինք իրեն նուիրել սրբազան պաշտօններու :
Եսայ . ԾԹ . 2 :

Հ . Հաբաթը սուրբ պահելը արդեօք լի է շրէական օրհնք մը համարուելու է :

Պ . Լ՛մենեին չէ՛ . քանզի Լստուած ան օրէնքը Լդամին ալ տուաւ (Ն^հդ . Ի . 2 , 3) և անոր համար չորրորդ պատուիրանքին մէջ շրէաներուն ալ կրկնելով աս օրէնքը, կ'ըսէ թէ « Հանգստութեան օրը միտքդ բեր » :

Հ . Լս բանիս համար ուրիշ վկայութիւն ունիս :

Պ . Լս ալ ունինք որ, Շաբաթը պահելը թէ որ լոկ շրէական արարողութիւն մը ըլլար, Լստուած պիտի չգրէր ան՝ բուն իր մատովը հասնաբանեայ Օրէնքին մէջը, ուր որ ուրիշ բան չկայ, բայց միայն բարոյական՝ ընդհանուր և հոգևոր պատուիրանքներ : Աւստի աս Շաբաթուան օրէնքը որ աշխարհի սկիզբէն տրուեցաւ, պարտի հաստատ մնալ մինչև աշխարհի վերջը :

Հ . Աւրեմն ինչո՞ւ համար Շաբաթ օրը չենք պահեր, ու կիրակի օրը կը պահենք :

Պ . Լնոր համար որ մեր Տէրը Յիսուս՝ կիրակի օրը յարութիւն առաւ :

Հ . Ի՞նչ վկայութիւն ունինք աս փոփոխութեանս իրաւունքով ըլլալուն համար :

Պ . Հետևեալ վկայութիւնները ունինք : 'Նախ՝ որ Տէրն մեր Շաբաթ օրը թաղուած մնալով՝ անպատիւ ըրաւ անիկայ, և կիրակի՝

օրը յարութիւնս առնելով պատուեց ան օրը :
 Երկրորդ՝ որ Տէրն մեր իր յարութիւնս առնե-
 լէն ետքը երկու անգամ Վիրակի օր իր աշա-
 կերաներուն երեցաւ՝ երբոր աղօթելու հա-
 մար մէկ տեղ հաւաքուած էին անոնք . բայց
 Հաբաթ օր մը անոնց չերեցաւ : Յօդ. Ի. 19,
 26 : Երրորդ՝ որ Տէրն մեր իր յարութենէն
 ետքը՝ ճիշդ եօթներորդ շաբաթ օրը անցնե-
 լուն պէս՝ հետեւեալ օրը՝ որ Պենտէկոստէին
 կիրակի օրն էր՝ ան մեծ խոստմունքը, այսինքն
 իր Սուրբ Հոգին խրկեց իր աշակերտներուն
 վրայ : Գործ. Ե. 4, 5 : Ի. 1, 33 : Չորրորդ՝ որ
 Սուրբ Հոգւով լցուած Առաքեալները սկսեցին
 Վիրակի օրը սուրբ պահել և աղօթքով ան-
 ցունել, ինչպէս որ ան սովորութիւնը կը մնայ
 մինչև աս օր քրիստոնէից մէջ ալ : Գործ. Ի.
 76 : Ե. Կորնթ. Ժ. 2 : Յայտ. Ե. 10 :

Հ . Քանի՛ օր պիտի աշխատինք որ մեր բո-
 լոր գործքերն ընենք :

Պ . Վէց օր պիտի աշխատինք, ու մէկ օր պի-
 տի հանգստանանք մեր բոլոր գործքերէն : Ե-
 լեց Ժ. 25—30 : ԼԵ. 12—17 : ԼԻ. 1—3 .
 Թատոց Ժ. 32—36 : Կէէ՛՛. Ժ. 31 : ԺԿ. 15
 —22 : Երէ՛՛. Ժ. 21—27 :

Հ . Ուրեմն ամենեւին գործ մը չէ՞նք կրնար տեսնել ան օրը :

Պ . Կրնանք տեսնել երկու տեսակ գործ . այսինքն անոնք՝ որ հարկաւոր են , և անոնք՝ որ ողորմութեան կը վերաբերին : Մատթ . ԺԳ . 1—13 : Մարկ . Գ . 1—5 : Ղուկ . ԺԳ . 10—17 : ԺԳ . 1—6 : Յօհ . Ե . 1—14 :

Հ . Ուստի Մատուծմէ որոշուած ան մէկ հանգստութեան օրէն զատ , ուրիշ օր մը պարտական են քրիստոնեաները սուրբ պահելու :

Պ . Չէ՞ . քանզի Մատուծոյ հրամանն է որ վեց օր աշխատինք ու մէկ օր հանգստանանք :

Ինտո՞ր նորէն կը դառնաք ան տկար ու չքաւոր աշխարհի սկզբունքներուն . որոնց նորէն կ'ուզէք ծառայութիւն ընել : Օրերը կը զանազանէք , ու ամիսները , և ժամանակները ու տարիները : Կը վախնամ ձեզմէ , որ գուցէ պարսպ տեղը ձեր վրայ աշխատած ըլլամ : Գալ . Գ . 9—11 :

Հ . Կիրակի օրը մենք որ չէնք գործեր , ուրիշ մէկու մը կրնանք գործել տալ :

Պ . Չէ՞ , ո՛չ մեր տղան՝ ո՛չ մեր աղջիկը՝ ո՛չ մեր ծառան՝ ո՛չ մեր աղախինը՝ ո՛չ մեր անասունը և ո՛չ մեր քովը եղած օտարականը աշխատեցունելու ենք :

Հ . Թէ որ անոնք գործել ուզեն , մենք ի՞նչ պիտի ընենք :

Պ . Պիտի թող չտանք :

Հ . Յատուկ գործ գործելէն զատ , ի՞նչ ուրիշ բան կայ արգիլուած կիրակի օրուան համար :

Պ . Արգիլուած է ինքզինքնիս զուարճացունելը . զոր օրինակ , ձի հեծնելով կամ որսի երթալով՝ կամ թուղթ խաղալով՝ կամ քնանալով՝ կամ ուտելով և խմելով՝ կամ իրարու հետ մարմնաւոր ու ոչինչ խօսակցութիւններ ընելով :

Թէ որ շաբաթը՝ իմ սուրբ օրս՝ քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձունես , ու շաբաթը քո զուարճութիւնդ , և Տէրոջը նուիրուած օջ՝ պատուական անուանես , ու զանիկայ պատուես քու ճամբաներուդ չհետևելով , քու ցանկութիւնդ չկատարելով , ու արայ խօսք չխօսելով , ան ատենը Տէրոջմով պիտի ուրախանաս . ու քեզ երկրիս բարձր տեղուանքը պիտի հանեմ , ու քու հօրդ Յակոբին ժառանգութիւնը քեզի պիտի կերցունեմ , քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ :
Եսայ . ԾԸ . 13 , 14 :

Հ . Կիրակի օրուան մեր պարտաւորութիւնն ի՞նչ է :

Պ . Առանձին աղօթք և մտածմունք ընելէն

զատ՝ պարտինք մէկ տեղ հաւաքուիլ Աստուծոյ երկրպագութիւն ընելու, աղօթելու, Սուրբ Գիրքը կարդալու ու Սուրբ Աւետարաւ նին քարոզութիւնը մտիկ ընելու :

Ու եկաւ Նազարէթ, ուր որ ինքը մեծցած էր . և իր սովորութեանը պէս շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու ելաւ որ կարդայ : Եւ տուին անոր Եսայի մարգարէին գիրքը : Ղուկ . Դ . 16, 17 : Եւ ինչը ժողովարաններուն մէկուն մէջ շաբաթ օրը կը սորվեցունէր : Ղուկ . ԺԳ . 10 : Շաբաթ օրը քաղաքէն դուրս ելանք՝ գետեղերքին քովը՝ ուր որ սովորութիւն ունէին աղօթք ընելու . ու նստելով ժողովուած կնիկներուն կը խօսէինք : Պործ . ԺԶ . 43 : Եւ մէկշաբթի օրը՝ երբոր ժողովուեր էինք հացը կտրելու, Պողոս անոնց կը քարոզէր, ինչու որ հետեւեալ օրը ճամբայ պիտի ելէր . և խօսքը երկնցուց մինչև կէս գիշեր : Պործ . Ի . 7 : ԺԳ . 14 : ԺԷ . 2 : Ա Կորնթ . ԺԶ . 2 : Եբր . Ժ . 25 :

—

Չորրորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ մեր ժամանակին ո՞ր մասը յատկապէս Աստուծոյ երկրպագութեանն ու իրեն ծառայութեանը նուիրելու ենք . այսինքն է՝ եօթը օրին մէկը, կամ թէ մեր ժամանակին եօթներորդ մասը : Հրէաները պահեցին եօթներորդ օրը աշխարհին ստեղծագործութեան սկիզբէն հաշուելով

որ աստ օրը Աստուած հանդատացաւ իր գործէն : Բայց քրիստոնէաներուն յատուկ բռնած օրը շաբաթին առջի օրն է . ինչու որ մեր Տէր Յիսուսը ան օրը յարութիւն առաւ մեռելներէն . և մեր փրկութեան գործը լմնցուց , ու անկէ հանդատացաւ : Գործ : Ի . 7 : Ա Կորնթ . ԺԶ . 1 , 2 : Յայտ . Ա . 10 :

Ա . Ան օրը սուրբ պահուելու է : Մենք հանդատանալու ենք մեր բոլոր գործքերէն հարկաւոր եղած ու ուղորմութեան վերաբերեալ գործքերէն ՚ի զատ : Ան օրը աղօթելու ենք , Աստուծոյ խօսքերը ու բարի գիրքերը կարգալու ենք . մեր սիրտերն ու մեր վարքը քննելու ենք , բարեպաշտ խօսակցութիւն ունենալու ենք . Աստուծոյ մեծութիւնը և Յիսուս Քրիստոսի ձեռքովն անոր մեղի ըրած բարերարութիւնը՝ միաբերնիս բերելու ենք . երկինքին հանդատութեանն ու յաւիտենական օրհնութեանը վրայով մտածելու ենք : Ան օրը Աստուծոյ տունն երթալու ենք ու իր ժողովուրդին հետ մէկ տեղ իրեն երկրպագութիւն ընելու ենք : Մէկ խօսքով մեր բոլոր խորհուրդները՝ զգացումները՝ խօսքերը և գործքերը իրեն նուիրելու ենք :

Բ . Մենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր հասարակ ու անպիտան գործ մը ընենք կիրակի օրը : Երկրորդ՝ երբոր հեշտութիւններով դատարկութիւնով և կամ մեղքով անցունենք ան օրը : Երրորդ՝ երբոր մեր խորհուրդները , խօսակցութիւնը , կարգապածները , լրածներն ու մեր ընկերութիւնը աշխարհային ըլլան : Չորրորդ՝ երբոր զանց ընենք Աստուծոյ տունն

երթալը . կամ երբոր հոն երթալով՝ անկեղծութեամբ
և սրտի մտքը Աստուծոյ չծառայենք , կամ կիրակին՝
նեղութիւն մը ու բեռ մը սեպենք :

Գ . Կիրակին չպահելը շատ հասարակ բան մըն է ,
բայց շատ մեծ մեղք ալ է : Ան՝ որ կիրակին կ'անար-
գէ , կը զրկէ Աստուած իր յատուկ ստացուածքէն . ին-
չու որ ան օրը՝ Տէրովը օրն է : Ինքզինքը կը զրկէ նաև
հոգևոր օգուաներ քաղելէ՝ ան օրուան ընտիր պա-
տեհութիւններէն . և իր օրինակին ազդու զօրութիւ-
նովը որչափ որ կրնայ՝ Աստուածապաշտութիւնը երկրիս
վրայէն կ'աւրէ , կը խտրանէ . քանզի կիրակին սուրբ
պահելով՝ եկեղեցի երթալով՝ քարոզ մտիկ ընելով ա-
ղօթք ընելով և բոլորովին հոգևոր բաներու վրայ մշա-
մաւելով՝ Քրիստոնէական օրէնքը կը հաստատուի , ու
նմանապէս ասոնց հակառակն ընելով օրէնքը և Աս-
տուածապաշտութիւնը կ'աւրուի :

Դ . Կիրակին՝ մարդոց սրուած Աստուծոյ ամենամեծ
օրհնութիւններուն մէկն է . եթէ օրերուն մէջի ամենէն
աղէկ օրն է : Անոնք՝ որ կիրակին չպահելով հանգս-
տութեան օր մը չունին ու միշտ կ'աշխատին , իրենց
միտքերը և մարմինները շատ հոգնած՝ պիտի տկարանան .
ինչպէս որ մեր ընտանի անասունները , թէ որ միշտ
ամէն օր գործքով նեղացունենք , ու թող չտանք անոնց
որ կիրակի օրը հանգստանան , անշուշտ պիտի նիհարա-
նան ու իրենց ժամանակը չհասած՝ պիտի մեռնին : Կի-
րակին հանգստութիւնը հարկաւոր է մեզ զօրացունե-
լու ու մտիթարելու համար , և թէ որ հաւատարմու-

Թեամբ պահենք անխիայ, Աստուծոյ օրհնութիւնը մեր աշխատութիւններուն ու մեր գործքերուն վրայ կը բերէ :

Ե . Կիրակի օրը հարկաւոր է աշխարհիս մէջ ճշմարիտ կը նքը պահպանելու . քանզի առանց անոր՝ մարդիկ պիտի մոռնային Աստուած՝ և անոր գիտութիւնը բողբոջին պիտի կորսնցունէին : Ան օրն է որ՝ մարդիկ պարագ ըլլալով կ'երթան Աւետարանին քարոզութիւնը մօտիկ կ'ընեն, և ասանկ ճշմարտութիւնը սորվելով կ'աւաշխարհն ու դարձի կու գան . ու աս ընթացքով կ'աճին Քրիստոսի շնորհքով՝ և պատրաստ կ'ըլլան երկինքի համար : Թէ որ քրիստոնեայ ազգ մը կիրակիէն զրկուած ըլլար, շուտով պիտի դառնար, Թշուառ ու չար հեթանոսներուն պէս պիտի ըլլար :

Զ . Ուրախանանք և շնորհակալ ըլլանք Աստուծոյ՝ հանգստութեան օրուան համար, և սուրբ պահենք ու տղէկ կերպով գործածենք անխիայ, և անանկ պատրաստութիւնք ան դալու յաւիտեանական կիրակիին համար՝ որ յաւիտեան պիտի չվերջանայ :

— Աս չորս Պատուիրանքները՝ որոնք որ հիմա քննեցինք մենք՝ Առաջին Տախտակ ալ կը կոչուին . Ինտոր որ մեկալ վեցը՝ Երկրորդ տախտակ կ'ըսուին : Երկրորդ տախտակի պատուիրանքները մեզի կը սորվեցունեն մեր դէպի մարդիկ պարտաւորութիւնը . բայց առաջին տախտակիները՝ կը սորվեցունեն մեզի յատկապէս առ Աստուած եղած մեր պարտաւորութիւնը . այսինքն նախ՝ Թէ մենք մի միայն կենդանի և ճշմարիտ Աստուածը ճանչնալու ու պաշտելու ենք, հայրը, Որդին և Սուրբ

Հողին : Երկրորդ՝ Թէ մենք իրեն երկրպագութիւն չ-
 նելու ենք ան կերպով ինչպէս որ կը վայլէ խիստ մեծ
 և փառաւորեալ ու բարի Հողի մը՝ որ Թէպէտ մեզի
 անտեսանելի է, բայց ամէն տեղ ներկայ է : Երրորդ՝
 Թէ մեր երկրպագութեան մէջը մեր իր վրայ ունեցած
 բոլոր խորհուրդներուն՝ զգացումներուն և դործքերուն
 մէջը, խոնարհ՝ անկեղծ և երկիւղած ըլլալու ենք : Եւ
 չորրորդ՝ Թէ զգուշութեամբ և հաւատարմութեամբ սուրբ
 պահելու ենք ժամանակին ատ բաժինը՝ այսինքն Կի-
 րակի օրը, որն որ ինքը հաճեցաւ բոլորովին իր պաշ-
 տօնին համար զատել ու սրբել :

Հինգերորդ Պատուիրանքը :

Ի Թագ. Ժ. 1—33 :

Հ. Ո՞րն է Հինգերորդ Պատուիրանքը :

Պ. « Պատուէ՛ր չու Հայրդ ու Մայրդ. որ չու-
 օրերդ երէար ըլլան ան երէրէն Վրայ՝ որն որ չու-
 Տեր Աստուածդ չու ասյ շեղի » :

Հ. Մեր կեանքը որոնցմէ կախում ունի
 աս աշխարհիս մէջ :

Պ. Նախ Աստուծմէ կախում ունի, և ա-
 պա մեր ծնողքներէն :

Հ. Ո՞վ են անոնք՝ որ երբոր մենք տակաւին

պզտի տղաքները ըլլալով՝ ու չկրնալով ինքնի-
րեննուս մեզի հոգ տանել՝ մեզ կը հոգան՝ և
մեր կանչուրութեւն և յիմարութիւններուն
ու չարութիւններուն ալ կը համբերեն :

Պ . Մեր Հայրը և Մայրը :

Հ . Եւ ո՞վ են անոնք՝ որ կը սիրեն մեզ
խանդակաթ սիրով, կը դարմանեն մեզ՝ եր-
բոր մենք հիւանդ ըլլանք, կը պահպանեն մեզ
կորստեան վտանգէն, և կը պատրաստեն կե-
րակուր ու հանդերձ մեզի համար, և բարի
կերպով կը կրթեն մեզ՝ աղօթելով մեզի հա-
մար և կը ջանան իմաստուն ու բարի տղաքներ
ընելու մեզ :

Պ . Մեր Հայրն ու Մայրը :

Հ . Ուրեմն ի՞նչ պէտք է որ ընենք մեր ծնո-
ղացը, իրենց մեզի ըրած մեծամեծ խնամք-
ներուն փոխարէն :

Պ . Պարտինք խիստ մեծ սէր ունենալ ա-
նոնց վրայ : Ղ Խ. Թ. 3 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքը ասոր վրայով :

Պ . « Ընիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կամ
մօրը դէմ հայհոյութիւն կ'ընէ » : Ի Օրէն .
Ի. : 16 :

Հ . Օգուկրներն ամէն բանի մէջ պարտին
իրենց ծնողացը հնազանդիլ :

Պ . Եւ յի՛, անոնց ամէն հրամանսին պարտին
հնազանդիլ՝ ան հրամաններէն ի զատ որոնք
Եստուծոյ պէմ են :

Ո՛րդեք՝ ձեր ծնողացը հնազանդ եղիք Տերօջմով որ
ան է արժանը : Եփե . 2 . 1 : Կող . Գ . 20 :

Հ . Սողունն ի՛նչ կ'ըսէ ծնողաց հնազան
դելու վրայով :

Պ . « Որդեակ իմ՝ քու հօրդ խրատը մտիկ
ըրէ, ու քու մօրդ օրէնքը մի մերժեր » : Եւսե .
Ե . 8 : « Ո՛րդեակ իմ՝ քու հօրդ պատուիրանքը
պահէ, և քու մօրդ օրէնքը մի մերժեր » : Եւ
սե . Գ . 20 : « Հնազանդութիւն ըրէ հօրդ՝ որ
քեզ ծներ է, ու մի անարդեր քու մայրդ՝ եր
բոր կը պառլի » : Եւսե . Ի Գ . 22 :

Հ . Բնաւ մեր ծնողացը հետ արհամարհա
նօք կամ խարէութեամբ վարուելու ենք :

Պ . Չէ՛, ո՛չ իրենց երեսին և ո՛չ իրենց ե
տեհն :

Հ . Եստուած շրէից ի՛նչ պատուիրեց ընել
կամակոր ու ապստամբ զաւակի մը՝ որ իր հօրն
ու մօրը չէր հնազանդեր :

Պ . Պատուիրեց որ մինչև մեռնելը քարկո
ծեն : Եւեց ԻԵ . 15—17 : Գլխ . Ի . 9 : Ի Օ
րին . ԻԵ . 18—21 : Եւսե . Ի . 20 : ԻԸ . 24 :

Հ . Եւ ի՛նչ պիտի ըլլայ անոր աչքը՝ որ

ծաղը կ'ընէ իր հայրը, և իր մօրը հնազանդիլը կ'անարգէ :

Պ . « Չորերուն ազուաները պիտի փոբեն, ու զանիկայ արծիւներուն ձագերը պիտի ուտեն » : Ըստի . 1 . 17 :

Հ . Կրթութեան ու խրատի կարօտ եղած ատեննիս որո՞նք երթալու ենք :

Պ . Մեր Հօրը և Մօրը :

Հ . Պէտք չէ՞ մեզի որ երախտագէտ ըլլանք մեր ծնողացը՝ մեզի համար բոլոր իրենց ըրածնուն ու քաշած նեղութիւններուն համար :

Պ . Ըյ՛, ու երբոր անոնք ծերանան, կամ կոյր, կամ կաղ, կամ հիւանդ ըլլան, և չկրնան ինքզինքներնին հոգալ, կամ աղքատութեան և թշուառութեան մէջ ըլլան, պարտինք հոգ տանիլ անոնց՝ մեր բոլոր կարողութիւնսովը : Կ'նոր . 10 : 12 : Խ . 1 : Մատթ . 23 . 4—6 :

Հ . Ո՞ր տղան իր Հայրը և Մայրը մեծապէս կ'ուրախացունէ :

Պ . Բարի տղան : Ըստի . 2 . 1, 2 :

Հ . Ո՞ր տղան Հայրը և Մայրը խիստ կը տրտմեցունէ :

Պ . Չար տղան :

Հ . Ո՞ր տղան ատելի է բոլոր բարի մար-
դիկներուն , ու կորսուելու ճամբուն մէջ է :

Պ . Չար տղան :

Հ . Երբոր դուք կը տեսնէք անանկ տղաք-
ներ՝ որոնք ո՛չ կը սիրեն իրենց ծնողքը
ո՛չ ալ կը հնազանդին անոնց , ի՞նչ պար-
տիք ընել :

Պ . Պարտինք անոնց ընկերութենէն ետ
կենալ :

Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ'ըլայ .
բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլայ : Առաջ .
Ժ.Գ. 20 :

Հ . Սէր Տէրը Յիսուս երբոր տղայ էր ,
իր ծնողքները սիրեց ու անոնց հնազան-
դեցաւ :

Պ . Հրամեղես :

Եւ իջաւ անոնց հետ՝ ու գնաց Նազարէթ , և անոնց
հնազանդ էր : Առաջ . Բ . 51 :

Հ . Ըս հինգերորդ պատուիրանքին մէջը
Ըստուած ի՞նչ խոստացաւ բոլոր բարի տղաք-
ներուն՝ որ կը պատուեն իրենց ծնողքը :

Պ . Երկար կեանք :

Հինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի՝ մեր ծնողքներուն ունեցած պարտքերնիս, որ Աստուծմէ ետքը անոնցմէ կ'ընդունինք կեանք՝ կերակուր՝ հանդերձ՝ պահպանութիւն և կրթութիւն :

Ա . Ուրեմն պատուելու ենք մեր Հայրը և մեր Մայրը : Նախ՝ մենք սիրելու ենք անոնք անկեղծ՝ հաստատուն ու ջերմեռանդ սիրով ինչպէս որ արժան է : Երկրորդ՝ հնազանդելու ենք անոնց ուրախութեամբ, կտտարելով անոնց հրամաններուն բոլորը : Երրորդ՝ յարգ՝ պատիւ ու մեծարանք ցուցունելու ենք անոնց թէ՛ առանձին՝ և թէ՛ հրապարակաւ : Եւ այսպէս ամէն մարդ տեսնելով մեր անոնց տուած յարգը՝ դիտնան թէ անոնք մեր ծնողքն են : Մենք անոնցմէ բան մը սլահելու չենք, ոչ ալ ինքզինքնիս անոնցմէ խմաստուն կարծելու ենք . հապա անոնց երթալու ենք մեր ամենալաւ և բարեբար բարեկամներուն պէս՝ խրատ ու խորհուրդի համար : Չորրորդ՝ միշտ յիշելու ենք մեր անոնց երախտասպարտ ըլլալն իրենց բոլոր բարեբարութիւններուն և մեզի համար կրած նեղութիւններնուն փոխարէն, և բնաւ ըսելու չենք որ բաւական հատուցում ըրած ենք անոնց : Երբոր անոնք ծերանան, կամ հիւանդանան կամ «կարանան և անօգնական մնան, կամ աղքատութեան ու նեղութեան մէջ ըլլան, ան առենը բնաւ անտես թողելու չենք անոնք, հապա աւելի ականջ գնելու ու հոգ տանելու ենք անոնց՝ որչափ որ կրնանք, պաշտպանելով անոնք ամէն նոխասինքներէ ու անփրաւութիւններէ :

Բ . Մենք կ'անարդենք աս պատուիրանքը՝ երբոր չենք կատարեր աս վերը յիշուած պարտաւորութիւններուն մէկը կամ ամէնը :

Ո՛վ տղաքներ՝ աս ձեր պարտաւորութիւնները կատարելու հոգ կը տանիք , հնազանդ տղաքներ էք : Ինչու որ անհնազանդ տղայ մը բնաւ բարեյաջողութիւն պիտի չգտնէ . ինք ամօթ ու սրտի ցաւ է իր ծնողացը . ինքը բուն իր համբաւոյն վրայ նախատինք կը բերէ , իր բարի անունը կը կորսնցունէ աշխարհի մէջ , Աստուծոյ օրհնութենէն կը զրկուի , և գուցէ իր ունեցած օրերուն կէսին չափ պիտի չապրի . բայց հնազանդ տղայ մը՝ որ կը պատուէ իր Հայրն ու Մայրը , միշտ սիրելի է : Ինք օրհնեալ Փրկչին օրինակին կը հետևի , որ անկիայ երբոր երկրի վրայ էր՝ պատուեց իր Հայրն ու Մայրը : Ասանկ տղայ մը կատարեալ յաջողութիւն պիտի գտնէ . մենք կրնանք յուսալ որ ինք երջանիկ պիտի ըլլայ թէ՛ աս աշխարհիս մէջ , և թէ՛ գալու աշխարհին մէջ :

Գ . Հինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի որ մենք պատուելու ենք մեր մեծերը , նաև ան ամէնն ալ՝ որ կ'իշխեն մեր վրայ : Աս պատուիրանքը միայն ծնողաց համար կը խօսի , ինչու որ յարգութեան՝ պատուոյ՝ հնազանդութեան և քաղաքավարութեան հիմը՝ ընտանեաց մէջէն կը սկսի : Թէ որ տղայ մը իր ծնողացը հնազանդի՝ և իրենց հետ յարգութեամբ ու քաղաքավարութեամբ վարուի՝ ան տղան բոլոր մարդոց հետ ալ պարկեշտ ու քաղաքավար կ'ըլլայ . բայց թէ որ իր

Ծնողաց տունը չսկսի հնադանդուծիւն ու պարկէշու-
 թիւն սորվիլ, գուցէ բնաւ ուրիշ տեղ մը պիտի չտոր
 վի անոնք գործածելը . և այսպէս ան տղան երբոր
 մեծնայ, անօրէն մարդ մը պիտի ըլլայ : Ուստի ծնողք-
 ները և վարժապետները՝ պէտք չէ որ մոռնան աս բանը :

Վեցերորդ Պատուիրանքը :

Նոնոր . Դ . 1—16 :

Հ . Ո՞րն է վեցերորդ Պատուիրանքը :

Պ . « Սպանութիւն մի՛ ընէր » :

Հ . Ըս սպատուիրանքովս ի՞նչ կը հասկը-
 նանք :

Պ . Կը հասկընանք թէ բնաւ մարդ մը
 սպաննելու չենք :

Հ . Կրնանք սպաննել անատուններն ու
 թռչունները :

Պ . Հրամարես, Ըստուած մեզի հրաման
 տուաւ անոնք սպաննելու : Նոնոր . Թ . 1—4 :

Ե. Տե՛ճ . Դ . 3—5, Լայլն :

Հ . Բայց ինչո՞ւ համար մեռցունելու ենք
 անոնք, մեր զբօսանքի՞ն համար՝ թէ մեր օ-
 գուտին համար :

Պ . Սիայն մեր օգուտին համար :

Հ . Հողիին փրկու թեանն ետքը ինչ է մարդուս խիստ պատուական բանը :

Պ . Ի՞նչ կեանքը : Յովբ . Բ . 4 :

Հ . Մենք որ չենք կրնար կեանք տալ , իրաւունք ունինք առնել անիկայ :

Պ . Չէ՛ , ան որ չենք կրնար տալ , չենք կրնար վերցունել անիկայ : Ծննդ . 1 . 2 : Դ . Թափ . Ե . 7 :

Հ . Բնաւ իրաւունք ունի մէկը իր կեանքը կորսնցունելու :

Պ . Չէ՛ , անճնասպանութիւնը մեծ մեղք է : Ե . Թափ . 13 . 4 : Մատթ . 11 . 3—5 : Գործ . Ե . 16—25 :

Հ . Եւ ո՞վ միայն իրաւունք ունի կեանքը վերցունելու :

Պ . Միայն Աստուած՝ որ ինքն է կեանք տուողը : Ծննդ . Բ . 7 : Թ . 5 , 6 : Թափ . Ժ . 22 :

Հ . Թե՛ որ մարդ մը դիպուածով ուրիշ մը մեռցունէ , երբոր ինքը բնաւ ամենեին չէր ուզեր ընել ան մեղքը , աս պատուիրանքին տակը ինչպիսի յանցաւոր է :

Պ . Չէ՛ . միայն ան որ դիտաւորութեամբ թշնամութեան՝ կամ նախանձու՝ կամ ուրիշ գէշ կերքի մը զրգուելովը՝ կը մեռ

ցունէ իրենս գոյակիցը՝ յանցաւոր է աս
սլատուիրանքին : Թ. Գ. 1. 22—25 :

Հ . Լստուած ինչ օրէնք տուաւ Հրէից՝
մարդասպաններուն վրայով :

Պ . « Լն՝ որ մարդ մը կը սպաննէ , ան-
շուշտ պիտի մեռցուի » : Եւ « Ո՛վ որ մար-
դու արիւն կը թափէ , իր արիւնն ալ մար-
դէ պիտի թափուի » . Պ . Գ . 17 : Ծ. Գ .
Թ . 6 :

Հ . Տէրը մեր դրացին սպաննելը կ'արգի-
լէ . բայց կրնա՞նք իրենս բարկանալ , կամ
զինքը ատել , կամ ծեծել , կամ իրենս
հետ չարաչար վարուիլ և կամ զինքը մեռ-
ցունելու սիրտ մը ունենալ :

Պ . Չէ՛ , բնաւ ամենևին չենք կրնար :

Քու դրացիդ անպատճառ պիտի յանդիմանես , որ
անոր համար մեղք չիրես : Վրէժ պիտի չառնես , և
քու ժողովուրդիդ որդւոցը ոխ պիտի չպահես , հասա-
քու ընկերդ քու անձիդ պէս պիտի սիրես : Ղ . Գ .
Ժ . 17 , 18 : Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն .
Սպանութիւն մի ըներ , և ո՛վ որ սպանութիւն ընէ ,
գատատանի պարտաւոր պիտի ըլլայ : Բայց ես ձեզի
կ'ըսեմ . Ո՛վ որ իր էղբօրը պարտաւոր սրդողի , գա-
տատանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ իր էղբօրը
յիմար ըսէ , ատեանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ

Իր եղբօրը անմիտ ըսէ, գեհէնի կրակին պարտաւոր պիտի ըլլայ : Մատթ. Ե. 21, 22 :

Հ. Սուրբ Գիրքին մէջը ի՞նչ կ'ըսուի ան մարդուն վրայով, որ իր եղբայրը կ'ատէ :

Պ. « Ով որ իր եղբայրը կ'ատէ, մարդասպան է » : Ե. 304. Գ. 15 :

Հ. Որո՞նք ծոցը բարկութիւնը կը հանգչի :

Պ. « Յիմարնեբուն ծոցը » : Ժող. 1. 9 : 304. Ե. 19, 20 :

Հ. Հրաման կայ երկար ժամանակ մեր ընկերին հետ խոտով կենալու :

Պ. Չէ, քանզի այսպէս կը կարդանք. « Ըրընը ձեր բարկութեանը վրայ մարը չմտնէ » : Եփե. Գ. 26 :

Հ. Բայց զիցուք թէ մեր զրացին թշնամի է մեզի և իր բոլոր զօրութիւնովը կ'աշխատի մեզ վրասելու ու մինչև անգամ կ'ուզէ մեր կեանքը վերցունել, անոր ի՞նչ պարտինք ընել :

Պ. Պարտինք սիրել անիկայ, ու բարի ընել իրեն :

Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի հատուցանէք, ամէն մարդոց առջև բարի բաներ ընելու հոգ տարէք : Հոով. ԺԲ. 17 : Եվոյ ԻԳ. 4, 5 :

Հ. Մեր Փրկիչը ի՞նչ կը պատուիրէ մեր թշնամիները սիրելու վրայով :

Պ . « Սիրեցէք ձեր թշնամիները, որհնեցէք ձեզ անիծողները, բարի ըրէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն, և աղօթք ըրէք անոնց համար՝ որ ձեզ կը չարչրկեն ու կը հալածեն » : Մատթ . Ի . 44 : Հոովճ . ԺԻ . 14 :

Հ . Իսկ նայիմ ինչ կ'ըսէ Պօղոս Ըռաքեալ վրէժխնդրութիւն ընելու վրայով :

Պ . « Սիրելիք՝ վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար, հասպա բարկութեան տեղ տուէք . ինչու որ գրուած է . վրէժխնդրութիւնը իմն է, ես պիտի հատուցանեմ » , կ'ըսէ Տէրը : Հոովճ . ԺԻ . 19 :

Հ . Իսկ նայիմ աս խօսքէն ետքը ինչ կը հետևցունէ :

Պ . « Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՝ հա՛ց տուր անոր, և թէ որ ծարաւի է՝ քու տուր անոր . քանզի աս ընելով՝ անոր գրէ խուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես : Չարէն մի յաղթուիր, հասպա բարիով յաղթէ չարին » : Հոովճ . ԺԻ . 20, 21 :

Հ . Ինչ կ'ընէր Յիսուս երբոր կը նախատուէր :

Պ . « Ինքը փոխարէնը չէր նախատեր » : Եղեմ . Ի . 23 :

Հ . Ինք որոնց համար մեռաւ , և որոնց համար աղօթեց խաչին վրայ :

Պ . Իր թշնամիներուն համար : Ղ Դ-է . ԻԳ . 34 : Ղ ԿԻԺ . Ե . 59 : Հ Կ-ՎԺ . Ե . 6—8 :

Հ . Ի՞նչ կ'ըսուի ամենուն հետ խաղաղութիւն ընելու վրայով :

Պ . « Որչափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք » : Հ Կ-ՎԺ . ԺԻ . 18 : Մ աղժ . ԼԴ . 14 :

Հ . Մեր ընկերը ամէն վնասներէն և մահէն ազատելը , և անոր ու ուրիշներուն մէջը խաղաղութիւն եղած ատենը խաղաղութիւն ընելը մեր պարտքը չէ :

Պ . Հրամարեա : Ղ Լ-Կ . ԺԹ . 18 : Ղ Դ-է . Ժ : 36 , 37 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ մեր Փրկիչը խաղաղութիւն ընողներուն համար :

Պ . « Երանի խաղաղութիւն ընողներուն , ինչու որ անոնք Մատուծոյ որդիներ պիտի կուչուին » : Մ ապԵ . Ե . 9 :

Հ . Ո՞վ էր առաջին մարդասպանը , որ իր եղբայրը մեռցուց :

Պ . Կային : Ծ Կնդ . Դ . 1—8 :

Հ . Բարկացող , ռիսակալ և մարդասպան մարդը երջանիկ կ'ըլլայ արդեօք :

Պ . Չ^Է :

Հ . Մարդասպանութիւնը դիւրին կերպով
կը ծածկուի :

Պ . Չ^Է :

Տերօջ աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները կը
դիտեն : Առաի . ԺԵ . 3 : Ծննդ . Դ . 8—10 : Թառոյ
ԼԲ . 23 : Առաի . Ը . 21 :

Հ . Մարդասպանութիւնը խիստ սոսկալի
յանցանք մը ըլլալով , անոնք՝ որ աս յանցան-
քը կը գործեն , ո՛ւր պիտի ունենան իրենց
բաժինը , թէ որ չապաշխարեն :

Պ . Կրակի լիճին մէջը : Գաղ : Ե . 21 : Ե
Յօհ . Գ . 15 : Յայտ . ԻԵ : 8 : ԻՊ . 15 :

Հ . Բնականաբար ատելութեամբ , բարկու-
թեամբ , չարութեամբ և վրէժխնդրութեամբ
լեցուն սիրտեր չունինք մանաւանդ անոնց
վրայ՝ որ կը վնասեն մեզի :

Պ . Հրամարես :

Ինչու որ՝ սրտէն կ'ելեն չար խորհուրդներ՝ սպանու-
թիւններ , շնութիւններ , պոռնկութիւններ , գողութիւն-
ներ , սուտ վկայութիւններ , հայհոյութիւններ : Մաթթ .
ԺԵ . 18 , 19 :

Հ . Ուրեմն աս պատուիրանքը պահելու
համար ի՞նչ տեսակ սիրտերու կը կարօտինք :

Պ . Կոր սիրտերու : Յօհ : Գ . 3—6 :

Վէցերորդ սրտուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր սարսաւորութիւնը թէ՛ ուրիշներուն կեանքին՝ և թէ՛ մեր կեանքին նայելով :

Ա . Մենք չէ՛ թէ միայն մեր ընկերը պիտի չմեռցունենք , և չէ՛ թէ բարկութեան՝ թշնամութեան՝ կամ սխալալութեան զբացումներ պիտի չունենանք անոր վրայ , հասա նաև սիրելու ու սաշտպանելու ենք իր անձը և կեանքը բուն մերինին պէս : Մենք անոր հետ խաղաղութիւնով վարուելու ենք , և ջանալու ենք որ ուրիշներն ալ այնպէս վարուին իրեն հետ . մինչև անգամ ինքը մեզի թշնամի ըլլայ ալ : Աս մասին պէտք է ըլլայ որ Յիսուս Քրիստոսը մեզի օրինակ առնենք :

Բ . Մենք կ'անարգենք աս սրտուիրանքը նախ՝ երբոր կ'ատենք մեր ընկերը ծածուկ մեր սրտին մէջը . քանզի ասանկ ատելութիւնը՝ սրտի մէջ մարդասպանութիւն է : Երկրորդ՝ ալ աւելի կ'անարգենք աս սրտուիրանքը , երբոր մեր բարկութիւնը և ատելութիւնը յայտնի ընենք իրեն հետ չխօսելով . կամ անէծքներով ու գէշ անուաներով զինքը նախատենք , կամ իր պատուոյն ու իր օգուտին վնաս ընենք , թէ՛ ծածուկ և թէ յայտնի կերպով : Երրորդ՝ աւելի մեծագոյն աստիճանով կ'անարգենք աս սրտուիրանքը , երբոր այնպէս բարկանանք՝ որ անոր վրան վաղելով՝ ծեծենք ջախջախենք և կամ մեռցունենք զինքը : Չորրորդ՝ երբոր մեր ընկերին բան մը տանք ուտելու կամ խմելու , որն որ մենք գիտենք թէ պիտի կորսնցունէ անոր առողջութիւնը և կեանքը , կամ թէ միայն վտանգի մէջ պիտի ձգէ

զինքը : Հինգերորդ՝ երբոր զուր տեղը մեր հաճութեանը կամ մեր օգուտին համար՝ մեր ընկերին կեանքը վտանգի մէջ ձգէնք, կամ զօրութիւն ունենալով պահանջներ իրմէն անանկ բան մը ընել՝ որն որ իր կորուստեան պատճառը պիտի ըլլայ : Ահեղերորդ՝ երբոր մեր զբօսանքին համար գրգռենք ուրիշներն իրարու դէմ բարկանալու և ծեծկուելու : Եօթներորդ՝ երբոր բուն մեր կեանքը կորսնցունենք, թէ՛ հրացանով թէ՛ կախուելով թէ՛ խեղդուելով թէ՛ անառակութեամբ ուտելով և խմելով և թէ՛ ուրիշ անժուժկալութեան գործքերով :

Գ . Աս պատուիրանքը պահելու համար պէտք է որ նախ՝ մեծ բան սեպենք մարդկային կեանքը որ Աստուծմէ մարդուս տրուած ամենապատուական պարգեն է, հողիին փրկութենէն ՚ի զատ : Երկրորդ՝ պէտք է որ սիրենք ամէն մարդ և դէմ կենանք ու յալթենք մեր բարկութեանը՝ երբոր սկսի բորբոքիլ : Երրորդ՝ պէտք է որ փախչինք բարկասիրտ ու ռիսակալ մարդոց ընկերութենէն, որոնք մեծ ու պատուական բան մը կը սեպեն նախատինքնի համբերելով վրէժ առնելը : Չորրորդ՝ պէտք է որ խոնարհ ու հանդարտ հողի մը ստանալու ջանանք . հստատութիւնը, բարկութիւնը և ինքնահաւանութիւնը՝ իրենցմէ ետքը հակառակութիւն ու մահ կը բերեն : Հինգերորդ՝ պէտք է որ աղօթենք Աստուծոյ որ մեզի խողաղատէր բնաւորութիւն մը տայ, քանզի անով կը նմանինք Քրիստոսի . և անանկ բնաւորութիւն մը խիստ ցանկալի ու քաղցր բան մըն է, որ նաև երջանկութիւն և հանդարտութիւն կը պատճառէ :

բայց բարիութեան ու վրէժխնդրութեան հողին՝ թըլուառութիւն է ինքիրմէն, որն որ Չարին հողին է :

Գ . Բարիացող ու վրէժխնդիր մարդիկ պարտին ապաշխարել և Աստուծոյ նոր սիրտ մը խնդրել . թէ չէ՛ բնաւ չեն կրնար պատրաստուիլ երկնից թագաւորութեանը համար, որն որ արգարութիւնն և խաղաղութիւնն է : Մեր Փրկիչը խաղաղութեան թագաւոր է :

Եօթներորդ Պատուիրանքը :

Լուսկ . Լ . 1—27 :

Հ . Որն է Եօթներորդ Պատուիրանքը :

Պ . « Ընտելան մի ընէր » :

Հ . Ըռաջին կարգուող մարդիկը որո՞նք էին :

Պ . Ըղամ ու Եւան :

Հ . Որին ձեռքովը կարգուեցան :

Պ . Տէր Ըստուծոյ ձեռքովը : Նոր . Բ . 18—25 :

Հ . Մարդիկ ի՞նչ կերպով պարտին կարգուիլ, յայտնի թէ ծածուկ :

Պ . Յայտնի կերպով :

Հ . Ըստուած իսկապէս ներկայ է ամուսնութեան ատենը՝ վկայ ըլլալու համար :

Պ . Հրամերես :

Հ . Կարգուելէն ետքը որ ատեն որ ուզէն ,
էրիկը կամ կնիկը կրնան իրարմէ զատուիլ :

Պ . Չէ : Մատթ . ԺԹ . 9 :

Հ . Ուրիշ մէկը բնաւ զօրութիւն ունի՞ ա-
նոնք իրարմէ զատելու :

Պ . Չէ . « Ուրեմն ան որ Մատուած միաւո-
րեց՝ մարդ թող չզատէ » : Մատթ . ԺԹ . 6 :

Հ . Ուստի բնաւ չէ՞ն կրնար իրարմէ զա-
տուիլ :

Պ . Միայն երկու կերպով կրնան զատուիլ :

Հ . Ի՞նչ է առջինը :

Պ . Երբոր անոնցմէ մէկը շնութիւն ընէ :
Մատթ . Ե . 32 :

Հ . Ի՞նչ է երկրորդը :

Պ . Երբոր անոնցմէ մէկը մեռնի : Հոով՝
Լ . 2 , 3 : Ե կորնի . Լ . 39 :

Հ . Շնութիւնով բռնուած մարդիկը՝ Մա-
ուած ինչպէս պատժելու հրաման տուաւ
Հրէից :

Պ . Մահով :

Շնացողն աւ շնացեալն աւ պիտի ձուցուին : Ղևա . Ի .
10 : Թէ որ մէկը էրիկ ունեցող կնկան մը հետ պառ-
կած գտնուի , ան ատենը երկուքն աւ մեռնին , թէ՛ ան
կնկանը հետ պառկող մարդը՝ և թէ՛ ան կնիկը : Բ
Օրի . ԻԲ . 22 :

Հ . Որո՞նք կը վերաբերին մեր մարմինները ,
և որո՞նք համար անարատ պահելու ենք զա-
նոնք :

Պ . Ըստուծոյ համար :

Չէք գիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք՝ և Աս-
տուծոյ հոգին ձեր մէջը բնակած է : Թէ որ մէկը Աս-
տուծոյ տաճարը կ'ապականէ , Աստուած անիկայ պիտի
ապականէ . ինչու որ Աստուծոյ տաճարը սուրբ է , որ
դուք էք : Ա Կորնթ . Գ . 16 , 17 : Զ . 13—20 : Ա Թէս .
Գ . 3—7 : Ծանոթ . ԼԹ . 9 :

Հ . Ի՞նչ կ'ըսուի շնացող կնկան տանը
վրայով :

Պ . « Ընոր տունը դժոխքին ճամբաներն է .
անոնք մահուան շտեմարանները կ'իջնեն » :
Ըստի . Ե . 27 : Ե . 5 :

Հ . Կրկնէ՞ նայիմ Սողոմոնին ըսածը :

Պ . « Ընոր դացողները բնաւ չեն դառնար ,
և կենաց ճամբաներուն չեն հասնիր : Ըստի .
Ե . 19 : Ե . 20—23 :

Հ . Ուրեմն անկից դառնալուն վրայով ի՞նչ
պատուէր կայ :

Պ . « Ըն կնիկէն ճամբադ հեռացուր , ու
անոր տանը դրանը մի մօտենար » : Ըստի .
Ե : 8 :

Հ . Պարտի՞նք պատուել կամ ընկերու թիւն

ընել անոնց հետ՝ որ աս պատուիրանքը չեն պահեր :

Պ . Չէ :

Ամբարիշտներուն ճամբան մի երթար , ու չարերուն ճամբուն մէջ մի քալեր : Անկէ զբուշայիր . անոր քովէն մի անցիր , անկէ խոտորէ , ու անցիր : Առաջ . Դ . 14 , 15 : Ա Կորնթ . Ե . 9—13 :

Հ . Ըստուած կը պահանջէ մեզմէ աս պատուիրանքը պահել մեր բոլոր սրտովը , և բուն մեր սրտին մէջ ալ :

Պ . Հրամարեա :

Լսեր էք որ ըսուեցաւ . Շնութիւն մի ըներ : Բայց ես ձեզի կ'ըսեմ . Ո՛վ որ կնիկ մարդու կընայի անոր ցանկանալու համար , ալ անիկայ իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ : Մատթ . Ե . 27 , 28 : Առաջ . Զ . 28 :

Հ . Ընջի ժամանակուան մարդիկը ո՞ր պատուիրանքն անարդեցին , և շարժեցին Ըստուծոյ բարկութիւնը՝ որ ջրհեղեղով կորսնցուց անոնք :

Պ . Եօթներորդ պատուիրանքը : Սինդ . Գ . 1 , 2 , և այլն :

Հ . Եւ Սողոմնացիք ու Գոմորացիք ո՞ր պատուիրանքն անարդեցին ու շարժեցին Ըստուծոյ բարկութիւնը՝ որ այրեց անոնք կրակով ու ձծումբով :

Պ . Կամնապէս եօթներորդը : Ծ^{հեդ} . Ժ . Ժ . 4—28 : 3^{ո-դ} . 7 :

Հ Աստուած որչափ Խորայէլացիներ կորսընցուց մէկ օրուան մէջ , աս պատուիրանքն անարդէնուն համար :

Պ . « Քսանուչորս հազար » : Թ^{ո-ս} . Ի . Ի . 1—9 : Ե . կ^{րհն} . Ժ . 8 :

Հ . Աստուած գալու աշխարհին մէջ ի՞նչպէս պիտի պատժէ պոռնիկներն ու շնացողները :

Պ . 3^{ա-լ}իտենական կրակով :

Արդ՝ մարմինն գործքերը յայտնի են , որ ասոնք են , շուռթիւն , պոռնկութիւն , պղծութիւն , գիճութիւն , . . . որ ասանկ բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն : Գառ . Ե . 19—21 : Բայց պոռնկութեան և ամէն կերպ պղծութեան՝ կամ ագահութեան անունը անգամ չյիշուի՝ ձեր մէջը , (ինչպէս որ կը վայլէ սուրբերուն ,) և գարշելի բաներ՝ կամ յիմարական խօսքեր՝ կամ խեղկատակութիւն , որ չվայլեր , այլ մանաւանդ գոհութիւն : Աս իմանալով գիտնաք , որ ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ՝ որ կռապաշտ է , Քրիստոսի ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի : Ե^{քե} . Ե . 3—5 : Եւ վախկոտներուն՝ ու անհաւատներուն՝ ու պոռնիկներուն՝ և կախարդներուն՝ ու կռապաշտներուն՝ և պիղծերուն՝ ու մարգասապաններուն և բոլոր ստախօսներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով վառած լինին մէջը պիտի ըլլայ , որ է երկրորդ մահը : 3^{այք} . ԻԱ . 8 :

Եօթներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր պարտաւորութիւնը՝ ուրիշներուն ողջախոհութեանը վրայով . ու նաև մեր մարմինները ինտըր գործածելն ու սրբելը :

Ա . Ամուսնութիւնը Աստուծոյ հաստատուեցաւ . և երբոր երկու յարմար անձանց մէջ՝ յարմար կանոնով կ'ըլլայ , շատ աղէկ ու երջանիկ վիճակ մըն է . և Աստուծոյ դիտաւորութիւնն ան էր՝ որ խսանկ ըլլայ : Աստուած կատարեց առաջին ամուսնութիւնը մեր առաջին ծնողացը մէջ . և ան ամուսնութիւնը՝ բոլոր ետքը գալու ուրիշ ամուսնութիւններուն օրինակ էր : Օրինաւոր ամուսնութիւնը միայն մէկ էրիկ մալդու և մէկ կնկան մը մէջ տեղը կը կայանայ . ու հրասպարակաւ կատարուելու է ան հանդէսը , անանկ մարդիկներով՝ որ օրինաւոր իշխանութիւն ունին ան բանին վրայ : Մօտ ազգականի հետ ամուսնութիւնն ասօրինաւոր է : Ամուսնանալէն ետքը երկու կերպով միայն զատուիլ կրնայ ըլլալ . մէյմը՝ երբոր էրիկը կամ կնիկը շնութիւն ընելու ըլլայ , մէյ մըն ալ՝ երբոր երկուքին մէկը մեռնելու ըլլայ :

Բ . Հրաժարելու ենք շնութիւն ու պտոնկութիւն ընելէն . և պիտը խորհուրդներուն կամ խօսակցութիւններուն հաճելու չենք , որ պիտը գործքերուն արմատներն են : Մենք մեր ընկերներուն կնկանը կատարեալ սրբութիւնով պիտի նայինք . և պիտի պաշտպանենք ամէն պղծութիւններէն , ինչպէս որ կ'ուզենք թէ բուն մերինը պաշտպանուի : Մեր մարմիններն ալ պատուոյ մէջ

պահելու ենք Աստուծոյ պաշտօնին համար՝ իբրև Սուրբ Հոգիին բնակելու տաճար մը :

Գ . Մենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր շնութիւն կամ պոռնիութիւն կ'ընենք , կամ պիղծ խորհուրդներուն ու ցանկութիւններուն և անպարկեշտ վարքերուն կամ խօսակցութիւններուն հաճութիւն կը ցուցունենք : Երկրորդ՝ երբոր ուրիշներն ալ կը քաջալերենք որ աս մեղքերը գործեն , ու չենք աշխատիր անոնք արգիլելու :

Դ . Շնութիւնն ու պոռնիութիւնը սոսկալի մեղքեր են , և Աստուծոյ բարկութիւնը կը՝ բերեն բոլոր ան մարդիկներուն վրայ՝ որ աս մեղքերը կը գործեն :

Ե . Ասոնք անանկ մեղքեր են՝ որ չեն կրնար պահուիլ . քանզի պոռնիկներուն ու շնացողներուն մէջը՝ հաւատք չկայ . անոնք որ ինքզինքնին կը ստեն , բնաւ չեն կրնար հաւատարիմ ըլլալ ձեզի . ու թէպէտև անոնց մեղքերը գաղտուկ մնան մարդոցմէ , բայց չկրնար ծածկուիլ Աստուծմէ , որուն առջև ամենածածուկ մեղքերը ևս յայտնի են : Ծմնդ . ԺԲ . 17 : Ի . 2—9 : Առաջ . Ե . 20 , 21 :

Զ . Ասոնք անանկ մեղքեր են՝ որ գործողներուն վրայ՝ ուրիշ մեղքերէն աւելի շուտով ու աւելի շատ ախտ թշուառութիւն և կորուստ կը բերեն : Անոնք՝ որ աս մեղքերը կը գործեն՝ կը կորսնցունեն բուն իրենց սրտիւր և ուրիշներուն սրտիւն ալ , Աստուծոյ իշխանութիւնն ու կարգադրութիւնը , մարդուս խիստ երջանիկ վիճակը , ընկերութեան ամենալաւ բարիքը , իրենց զու-

ճին բարի համբաւը , և բուն իրենց հողին փրկութեան յոյսը : Անոնք իրենց ցանկութիւններուն ծառայեն , անոնց սիրտը սլինդ է , անոնց միտքը խաւար է , անոնց խիղճը թմրած է , անոնց բարքը ասպականած է , անոնց բնաւորութիւնն անողորմ է : Անոնք ենթակայ են խիստ զզուելի ու տառապեցուցիչ հիւանդութիւններու՝ յանկարծհաս լըուածքներու ու մահուան . և անոնց պատժապարտ հաճութիւններուն մէջ տեղը՝ շատ անգամ կորուստը շուտով կը հասնի : Անոնց ընթացքն անոնք գժոխք կը տանի :

Է . Աս մեղքերը արգիլուելու համար նախ՝ թող տղաք զգուշութեամբ կրթուին բոլոր մաքրութիւններով , պաշտպանուին դէշ ընկերներէն , վտանգաւոր տեղերէն և բարքերնին ասպականող զբօսանքներէն : Երկրորդ՝ թող ամէն մէկը բարեխառն ըլլայ իր կենացը մէջ , աղէկ մարդիկներ ընտրէ իր ընկերութեանը համար , հեռու կենայ թատրոններէն , գինետուններէն ու անմաքուր գիրքերէն : Երրորդ՝ իր պառկելու ու ելլելու ատենը կանուխ ու կանոնաւոր ըլլայ : Չորրորդ՝ ամէն բանէն աւելի Աստուծոյ օգնութիւն խնդրենք և հրակենք ու աղօթենք՝ որ փորձութեան մէջ չխնանք :

Ութերորդ Պատուիրանքը :

Յէսու . Լ . 1—26 :

1 . Ո՞րն է ութերորդ Պատուիրանքը :

Պ . » Գողութիւնն մի՛ ընէր « :

2 . Թէ որ բան մը առնեմ որ իմն չէ, ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Գողութիւնն :

Քու գրացիկդ զրկանք մի՛ ընէր, և յափշտակութիւն մի՛ ընէր . քեզի վարձքով բանողին օրական վարձքը՝ մէկ գիշեր մինչև առտու քու քովդ չմնայ : Ղևար . ԺԹ . 13 :

2 . Թէ որ բան մը գտնեմ ու տիրոջը չտամ, ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Գողութիւնն : Ղևար . Թ . 1—7 :

2 . Թէ որ բան մը առնեմ կամ ծախեմ՝ և շիտակ ու լման չափով ու զինով չընեմ իմ առտտուրս, ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Գողութիւնն :

Դատաստանի մէջ անիրաւութիւն սկիտի չընէք, կանգունի մէջ՝ կշիռքի մէջ ու չափի մէջ ալ : Ձեր կշիռքները լման՝ ձեր կշիռքի քարերը լման՝ ձեր արդուն լման ու հիմէնը լմանսկիտի ըլլայ, ևայն : Ղևար . ԺԹ . 35, 36 :

Հ . Թէ որ իմ դրացիս իրաւամբ պարտք ունենամ , և կարողութիւն ունենալով՝ չուզեմ հատուցանել , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Գողութիւն : Երեմ. Ի. . 13 : Հոով. ԺԳ . 7 , 8 : Ե. Տեմ. Ե. . 10 :

Հ . Թէ որ բան մը փոխ առնեմ՝ որն որ բնաւ ետ տալու միտք չունենամ , կամ անոր ասոր պարտք ընեմ՝ որ անոնք հատուցանելու բնաւ դիտաւորութիւն մը չունենամ , կամ աղէկ գիտնամ թէ բնաւ պիտի չկրնամ հատուցանել , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Գողութիւն :

Ամբարիշտը փոխ կ'առնէ ու չվճարեր . սակայն արդար ըլլ կ'ողորմի ու կու տայ : Սող. ԼԷ . 21 : Դ թագ . Դ . 1—7 :

Հ . Թէ որ ինչ և իցէ կերպով իմ դրացիս խաբեմ և իր ունեցածը ձեռքէն առնեմ , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Գողութիւն : ()րեմ. Ի. . 17 : Լուով. ԻԷ . 8 :

Հ . Թէ որ ես գիտնամ թէ ուրիշները կ'ուզեն իմ դրացիէս գողութիւն ընել , ու չիմաքոնեմ իրեն ան բանը , և կամ անոնց գողցածնուն բաժին առնելու համոզուիմ , գողութիւն ըրած պիտի չըլլամ :

Պ . Հրամարես . Գողին հղարորդ եղողը գողին պէս գէշ է :

Եւ թէ որ անձ մը մեղանչէ , ու երգումի ձայնը լսելով վիայ ըլլայ , կամ Բանը տեսած ըլլայ կամ դիտցած , թէ որ շինացունէ , յանցանքը ինքը սխալի կրէ : Աւ . Ե . 1 : Գող անանելով անոր հետ միաբանեցար , ու շնացողներուն հետ բաժին ունեցար : Սաղ . Ծ . 18 : Գողին ընկեր եղողը իր հոգին կ'ատէ . անկէ կայ երգումը կը լսէ , ու իր գիտածը ջայտներ : Ա . ա . 1 . ԻԹ . 24 :

Հ . Ի՞նչ էր Աքարի յանցանքն ու անոր պատիժը :

Պ . Աս էր որ ոսկի լեզու մը ու գեղեցիկ վերարկու մը ու երկու հարիւր սիկղ արծաթ գողցաւ Երիբովի մէջ , և քարկոծուեցաւ իր բոլոր ընտանիքովը : Յե . 1 . 1—26 :

Հ . Ի՞նչ էր Աքաաբի և Յեզաբէլի յանցանքը :

Պ . Աս էր որ Յեզաբէլ մեռցունել տուաւ Նաբովթը , ու ետքը Աքաաբ անիրաւութեամբ անոր այգին իրեն առաւ : Գ . Թափ . ԻԵ . 1—21 :

Հ . Եւ ի՞նչ եղան Աքաաբ ու Յեզաբէլ :

Պ . Կորսուեցան : Գ . Թափ . ԻԵ . 34 , 35 :

Հ . Ո՞ր ծառան էր որ գողութիւն ըրաւ ու պահեց իր գողցածը՝ սուտ խօսելով , և բորոտութիւնով պատժուեցաւ :

Պ . Գէեզի, Եղիսէ մարգարէին ծառան : Դ
Թա4 . Ե . 20—27 :

Հ . Ո՛վ էր ան գողը՝ որ իր Տէրը մատնեց
ու ետքը ինքզինքը խղզեց :

Պ . Յուդա Իսկարիովտացին : Մատթ . ԻԼ .
3—8 : Յով . ԺԻ . 6 : Գործ . Ե . 18—25 :

Հ . Թէ որ մէկը բան մը գողնայ ու ետքը
սուտ զրուցէ իր գողցածը պահելու համար,
անիկայ մէկ օգուտ մը կ'ըլլայ իրեն :

Պ . Չէ, անով միայն իր մեղքը կը մեծցու
նէ :

Հ . Որո՞նք էին Առաքելոց ատենը գողու
թեան ու ստախօսութեան համար մեռնող
ները :

Պ . Անանիա ու իր կնիկը Սափիրա : Գործ .
Ե . 1—10 :

Հ . Ասոր վրայով ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը :

Պ . « Ան որ գողութիւն կ'ընէր, ալ թո՛ղ
չգողնայ, այլ մանաւանդ աղէկ գործի մը պա
րապելով՝ իր ձեռքովը աշխատի, որ կարող
ըլլայ տալ կարօտ եղողին : Եփե* . Դ . 28 :

Հ . Քրիստոնեաներն ի՞նչպէս քալելու են
աշխարհիկ մարդոց առջևը :

Պ . « Արդարութեամբ » : Ե Թե* . Դ . 11,
12 :

Հ . Ի՛նչպէս պիտի պահենք ինքզինքնիս գո-
ղութիւն ընելէն :

Պ . Աստուծոյ վախնալով ու իրեն ապաւի-
նելով :

Հ . Գողերը և սուտղութեանը բնաւ Աստու-
ծոյ արքայութիւնը կրնան մտնել :

Պ . Ըէ :

Ոչ գողերը՝ ոչ ապահները՝ ոչ գինովները՝ ոչ նախա-
տողները ու ոչ յապետակողները՝ Աստուծոյ Թագաւորու-
թիւնը պիտի չժառանգեն : Կորնի . 2 . 10 : Յայր . ԻԱ .
8 , և այլն :

Ութերորդ պատուիրանքը մեզի կը սորվեցունէ մեր
պարտաւորութիւնը , թէ՛ մեր ստացուածքին , և թէ՛
մեր ընկերին ստացուածքին վրայ :

Ա . Աս աշխարհիս մէջ մենք ու մեր ընտանիքները՝
զանազան բաներու կը կարօտինք՝ միտթարութեան ու
հանգստութեան համար . զոր օրինակ՝ տունի , հանդեր-
ձի , կերակուրի , և այլն : Ուստի ամէն մարդ պարտի
ժիր ըլլալ որ կարող ըլլայ օրինաւոր ապրուստ գտնել
իրեն՝ և իր ընտանիքին համար : Կաև կը պահանջուի
մեզմէ՝ որ մեր ընկերը թողունք որ իր ունեցածը վայել-
է . ոչ իրմէն գողութիւն ընենք , ոչ ալ զինքը զըր-
կենք և ոչ ո՛ր և իցէ կերպով մըն ալ անիրաւութիւն
իբր ընենք իրեն . հասլա արդարութեամբ վարուինք իր

հետք , միշտ պաշտպանենք իր ստացուածքը , և անոր առաջ երթալուն ու բարի վիճակին վրայ ուրախանանք , իբր թէ ան ամէնը ճիշդ մեր անձին եղած համարելով :

Բ . Մենք կ'անարդէնք աս պատուիրանքը 'նախ' երբ որ մեր ձեռքը գողութիւն ընելու երկնցունենք : Երկրորդ՝ երբոր ծածուկ կամ յայտնի խաբենք մեր ընկերը ինչ և իցէ կերպով . կամ երբոր ուրանանք կամ զանց ընենք պարտքերնիս հատուցանել . կամ երբոր փոխ առնենք՝ գիտնալով որ պիտի չիրնանք հատուցանել , կամ բնաւ հատուցանելու դիտաւորութիւն չունենանք . կամ երբոր պատահի որ բան մը գտնենք ու տիրոջը չտանք : Երրորդ՝ երբոր բան մը գողցած ըլլանք կամ մեր ընկերը զրկած ըլլանք , և ետ չդարձունենք ինչ որ իրմէն աւեր ենք : Չորրորդ՝ երբոր մեր ընկերը զրկուներուն հետ բաժանորդ ըլլանք , կամ գիտնանք անոնց չարութիւնն ու չիմացունենք իրեն ան բանը : Հինգերորդ՝ երբոր խառութեամբ ու բռնութեամբ վարուինք անոնց հետ՝ որ մեզի համար կ'աշխատին ու մեզմէ կախում ունին . և անոնց պէտք եղածը առատապէս չհոգալէն զատ՝ իրենց արդար վարձքն ալ չհատուցանենք , և այնպէս գրեթէ անոնք գողութիւն ընելու ստիպենք . կամ երբոր տեսնենք աղքատը մէկէ մը չարչարուած ու զրկուած , և չօգնենք անոր : Վեցերորդ՝ երբոր մենք անհոգ ըլլանք մեր գործին , պարապ կեցող կամ ծոյլ ըլլալով , և չաշխատինք ինքզինքնիս և մեր ընտանիքը կերակրելու : Թէ որ ասանկ ընենք՝ իրա-

ւունք չունինք մեր գրայիններէն կերակուր կամ օգնու-
թիւն մը խնդրելու (ա) :

Գ . Ամէն մարդու պարտքն է պահել աս պատուի-
րանքը՝ ինչ և իցէ վիճակի մէջ որ ըլլայ : Երբեմն կը
խորհի ծառան՝ թէ մեղք չէ իր տիրոջմէն գողութիւն
ընելը , աղքատն իր հարուստ գրայիէն , ազգին գըլ-
խաւորներն իրենց ազգէն , զաւակն իր ծնողքէն , ևսյն :
Աւետուրի մէջ ալ կը խորհին մարդիկ՝ որ կրնան գող-
նալ իրենց հետ առուտուր ընողներէն . բայց ասոնց ա-
մէնն ալ գէշ են , ու Մի՛ գողտնար պատուիրանքին դէմ :
Ուստի թէ որ բանի մը կարօտութիւն ունենանք՝ չգող-
նանք , հապա իր տիրոջմէն խնդրենք ինչ որ պէտք է
մեզի : Թէ որ կ'ուզես յաջողութիւն գտնել , վարպե-
տութիւն բանեցունելու աւելլ՝ պէտք է որ կատարեալ
արդարութիւն ընես ամենուն հետ :

Գ . Գողութիւնը զլուելի՛ նախատալից ու հոգեկո-
րուստ մեղք մըն է : Գողին խղճմտանքն իրեն դէմ է .
ինքը շարունակ կը վախնայ թէ գուցէ իր ըրածն ի-
մացուի , և գրեթէ միշտ այնպէս կ'ըլլայ , ու իր գող-
ցած բաներէն քիչ բերկրութիւն կ'ունենայ . ամէն
բարի մարդ անոր վրայ նախատինքով ու անարգութիւ-
նով կը նայի , և ոչ ալ մէկը անոր վրայ վստահու-
թիւն կ'ունենայ . Աստուած ալ կը զզուի անկէ ու իր
երկնաւոր թագաւորութենէն դուրս կը վճնտէ :

(ա) Վասնզի երբոր մենք ձեր քովն էինք՝ աս ձեզի
կը պատուիրէինք , թէ ան որ չուզէր գործ գործել ,
հայ ալ թող չուտէ : Բ թէս . Գ . 10 :

Ե . Աս մեղքն արգիլելու համար՝ պէտք է որ գողութեան առաջին անգամին՝ տղաքները պատժուին , և առ մեղքին անարգութիւնը , ամօթը և չարութիւնը յայտնի ցուցուի անոնց : Սորվեց՛ւր անոնց՝ բարերար , աղնուամիտ ու ժիր ըլլալ . իրենց ունեցած բաներով բաւականանալ , Աստուծմէ վախնալ և Յիսուսի սուկեղէն կանոնը յիշել , այսինքն՝ Ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն , դուք ալ անոնց անանկ ըրէք : Մատթ . 12 :

Իններորդ Պատուիրանքը :

Ե կորնթ . ԺԻ . 1—13 :

Հ . Ո՞րն է իններորդ Պատուիրանքը :

Պ . « Բո՛ւ որացիիդ դէ՛մ սո՛սս վէայու-նիւն մի ընէր » :

Հ . Թէ որ քու վրադ ձգեմ ան յանցանքը՝ որն որ ուրիշ մէկը ըրեր է , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Սուտ վկայութիւն :

Հ . Թէ որ քու վրայովդ գէշ բաներ ըսեմ սուտ տեղը , ու ջանամ ուրիշներն ալ գէշ խորհել տալ քու վրայովդ , և այնպէս կորսըն-

ցունեմ քու բարի անունդ ու պատիւդ, անա-
տենը ի՛նչ ըրած կ'ըլլամ :

Պ • Սուտ վկայութիւն :

Հ • Թէ որ Աստուած վկայ բռնեմ իմ սուտ
խօսքերս հաստատելու համար, իմ մեղքս
ալ աւելի մեծ չըլլար :

Պ • Հրամներես :

Հ • Թէ որ քու վրայովդ սուտ տեղը ուրիշնե-
րուն գէշ խօսիլն ու ամբաստանութիւն ընելը
լսեմ, և գիտնամ թէ դուն անմեղ ես, և ա-
նոնց հետ մէկ ըլլալով՝ իրենք յօժարեցու-
նեմ ատ բանին մէջը յառաջանալու, անա-
տենը ի՛նչ ըրած կ'ըլլամ :

Պ • Սուտ վկայութիւն :

Հ • Թէ որ դատաւորին ատեննը կամ ուրիշ
ի և իցէ տեղ մը կանչուելու ըլլանք մեր ընկե-
րին համար կամ անոր գէմ վկայութիւն ընե-
լու, ի՛նչ պարտինք խօսիլ :

Պ • Ճշմարտութիւն :

Սուտ լուր պիտի չտարածես • անօրէնի հետ ձեռքդ պիտի
չդնես անիրաւ վկայ ըլլալով : Չարութիւն ընելու համար՝
բազմութեանը պիտի չհետեւիս • ու դատաստանի մէջ ի-
րատուօրէն ծուելու համար շատերուն ետեւն խոտորելով՝
խօսք պիտի չխօսիս : Եւեջ ԻԳ. 1, 2 :

Հ • Ուստի ի՛նչ կ'արդիլէ աս պատուիրանս
քը :

Պ . Կ'արդիլէ ամէն տեսակ բանսարկուծիւնը, զըսարտուծիւնը և բամբասանքը :

Հ . Ըսոր վրայով ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքը :

Պ . « Քու ժողովուրդիդ մէջը չարախօսուծիւն ընելու չստըտիս » : Գ Կ . Ժ . 16 :

Հ . Ի՞նչ տեսակ մարդիկ են բանսարկունելը, զըսարտիչները և բամբաստողները :

Պ . Խռովարար ու մնասակար անձինք են :

Հ . Մեր ընկերներուն ի՞նչ կերպով սարտինք խօսիլ ճշմարտուծիւնը :

Պ . « Սիրով » :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքն ասոր վրայով :

Պ . « Ընչն դառնուծիւն՝ և բարկուծիւն՝ ու սրտմտուծիւն՝ և աղաղակ՝ ու հայհոյուծիւն վերցուի ձեզմէ ամէն չարուծիւններով մէկտեղ » : Եփե . Դ . 31 :

Հ . Կրկնէ՛ նայիմ, ուրիշ ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրքը :

Պ . « Թէ որ մէկը զինքը կրօնասէր կը սեպէ՝ ու իր լեզուին սանձ չդնէր, հասար իր սիրտը կը խաբէ, անանկին կրօնասիրուծիւնը փուճէ » : Զաի . Ե . 26 :

Հ . Ի՞նչպէ՛ս վարուելու ենք սուտղրուցներուն հետը :

Պ . Պարտինք ատել սուտղրուցներն ու

սուտ վկաները, և անոնց հետ ընկերութիւն
ընելէն հրաժարիլ :

Իմաստուններուն հետ քաղղը իմաստուն կ'ըլայ . բայց
անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլայ : Առաջ .
ԺԳ . 20 :

Հ . Հրէաներն ի՞նչ վկայութիւն ըրին մեր
Փրկչին դէմ :

Պ . Սուտ վկայութիւն : Մատթ . ԻՕ . 59
— 61 :

Հ . Հատ հարստութենէն մանաւանդ
կեանքէն ալ ի՞նչ թանկագին բան ունի
մարդ :

Պ . « Բարի անուն » : Լուսն . ԻԲ . 1 :

Հ . Բարի անուն վաստըկելու համար ի՞նչ
պէս ջանալու ենք :

Պ . Բարի ըլլալով ու աղէկութիւն ընե-
լով :

Հ . Մենք որ մեծ բան կը սեպենք մեր ա-
ղէկ անունը, չենք պարտաւորիր պաշտպանել
նաև մեր ընկերինն ալ :

Պ . Հրամբես, կը պարտաւորինք :

Հ . Սուտ խօսողներն ու սուտ վկայութիւն
ընողները կրնան անպատիժ մնալ :

Պ . Չէ :

Սուտ վկան անպատիժ պիտի չմնայ, ու ստութիւն
ներ խօսողը պիտի չազատի : Առաջ : ԺԹ . 5, 9 :

Իններորդ պատուիրանքը մեզի կը սորվեցունէ մեր պարտաւորութիւնը՝ մեր ընկերին բարի անունին ու մեր բարի անունին վրայով :

Ա . Աշխարհիս մէջ մեր հանգստութիւնն ու երջանկութիւնը , մեր յաջողութիւնը և մեր օգուտը՝ մեր ունեցած անունէն ու համբաւէն շատ կախում ունի : Ուստի մեր պարտաւորութիւնն է բարի գործքերով աղէկ անուն վատըրիւելու ջանալ , ու երբոր կը ստանանք՝ մեր պարտաւորութիւնն է պաշտպանել անիկայ : Նաև մեր ընկերին ալ աղէկ անունն ու պտոխը պաշտպանելու ենք՝ իր վրայ ճշմարիտը խորհելով ու խօսելով , առանց շողքորթելու , զրպարտելու , կամ անոր վրայ անիրաւ կասկած մը ունենալու . ողորմութեամբ ու գթութեամբ յանդիմանելով անոր յանցանքները , ու անոնք ծածկելով ուրիշներէն՝ որչափ որ պէտք է ծածկել . պաշտպանելով զինքը ան թշնամիներէն՝ որոնք անոր աղէկ անունն աւրել կ'ուզեն . և վերջապէս թէ՛ իրեն համար է եղեր և թէ՛ իրեն դէմ՝ ճշմարիտ վկայութիւն ընելով՝ վկայութիւն տալու կանչուած ատեննիս :

Բ . Մենք աս պատուիրանքը կ'անարդէնք նախ՝ երբոր բանասարկու , շատախօս , խռովարար կամ բամբասող ըլլանք մեր հասարակ խօսակցութեանը մէջ : Երկրորդ՝ երբոր ասոր հակառակ մեր ընկերին չունեցած աղէկութիւններն իրեն տալով՝ շողքորթութիւն ընենք : Երրորդ՝ երբոր դատաւորին առջև մեր ընկերին համար սուտ վկայութիւն ընելով՝ զրպարտութիւն մը վրան դը-

նենք, որով գուցէ իր պատիւը կորսնցունենք, կամ իր ընտանեացը, իր ստացուածքին և կամ իր կեանքին ալ միաս մը հասցունենք :

Գ . Մարգիկ չարին հակամիտեալ ըլլալով՝ ընդհանրապէս կը սիրեն իրենց ընկերին վրայով գէշ խօսիլը . նմանապէս անոնց համար ըսուած գէշ խօսքերը լսելը : Ասկէց է որ կը ծագի վիճաբանութիւն, հակառակութիւն, նախանձ, ատելութիւն, վրէժխնդրութիւն ու կռիւ : Կարդա Յակ . Գ . 1—18 :

Դ . Թճղ ամէն մէկը Աստուծմէ շնորհք ու զօրութիւն խնդրէ՝ աս պատուիրանքը պահելու համար : Ասկէ զատ միշտ դուն քու տկարութիւնդ յիշէ՛ . քու գործքերդ քեզի բաւական զբաղմունք թճղ ըլլան, որ ուրիշին գործքին խառնուելու ժամանակ չունենաս . աղէկ մտիկ ըրէ՛ երկու կողմն ալ՝ թէ որ մէկը դատելու ըլլաս, ու նայէ՛ որ մէկու մը վրայ՝ մարդոց վճիռը չընդունիս միշտ, բայց դուն քու խղճմտանքովդ դատէ՛ ամէն բան . որչափ որ կրնաս, միայն աղէկը պատմէ քու ընկերիդ համար : Առաջին Կորնթացաց ԺԳ . Քրիստոսը շատ անգամ կարգա՛ ու մտածէ՛ անոր վրայ . բամբաստողներուն ընկերութենէն հեռու կելիր . և թէ որ անոնց հետը գանուիս ու ուրիշ բան մը չկրնաս ընել անոնց բանասարկութիւնները խափանելու, քու լռութիւնդ թճղ յանդիմանէ անոնք : Վերջապէս Աստուծմէ խնդրէ՛ եղբայրսիրութեան շնորհքը :

Ե . Բնաւ մի ցանկար գէշութիւն ընելով չար մարդոց մէջ անուն ստանալու . աշխարհ ինչ որ ընէ

լու ըլլայ քու վրայովդ՝ դուն անմեղ խղճմտանք մը ունեցիր Աստուծոյ ու մարդոց առջևը • Համբերէ՛ երբոր քեզի զրպարտութիւն ընեն ու անիրաւութեամբ դատեն • Աստուծոյ ձեռքէ՛ քու դատաստանդ • յօժարութեամբ դէպի ան դատաստանին նայէ՛, երբոր ամէն մարդ իր գործքին համեմատ գովուածին պիտի առնէ Աստուծմէ : Մատթ • Ե • 11 : Ա կորնի • Գ • 3—5 :

Զ • Քրիստանէաները յատկապէս իրենց բարի անունն ու իրենց եղբայրներուն բարի անունը զգուշութեամբ պահելու են, որ անօգուտ չըլլան աշխարհի մէջ, և մնաս ջրնէն Աւետարանին պատուոյն ու Քրիստոսի վառքին :

Տաներորդ Պատուիրանքը :

Գ թագ • ԻԵ • 1—16 :

Ը • Ո՛րն է տաներորդ Պատուիրանքը :

Պ • « Քո գրապիտը սանը մի ցանկար • Կո գրապիտը կնկանը՝ համ անոր ծառային՝ համ անոր աղախեանին՝ համ անոր եղին՝ համ անոր իշտան՝ և Կո գրապիտը ամենեւին մէկ բանին մի ցանկար » :

Հ • Ըստուած ի՞նչպէս կը պահանջէ իզմէ որ իմ ընկերս սիրեմ :

Պ . Իմ անձիս տէս : Մատթ . Ի . 35—40 :
 Հուովմ . Ժ . 9, 10 :

Հ . Ուրեմն պարտաւոր չեմ ուրախանալու ,
 երբոր տեսնեմ զինքը որ ամէն բարիքներով
 լեցուն է ու անոնք կը վայելէ :

Պ . Հրամեղես :

Հ . Բայց զիցուք թէ ես անոր ունեցած
 պատուական բաներուն վրայ նախանձիմ, ցանկ
 կալով որ անոնք իմն ըլլան , ան ատենն ի՞նչ
 ըրած կ'ըլլամ :

Պ . Ըջ տնկած կ'ըլլաս , որ աս տաներորդ
 պատուիրանքին դէմ է :

Հ . Ըս չե՞ իմ պարտաւորութիւնս , որ իմ ու
 նեցած բաներովս դո՛՛հ ըլլամ , առանց իմ ըն
 կերիս ունեցածին նախանձելու :

Պ . Հրամեղես :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Պօղոս առաքեալ իր բաւա
 կանութիւն սորվելուն վրայով :

Պ . « Ես սորվեցայ դո՛՛հ ըլլալ իմ գտնուած
 վիճակիս մէջ : Գիտեմ չքաւորութիւն քաշե
 լը . գիտեմ շատր ունենալը . ամէն բանի մէջ
 ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ՛ կշտանա
 լը , թէ՛ անօթեհալը , թէ՛ շատ ունենալը , և
 թէ՛ պակասութիւն քաշելը » : Փիլիպ . Գ . 11 ,
 12 : Գործ . Ի . 33 :

Հ . Ուրիշ ի՞նչ կ'ըսէ :

Պ . « Ըստուածաբաշտութիւնը բաւականութիւնով մէկտեղ՝ մեծ շահաւաճառութիւն մըն է : Ինչու որ բան մը չբերինք աշխարհ, ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան մը տանիլ : Հասկա կերակուր ու հանդերձ ունենալով, անոնցմով բաւականանանք » : Վ. ՏԻՃ . Գ . 6—8 :

Հ . Ո՞րմէն կ'իջնեն ամէն բարի պարգևները և ամէն բարի շնորհքները :

Պ . Ըստուծմէ : Յակ . Վ . 17 :

Հ . Թէ որ մէկը ժրաջան ըլլայ ու աշխատի և միշտ արդարութիւն գործէ Ըստուծոյ առջևը, արդեօք Ըստուած թող կուտայ որ ան մարդուն պէտք եղած բան մը պակսի իրմէն :

Պ . Չէ :

Բանդի Տէր Աստուած արև ու վահան է . Տէրը շնորհք ու վառք պիտի տայ . բարութիւն մը պիտի չսպասեցունէ ուղղութեամբ քաղցներէն : Մարժ . ՉԳ . 11 :

Հ . Ըստ պատուիրանքը կ'արդիլէ՞ մեզ՝ մեր ընկերին դէմ մինչև անգամ չար խորհուրդ մը ունենալէն :

Պ . Հրամարեա : Թո . Ժ . 22 : Ըստակ . Ժ . 2 : ԻՒ . 9 :

Հ . Մաքուր սիրտ մը ունենալու համար ի՞նչ պէս աղօթելու ենք Ըստուծոյ :

Պ . « Մէջ Աստուած՝ իմ մէջս մաքուր սիրտ
ստեղծէ՛, և իմ ներսի զիս ուղիղ հոգի նորո-
գէ » : Սաղմ. ԾԵ. 10 :

Հ . Եւ ի՛նչպէս աղօթելու ենք Աստուծոյ՝
մեր սիրտերը փորձելու համար :

Պ . « Փորձէ՛ զիս՝ սիւ Աստուած, ու զիտցիր
իմ սիրտս . իս քննէ՛ ու զիտցիր իմ մտած-
մունքներս, և նայէ թէ արդեօք չար ճամբու
մէջ եմ, և զիս դէպ՝ ի յաւիտեանական ճամ-
բան առաջնորդէ » : Սաղմ. ՆՂԹ. 23, 24 :

Հ . Ի՛նչպէս է առաջին չորս պատուիրանք-
ներուն բովանդակութիւնը :

Պ . « Քու Տէր Աստուածդ՝ բոլոր սրտովդ,
բոլոր հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սի-
րես » : Ի ()ԲԽ. Թ. 5 : Մատթ. ԻԲ. 37 :

Հ . Եւ ի՛նչ է մնացած վեց պատուիրանք-
ներուն բովանդակութիւնը :

Պ . « Քու ընկերդ սիրես . քու անձիդ պէս » :
Մատթ. ԻԲ. 39 :

Հ . Պարտաւոր ենք բոլոր պատուիրանքները
կատարելապէս պահելու :

Պ . Հրամարես . և մեր պարտաւորութեան
անփոփոխելի կանոնն են անոնք :

Հ . Ի՛նչ պիտի ըլլան անոնք՝ որ աս պատ

ուիրանքներուն կատարելապէս չեն հնազանդիր :

Պ . Պիտի պատժուին յաւիտենական կորուստով : Գաղ . Գ . 10 :

Հ . Բայց մենք որ հնազանդած չենք աս պատուիրանքներուն, ի՞նչպէս ուրեմն պիտի փրկուինք յաւիտենական կորուստէն :

Պ . Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալով :

Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ : Գործ . ԺԶ . 31 : Մարկ . ԺԶ . 16 :

—

Տասներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ մենք այնչափ սիրելու ու պատուելու ենք մեր ընկերը՝ որ սիրտերնուս մէջն անգամ ցանկալու չենք իր ունեցած բաներուն մէկին :

Ա . Ինքն ունենալու և վայելելու է բոլոր իր ստացուածները . ու մենք՝ թէ՛ գործքով և թէ՛ սրտով աւիրաւութիւն մը ընելու չենք իրեն : Երբոր ինքը յաջողութիւն ունենայ, մենք ուրախանալու ենք . և իր գործքերուն հոգ տանելու ենք . ու երբոր բանի մը կարօտութիւն ունենայ, իրեն օգնելու ենք : Մենք աւ դոհ ըլլալու ենք մեր վիճակէն, ինչպէս որ սահմաներ է անիկայ մեր երկնաւոր Հայրը :

Բ • Մենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր տժգոհ ըլլանք Աստուծոյ գանգատելով, որ մեզ մեր ընկերին պէս իմաստուն, աղէկ, զօրաւոր, հարուստ, պատուելի, կամ անոր պէս երջանիկ չըրաւ : Երկրորդ՝ երբոր մենք նախանձինք մեր ընկերին, և ցանկանք որ ինքը զրկուի իր ստացած բանին մէկէն, և մենք ունենանք ու վայելենք անիկայ : Երրորդ՝ երբոր զինքը՝ կամ իր կինը կամ իր զաւակները կամ իր անասունը նեղութեան մէջ տեսնենք ու չօգնենք իրեն, այլ մանաւանդ վրան խնդանք :

Գ • Բնականաբար ամէն մարդ ինքզինքը իր ընկերէն աւելի աղէկ կը սիրէ • անոր համար մէկը մէկալին ու նեցածին՝ կամ անոր յաջողութեանը նախանձելով անոր աղէկ բաներուն ցանկացող ու անոր երջանկութեանը հոգ չտանող եղած կ'ըլլայ • բայց ասանկ անձնասիրութիւնը՝ բոլորովին գեշ բան է • ուստի անոր վրայ ասպշխարելու ենք, և նոր սիրտ մը խնդրելու ենք որ կարենանք սիրել մեր ընկերը մեր անձին պէս :

Դ • Աղօթենք որ կարող ըլլանք միշտ շնորհակալ ըլլալ ինչ որ ըլլայ մեր վիճակը : « Աս աշխարհիս մեծութիւնը անցաւոր է » : Տժգոհ ու ցանկացող մարդը միշտ նեղութեան մէջ է : Դաւիթ՝ ցանկացաւ Ուրիային կնոջը • Աբաաբ՝ Նաբովթին սյգիին • Գէեզի՝ Նէեմանին արծաթին ու հանդերձին • Յուդա՝ Մարիամին ծանրագին իւղին • բայց ասոնք ամէնքն ալ իրենց ցանկութենէն թշուառ եղան : Յանկացող մարդը ո՛չ իր ներսիդին խաղաղութիւն ունի, ո՛չ ալ իր ընկերներուն հետ :

Թէ որ մեղի բաժին Աստուած ունենանք՝ բաւական է :

— Աս վեց պատուիրանքները՝ որոնք որ հիմա քննեցինք, Երկրորդ աստուած ինչպէս, և մեղի կը սորվեցունեն մեր պարտաւորութիւնը դէպի մարդիկ . այսինքն . նախ՝ թէ մենք սիրով ու յարգութիւնով հնազանդելու ենք ան ամենուն՝ որոնք որ իշխանութիւն ունին մեր վրայ : Երկրորդ՝ թէ մեր ընկերին կեանքին վրաս մը պիտի չհասցունենք : Երրորդ՝ թէ անոր ընտանեացը սրբութիւնն ու մաքրութիւնը պահելու և պաշտպանելու ենք : Չորրորդ՝ թէ իր ստացուածքը յավիշտակելու չենք : Հինգերորդ՝ թէ իր բարի անունը պիտի չաւրենք : Վեցերորդ՝ թէ իր յաջողութեանն ու հարստութեանը վրայ ուրախանալու ենք, և չարութեան դաղաւոր խորհուրդ մը անգամ սիրտերնուս մէջ ունենալու չենք իրեն դէմ :

— Ահա՛ ասանկ են տասը պատուիրանքները, որոնք տուաւ մեզնի ամենակարողն Աստուած, մեր Ստեղծիչն ու Թագաւորը :

Անոնք են մեր օրէնքը, մեր սրբաւորութեան կանոնը, որուն պարտաւոր ենք հետևելու սրտով ու գործքով կատարելապէս, ապա թէ ոչ՝ դատաւարաւորութեան տակ կ'ընանք :

Մենք ամէնքս ալ աս օրէնքին կատարեալ հնազանդութիւն ընենքուս մէջ պակաս դանուեցանք, ինչպէս իր մեր խղճմտանքն ալ ասանկ կը վկայէ . և անոր համար դատաւարաւորած ենք :

Մենք մեզմէ բան մը չենք կրնար ընել, որ Աստու-

ծոյ հատուցում ըլլայ՝ իրեն գէմ մեր գործած մեզ
քերուն համար :

Բայց ինքն իր մեծ ողորմութեամբը մեզի համար
Փրկիչ մը նախախնամեց, Յիսուս Քրիստոս իր Որդին
որ մեզի համար Օրէնքին անէծքը կրեց : Ուստի փրկու
կուելու համար պարտինք անոր հաւատալ ու անոր ա
պաւինիլ, ապաշխարելով ու մեր մեղքերը մէկ դի ձգելով :

Օրէնքը մեզի վարժապետ կ'ըլլայ՝ մեզ Քրիստոսին
բերելու համար : Մենք մեր սիրտերն ու մեր կեանքը
օրէնքին հետ բաղդատելով կը սորվինք մեր անթիւ
յանցանքներն ու մեղքերը . կը սորվինք ան սոսկալի
պատիժը որ դալու է . ան ատենը կը դողանք, ու կը
հարցունենք թէ ի՞նչ պարտինք ընել : Ձայն մը կու
գայ որ մեզի կ'ըսէ թէ՛ « Ահա Աստուծոյ Գառը որ
աշխարհի մեղքը կը վերցունէ » . և թէ՛ « Ան որ հա
ւատայ պիտի վրկուի, ան որ չհաւատայ, պիտի դատա
պարտուի » : Ուստի ան երկնաւոր ձայնին հաւատալով
մեր հոգին կատարեալ ուրախութիւն կ'ունենայ :

Գ • Մասնատու պարտատուներենքու վրայ :

1 • Էրիկներուն պարտաւորութիւնը :

Եփե" • Ե • 22—33 :

Հ • Երկանն իր կնկանը վրայ ունեցած իշխանութեանը համար ինչ կը սորվեցունէ Աւետարանը :

Պ • Երիկը կնկանը գլուխն է, ինչպէս որ Քրիստոս ալ եկեղեցին գլուխն է » : Եփե" • Ե • 23—25 : Ե Կորնթ. ԺԵ • 3 : Ե Տե՛ճ. Ի • 12, 13 :

Հ • Ի՞նչ է կնկանը պարտքը :

Պ • Աս է՛ իր կնիկը սիրել ու անոր հոգ տանիլ : Ե Տե՛ճ. Ե • 8 :

« Էրիկներ, սիրեցէ՛ք ձեր կնիկները, ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մասնեց անոր համար » : Եփե" • Ե • 25 :

Հ • Երիկն իշխանութիւն ունի իր կնիկը ծեծելու կամ անոր հետ չարաչար կերպով վարուելու :

Պ • Չէ • քանզի հրամայուած է կնիկներուն որ իրենց կնիկներուն « դառն չըլլան » : Կող. Գ • 19 :

Հ . Պետրոս Առաքեալը ի՞նչ կը հրամայէ էրիկներուն :

Պ . «Նմանապէս էրիկները խոհեմութիւնով անոնց հետը բնակին . տկար անօթի սկէս սլափու տալով կնիկներուն, իբրև կենաց շնորհքին ժառանգակիցներ . որ ձեր աղօթքներուն արգելք չըլլայ » : Ն. Պե. Գ. 7 :

Հ . Թէ որ բարեպաշտ էրիկ մը աշխարհասէր կնիկ ունենայ, ի՞նչ սլիփի ընէ անոր համար :

Պ . Աղօթք ընելու է, և ձեռքէն եկածին չափ՝ Քրիստոսի դարձունելու է անիկայ : Ն. Կրիս. 1. 14—16 :

Հ . Անհաւատարիմ, անգութ ու իրենց կնկանը հող չտանող էրիկները սլիփի փրկուի՞ն :

Պ . Չէ :

—

Ն . Աւետարանը կը սորվեցունէ որ էրիկներն իրենց կնիկներուն գլուխն են : Բայց անոնք թող զգուշանան իրենց իշխանութիւնն ու զօրութիւնը չարաչար դործածելն . ու նային որ բարկացող, անգութ, դաժան կամ անհամբոյր չըլլան : Իսկ ան էրիկը որ ասանկ կերպով կը վարուի իր տկար ու անօգնական կնկանը

հետ, անիկայ նուաաս ու թշուառ հողոյ տէր մարդ մըն է :

Բ • Էրիկները սարտին սիրել իրենց կնիկները, երկրի վրայ ունեցած իրենց խիստ մտերիմ՝ ու սիրելի բարեկամները սեպելով անոնք :

Գ • Էրիկները խնամելու են իրենց կնիկները : Պէտք է որ ժրաջան, զգաստ ու խնայող ըլլան, որ կարողանան իրենց կնիկներուն պիտոյքներն ու մխիթարութիւնները հոգալու :

Դ • Էրիկները սատուելու են իրենց կնիկները : Եւ պէտք է որ յարգութիւն ու սատիւ ցուցնեն անոնց՝ թէ՛ տանը մէջ ու թէ՛ անէն դուրս • մանաւանդ անոնց հիւանդութեան ժամանակը քաղցրութեամբ և մարդասիրութեամբ վարուին, համբերելով անոնց տկարութեանը, հեռու կենալով նախանձոտ բնութենէ, և մանաւանդ զգուշանալով որ սատճառ չտան կնիկներնուն՝ իրենց հաւատարմութեանը վրայ կասկածելու :

Ե • Էրիկները հոգ տանելու են իրենց կնիկանը վերկութեանը համար : Ահա՛ էրկանն ամենէն մեծ սարտաւորութիւնը՝ որ ունի իր կնիկանը վրայ : Ուստի էրիկ մը թող միշտ միտքը բերէ որ ինքը պիտի կայնի Աստուծոյ ատեանին առջևը, ու հաշիւ պիտի տայ կրնկանը հետ ունեցած՝ իր ամէն վարմունքին համար, և անոր վրայ ունեցած իր բոլոր ազդեցութիւններուն համար : Ա կորնի • է • 16, 29—34 :

2 : Կնիկներուն պարտաւորութիւնը :

Լուսի . ԼՍ . 10—31 :

Հ . Ի՞նչ է կնիկներուն յատուկ պարտաւորութիւնը :

Պ . Սիրել ու հնազանդիլ իրենց էրկանը :
Կնիկները իրենց էրկիկներուն հնազանդ ըլլան՝ որպէս
Թէ Տէրոջը : Եփե . Ե . 22 : Կու . Գ . 18 : Ա Պե . Գ . 1 :
Ա Տե . Բ . 11—18 : Տե . Բ . 4 , 5 :

Հ . Պէտք է որ կնիկները զարդարանք սիրեն , աշխարհի զուարճութիւն վնասուեն , ու տնէ տուն պտրտելով ամէն օր այցելութեան երթան :

Պ . Չէ՛ : Ե Տե . Բ . 9 , 10 : Ե Պե . Գ . 3 , 4 :

Հ . Ի՞նչ տեսակ հոգի ունենալու են աւոնք :

Պ . « Հեզ ու հանդարտ հոգի մը » : Ե Պե . Գ . 4 :

Հ . Եւ ան կնիկները՝ որոնք աստուածապաշտութեանը յանձնառու կ'ըլլան , ինտո՞ր կը վայէ որ զարդարուին :

Պ . « Կը վայէ որ բարի գործքերով զարդարուին » : Ե Տե . Բ . 9 , 10 :

Հ • Ո՞րն է կնիկներուն սեպհական տեղը, և ո՞ւր կը կայանայ իրենց գլխաւոր հողն ու պարտաւորութիւնը :

Պ • Իրենց ընտանիքին մէջ : Ա. ա. 1. 10
— 31 :

Հ • Երիկներն իրենց ընտանիքին հող տանիլը, ու ժրութեամբ և խնայողութեամբ ամէն բան մաքուր և 'ի կարգի պահելը՝ որոնցմէ՞ կը յուսան :

Պ • Իրենց կնիկներէն :

« Որ խրատեն նորահասակ կնիկները՝ էրիկնին սիրող, զաւակնին սիրող ըլլալ, խոհեմ, ողջախոհ, սնաշէն, բարեգործ, իրենց էրիկներուն հնազանդ • որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը հայհոյուի » : Տե. Բ. 4, 5 :

Հ • Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին, ի՞նչպէս պիտի աշխատին անոնք Քրիստոսի դարձունելու :

Պ • Իրենց բարի վարքովը : Ա. Արին. 1. 16 :
Ա. Պե. 1. 1, 2 :

Հ • Երիկներուն և կնիկներուն ընտանեկան հողերու պարտաւորութիւնն ի՞նչ է :

Պ • Իրարու համար և իրարու հետ աղօթք ընել, և իրենց ընտանիքին հետ ալ, և իրարու երջանիկ ըլլալուն աշխատիլ, թէ աս աշխարհիս և թէ հանդերձեալ աշխարհին համար :

Ա • Կնիկները՝ Աստուծոյ Լոյսը իրենց էրիկներուն վրայ սէր ունենալու են :

Բ • Փոխանակ՝ բարկացող, անձնասէր ու հակառակող ըլլալու, կնիկները սխալ հնազանդին իրենց էրիկներուն ամէն բանի մէջ, բաց ՚ի անոնցմէ՝ որ օրինաւոր չեն :

Գ • Իրենց ամենէն մեծ հոգն ու գլխաւոր պարտաւորութիւնը կը կայանայ բուն իրենց ընտանիքին մէջ : Ուստի հարկաւոր է որ անաշէն, ժրաջան, կանուխ արթընցող, մաքրասէր, խնայող, զգուշաւոր, խաղաղարար և ծանրաբարոյ ըլլան • ու նաև աղէկ կառավարեն իրենց զուգըններն ու ծառաները, առանց ստէսլ տըւտըւալու, սպառնալու, ու ամէն ատեն դանդաղ ընելու : Ան կնիկները՝ որ չամազանց զարգարանք կը սիրեն, ու միշտ անէ տուն կը պարտին, շղատկրատութիւն կ'ընեն, ուրիշներուն բերնէն կը ջնան լուրեր առնել՝ որ ետքը բամբասանք ընեն ու խոռովութիւն հանեն, անանկները թշուառութեան մէջ կը ձգեն իրենց էրիկներն ու ընտանիքը, ու իրենց անձինքը փորձութեան ու դժբախտութեան կը տանին :

Դ • Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներուն, սարտին զգոյշ ըլլալ իրենց վարմունքին ու խօսակցութեանը մէջ, որ չըլլայ թէ նախապաշարմունքի տակ ձգեն իրենց էրիկները • այլ ընդ հակառակն սկիտք է որ ամէն միջոցով համոզեն անոնք որ դարձի գան, սպաշխարեն ու հաւատան :

Ե • Էրիկներն ու կնիկները սկիտք է որ միշտ միտքեր

նին բերեն իրենց խոստմունքները և իրենց պարտաւորութիւնները մեկզմէկու վրայ, իրենց զաւկներուն և ծառաներուն վրայ, ու մանաւանդ գէսլի Աստուած ալ ու ամէն բանի մէջ պէսք է որ ջանան Աստուծոյ օրհնութիւնը ձեռք բերելու : Սաղմ. ՃԻԷ. 1 :

3 . Ծնողքներուն պարտաւորութիւնը :

Հ . Ի՞նչ է բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնը, իրենց զաւկներուն վրայով :

Պ . Ընտանիք պարտաւորութիւնը և արտօնութիւնն է՝ անոնք Մկրտութեամբ ընծայել Տէրօջը՝ որմէ որ ընդունեցին անոնք : Ծնող. ժ. 7—14 : Հոռմ. Բ. 28, 29 : Դ. 11 : Կող. Բ. 9—12 : Գործ. Բ. 38, 39 : Ժ. Գ. 14, 15, 26—34 : Մատթ. ժ. Թ. 13—15 : Բ. Օրին. Գ. 7 : ԼԲ. 46 : Բ. Տէճ. Ե. 5 : Գ. 15 : Յեա. ԻԲ. 15 : Սաղմ. ՀԸ. 4—8 : Գլուխ. Բ. 21 :

Հ . Ի՞նչ ըսաւ մեր Փրկիչը՝ պզտիկ տղոց իրեն գալուն համար :

Պ . « Թող տուէք ասո ամանը տղոց որ ինձի գան, և մի արգիլէք ատոնք . ինչու որ Աստուծոյ Թագաւորութիւնը ատանկներունն է » : Մատթ. ժ. 14—16 : Մատթ. ժ. Թ. 14, 15 :

Հ . Չաւկընները ի՞նչպէս կրթելու հրամայուեցաւ ծնողքներուն :

Պ . « Տէրօջը վարժութիւնովը ու խրատովը » : Եփե . Թ . 4 :

Հ . Ծնողքներն ամէն բանէն աւելի՛ ի՞նչ բանի պէտք է որ փափաքին իրենց զաւկըններուն համար :

Պ . Հողիններնուն փրկութեանը : Սաղմ . Թ . 33 :

Հ . Եւ ծնողքներն ի՞նչ պարտք պիտի պահանջեն իրենց զաւկըններէն :

Պ . Շարունակ և կատարեալ հնազանդութիւն :

Հ . Ի՞նչ պէտք է որ սորվեցունեն անոնց՝ որ ամէն իրիկուն ու առտու անպատճառ կատարեն :

Պ . Ըղօթք ընել Ըստուծոյ :

Հ . Ծնողքներն ի՞նչ գիրք պիտի կարդացունեն իրենց զաւկըններուն, և միշտ անկէ սորվեցունեն անոնց :

Պ . Ըստուածաշունչ Գիրքը :

Հ . Ծնողքներուն պարտաւորութիւնն է որ իրենց զաւկըններուն հետ՝ և իրենց զաւկըններուն համար՝ ամէն օր աղօթք ընեն :

Պ . Հրամարեա :

Հ . Ի՞նչ տեսակ խօսակցութիւն պէտք է որ ընեն անոնք՝ իրենց զակրներուն առջև :

Պ . Բարի և օգտակար խօսակցութիւններ :

Հ . Եւ ի՞նչ տեսակ օրինակներ տալու են անոնց :

Պ . Բարի և գովելի օրինակներ :

Հ . Արժան է որ ծնողքները բարկութեան գրգռեն իրենց զակրները, զբօսանքի համար :

Պ . Չէ՞ . քանզի զրուած է . « Հայրեր՝ ձեր որդիները մի բարկացունէք » : Եփես . Բ . 4 : Կող . Գ . 21 :

Հ . Ծնողաց պարտքն է որ զակրներնին չար ընկերութենէ զգուշացընեն ու անկէ հեռու պահեն :

Պ . Հրամբերես : Առաջ . Ե . 10—15 : ԺԳ . 20 : Ե Կորնթ . ԺԵ . 33 :

Հ . Երբոր տղաք չար ու կամակոր ըլլալով չհնազանդին իրենց ծնողացը , անատեն ի՞նչ է ծնողաց պարտքը :

Պ . Պէտք է որ պատժելով խրատեն անոնք : Առաջ . ԺԳ . 24 : ԺԹ . 18 : ԻԲ . 15 : ԻԹ . 15 , 17 :

Հ . Ի՞նչ խրատ տուաւ Իմաստունն ասոր վրայով :

Պ . « Տղայէն խրատը մի՛ կտրեր . վասն զի թէ որ զանիկայ զաւազանով ծեծես , չմեռնիր : Դուն անիկայ զաւազանով կը ծեծես , բայց անոր հոգին դժոխքէն կ'ազատես » : Լուսի . Ի . 13 , 14 :

Հ . Եւ ի՞նչ ըսաւ անիկայ , զաւկի մը կըրթուածեանը համար :

Պ . « Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը , որ իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի » : Լուսի . Ի . 6 :

Հ . Հաւատարիմ և արդար ծնողքներուն զաւկրները յատուկ պիտի օրհնուին :

Պ . Հրամարես : Ծննդ . ժ . 19 : Ի . Օրհն . Դ . 40 : Լ . 9 :

Հ . Ի՞նչ կըսէ Դաւիթ ասոր վրայով :

Պ . « Տղայ էի ու ծերացայ . բայց արդարը անտես եղած չտեսայ , կամ անոր զաւակը հաց մուրացող : Լ՛մէն օր կ'ողորմի ու փոխ կու տայ , և անոր սերունդը օրհնուած է : Սաղմ . 11 . 25 , 26 :

Հ . Չար ծնողաց պատիժը՝ իրենց զաւկրներուն կը հատուցանէ՞ Լստուած :

Պ . Հրամարես : Եւեց Ի . 5 : Լ . 7 : Թոս . ժ . 18 : Սաղմ . 11 . 28 :

Ա . Բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և

արտօնութիւնը՝ իրենց զաւկրները մկրտութեան բերելն է - քանզի ասանկով իրենց զաւկրներուն համար ուխտ մը բրած կ'ըլլան Աստուծոյ հետ՝ որ Աստուած իրենց զաւկրներուն Աստուած ըլլայ, և ան զաւակներն Աստուծոյ ծառաներ ըլլան : Ուստի ան զաւկրներն հասկընալու կարող ըլլանուն պէս, պէտք է որ ծնողքները պատմեն անոնց աս ուխտը, ըսելով թէ՛ անոնք՝ Աստուծոյ ընծայուած են, ու իր եկեղեցիին մէջ մկրտուած են, և թէ՛ իրենց պարտաւորութիւնն է որ ապաշխարեն ու հաւատան Յիսուս Քրիստոսի, և ինքզինքնին Աստուծոյ յանձնեն . և թէ՛ այնուհետև խոստովանելով զիրենք Աստուծոյ զաւակները՝ պէտք է որ ընդունին ու յանձն առնեն ան ամէնը՝ որ ծնողքներն իրենց մանկութեան ատենն ըրին իրենց համար՝ Աստուծոյ հրամանին պէս :

Բ . Ծնողքները պէտք է որ հոգ տանին զաւակներնուն, համբերող ըլլան անոնց տկարութիւններուն ու պակասութիւններուն . հոգան անոնց պէտք եղածը, պահպանեն անոնք իշխաններէ, աշխատասէր ըլլալ սորվեցունեն անոնց, ու անոնք աղէկ վարժեցունեն զխոսութեան մէջ, որ տուներէն ու կալուածքներէն աւելի աղէկ բան է : Պէտք է նաև սորվեցունեն անոնց աղօթք ընել, ու ստէսլ աղօթք ընեն անոնց հետ՝ և անոնց համար : Անոնք տակաւին կարգալ չսորված՝ սորվեցունեն անոնց Սուրբ Գիրքին մէջէն : Պզախուց տանին անոնք Աստուծոյ տունը, ու մեծ պատիւ մատուցանել տան Աստուծոյ սուրբ օրուան՝ այսինքն Վերակիին . զգուշացունեն ու հեռու պահեն անոնք չար ընկերներէ .

յանդիմանեն անոնց յանցանքը՝ դաւաղանին ալ չիննայելով : Թող ծնողքները չբարկացունեն զաւելներնին . հապա արմատացունեն անոնց ներսը՝ հնազանդ , հեղ , խաղաղ , դոհ , ողորմած և ուրախ բնաւորութիւն մը : Հոգ տանին որ անոնք սիրեն եղբայրնին ու քոյրերնին . բարերար և ակնածու ըլլան ամէն մարդու , մանաւանդ ծերերուն . միշտ անոնց միտքը ձգեն՝ որ երջանիկ ըլլալու համար , անոնք պարտին օգտակար գործի մը մէջ ըլլալ . մանաւանդ պարտին նոր սիրտ մը ունենալ , սիրել Աստուած ամէն բանէն աւելի , և իրենց դրացին ալ իրենց անձին պէս : Եւ թող ծնողքները միշտ յիշեն՝ որ անօգուտ կ'ըլլան իրենց բոլոր խրատները , քանի որ բարի օրինակ չտան իրենց զաւելներուն :

Գ . Աստուած՝ մասնաւոր խոստմունքներ կ'ընէ հաւատարիմ ու բարեպաշտ ծնողքներուն , թէ անոնց սերունդը պիտի օրհնուի : Բայց ասանկ խոստմունքներ չկան՝ անհաւատարիմ ու անբարեպաշտ ծնողքներուն . ասոնք Աստուծոյ անէծքը պիտի բերեն իրենց զաւելներուն վրայ : Ուստի պէտք է որ՝ առաջ իրենք սկսին Աստուծոյ ծառայել , ու ան ատեն Աստուած անոնց՝ և զաւելներնուն Աստուած պիտի ըլլայ :

4 . Տղայոց պարաստորութիւնը :

(Տէ՛ս 4ին 4էրորդ պարաստորութիւնը :

5 . Տէրերուն պարաստորութիւնը :

Պրոֆ . 1 : 1—10 .

2 . Աստուած ինչ պատուէր տուաւ տէրերուն :

Պ . « Դո՛ւք ալ տէրեր՝ նոյնը ըրէք անոնց, ու ստիպուած լինելով տուէք, գիտնալով որ անոնց ալ ձեր ալ Տէրը երկինքն է . ու անոր քովը աչառութիւն չկայ : Ենթ . 9 : Տէրեր՝ ձեր ծառաներուն իրաւունք ու հաւաստութիւն տուէք, գիտնալով որ դուք ալ Տէր ունիք երկինքը » : Վրդ . 1 . 1 :

2 . Ո՞վ է մեր ամենուս Տէրը երկինքին մէջ :

Պ . Աստուած է :

2 . Ուստի տէրերն ու ծառաները՝ ամէնքն ալ հաւաստի են Աստուծոյ առջևը :

Պ . Այո, քանզի անիկայ աչառութիւն չընէր : Յովբ . Լ . 13—15 :

Հ . Ի՞նչպէս պիտի վարուին տէրերը իրենց ծառաներուն հետ :

Պ . Արդար ու մարդասէր վարմունքով :

Հ . Ի՞նչպէս կրնան տէրերը անիրաւութիւն ընել իրենց ծառաներուն :

Պ . Անոնց բաւական ու աղէկ կերակուր տալը զանց ընելով, կամ անոնցմէ չափազանց աշխատութիւն պահանջելով, կամ իրենց ծառայութեանը փոխարէն արժանաւոր վարձք չտալով, կամ իրենց խոստացած վարձքին մէկ մասը կտրելով, կամ վճարումը երկնցունելով՝ և ուշ հատուցանելով :

Հ . Ի՞նչ պատուէր տուաւ Մովսէսին օրէնքը, ծառաներուն վարձքը ժամանակին վճարելու համար :

Պ . « Քեզի վարձքով բանողին օրական վարձքը մէկ զիշեր մինչև առտու քու քովդ չմնայ » : Պ . Լ . 13 :

Հ . Երեմիա մարգարէին բերնովը՝ Աստուած որո՞ւ գէմ կը զրուցէ :

Պ . Անոր գէմ՝ որ կը շինէ իր տունը անարդարութեամբ, ու իր վերնատունն անիրաւութեամբ . իր դրացին ձրի կ'աշխատցունէ, ու

անոր վարձքը չհատուցաներ : Երե՛՛մ . ԻԻ . 13 :

Հ . Որո՞ւ գէ՛մ Աստուած պիտի դայ դատաստան ընէ , կ'ըսէ Մաղաքիա մարգարէն :

Պ . Անոնց գէ՛մ՝ որոնք կը չարչըրկեն վարձկանները իրենց վարձուցը համար : Մաղաք . Գ . 5 :

Հ . Ի՞նչպէս կրնան տերերը անմարդասէր ըլլալ իրենց ծառաներուն .

Պ . Խիստ և դաժան կամ տրուտուացող վարմունք մը ունենալով անոնց հետ :

Հ . Տերերը իրենց ծառաներուն հոգիներուն համար պարտաւորութիւն մը ունին :

Պ . Հրամբե՛ս . պարտական են կըթել իրենց ծառաները , Սուրբ Գիւրջն անոնց սորվեցունելով , և ամէն պատեհութիւն ու քաջալերութիւնը տալով՝ որ իրենց հոգիներուն փրկութեանը հոգ տանին :

—

Աստուած արդար Աստուած մըն է , ու վերջին օրը պիտի պատժէ ան ամէն անիրաւութիւնը՝ որ մարդիկ տկար և անօգնական անձանց կ'ընեն : Ան ատենն ամենուն Տէրը ճշդիւ պիտի քննէ բոլոր մեր ունեցած վարմունքներն ան մարդոց հետ՝ որ ինքը գրաւ մեր իշ-

խանութեանը տակը : Ընդհանրապէս ծառաներուն վե՛-
ճակն անարդ ու թշուառ է : Բարի տէր մը՝ բոլոր իր
ընկերը պիտի թափէ, արդար ու քաղցր վարմունքով
հաճելի ընելու անոնց վիճակը՝ աս կեանքին մէջ . նաե
իր կրցածին չափ պիտի աշխատի խրատով ու օրինակով
անանկ ընթացք մը բռնել տալ անոնց՝ որ երջանիկ ու
կոտարեալ ըլլան հանդերձեալ կեանքին մէջ :

—

6 . Ծառաներուն պարտաւորութիւնը :

Ծանոթ . Ի . 1 . 1—67 :

Հ . Ծառաներուն ինչ պատուէր տուաւ Մա-
տուած՝ իրենց տէրերուն հնազանդելու վրա-
յով :

Պ . « Ծառաներ՝ ամէն բանի մէջ հնազանդ
եղիք ձեր մարմնաւոր տէրերուն . չէ՛ թէ աչքի
առջև ծառայելով՝ մարդահաճոններու պէս,
հասլա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախ-
նալով » : Կող . Կ . 22 :

Հ . « Ըչքի առջև ծառայելը » ինչ ըսել է :

Պ . Ըս խօսքը կը վերաբերի ան ծառանե-
րուն վարմունքին՝ որոնք միայն իրենց տիրոջը
աչքին առջև աղէկ կը ծառայեն :

Հ . Ըն ծառան՝ որ իր երկրաւոր տիրոջը աչքին առջևը միայն կը ծառայէ, իր երկնաւոր Տէրոջը առջևն ալ նոյնպէս պիտի վարուի :

Պ . Հրամեքես :

Հ . Ուրեմն ծառաներն ինչպէս պիտի ծառայեն իրենց տէրերուն :

Պ . « Յօժարութեամբ պիտի ծառայեն որպէս թէ Տէրոջը, ու չէ թէ մարդոց » : Եփե . Գ . 7 :

Հ . Իրենց տէրերուն ինչ բանի մէջ հաճելի ըլլալու պիտի ջանան :

Պ . « Ըմէն բանի մէջ հաճելի պիտի ըլլան, ոչ հակառակախօսներ » : Տեա . Բ . 9 : Եւ Պեա . Բ . 18—21 :

Հ . « Ո՛չ հակառակախօս » ըսելով ինչ ըսել կ'ուզէ :

Պ . Բսել կ'ուզէ որ՝ սկտք չէ անխոհեմութեամբ դիմադարձութիւն ընել՝ երբոր կը յանդիմանուի յանցանքի մը համար :

Հ . Մառայի մը ներուած է որ իր տիրոջմէն գողութիւն ընէ, սուտ խօսի անոր, կամ խաբէութիւն բանեցունէ՝ անոր համար բան մը ծախու առած ատենը :

Պ . Չէ՛. վասն զի իր պարտաւորութիւնն

է, « բոլորովին բարի հաւատարմութիւն ցուցրնել » : Տե՛ս . Ի . 10 :

Հ . Թէ որ ծառաներն իրենց պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կատարեն, ու իրենց ծառայական վիճակին մէջ Աստուծոյ ծառայեն, ան ատենը յարգելի պիտի չըլլան մարդոց քով, ու օրհնեալ և պատուելի Աստուծոյ առջևը ուրիշներուն պէս :

Պ . Այո պիտի ըլլան . որովհետեւ « Ամէն մէկը ինչ բարիք որ ընէ, նոյնը Տէրօջմէն պիտի ընդունի, թէ ծառայ ըլլայ և թէ ազատ » : Եփէս . Գ . 8 :



Ա . Թող ծառաները հաւատարմութեամբ ծառայեն իրենց տէրերուն՝ նաև անոնց ետեմէն ալ, ինչպէս որ անոնց առջևը : Աստուած միշտ կը տեսնէ, թէ և տէրերը հոն չըլլան :

Բ . Ծառաները երբեմն անանկ կը կարծեն, որ ասանց Աստուած բարկացունելով՝ կրնան իրենց տիրոջը սուտ խօս'լ ու խաբէութիւն ընել, և անկից դողնալ . բայց ասանկ չէ՛ . ինչու որ Աստուած չհաճիր ասանկ բանին . անիկայ կը պահանջէ արդարութիւն ու հաւատարմութիւն ամէն մարդոցմէ և ամէն պարագայի մէջ :

7 . Իշխաններուն պարտաւորութիւնը :

Պ . Թագ . Պ . 1—28 : Դան . Պ . 1—37 :

Հ . Պէտք է որ ամէն երկիր և ամէն ժողովուրդ օրէնք ունենայ , և հասարակութիւնը ան օրէնքին հնազանդեցունելու համար ալ՝ իշխաններ և կառավարիչներ ըլլան :

Պ . Հրամարես :

Հ . Թէ որ քաղաքներնուս մէջ ոչ օրէնք ունենանք ու ոչ ալ կառավարիչ , կրնանք ապահով կամ երջանիկ ըլլալ :

Պ . Չէ . քանզի ան ատենն ամէն մարդ իր ուզածը կ'ընէ : Պատ . Ժ . 6 : Տես նաև Ժ . և ԺԹ . գլուխները :

Հ . Պէտք է որ ամէն կառավարիչ Մտուծ մէ կարգուած՝ և Մտու մեզ կառավարելու դրուած սեպէնք :

Պ . Հրամարես . « Վասն զի չկայ իշխանութիւն մը որ Մտուծ մէ չըլլայ . և անոնք որ կան՝ Մտուծ մէ կարգուած են » : Հոով . Ժ . 1 :

Հ . Իշխաններն ինչպէս մարդիկ ըլլալու են :

Պ . « Կարող մարդիկ՝ Մտուծ մէ վախցող՝ Քչմարտասէր ու ազահութիւնը ատող մարդիկ » : Եւեց Ժ . 21 :

Հ . Ընտնք որոնն վախովը ժողովուրդը կա-
ռավարելու են :

Պ . Աստուծոյ վախովը : Բ Օրէն . ԺԷ . 14—
20 : Յէ . Ե . 8 : Բ Թափ . ԻԳ . 3 : Բ Մատի .
ԺԹ . 4—11 :

Հ . Իշխանները երկու մարդոց դատը ինչ-
պէս պիտի տեսնեն :

Պ . Արդար դատաստանով : Բ Օրէն . ԺԸ .
18, 19 : ԺԷ . 6 : Առաջ . ԻԹ . 12—14 : Երբ՛՛,
ԻԲ . 2—4 :

Ա . Բոլոր երկրիս վայ եղած ամէն ազգի և ժողո-
վորդոց անշուշտ հարկաւոր է օրէկներ և իշխաններ
ունենալ : Մարդս բնականաբար անօրէն էակ մըն է ,
ուստի պէտք է որ միշտ իշխանութեան տակ ըլլայ :

Բ . Երբոր մէկը իշխան կ'ըլլայ , Աստուծոյ ձեռքովը
կ'ըլլայ . այսինքն՝ Աստուած կը կանչէ անիկայ ան պաշ-
տօնին : Աստուած՝ իր նախախնամութեամբը թող կու-
տայ որ կառավարէ : Ալ անիկայ Աստուծոյ սպասաւորն
է , և պէտք է որ ան պաշտօնովը ծառայէ Աստուծոյ :
Եւ ժողովուրդն ալ պէտք է որ իբրև « Աստուծոյ սպա-
սաւոր » համարին անիկայ : Հռովմ . ԺԳ . 4 :

Գ . Իշխանները բարձր պաշտօնի կանչուած են . և
որովհետև կրնան ժողովուրդին շատ բարիք կամ չարիք

ընել, անոր համար պէտք է որ «կարող մարդիկ՝ Աստուծոյ վախոյ՛ղ՝ ճշմարտասէր « ազահու-թիւնը ատող մարդիկ » ըլլան . բարեմիտ և բարեսիրտ մարդիկ . որ մէկուն՝ մէկալէն աւելի աչառութիւն չընեն , որ մէկու մը երեսպաշտութիւն չընեն , որ ծուռ դատաստան կտրելու համար կաշառք չուտեն :

Դ . Անոնք պէտք է վարձատրեն արգարները և սպառ-ժեն չարերը , ամէն մարդոց իրաւունքը և ապրանքը պաշտպանելով , անանկ որ չարութիւն ընողներն իրենց մէ վախնան , և բարիները քաջալերութիւն առնեն . որ այսպէս իրենց երկիրը բարեհամբաւ ըլլայ ու յաջողութեամբ յառաջ երթայ . և ժողովուրդը հանգիստ և ուրախ ըլլայ :

8 . Ժողովուրդին պարտաւորութիւնը :

Հոռոյթ . ԺԻ . 1—14 :

Հ . Որովհետև իշխանները մեր աղէկութեանը համար դրուած Աստուծոյ պաշտօնեաներն են , ուստի պէտք չէ որ պատուէնք և յարգենք անոնք :

Պ . Հրամարեա : Ե Պէտ . Ի . 17 : Երասի . ԻԴ . 21 :

Հ . Հրամանն ունինք մեր իշխանները վար զարներու կամ անոնց դէմ խօսելու :

Պ . Չէ՛ . Ինչու որ դրուած է, թէ « Դատաւորները մի հայհոյեր, և քու ժողովուրդիդ իշխանը մի անիծեր » : Եւեց ԻՎ . 28 : Եւ դարձեալ՝ « Ուստի հատուցէք պէտք եղածը ամենուն . որուն որ տուրք պիտեւէ՝ տուրքը, որուն որ մաքս՝ մաքսը, որուն որ վախ՝ վախնալը, որուն որ պատիւ՝ պատիւը » : Հոով՝ ԺՎ . 7 : Մատթ . ԻՎ . 21 : ԺԵ . 24—26 :

Հ . Բարի քաղաքացին ինչով կը ճանչցուի :

Պ . Իշխաններուն հնազանդելովն ու քաղաքին ամէն օրէնքները բռնելովը :

Հ . Մենք օրէնքին հնազանդելէն ՚ի զատ՝ ուրիշներն ալ համոզելու պարտաւոր ենք :

Պ . Հրամերես :

Հ . Ե՛ն որ օրէնքը կ'աւրէ՛ հնազանդիր՝ մարդասպանութիւն ու գողութիւն կ'ընէ, արժան չէ՞ որ բռնուի և օրէնքին հրամայածին պէս պատժուի :

Պ . Հրամերես : Ի Օրէն . ԻԵ . 1—3 :

Հ . Ուստի աղէկ բան է որ գող մը կամ մարդասպան մը ազատենք, ծածկելով իր եղած տեղը և իր փախչելուն օգնելով :

Պ . Ը՛կ . քանզի այսպէս՝ քաղաքին ասլահու վուժեանը կը վնասենք :

Հ . Մեր իշխաններուն համար աղօթելու յատուկ հրաման մը եղած կայ մեզի :

Պ . Հրամարես : « Ըրդ՝ կ'աղաչեմ . ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել , խնդրուածք , աղաչանք , դոհուժիւն՝ ամէն մարդոց համար , Տանտանդ թագաւորներուն և բոլոր իշխանաւորներուն համար . որ խաղաղ ու հանդարտ կեանք վարենք՝ բոլորովին աստուածպաշտութիւնով ու պարկեշտութիւնով : Ենչու որ ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջև » : Ե ՏԻՏ . Ի . 1—3 :

—

Ա . Ժողովուրդին պարտաւորութիւնն է իրենց իշխանները պատուել և յարգել . անոնք Աստուծոյ սպասաւորներն են . ուստի պէտք է որ Ժողովուրդը իշխաններուն սրտին ու յարգը ճանչնայ , արժանաւոր գովութիւն տալով իրենց պաշտօնին մէջ ցըցուցած աղէկ վարքերնուն համար . ու իրենց երբեմն ըրած պակասութիւննին և մուսցկոտութիւննին ալ ծածկելով : Անոնց վրայով նախապաշարմունքներ ունենալէն և գէշ լուրեր լսելէն՝ պէտք է վախճին , և ամէն ինչ որ կ'ընեն կամ կ'ըսեն , զգուշանան իրենց իշխաններուն պատուոյն դպչելէն :

Բ. Պէտք է որ ժողովուրդը երկիւղածութիւնով և կատարելապէս հնազանդի քաղաքին օրէնքին և իշխաններուն : Ան՝ որ իշխանները վար կը դարնէ և օրէնքը կ'անարգէ , բոլոր իր քաղաքակից ժողովուրդին դէմ կը մեղանչէ . նաև կը մեղանչէ մեր Տէր Յիսուսին կրօնքին դէմ՝ որ կը սորվեցունէ մեզի հնազանդ ըլլալ ամէն անոնց՝ որոնք մեղ կառավարելու իշխանութիւն ունին :

Գ. Մենք չէ՛ թէ միայն օրէնքին հնազանդելու ենք , հապա նաև ջանք ընելու ենք բոլոր մեր քաղաքակիցներն ալ մեզի պէս հնազանդեցունելու : Ու երբսոր մէկը օրէնքն անարգէ՝ գողութիւն, սպանութիւն կամ ինչ և իցէ չարագործութիւն ընելով, պէտք չէ որ մենք մեր օգնութիւնովն անիկայ պաշտպանենք կամ փախցունենք քանզի ասանկով քաղաքին ապահովութիւնը և համբաւը կ'աւրուի :

Դ. Աստուած կ'ուզէ մեզմէ որ , չէ՛ թէ միայն յարգութիւն տանք և հնազանդիկնք իշխաններուն , հապա նաև աղօթք ընենք անոնց համար , որ Աստուած օրհնէ անոնք , և անոնց ընտանիքները . որ բարի իշխաններ ըլլան , աստուածավախ , իրենց պաշտօնը հաւատարմութիւնով կատարող , ժողովրդոց աղէկութիւնը վրնաբոցող , անանկ որ՝ ամէն խաղաղութիւնով մենք ալ մարդոց ու Աստուծոյ մեր ունեցած պարտաւորութիւնն ինչ աղէկ կատարենք :

ՄԱՍՆ Ե

ԵԿԵՂԵՑԻՒՆ ՎՐԱՅ

Ե . Աստուծոյ Եկեղեցիին Ինչ ըլլալը :

Ծննդ . ԺԷ . Գաղ . Գ :

Հ . Ո՞վ էր ան մարդը՝ որ ամէն « հաւատացեալներուն Հայրը » կոչուեցաւ :

Պ . Աբրահամ նահապետը : Հոով՝ Գ . 11, 12, 16 :

Հ . Քրիստոսի զալուստէն քանի՞ տարի առաջ՝ անոր տրուեցաւ աս անունը :

Պ . Երկու հազար տարիի չափ առաջ :

Հ . Երբոր Աստուած Աբրահամին հետ ուխտ ըրաւ ու անիկայ « Հայր հաւատացելոց » անուանեց՝ անոր ինչ խոստմունք ըրաւ :

Պ . « Քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ Աստուած ըլլամ » : Ծննդ . ԺԷ . 7—19 : ԻԸ . 13, 14 : ԵԼԵԳ ԺԹ . 3—6 : Գ Կաթ . ԻՅ . 12 : ԻԹԿ . ԺԸ . 36 : ՍԻԿ . Է . 78—20 . Սարկ . Ժ . 14 : Գործ . Ի . 38, 39 :

Հ . Քանի՞ մասերէ կը բաղկանար ան խոստմունքը :

Պ . Երկու . մէկը ժամանակաւոր և մէկալը

Հողևոր : Եբր․ ժ․ 8—16 : Գաղ․ Գ․ 6—29 :

Հ․ Ո՞րն էր խոստմունքին ժամանակաւոր մասը :

Պ․ Բազմաթիւ զաւակներ ունենալը, և Բանանու երկիրը ժառանգելը :

Հ․ Ո՞րն էր խոստմունքին Հողևոր մասը :

Պ․ Աստուած՝ Իսրայելի ժողովուրդին ուխտով Աստուածն ըլլալը․ և Աբրահամի սերունդէն Փրկիչ մը ծնանիլը, որով երկրի ամէն ազգերը օրհնուին :

Հ․ Եւ աս ուխտը՝ որ Աստուած Աբրահամին հետ ըրաւ, յաւիտենական ուխտ մը պիտի ըլլար Աստուծոյ եկեղեցիին հետ :

Պ․ Այո՛, անոր Հողևոր մասին նայելով յաւիտենական էր : Ծննդ․ ժ․ 5—7 : Հոովճ․ Գ․ 9—17 : Գաղ․ Գ․ 6—29 :

Հ․ Երբոր Աբրահամ հաւատաց Աստուծոյ և Անոր հետ ուխտ ըրաւ, ան ատենը Աստուած ինչ ընել հրամայեց Աբրահամին՝ իբրև մէկ նշան մը և կնիք մը աս ուխտին :

Պ․ Հրամայեց անոր՝ Թլփատութիւն ընել իր մարմինին ու իր զաւկրներուն մարմինին վրայ : Ծննդ․ ժ․ 10—14 : Հոովճ․ Գ․ 11 :

Հ . Ըն ատեն որ Աստուծոյ եկեղեցին հաստատուեցաւ, Աբրահամէն ու անոր սերունդէն զատ ուրիշներն ալ կրնային ընդունուիլ ան եկեղեցիին մէջ :

Պ . Հրամարես . հաւատացեալ Հեթանոսներն ալ կրնային ընդունուիլ : Կենդ . ժ. . 12—14 : Եսայ . ժ. . 1—10 : Կ . 1—22 : Կ.Օ . 12 : Գործ . Ի . 38 , 39 : Եփես . Ի . 12—22 : Հռոմ . ժ. . 8—12 :

Հ . Ընոնք ինչ կերպով կրնային եկեղեցիին մէջ մտնել :

Պ . Իրենց ու զաւկրներնուն թլփատուելու վր : Եւեյ ժ. . 48 , 49 : Թաւոց ժ. . 14—16 :

Հ . Ուրեմն ինչ էր թլփատութիւնը :

Պ . Թլփատութիւնը՝ եկեղեցիին մէջ ընդունուելու և անոր անդամն ըլլալու նշան մըն էր :

Հ . Եկեղեցիին մէջ ընդունուելու նշանը հիմա ալ անիկայ է :

Պ . Չէ՞ . հիմա Մկրտութիւնն է ան նշանը : Մատթ . Ի . 19 , 20 :

Հ . Թլփատուող տղայքն ալ եկեղեցիին անդամները կը սեպուէին :

Պ . Հրամարես : Կենդ . ժ. . 14 :

Հ . Աստուծոյ եկեղեցին՝ որ ասանկ հաս-

տատուեցաւ, արդեօք Մովսէսի և ուրիշ մար
դարէններուն բոլոր ժամանակը և մինչև Քրիս-
տոսի ժամանակը շարունակ տեւեց :

Պ . Հրամերես : Գործ . Լ . 37, 38 : Ե կորնթ .
Ժ . 1—11 : Մաղաք . Գ . 1—4 :

Հ . Քրիստոս՝ իր աշխարհք դալուն՝ խափա-
նեց արդեօք իրեն հաստատած եկեղեցին :

Պ . Չէ, հասկա շարունակեց և աւելի կա-
տարեալ ըրաւ անիկայ : Մատթ . Ի . 43 :
Հուով . Գ . 11—17 : Ժ . 16—29 : Գաղ . Գ .
17—29 : Եփես . Գ . 6 .

Հ . Ուստի քրիստոնէական եկեղեցին՝ ան
նոյն Աստուծոյ տեսանելի եկեղեցին է, որ
Աբրահամին օրերէն մինչև հիմա երկրիս
վրայ կը կենայ :

Պ . Հրամերես, և մի և նոյնը պիտի ըլլայ
մինչև աշխարհիս վերջը : Եփես . Գ . 31 :

Հ . Ի՞նչ կ'իմանանք տեսանելի եկեղեցի ը-
սելով :

Պ . Կ'իմանանք երկրի վրայ եղող ամէն ազ-
գաց մէջ գտնուած ան անձինքը՝ որ Քրիս-
տոսի կրօնքը կը դաւանին :

Հ . Քրիստոսի կրօնքը դուրսէն դաւանողնե-
րուն ամէնքն ալ ճշմարիտ քրիստոնեայ են :

Պ . Չէ :

Ո՛չ թէ ամէն մէկը՝ որ ինծի, Տէ՛ր Տէ՛ր, կ'ըսէ, պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը. հասա անիկայ որ իմ երկնաւոր Հօրս կամբը կը կատարէ: Շատերը ան օրը ինծի պիտի ըսեն. Տէ՛ր Տէ՛ր, չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, և քու անունովդ դէւեր հանեցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք: Եւ ան ատենը անոնց յայտնապէս պիտի ըսեմ, թէ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար. մէկ դի գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք: Մատթ. Է. 21—23: Բայց դուք մարմնով չէ՛ք, հասա հոգիով՝ թէ որ Աստուծոյ հոգին ձեր մէջը բնակած է. իսկ թէ որ մէկը Քրիստոսի հոգին չունի, անիկայ անորը չէ՛: Հոռով. Ը. 9: Բայց ոչ իբր թէ Աստուծոյ խօսքը գէտինը ինկած է. քանզի չէ՛ թէ ամէն Իսրայէլէն եղողները Իսրայէլացի են: Հոռով. Թ. 6:

Հ. Մենք կրնա՞նք մարդոց սիրտերը քննել, և անյակէս գիտնալ թէ որո՞նք ճշմարիտ քրիստոնէայ են, և որո՞նք չեն:

Պ. Չէ՛. միայն Աստուած է որ եկեղեցիին ճշմարիտ ու սուտ անդամները կրնայ մէկզմէկէ որոշել: Պ. Թագ. Ժ. Թ. 18:

Հ. Ուրեմն կրնա՞նք ըսել թէ Քրիստոս անստանէլի եկեղեցի մըն ալ ունի երկրիս վրայ:

Պ. Հրամարեա. Քրիստոս եկեղեցի մը ունի երկրիս վրայ՝ որ իր մէջը կը պարունակէ բո-

լոր ճշմարիտ հաւատացեալները, և ոչ ուրիշները. և քանզի մենք չենք կրնար հաստատորոշել թէ որոնք են անոր ճշմարիտ անդամները, անոր համար կը կոչենք անիկայ անսէսանելի եկեղեցի :

Հ. Բայց ճշմարիտ հաւատացեալները յայտնի չէն ըլլար իրենց վարքէն, ինտոր որ ծառը կը ճանցուի իր պտուղէն :

Պ. Ընչուչա. մէկը չկրնար ճշմարիտ հաւատացեալ ըլլալ, առանց յայտնի ընելու անիկայ իր վարքովը. բայց կեղծաւորները կրնան իրենց վարքին մէջ վարպետութեամբ մը ինքզինքնին ճշմարիտ հաւատացեալներուն պէս ցուցնել, անանկ որ՝ մարդիկ չեն իմանար անոնց կեղծաւոր ըլլալը :

Հ. Երկրիս վրայ ո՛ր և իցէ մասնաւոր եկեղեցի մը կրնայ պահանջել թէ ինքն է մի միայն հաւնողիէ եկեղեցին :

Պ. Չէ. քանզի հաւնողիէ (καθολικη) բառը կը նշանակէ ընդհանուր. և հետեւապէս անչուչա տեսանելի կաթուղիկէ եկեղեցին կը պարունակէ ամէն ազգի մէջ բոլոր Քրիստոնէական կրօնքը դաւանողները :

Հ. Ուրեմն ո՞րն է ան մէկ ճշմարիտ, Սուրբ կաթուղիկէ և Ըռաքելական եկեղեցին :

Պ . Լիսեաանելի եկեղեցին է . քանզի միայն անիկայ սուտ անդամ մին ալ չընդունելէն զատ՝ կը պարունակէ իր մէջը Քրիստոսի մարմինին բոլոր ճշմարիտ անդամները՝ որոնք իր շողիովը սրբուած են և մէկզմէկու հետ մէկ եղած են, Քրիստոսի իրենց Վլխոյն հետ մէկ եղած ըլլալուն համար :

Հ . Ըստուած իր եկեղեցիին բարւոք կառավարութեանը համար ի՞նչ կանոն տուաւ :

Պ . Սուրբ Վիրքը տուաւ, որ մի միայն և ա մենաբաւական կանոն է հաւատոյ և վարուց համար :

Ա . Աստուծոյ եկեղեցին թէ հին և թէ նոր կտա կարանին ժամանակը մի և նոյն եկեղեցին է . միայն թէ Քրիստոսի ժամանակը աւելի ծաղկեցաւ եկեղեցին՝ Աստուծոյ կամբին գիտութեամբը և ամէն տեսակ շնորհքովը : Քրիստոս իր եկեղեցին բոլորովին կառարեւոյցործեց վարդապետութեամբ և կանոններով :

Բ . Ճշմարիտ կրօնքը դաւանողներուն չէ թէ ամէնը ճշմարիտ քրիստոնեաներ են . ոչ ալ կրնան մարդիկ ճշմարիտ և սուտ աշակերանները ստուգութեամբ մէկզմէկէ որոշել : Աստուած միայն գիտէ ամէն մարդու սրտին խորհուրդը, և սխալ յայանէ անիկայ վերջին օրը :

Գ . Երբոր մենք երկրիս վրայ Քրիստոսի եկեղեցին փնտրունք, կը տեսնենք մեծ բազմութիւն զանազան ազգերու մէջ, որ կը դաւանին թէ Քրիստոսի վարդապետութեամբ իրենց վարդապետութեանը համար ի՞նչ կանոն տուաւ :

պետութիւնները կ'ընդունին և անոր հրամաններուն հնազանդ են : Աս բազմութիւնը Կէսանէլի եկեղեցի կը կոչուի , քանզի յայտնի կ'երևնայ մարդոց աչքին առջեւ . բայց անիկայ կը պարունակէ նաև շատ անձինք ալ , որ ճշմարտապէս քրիստոնեայ չեն :

Իսկ Քրիստոս երբոր երկինքէն վար կը նայի մարդոց որդիներուն վրայ՝ խսկոյն կը տեսնէ ան ամէնը որ սրտով կը հաւատան և փրկուելու են : Ահա աս բոլոր հաւատացեալներէն՝ և արդէն փրկուած սուրբերէն կը բաղկանայ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին : Ուստի՝ որովհետև անհնարին է մարդոց՝ որոշել աս եկեղեցին , անոր համար կ'ըսուի անԿէսանէլի եկեղեցի :

Դ . Կը հաւատանք Մէկ , Սուրբ ու Կաթողիկէ և Առաքելական եկեղեցիին , որ է մարմին և հարան Քրիստոսի , որ փրկուած է բուն Քրիստոսի անձին արևնովը (Գործ . Ի . 28 : Յայտ . Ե . 9) , որ է սին և հաստատութիւն ճշմարտութեան (Ա ՏԻՎ . Գ . 15) , և դժոխքին դռները երբէք չյաղթեն անիկայ . բայց աս եկեղեցին (Գող . Գ . 7) , կազմուած է միայն անոնցմէ , որոնք որ Քրիստոսի աշակերտներն են ճշմարտապէս , սրտով , և ոչ լոկ անդնով :

Ե . Եկեղեցին մէկ է , և սակայն շատ մասեր ունի , ինտոր որ մարմինը շատ անդամներ ունի . անիկայ կը բաղկանայ զանազան ժողովուրդներէ կամ մասնաւոր եկեղեցիներէ , և կը պարունակէ իր մէջը զանազան ամբողջ ազգէր : Աս մասնաւոր եկեղեցիներէն մէկ քանին ճշմարտութեան ճամբուն մէջ շիտակ կը քալեն . ոմանք

քիչ մը հեռացած են անկէ . և ուրիշներն ալ գրեթէ բոլորովին ասպականած ու կործանած են Ճմարտութիւնը . ինչպէս որ ըրին Սարգիսցւոց եկեղեցին , Լաւո գիկէի եկեղեցին և Գաղատացւոց եկեղեցիները առաքելոց ժամանակը : Յայտ . Գ . 1 , 16 , 17 : Գաղ . Ա . 6—9 : Եկեղեցի մը ճմարիտ և սուրբ ու կենդանի եկեղեցի ըլլալու համար՝ հարկաւ աս չորս յատկութիւնները սլիտի ունենայ : Նախ՝ ճմարիտ հաւատացելոց ժողով մը . երկրորդ՝ Աստուծոյ Բանին հաւատարիմ քարոզութիւնը . երրորդ՝ Սրբազան խորհրդոց ուղիղ մատակարարութիւնը . և չորրորդ՝ Քրիստոսի տանը կառավարութեան վայելուչ գործադրութիւնը : Մէկ եկեղեցի մը՝ Քրիստոսի ճմարիտ եկեղեցին ըլլալուն՝ ասանցմէ զատ ուրիշ հարկաւոր նշաններ չկան :

Չ . Ուստի պարտինք գովաբանել Աստուած՝ որ իր եկեղեցին երկրիս վրայ հաստատեց ու միշտ կը խնամէ անիկայ , որ է երկրիս աղը , աշխարհի լոյսը , և ան խմորը որ բոլոր զանգուածը սլիտի խմորէ . Աստուած՝ միայն իր եկեղեցիին համար կը խնայէ աս ապականեալ աշխարհիս , ու անոր երկայնամիտ կ'ըլլայ : Ծննդ . ԺԼ . 23—33 : Ա կորն . Գ . 21 , 22 : Բ կորն . Գ . 15 :



Ի • Եկեղեցւոյ պաշտօնեաներուն վրայ :

Գործ • Ի • 13—38 :

Հ • Երբոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս երկինք համբարձաւ, ի՞նչպէս հող տարաւ սուրբերուն հաստատութեանը համար, պաշտօնին գործքին համար, և իր մարմինին՝ այսինքն եկեղեցիին շինութեանը համար :

Պ • « Ինքը մէկ քանին տուաւ առաքեալներ ըլլալու, մէկ քանին մարգարէներ, մէկ քանին աւետարանիչներ, մէկ քանին հովիւներ ու վարդապետներ » : Եփե՞ • Ի • 11 • 42 :

Ճ • Ըստնք ամէնն ալ տւողական պաշտօններ են :

Պ • Չէ՞. առջի երկուքը տւողական չեն :

Հ • Ինչէն յայտնի է թէ առաքելական և մարգարէական պաշտօնները տւողական չեն :

Պ • Վասն զի Ըռաքելոց դարէն ՚ի վերքնաւ մէկը « առաքելի նշաններ » չընէր, ո՛չ ալ ապացոյց մը կու տայ աստուածային յայտնութեամբ սորվեցունելու, ինչպէս որ մարգարէները սորվեցուցին :

Յիրաւի ձեր մէջը առաքելի նշաններ գործուեցան

ամէն համբերութիւնով, նշաններով, և սքանչելիքներով, ու զօրութիւններով: Բ Կորնթ. ԺԲ. 12: Ա Կորնթ. ԺԴ. 29, 30, 32, 33:

Հ. Որո՞նք են Մեծատարանիչները:

Պ. Մեծոնք կ'ըսուին աւետարանիչ՝ որ Քրիստոս չգիտցուած տեղուանքը Մեծատարանը քարոզելու և նոր եկեղեցիներ հաստատելու համար՝ քաղաքէ քաղաք կը պտրտին: Գործ. Ը. 5, 35, 40: ԻԵ. 8:

Հ. Մեծատարանին մէջ ի՞նչ կ'անուանուին աւանոնք՝ որոնց յանձնուած է առաքեալներուն և աւետարանիչներուն աշխատութեամբը հաստատուած եկեղեցիներուն հոգը:

Պ. Մեծոնք զանազան անուններով կ'անուանուին, իրենց զանազան պաշտօններուն համեմատ:

(Ե) Որովհետեւ անոնք Քրիստոսի հօտին վերատեսուչներն են, կը կոչուին Եպիսկոպոսներ:

Զգուշացէ՛ք ձեր անձերուն և բոլոր հօտին, որուն վրայ հոգին Սուրբ ձեզ տեսուչ (**) զրաւ՝ Աստուծոյ

(*) Յոյն բնադիրը աս տեղ (ἐπισκόπος) կ'ըսէ, որ կը նշանակէ՝ Եպիսկոպոսներ, այսինքն՝ վերատեսուչներ. վանս զի (ἐπί) կը նշանակէ վրայ, և (σκοπέω) կը նշանակէ՝ նայիլ:

Եկեղեցին հովուելու, որն որ իր արինովը ստացաւ :
Գործ . Ի . 28 :

(Ի) Որովհետև անոնց պարտաւորութիւնն է ծանրաբարոյ, խոհեմ և բարի օրինակ ըլլալ հօտին, և աղէկ կառավարել Քրիստոսի եկեղեցին, կը կոչուին Երէցներ :

Եւ Մեղիտոսէն մարդ խրկեց Եփեսոս՝ ու եկեղեցին երէցները (ա) կանչեց : Գործ . Ի . 17 : ԺԵ . 23 : Ա Պեք . Ե . 1 :

(Ի) Որովհետև անոնք կը կերակրեն ժողովուրդը հոգևոր կերակուրով, կը կոչուին Հովիւներ :

Աստուծոյ հօաը որ ձեր մէջն է՝ արածեցէ՛ք, վերա կացու ըլլալով չէ՛ թէ ահամայ՝ հապա կամաւ . չէ՛ թէ անարդ շահատնգրութեամբ, հապա յօժարութեամբ . չէ՛ թէ վիճակներուն վրայ տիրելով, հապա հօտին օրինակ ըլլալով . և հովուապետին երևցած ատենը փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք : Ա Պեք . Ե . 2, 3, 4 : Եփե . Դ . 11 :

(Ի) Որովհետև անոնք կը ծառայեն Քրիստոս

(ա) Յոյն բնագիրը աս տեղ (πρεσβυτέρους) կ'ըսէ, որ կը նշանակէ ծերեր, այսինքն՝ ծանրաբարոյ կամ յարգելիներ : Վարդացոյը կրնայ աս քսաներորդ գլուխը բանալ, ու կարդալով իմանալ՝ թէ եպիսկոպոս և երէց անունները մի և նոյն մարդոց կը տրուի :

սի իր եկեղեցիին մէջ, կը կոչուին Պաշտօնեաներ :

Ուրեմն ո՞վ է Պօղոսը՝ կամ ո՞վ է Ապօղոսը • պաշտօնեաներ էն, որոնցմով հաւատացիք, և ինտոր որ Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն : Ա Կորնթ . Գ . 5 :

(Ե) Որովհետեւ անոնք Մատուծոյ պատգամաւորներն են, կը կոչուին եկեղեցիին Հրեշտակները :

Եօթը աստղերուն խորհուրդը՝ որ իմ աջ ձեռքիս մէջը տեսար, և Եօթը ոսկեղէն աշտանակները • ան Եօթը աստղերը՝ Եօթը եկեղեցիներուն Հրեշտակներն են • և Եօթը աշտանակները Եօթը եկեղեցիներն են : Յայտ . Ա . 20 :

(Զ) Որովհետեւ անոնք խրկուած են Մատուծոյ կամքը մեղաւորներուն յայտնելու, և ազաչելու անոնց՝ որ Քրիստոսի միջնորդութիւնովն Մատուծոյ հետ հաշտուին, կը կոչուին Վեսպաններ :

Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կ'ընենք, իբրև թէ Ատուած կը բարեխօսէր մեզմով • կ'ազաչենք յեղի Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէ՛ք Ատուծոյ հետ : Բ Կորնթ . Ե . 20 :

Հ • Ուրիշ ի՞նչ եկեղեցական պաշտօնեաներու կարգ յիշուած է Սուրբ Գրոց մէջ՝ եպիսկոպոսներուն հետը :

Պ . Սարկաւազներուն կարգը :

Պօղոս ու Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառաները, Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն՝ որ Փիլիպպեցւոյ կողմէն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւազներով: Փիլիպ. Ա. 1 : Ա Տե՛մ . Գ. 2, 8 :

Հ . Ընծնք ի՞նչ բանի համար ընտրուեցան :

Եւ ան օրերը աշակերանները որ շատցան՝ Հելլենացեաց կողմէն արտունջ մը եղաւ Եբրայ'ցւոյ դէմ . ինչու որ իրենց որբեւարիները ամէն օրուան ողորձութեան մատակարարուելուն մէջ անտես կ'ըլլային : Եւ տասուերկուքը կանչեցին աշակերաններուն բաղմունքիւնը՝ ու ըսին . Մեզի չվայէր Աստուծոյ խօսքը ձգել, ու սեղաններու ծառայութիւն ընել: Ուստի եղբայրներ՝ ձեզմէ եօթը հոգի ընտրեցէ՛ք՝ Բարի վկայուած՝ Հոգւով Սրբով և իմաստութիւնով լեցուն, որ զանոնք աս գործիս վրայ դնենք . Եւ մենք աղօթքի ու Աստուծոյ խօսքին պաշտօնին պարապինք : Եւ աս խօսքը բոլոր բաղմունքեան առջև հաճոյ երևցաւ . ու ընտրեցին Ստեփաննոսը՝ հաւատքով և Հոգւով Սրբով լեցուն մարդ մը, ու Փիլիպպոսը, ու Պրոքորոնը, ու Նիկանովրան, և Տիմոթէան, ու Պարմենան, և Նիկողայոս նորահաւատ Անտիոքացին . Ասոնք առաքեալներուն առջև կոյնեցուցին . անոնք ալ աղօթք ընելով՝ ձեռքերնին անոնց վրայ դրին : Գործ . 2 . 1—6 :

Հ . Որ և իցէ մէկը որ փափաքի, կրնայ իր վրայ առնուլ Հովուական պաշտօնը :

Պ . Չէ : Ի Կորնթ . Ե . 18—20 : Ե . Տիմ . Ե . 12 :

Հ . Ո՛վ պիտի կանչէ անիկայ աս պաշտօնին :

Պ . Ըստուած :

Երբոր ասոնք Տէրոջ պաշտօնին մէջն էին՝ և ծով կը պահէին, Հոգին Սուրբ ըսաւ . Չատեցէք ինծի Բանաբասը և Սօլոսը ան գործին համար, որուն Էս կանչեր էմ ասոնք : Գործ . ԺԳ . 2 : Չգուշայէք ձեր անձերուն և բոլոր հօտին, որուն վրայ Հոգին Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ Աստուծոյ եկեղեցին հովուելու, որն որ իր արիւնովը ստացաւ : Գործ . Ի . 28 : Թ . 15 : Եփես . Գ . 7, 8 : Հռոմ . Ա . 1 :

Հ . Մէկ մարդ մը ինչպէս պիտի գիտնայ թէ ինքը Ըստուծոյ կը կանչուի աս պաշտօնին :

Պ . Ե . Երբոր ներքին փորձառութեամբ կ'իմանայ իր սրտին նորոգուելը Ըստուծոյ շնորհօքը, և իր մտքին լուսաւորուելը Քրիստոսի գիտութեանը մէջ :

Ի . Երբոր ջերմեռանդ փափաք մը կ'ունենայ աս պաշտօնին, չէ՛ թէ իր աշխարհային կամ մարմնաւոր օգուտին համար, հապա Ըստուծոյ փառքին և Հոգիներուն փրկութեանը համար :

Գ • Երբոր ամբողջ կ'ունենայ հարկ եղած հանգամանքները • ինչպէս՝ մարմնոյ և մտաց առողջութիւն, սորվեցունելու կողմանէ յաջողակութիւն, դուրսէն եղողներէն բարի վկայութիւն, և իր քրիստոնէայ եղբայրներուն հաւանութիւնը : Գաղ • Ե • 15, 16 : Գործ • Ժ • 1—3 : Ե Տե՛՛մ • Գ • 1, 2 :

Հ • Ի՞նչ է հոգեոր Հովիւներուն մեծ պարտաւորութիւնը :

Պ • Ըբթուն մնալ հոգիներուն համար :

Ձեր առաջնորդներուն մօտիկ ըրէք, և անոնց հնազանդ կեցէք • ինչու որ անոնք ձեր հոգիներուն համար կը հսկեն, որպէս թէ հաշիւ պիտի տան, որ խնդութիւնով ընեն ան գործը, և չէ՛ թէ հառաչելով, որ ան ձեզի օգտակար չէ : Եբր • ԺԳ • 17 : Եւէի • Գ • 17—21 :

Հ • Ուրեմն խիստ երևելի և հարկաւոր չէ՞ անոնց կատարելու գործը :

Պ • Երկրիս վրայ բնաւ մէկը անոնց ունեցած գործին պէս հարկաւոր գործ մը չունի կատարելու :

Ինչու որ մենք Աստուծոյ առջևը Քրիստոսին անուշ հոտն ենք՝ փրկուածներուն մէջ և կորսուածներուն մէջ • ոմանց մահուան հոտ գէպի մահ, և ոմանց կենդանութեան հոտ գէպի կեանք • աս բաներուն ո՞վ բաւական է : Բ Կորնթ • Բ • 15, 16 :

Հ . Որովհետև անոնց գործն այնքան մեծ է, և անոնց հաշիւը որ պիտի տան Աստուծոյ՝ այնքան ահեղ, ուրեմն ի՞նչ հանգամանքներու տէր ըլլալու են անոնք :

Պ . Պէտք է որ անոնք ըլլան սուրբ՝ բարե- նախանձ և հաւատարիմ իրենց պաշտօնին մէջ . և պէտք է որ գիտութիւն ունենան, և կարող ըլլան ողջամիտ վարդապետութիւնը սորվեցունելու և քարոզելու :

Հ . Ի՞նչպէս կարգուելու է մէկը աս պաշտօնին :

Պ . Ըլօթքով՝ ու երէցներուն ձեռնադրու- թեամբը :

Անհոգ մի ըլլար քու վրադ եղած պարզին վրայով, որ մարդարէութեամբ քեզի տրուեցաւ՝ երէցներուն ձեռքերը +*+ վրադ դրուելովը : Ա ՏԻՏ . Դ . 14 : Բ ՏԻՏ . Ա . 6 :

Հ . Իսկ մէկը որ ձեռնադրուած է, ի՞նչպէս մէկ մասնաւոր եկեղեցիի մը վրայ կրնայ հովիւ կարգուիլ :

Պ . Պէտք է որ ան եկեղեցիին ազատ կամ քովն ընտրուի, ու պէտք է որ քովի եկեղեցիներուն Հովիւներն ալ հաւանութիւն տան :

Հ . Սուրբ Գրոց մէջ աս երկու բաներուն վրայով յատուկ կանոն մը կայ :

Պ . Չէ՛ . բայց կրնան յայտնի խնայուիլ Սուրբ Գրոց մէջն ըսուած բաներէն : Կախ՝ եկեղեցիին ազատ ընտրութեանը կարևոր ըլլալը անկէջ յայտնի է՝ որ առաքելութեան պաշտօնին համար ընտրուած երկու անձինքը (Գործ . Ե . 15—23) նմանապէս Խօթը սարկաւազները (Գործ . Թ . 3) եղբայրներուն բովանդակ ժողովէն ընտրուեցան : Երկրորդ՝ բովի եկեղեցիներուն Հովիւներուն հաւանութիւնը պէտք ըլլալը անկէջ յայտնի է՝ որ թէ պէտ ժողովուրդն ընտրեց ան սարկաւազները , բայց առաքեալներուն կ'իյնար անոնք կարդելը (Գործ . Թ . 6) . և աս յայտնի է նաև ան պատուէրներէն որ Տիմոթէոսի և Տիտոսի տրուեցան , աղէկ նայելու իրենց ձեռնադրելու անձանց հանգամանքներուն : Ե. Տիմ . Գ . 1—11 : Ե . 22 : Տիտ . Ե . 5—9 :

Հ . Եկեղեցին ինչպէս վարուելու է իր հոգևոր Հովուին հետ :

Պ . Մեծ սէր և պատիւ ցուցնելու է անոր : Ձեզն կ'աղաչենք եղբայրներ՝ որ ճանչնաք ձեր աշխատատեղերը ու վերահացուները Տէրոջմով , ու ձեզն խրատ տուողները . և անոնք մեծապէս պատուեցէք սերով իրենց դորձքին համար : Ա. Թեո . Ե . 12 , 13 : Աղէկ վերահացութիւն ընող երէցները կրկին պատուոյ

արժանի թող սեպուին . մանաւանդ անոնք՝ որ կ'աշխատին խօսքը Կարգուիլ ու սորվեցընելով : Ա ՏԻՒԵ . 17 :

Հ . Եկեղեցին պարտաւոր չէ՞ անոր իշխանութեանը հնազանդելու :

Պ . Հրամներես . որչափ որ անիկայ Աւետարանին համեմատ կը սորվեցունէ :

Յիշեցէ՛ք ձեր առաջնորդները՝ որ Աստուծոյ խօսքը ձեզի խօսեցան , և անոնց վարմունքին վախճանին նայելով իրեն : հաւատքին նմանող եղիք : ԵՔԵ . ԺԳ . 7 : Ձեր առաջնորդներուն մօտի՛կ ըրէք , ու անոնց հնազանդ կեցէք . ինչու որ անոնք ձեր հոգիներուն համար կը հսկեն , որպէս թէ հաջիւ պիտի տան . որ խնդուծիւնով ընեն ան գործք , և չէ թէ հառաչելով , որ ան ձեզի օգտակար չէ : ԵՔԵ . ԺԳ . 17 : Թէ որ մեկը ձեզի գայ՝ ու աս վարդապետութիւնը չբերէ , անիկայ տուներնիդ մի ընդունիք , և անոր Բարև մի ըսէք : Բ ՅՈՒՆ . 10 : Սիրելիներ՝ ամեն հոգիի մի հաւատաք . հասա հոգիները փորձեցէ՛ք թէ արդեօք Աստուծմէ՞ են . ինչու որ աշխարհիս մէջ շատ ուտ մարգարէներ ելած են : Ա ՅՈՒՆ . Դ . 1 : Փիւղ . Բ . 29 : Ա ԹԵՍ . Ե . 12 , 19 :

Հ . Հովիւին գործին մեծութեանը նայելով՝ եկեղեցին յատկապէս ի՞նչ պարտի ընել անոր համար :

Պ . Պէտք է որ շարունակ աղօթք ընէ ա-

նոր համար, և կրցածին չափ ջանք ընէ անոր օգնելու :

Չեղի կ'աղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, ու Հոգւոյն սիրովը, որ ինձի հետ պատերազմակից ըլլաք Քէր աղօթքներուն մէջ առ Աստուած ինձի համար : Հոմ. ԺԵ. 30 : Բ Կորն. Ա. 41 : Եփես. 2. 18, 19 : Կող. Գ. 3 : Աթէս. Ե. 25 : Բթէս. Գ. 1, 2 : Եբբ. ԺԳ. 18, 19 :

Հ. Եկեղեցիին սլարտաւորութիւնը և արտօնութիւնն է հոգևոր Հովուին պէտք եղածը հոգալու և նայելու որ անիկայ բանի մը կարօտ չըլլայ :

Պ. Հրամներես, որ այնպէս անիկայ կարող ըլլայ իր բոլոր ժամանակը և ուշադրութիւնը իր ժողովուրդին տալու, իբրև անոնց հովիւր :



Քրիստոնէական եկեղեցւոյ հաստատութեանը համար՝ երկու տեսակ արտաքոյ կարգի քարոզիչներ եղան, որոնք «Սուրբ Հոգիէն շարժուած խօսեցան» . այսինքն՝ Առաքեալները և Մարգարէները . և իրենց սրբազան վարդապետութեանցը վրայ եկեղեցին հաստատուեցաւ, Յիսուս Քրիստոս ինքն ըլլալով անկիւնին գլուխը : Ասպաշտօնեաները տևողական չմնացին եկեղեցիին մէջ, քանզի առաքելոց դարէն 'ի վեր՝ բնաւ մէկը առաքեալի

նշան ըրած չէ, ոչ ալ մարդարէի մը պէս հողւոյն Սըրբոյ ներշնչութեան ապացոյց մը տուած է : Եւ յիրաւի Քրիստոսի բովանդակ վարդապետութիւնը՝ անգամ մը կատարելապէս յայտնուելէն ու հաստատուելէն և ՚ի գիր անցնելէն ետև՝ այլ ևս հարկ չէր որ աս պաշտօնները շարունակուէին :

Առաքեալներուն հետ ուրիշ աշխատողներ ալ կային Աւետարանիչ ըսուած, որոնք առաքեալներուն պէս մէկ տեղէն մէկալը կ'երթային կը պտըտէին Աւետարանը, քարոզելով և եկեղեցիներ հաստատելով : Ասոնք տևողական են և պիտի մնան մինչև որ բոլոր ազգերը Քրիստոսի վարդապետութիւնն իմանան ու սորվին :

Բայց եկեղեցիին շնութեանը և հաւատացելոց հաստատութեանը համար, Առաքեալներն ամէն եկեղեցւոյ մէջ մարդիկ կարգեցին, որ Աստուծոյ հօտին հսկեն և հոգևոր կերակուրով սնուցանեն անիկայ : Աս անձինքը՝ որոնց պաշտօնը տևողական պիտի ըլլար, իրենց կատարելու զանազան պաշտօններուն համեմատ՝ զանազան անուններ ընդունեցին ինչպէս՝ Երէցներ, Եպիսկոպոսներ, Հովիւներ, և այլն : Եւ աս անուններէս կ'իմացուի թէ անոնք օրինակ ըլլալու են հօտին և միանգամայն խրատելու և կառավարելու են անիկայ . և թէ անոնք հոգևորապէս արթուն մնալու են, խնամք տանելու են անոր վրայ, և կերակրելու ու սնուցանելու են անիկայ ողջամիտ վարդապետութեամբ :

Սարկաւագներ ալ սահմանուեցան որ աղքատներուն

հոգ տանին և եկեղեցւոյ աշխարհային գործքերուն նային :

Հովիւները՝ որ Սուրբ Գրոց մէջ կ'անուանուին նաև երէցներ , եպիսկոպոսներ , պաշտօնեաներ , և այն , շատ ծանր՝ երևելի և հարկաւոր պաշտօն մը ունին :

Ա . Աստուած է որ նախ իր շնորհօքը՝ և երկրորդ իր նախախնամութեամբը կը կանչէ անոնք աս բարձրագոյն և սուրբ պաշտօնին : Իբ նորհօքը իբ կանչէ անոնք՝ երբոր կը նորոգէ անոնց սիրտերը և կը յօժարեցընէ անոնք ամէն բանէն աւելի աս պաշտօնիս ցանկալու : Իբ նախախնամութեամբը իբ կանչէ անոնք՝ երբոր կու տայ անոնց՝ մարմնոյ և մտաց առողջութիւն , բարեպաշտ և խելացի բարեկամներու հաճութիւն և հաւանութիւն իրենց ձեռնադրութեանը համար , ապրուստի միջոցներ , և աս պաշտօնին համար հարկաւոր գիտութիւններ սորվելու պատեհութիւններ : Եւ երբոր անոնք այսպէս պատրաստ կ'ըլլան , ան ատենը հրատարակաւ և հանդէսով կը կարդուին իրենց պաշտօնին մէջ՝ աղօթքով և ձեռնադրութեամբ :

Բ . Անոնց մեծ պարտաւորութիւնն ան է որ ջանան իրենց մեղսակից եղբարցը հոգիները փրկելու : Ասիկայ դուխ հանելու համար պէտք է որ անոնք՝ թէ՛ հրատարակաւ և թէ՛ առանձին , ողջմտութեամբ Աստուծոյ Աւետարանը քարոզեն և սորվեցունեն ամէն տեւտակ և ամէն աստիճանի մարդոց , ամէն ատեն , ամէն պարագայի մէջ և աշխարհի ամէն քաղաքներուն մէջ :

Գ . Պէտք է որ անոնք ըլլան ճշմարտապէս բարե-

պաշտ մարդիկ, աղօթասէր, ուսումնասէր, ողջամիտ վարդապետութիւն ունեցող, անարատ, խաղաղարար և ծանրաբարոյ . անձնուրաց, ողորմած, հեղահոգի, իրենց ատուերուն արէկ վերակացու եղող և ամէն բանի մէջ ինքզինքնին բարի գործքերու օրինակ ընող :

Դ . Եկեղեցւոյ պաշտօնեաները թագաւորաց թագաւորին գեսպաններն են . իրենց գործը ոչ միայն ժամանակի այլ և յաւիտենականութեան կը վերաբերի : Անոնք Աստուծոյ գործիքներն են աշխարհս լուսաւորելու և փրկելու : Ահա՛ աշխարհիս բոլոր երեւի գործքերէն գերազանցն սա է :

Ե . Եկեղեցին՝ այսինքն հաւատացեալները պէտք է որ սիրեն և պատուեն իրենց հովիւները, հնազանդին անոնց խրատին և իշխանութեանը՝ քանի որ անոնք Տէրոյմով խօսին . աղօթք ընեն անոնց համար, անոնց ծանր պաշտօններուն մէջ ձեռնաու ըլլան անոնց, և անոնց բաւական ապրուստն իրենք հոգան :

Գ . Եկեղեցւոյ անդամներուն վրայ :

1 . Թէ ե՞րբ մէկ մարդ մը յարմար է եկեղեցիին
մէջ ընդունուելու :

Գաղ . Ե . 16—26 :

2 . Ե՞րբ մէկ մարդ մը յարմար կ'ըլլայ ե-
կեղեցիին մէջ ընդունուելու :

Պ . Երբոր հաւատայ Քրիստոսի՝ իր բոլոր
սրտովը :

Եւ Փիլիպպոս ըսաւ անոր . Թէ որ քու բոլոր սր-
տովդ կը հաւատաս , կարելի է . անիկայ պատասխան
տուաւ՝ ու ըսաւ . Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս
սը Որդի Աստուծոյ է : Գործ . Ը . 37 : Մարի . ԺԶ . 10 :

3 . Ի՞նչպէս յայտնի կ'ըլլայ , երբոր մէկը
աս հաւատքը կ'ունենայ :

Պ . Հաւատացեալին գաղափարներուն ,
զգացումներուն և գործքերուն վրայ տես-
նուած հաւատքին ներգործութենէն :

Նաև կրնայ մէկը ըսել՝ թէ Դուն հաւատք ունիս ,
ես ալ գործքեր ունիմ . դուն քու հաւատքդ ցուցուր
ինձի առանց գործքերու , ու ես քեզի ցուցնեմ իմ
հաւատքս իմ գործքերէս : Յակ . Բ . 18 :

4 . Երբոր մէկ մարդ մը իր բոլոր սրտովը

Հաւատայ Քրիստոսի, անատենը ի՞նչ փոփոխութիւն կ'ըլլայ անոր վրայ :

Պ . Իր սիրտը կը մաքրուի, և ինքը մէկ նոր արարած մը կ'ըլլայ :

Հոգին սուրբը տալով անոնց՝ ինչպէս որ մեզի ալ . ու մէկ խորութիւն մը չըրաւ մեր ու անոնց մէջը, հաւատքով անոնց սիրտերը մաքրելով : Գործ . ԺԵ . 9 : Աւրեմն թէ որ մէկը Քրիստոսի մէջ է, անիկայ նոր ստեղծուած մըն է . հիները անցան, և ահա ամէն բան նոր եղաւ : Բ Կորնթ . Ե . 17 : Ա Յովն . Գ . 3 : Գաղ . Ե . 6 : Զ . 15 : Եփես . Գ . 20—24 :

Զ . Ի՞նչ էր Քրիստոսի դիտաւորութիւնը իր եկեղեցիին ունենալու հանգամանացը վրայով :

Պ . Քրիստոսի կամքն ան էր որ անիկայ սուրբ ու անարատ եկեղեցի մը ըլլայ :

Էրեկներ՝ սիրեցէ՛ք ձեր կնիկները, ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մասնեց անոր համար . որ զանիկայ սրբէ ու մաքրէ աւազանին ջրովը՝ խօսքով . որ ինքը իր դիմացը փառաւոր կեցունէ եկեղեցին՝ որ մէկ արատ մը կամ խորշոմութիւն կամ ուրիշ անոնց պէս բան մը չունենայ . հասլա որ սուրբ ու անարատ ըլլայ : Եփես . Ե . 25—27 : Որ մեզ ամէն անօրէնութենէ ազատէ, ու մաքրէ իրեն սեպհական ժողովուրդ ընէ՝ բարի գործքերու նախանձաւոր : Տիմ . Բ . 14 : Գործ . Բ . 47 :

Հ . Քրիստոս ինչ կը պահանջէ երկրիս վրայի իր եկեղեցիին բոլոր անդամներէն :

Պ . Կը պահանջէ որ անոնք իր փառքն ու պատիւը ցուցնեն և լուսաւորներու պէս երևնան աշխարհիս մէջը :

Որ ըլլաք ամբիժ ու անարատ Աստուծոյ որդիներ առանց մեղադրանքի՝ կամակոր ու խոսորեալ ազգին մէջ, որոնց մէջը դուք լուսաւորներու պէս կը փայլեք աշխարհիս մէջ : Փիւլի . Բ . 16 : Բայց դուք ընտիր ցեղ մըն էք, [Թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեպհական Ժողովուրդ մը, որ բարոյէք անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց : Ա . Պէր . Բ . 9 :

Հ . Աստուած կը հաճի՞ որ իր եկեղեցիին անդամ ընդունուի անանկ մէկը՝ որ անկեղծութեամբ զղջացած չէ՝ և սրտով հաւատաւ ցած չէ արդարութեան :

Պ . Չէ :

Սակայն Աստուած ամբարշտին կ'ըսէ : Քեզի ինչ՞ որ դուն իմ օրէնքներս կը պատմես, ու իմ ուխտս բերանդ կ'առնես : Ասան զի դուն խրատը ատեցիր, ու իմ խօսքերս ետիգ ձգեցիր : Սաղմ . Ծ . 16, 17 :

Հ . Շահ մը կ'ունենանք մէկը հաւատացելոյ ընկերութեանը մէջ մտնելէն և Տէրոջը Սեղանին հաղորդ ըլլալէն, քանի որ իր սիրտը ուղիղ չէ Աստուծոյ առջևը :

Պ . Չէ :

Դուն ատ բանին մէջ մասն ու բաժին չունիս . ինչու որ քու սիրտդ Աստուծոյ առջևը շիտակ չէ : Ուստի ատ քու չարութենէդ զեղջի եկուր , ու Աստուծոյ աղաչէ՛ . գուցէ ներուի քեզի քու սրտիդ չոր խորհուրդը : Ինչու որ ես քեզ մաղձի դառնութեան մէջ՝ և անիրաւութեան կապին մէջ կը տեսնեմ : Գործ . Ը . 21—23 :
Վասն զի ան որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ , իր անձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ . ինչու որ Տէրը մարմինը չորոշեր : Ա Կորնթ . ԺԱ . 29 : Գործ . Ե . 1—5 :

Հ . Ի՞նչպէս կրնայ իմանալ մէկը թէ իր սիրտը նորոգուած և մաքրուած է հաւատքով :

Պ . Իր նորոգուած և մաքրուած գաղափարներէն , զգացումներէն և շարժումներէն :

Ասով գիտենք թէ մենք անոր մէջը կը բնակինք՝ ու անիկայ մեր մէջը , որ իր հոգիէն մեզի տուաւ : Ա Յովն . Դ . 13 : Հովն . Ը . 14—16 : Բ Կորնթ . Ա . 22 :

Հ . Ըսանկ մէկը ի՞նչ զգացում կ'ունենայ առ Յիսուս մեղաւորաց Փրկիչը :

Պ . Կը սիրէ անիկայ ամէն բանէն աւելի , և կը վստահի անոր՝ իր բոլոր սրտովը :

Ան որ դուք չտեսած՝ սիրեցիք , որ անիկայ հիմա չէք տեսներ , բայց հաւատացիք , և ուրախ էք ան-

սրտոմեղի ու փառաւորեալ խնդութիւնով : Ա Պեփ . Ա . 8 : Մենք զանիկայ կը սիրենք . ինչու որ առաջ անիկայ մեզ սիրեց : Ա Յովն . Դ . 19 :

Հ . Ընիկայ ի՞նչ զգացում կ'ունենայ իր մեղքերուն վրայ :

Պ . Կը տրտմի անոնց վրայ , կը խոստովանի և մէկ դի կը ձգէ անոնք :

Ուրեմն ան ժամանակը ի՞նչ պտուղ ունէիք ան բա ներէն՝ որոնցմով հիմա կ'ամչնաք . ինչու որ անոնց վերջը մահ է : Հոով . 2 . 21 : Ամէն ո՞վ որ Աստուծո՞ւ ծնած է , մեղք չգործեր , ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ , ու չկրնար մեղք գործել , քանզի Աստուծո՞ւ ծնած է : Ա Յովն . Գ . 9 : Բ Կորնթ . Է . 10 . Սաղմ . ԼԲ . 5

Հ . Եւ իր բոլոր կենացը մէջ ի՞նչ բան ընելու փափաք ու դիտաւորութիւն կ'ունենայ :

Պ . Ըստուած սիրելու ու անոր ծառայելու : Բ Կորնթ . Ե . 14 , 15 : Փիլիպ . Ե . 21 :

Հ . Ըսանկ մէկու մը ամենասիրելին ո՞վ սիրտի ըլլայ :

Պ . Ըստուած :

Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ . երկրի վրայ ալ քեզմէ ուրիշը չեմ ուզեր : Իմ մարմինս ու սիրտս կը մաշին . Բայց Աստուած իմ սրտիս զօրութիւնը ու իմ բաժինս է յաւիտեան : Սաղմ . ՀԳ . 25 , 26 :

Հ . Ուրեմն անիկայ պիտի սիրէ՞ աղօթքը ընելը, Աստուածաշունչ կարդալը և եկեղեցի երթալը . պիտի սիրէ՞ նաև Աստուծոյ բոլոր ժողովուրդը :

Պ : Հրամաւերես :

Ասով ամէնը պիտի դիտնան՝ թէ իմ աշակերտներու էք, թէ որ իրարու վրայ սէր ունենաք : Յովն . ԺԳ . 33 : Թէ որ մէկը ըսէ՝ թէ Ես Աստուած կը սիրեմ, ու իր եղբայրը ատէ, անիկայ ստախօս է . քանզի ան որ իր եղբայրը չսիրեր՝ որ կը տեսնայ, Աստուած՝ որ չտեսներ, ինտո՞ր կրնայ սիրել : Ա Յովն . Դ . 20 : Հապա անոր կամքը Աստուծոյ օրէնքին մէջն է, և ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ : Սաղմ . Ա . 2 : Գործ . Թ . 11 : Սաղմ . 2Դ . 1—4 :

Հ . Թէ որ մէկը ըսէ թէ ինքը աս բարի զգացումները և սրտի նորոգութիւնն ունի, ինչէ՞ն պիտի իմացուի թէ անիկայ իսկապէս անանկ նոր սիրտ մը ունի :

Պ . Անոր սուրբ վարք մը ունենալովը :

Ե՛ղբայրներ՝ ես չեմ սեպեր որ բռներ եմ . բայց մէկ բան մը կայ, որ ետևի եղածները մոռցած եմ, ու առջևի եղածներուն կը դիմեմ . Նպատակը դիտելով՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչմանը մըը ցանազին կը վազեմ : Փիլիպ . Գ . 13, 14 : Եբբ . ԺԲ . 1, 2 :

Հ . Երբոր ասանկ մէկը մեղքի մէջ լինայ, ի՞նչ զգայութիւն կ'ունենայ :

Պ . Կ'ամենայ և կը տրտմի Աստուծոյ առջև :

Եւ Պետրոս միտքը բերաւ Յիսուսին խօսքը որ իրեն ըսէր էր , թէ՛ Դեռ հաւը չխօսած՝ իրէք անգամ պիտի որանաս իս . ու գուրս ելլելով՝ դառնապէս լացաւ : Մատթ . ԻԶ . 75 : Սաղ . ԾԱ :

Հ . Եւ ինչպէ՞ս կը ճանչցուի մէկ ծառի մը աղէկ կամ գէշ ըլլալը :

Պ . Իր պատուղէն : Մատթ . Լ : 18—20 : Յօդ . ԺԻ : 15, 21—23 :

Ա . Անոնք որ կու գան Քրիստոսի եկեղեցիին անգամ ըլլալու կը փափաքին , պէտք է որ ամէնքն ալ վերստին ծնած և Ճշմարտապէս Աստուծոյ դարձած ըլլան :

Բ . Ճշմարտապէս նորոգուածները երկու եղանակաւ կրնան գիտնալ իրենց տխրապէս ըլլալը . իրենց զգացումներէն և իրենց գործքերէն : Թէ որ անկեղծութեամբ կը տրտմիս քու մեղքերուդ համար , և կ'ատես ու կը խոստովանիս և մէկդի կը ձգես անոնք , թէ որ զգալով քու կորսուած ըլլալդ՝ փրկութեան համար քու բոլոր յոյսդ ամենօրհնեալ Փրկչին քառութեանը և արգարութեանը վրայ կը դնես , թէ որ քու բոլոր սրտովդ կը սիրես Աստուած , և կը փափաքիս յաւի-

տեան Անոր ծառայելու, թէ որ կը սիրես աղօթք ընել և Աստուծոյ խօսքը կարդալ և ըսել. թէ որ կ'ուզես ամէն մարդու հետ խաղաղութեամբ ապրիլ և մանաւանդ Աստուծոյ ժողովուրդին հետ ընկեր ըլլալ. ամէն բանէն վեր թէ որ կը ջանաս ամէն օր յառաջ երթալ և աճիլ սա ամենուն մէջ, և կը արտմիս երբոր չես յառաջ երթար, ան ատենը կրնաս աղէկ յոյս մը ունենալ թէ գուն նոր սիրտ մը ունիս, և ան ատենը կրնաս քու անձդ մատուցանել եկեղեցիին՝ որ քեզ ընդունի իրեն անդամներուն կարգը :

Գ. Ներիաւները, այսինքն՝ պոռնիկները, կռապաշտները, շնացողները, իզացեալները, արուազէտները, գողերը, ագահները, գինովները, բամբասողները, և յափշտակողները ու ամէն ասանկները, Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն :

Հետևապէս ասանկ անձինքը վայելուչ չէ քրիստոնէական եկեղեցի մը մէջ անգամ ընդունիլ, մինչև որ անոնք չուսացունին, չարբունին ու չարդարանան մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը, ու մեր Աստուծոյ հոգւովը : Ա կորնթ. Զ. 9—11 :

Դ. Եկեղեցւոյ վերատեսուչները պարտին մեծ փութով և ուշագրութեամբ քննել և փորձել ան անձինքը՝ որոնք եկեղեցւոյ անդամ ընդունուիլ կ'ուզեն : Եկեղեցիին խաղաղութիւնը՝ երջանկութիւնը և զօրութիւնը՝ անոր սուրբ և անարատ ըլլալէն կախում ունի :

2 . Թէ ինչո՞ւ ճշմարիտ քրիստոնեայ մը կը ցանկայ Աստուծոյ տեսանելի եկեղեցիին մէջ մտնելու :

Պ . Գ . Ժ . 16—35 : Սողմ . Ն Ի Բ . 1—9 :

3 . Երբոր մէկը ճշմարիտ հաւատացեալ մը կ'ըլլայ, ինչո՞ւ համար կը ցանկայ Աստուծոյ տեսանելի եկեղեցիին մէջ մտնելու :

Պ . Ե . Անոր համար որ Քրիստոս այնպէս հրամայեց :

Անհաւատներուն հետ օտարխառն լծակից մի ըլլաք . քանզի ինչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ . և ինչ հաղորդութիւն ունի ըստ՝ խաւարին հետ . և ինչ միաբանութիւն ունի Քրիստոս Բեղիարին հետ : Վամ ինչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ . և ինչ յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կոոց հետ : Վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք, ինչպէս որ Աստուած ըսաւ, Թէ Անոնց մէջը պիտի բնակիմ, ու անոնց մէջը պիտի քալեմ, և անոնց Աստուած պիտի ըլլամ, ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան : Ասոր համար ելէք անոնց մէջէն, ու զատուեցէք, կ'ըսէ Տէրը . և պիղծ բանի մի դպչեք . ու ես ձեզ պիտի ընդունիմ . և ես ձեզի Հայր պիտի ըլլամ, ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝ կ'ըսէ Ամե-

Նակալ Տէրը : Բ Կ ր Ն Թ . 2 . 14—18 : Մ ֊ ֆ Թ . Ի Ը . 19 ,
20 : Գ ֊ ր Ժ . Բ . 33 , 41 , 47 :

Բ . Ը ն որ համար որ կը ցանկայ Ը ստուծոյ
ժողովուրդին վայլած օրհնութիւններուն
հաղորդ ըլլալու :

Յիշէ զիս՝ ո՛վ Տէր , քու ժողովուրդիդ վրայ ոսնէրած
հաճութեանդ համեմատ , ինձի այցելութիւն ըրէ քու
փրկութիւնովդ : Որ քու ընտրեալներուդ բարութիւնը
տեսնեմ , քու ազգիդ ուրախութիւնովը ուրախանամ .
քու ժառանգութիւնովդ պարծենամ : Սաղմ . ԾՁ .
4 , 5 :

Գ . Ը ն որ համար որ կը ցանկայ նաև յայտ-
նի ընեւ աշխարհի թէ ինք՝ Տէրը իրեն Ը ս-
տուած ընդունած է , և թէ անիկայ կը պաշ-
տէ :

Բոլոր սրտով Տէրը պիտի դովեմ ուղիղներուն ժու-
ղովքին ու ժողովուրդին մէջը : Սաղմ . ԾԺԱ . 1 : Ա-
քու վկայութիւններդ թագաւորներուն առջին պիտի խօ-
սիմ , և պիտի չամչնամ : Սաղմ . ԾԺԹ . 46 : Յե .
ԻԴ . 15 :

Հ . Թ է որ մենք ամօթ սեպենք մարդոց
առջևը Յիսուս Քրիստոսը դաւանելու , ասկից
ի՛նչ պիտի հեաւեի :

Պ . Ը ն իկայ ալ ամօթ պիտի սեպէ մեզ իր
հօրը և սուրբ հրեշտակներուն առջևը խոս-
տովանիլը :

Վասն զի ո՛վ որ իս՝ ու իմխօսքերս դասանիլև ամօթ սեպէ աս շնացող ու մեղաւոր ազգիս մէջ, Որգին մարդոց ալ անիկայ դասանիլ ամօթ պիտի սեպէ՝ երբոր դայ իր հօրը փառքովը սուրբ հրեշտակներուն հետ : Մարկ. Ը . 38 : Ղուկ . ԺԲ . 8, 9 : Բ ՏԵՃ . Բ . 12 :

Հ . Եւ թէ որ մէկը Աստուած կը սիրէ, պիտի չսիրէ նաև անոր ժողովուրդը և պիտի չփափաքի անոնց ընկեր ըլլալու :

Պ . Հրամարեա :

Ես ընկեր եղայ ան ամենուն որ քեզմէ կը վսինան, ու քու հրամաններդ կը սահեն : Սաղմ . ՃԺԹ . 63 : Ա ՅԳՅ . Դ . 20 :

Հ . Կը հաւատաս թէ եկեղեցիին մէջ մտնելդ պիտի փրկէ քեզ :

Պ . Չէ :

Չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք, ե՛ղբայրներ, որ մեր հայրերը ամէնքն ալ ամպին տակն էին, ու ամէնքն ալ ծովէն անցան, և ամէնքն ալ Մովսէսով միրտուեցան ամպին ու ծովին մէջը : Եւ ամէնքն ալ նոյն հոգևոր կերակուրը կերան, ու ամէնքն ալ նոյն հոգևոր խմելքը խմեցին . ինչու որ կը խմէին ան հոգևոր վէմէն՝ որ անոնց հետը կ'երթար, ու ան վէմը Քրիստոս էր . բայց չէ՛ թէ անոնցմէ շատերուն հաւնեցաւ Աստուած . ինչու որ անապատին մէջ փռուած ինկան : Ա Կորնթ . Ժ . 1—5 : Գործ . Ե . 1—5 : Մարկ . Ի . 21—23 :

Հ . Երբոր անգամ մը եկեղեցիին մէջ կը

մտնենք, կրնա՞նք հանդարտ նստիլ՝ կարծելով թէ եկեղեցւոյն մէջ ըլլալովնիս անշուշտ պիտի փրկուինք :

Պ . Չէ, վասն զի եկեղեցի մտնելնիս՝ մեր քրիստոնէական պատերազմին միայն սկզբնաւորութիւնն է :

Ան որ կը յաղթէ, իմ հետս իմ աթոռս նստել պիտի տամ անոր . ինտոր որ ես ալ յաղթեցի՝ ու իմ հօրս հետ անոր աթոռը նստայ : Յայտ . Գ . 21 : Ուստի իմ սիրելիներս՝ ինչպէս որ ամէն ատեն հնազանդ եղաք՝ ոչ միայն իմ ներկայութեանս, հասպա ալ աւելի հիմա՝ իմ բացակայութեանս ատենը, ահով ու գողով անձերնուդ փրկութիւնը գործեցէ՛ք . ինչու որ Աստուած է՝ որ ձեր մէջը կը ներգործէ կամենալն ու ընելը իր հաճութեանը համար : Փիլիպ . Բ . 12, 13 . Ղուկ . ԺԳ . 24 : Մատթ . Է . 13, 14 : Յովն . ԺԶ . 33 : Ա Վարդ . Թ . 21—27 : Փիլիպ . Գ . 7—21 : Եբր . ԺԲ : 1 : Բ Տէմ . Գ . 12 : Յով . Ա . 2 :

Ա . Անոնք որ կը սիրեն Աստուած՝ պարտաւոր են Անոր եկեղեցիին յարելու . քանզի ինքն այնպէս կը հրամայէ : Եւ այնպիսի անձինք մեծ ուրախութիւն ունին Քրիստոսը դաւանելով մարդոց առջևը, անոր աշակերտներուն կարգը մտնելով և անոնց հետ մէկտեղ պահելով ան ամէն բաները որ ինքք պատուիրելու է :

Բ. Շատ անգամ բան մըն է եկեղեցւոյ անդամ ըլլալը . շատ մեծ ու դժուարին բան մըն է քրիստոնէական կեանք մը վարելը : Ուստի ո՛վ որ Քրիստոսի եկեղեցիին անդամ ըլլալ կ'ուզէ, պէտք է որ փորձէ իր անձը երկիւղով զգուշութեամբ և աղօթքով, որ չըլլայ թէ եկեղեցիին մէջ մտնէ անարժան պատճառներէ շարժուած և առանց ուղիղ զգացումներ ունենալու, և այնպէս՝ թէ՛ իր անձը և թէ ուրիշներունը խարէ, սեպելով թէ ինքը մէկ բան մըն է, երբոր չէ : Գ. 2 . 2 . 3 :

Գ. 2-րդը կեցիր որ չկարծես թէ եկեղեցիին մէջ ըլլալը պիտի փրկէ քեզ : Մինչև անգամ թէ որ եկեղեցւոյ Հովիւները և բոլոր անդամները աղէկ կարծիք ունենան քու բարեսպաշտութեանդ վրայօք, մի վստահիր ան բանին . քանզի անոնք կարող չեն հաստատ ըսել՝ թէ դուն իսկապէս քրիստոնէայ մըն ես : Միայն Աստուած գիտէ ատիկայ . ուրեմն մարդոց դատողութեանը մի կապուիր մնար :

Գ. 2-րդը կեցիր 'սակ' որ չըլլայ թէ եկեղեցիին մէջ ընդունուած ըլլալուդ համար խորհիս թէ՛ քու մեծ գործքդ կատարեր ես, և այնպէս՝ հանգիստ ու անհոգ ըլլաս : Դուն մէկ ասպարէզ մը ունիս վազելու, որ միայն մահը՝ և ո՛չ ուրիշ բան պիտի վերջացունէ անիկայ : Թէ՛ աշխարհիս և թէ Աստուծոյ եկեղեցիին աչքերը քու վրագ դարձած են . շատ բան կը յուսացուի քեզմէ : Փրկչին փառքը՝ քու վարելու կեանքէդ կախում ունի . ուրեմն աս քու վարելու կեանքդ թող սուրբ կեանք մը ըլլայ :

Դ . Մկրտութեան վրայ :

1 . Չափահաս անձանց մկրտութեանը վրայ :

Գործ . Ը . 1—24 :

Հ . Նոր հաւատացեալ մը ի՞նչ խորհուրդով կ'ընդունուի եկեղեցիին մէջը :

Պ . Մկրտութեան խորհուրդովը :

Եւ անոնք որ սրտանց ընդունեցին անոր խօսքերը , մկրտուեցան . ու ան օրը իրեք հազար հոգիի չափ աւելեցան : Գործ . Բ . 41 :

Հ . Մկրտութիւնը որո՞ւն անունովը մատաւ կարարուելու է :

Պ . Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Արբւոյ : Մատն . ԻԸ . 19 :

Պ . Չափահաս մէկու մը մկրտուելովն ի՞նչ կ'իմանանք :

Պ . Կ'իմանանք թէ անիկայ կը դաւանի որ քրիստոնէայ մըն է , և թէ եկեղեցիին անոր դաւանութեանը հաւատալով՝ կ'ընդունի աւսիկայ իր անդամներուն կարգը :

Հ . Բու մկրտութիւնդ ի՞նչ կը ստրվեցունէ քեզի քու սրտիդ վրայով :

Պ . Կը սորվեցունէ թէ իմ սիրտս ընակահաբար ապականեալ և չար սիրտ մըն է :

Յիսուս սրտասխան տուաւ . Ճշմարիտ Ճշմարիտ կը սեմ քեզի . Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու հողիէն չծնանի , չկրնար Աստուծոյ Թագաւորութիւնը մանեւ : Մարմինէն ծնածը մարմին է , ու հողիէն ծնածը՝ հողի է : Յով . Գ . 5 , 6 : Հով . Գ . 2 , 3 , 4 : Ը . 5—8 :

Հ . Եւ քու մկրտութիւնդ ինչ տեսակ սիրտ մը քեզի հարկաւոր ըլլալը կը ցուցընէ որ ճշմարիտ քրիստոնեայ ըլլաս :

Պ . Երբ սիրտ մը : Գործ . Ժ . 9 . 15 : Կող . Բ . 11—13 : Տեա . Գ . 5 :

Հ . Եւ փրկուելու համար որո՞նչ հաւատալ կը սորվեցունէ քեզի քու մկրտութիւնդ :

Պ . Մէր Տէրոջը Յիսուսի Քրիստոսի :

Ապաշխարեցէք , ու ձեզմէ ամէն մէկը մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղաց Թողութեան համար , և հողուոյն Սրբոյ սարգևը սխալ ընդունիք : Գործ . Բ . 38 : Ը . 36—38 : Ժ . 47 , 48 : Ժ . 2 . 30—34 : Գող . Գ . 24—27 :

Հ . Ուստի երբոր մէկը մկրտուի , ինչ կը դաւանի :

Պ . Կը դաւանի թէ ընակահաբար ապականեալ՝ անօգնական և կորսուած է . և թէ սրտի փոփոխութիւն մը ստացեր է , և փրկու-

Թեան համար Յիսուս Քրիստոսի հաւատա-
ցեր է :

Հ . Եւ անիկայ ի՛նչ խոստմունք կ'ընէ մկր-
տութիւնով :

Պ . Կը խոստանայ թէ Մատուած՝ այսինքն
Հայրը՝ Արդին և Հոգին Սուրբը՝ իրեն Մատ-
ուած կ'ընդունի, և թէ իր բոլոր սրտովը պի-
տի սիրէ անիկայ ու պիտի ծառայէ անոր
յաւիտեան : Մատ. Ի. 19 : Հոգ. Գ. 4 :

Հ . Արդ՝ դիցուք թէ ան անձը չէ իմացեր
իր ապականեալ և կորսուած ըլլալը . չէ ստա-
ցեր սրտի փոփոխութիւն մը . բոլոր սրտով
չէ հաւատացեր Յիսուս Քրիստոսի . և անկեղ-
ծութեամբ չէ ընդուներ թէ Մատուած՝ իրեն
Մատուածն է . անատենը մկրտութիւնը օգուտ
մը պիտի ընէ՞ անոր :

Պ . Չէ :

Ինչու որ Քրիստոս Յիսուսով ո՛չ Թլփատութիւնը
բան մըն է, ո՛չ ալ անթլփատութիւնը . հասա նոր
ստեղծուած ըլլալն է բանը : Գաղ. 2 . 13 : Երբոր իրեն
ճամբան կերթային, ջուրի մը քով եկան, ու ըսա-
ներբինն . ահա ջուր, ալ ի՛նչ բան դիս կ'արգիլէ մկրտ-
ուելէն : Եւ Փիլիպպոս ըսաւ անոր . Թէ որ քու բո-
լոր սրտովդ կը հաւատաս, կարելի՛ է . անիկայ պա-
տասխան տուաւ՝ ու ըսաւ . Կը հաւատամ թէ Յիսուս

Քրիստոսը Որդի Աստուծոյ է : Գործ . Ը . 36, 37 : Մարի . Ժ . 2 . 16 :

Հ . Ուրեմն ջուրով մկրտուած ըլլալդ քեզ կը փրկէ :

Պ . Նէ . քանզի մկրտութիւնը վերստին ծնունդ չէ :

Ինչու որ Հրեայ չէ՛ ան՝ որ գրսուանց է , և թըլփատուածիւն չէ՛ ան՝ որ գրսուանց մարմինով է . հասաւ Հրեայ ան է՛ որ ներսուանց է , և թլփատութիւն սրտինը՝ հոգիով , ու չէ թէ գիրով . որուն գովութիւնը չէ՛ թէ մարդիկներէն է , հասաւ Աստուծու : Հոով . Բ . 28 , 29 : Կող . Բ . 11 , 12 : Փիլիպ . Գ . 3 :

Հ . Նկատն անանկ անձինք որ թէպէտև մկրտուած են և եկեղեցիին մէջ մտած , բայց տակաւին ճշմարիտ քրիստոնեայ չեն :

Պ . Հրամերես կան :

Հատերը ան օրը ինձի պիտի ըսեն . Տէ՛ր Տէ՛ր , չէ՛ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք , և քու անունովդ դեւեր հանեցինք , ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք : Եւ ան ատենը անոնց յայտնապէս պիտի ըսեմ՝ թէ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար . մէկ դի՛ գայէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք : Մարի . Ի . 22 , 23 : Փիլիպ . Գ . 18 , 19 :

Հ . Ո՛վ էր ան մարդը որ Փիլիպոսը խա-

բերով մկրտուեցաւ՝ թէև քրիստոնէայ չէր :

Պ . Սիմոն մոզք : Գործ . Ը . 13 : Ե . 1—
11 :

Հ . Տգէտ և խաբուած չէ՞ն անոնք որ կը
կարծեն թէ մարմինը մկրտութեան ջրովը
լուացուելով՝ սրտի փոփոխութիւն կ'ըլլայ :

Պ . Այո՛, տգէտ ու խաբուած են անոնք :

Որ մեզ ալ ան օրինակին պէս մկրտութիւնը հիմա
կ'ապրեցունէ՛ (չէ՛ թէ մարմինն աղտը մեկ դի ձգելը,
հաղա բարի խղճմտանքին վկայութիւնը՝ առ Աստ-
ուած,) Յիսուս Քրիստոսի յարութիւնովը : Ա . Պէր .
Գ . 21 :

Հ . Ի՞նչ պիտի ըլլայ անոնց որ փրկութեան
համար իրենց յոյսը մկրտութեան վրայ կը
դնեն :

Պ . Ընոնք պիտի կորսուին : Փելեպ . Գ . 4
—9 :

Մկրտութիւն կ'ըսուի՝ երբոր ջուրը մկրտուելու է
կող անձին վրայ կը թափուի յանուն Հօր և Որդոյ
և Հոգւոյն Սրբոյ :

Ա . Մկրտութիւնը Աստուծոյ եկեղեցիին մէջ մտնե-
լու հանդիսաւոր արարողութիւնն է հիմակուան ատե-
նըս, ինտոր որ հին ատենը թլփատութիւնն էր ան

արարողութիւնը : Աս երկուքը մի և նոյն խորհուրդ են .
 սարքեր արարողութեամբ : Երբոր մէկը կը մկրտուի ,
 ամէն մարդ կը դիանայ և կը հասկընայ թէ անիկայ
 Քրիստոսի աշակերտ է և անոր եկեղեցիին անդամ :

Բ . Մկրտութիւնը կը սորվեցունէ մեզն՝ թէ մենք
 սպահանաճ և կորսուած ենք . թէ կարօտ ենք Հոգ-
 ւոյն Սրբոյ մեզ նորոգելուն , և Քրիստոսի արեանը
 մեր վրայ թափուելուն . նաև կը նշանակէ թէ մենք ան-
 ձերնիս կը նուիրենք Աստուծոյ և անոր ծառայութեանը :

Գ . Վասն որոյ երբոր մէկը կու գայ և կը մկրտուի ,
 ան գործողութեամբը կը ծանուցանէ թէ ինքը սրտի
 փոփոխութիւն մը արդէն ստանալով , և փրկութեան հա-
 մար արդէն Քրիստոսի հաւատալով հիմա յայտնի կը
 դաւանի անոր կրօնքը , ինքզինքը Աստուծոյ կը նուի-
 ըէ ուխտ ընելով և խօսք տալով որ ինք իր բոլոր սրբ-
 ատիւը պիտի սիրէ Աստուած՝ Հայրը Որդին ու Սուրբ
 Հոգին , ու պիտի ծառայէ Անոր մշտնջենաւորապէս :

Դ . Ուրեմն սորվէ թէ ի՞նչ կը նշանակէ քու մկրտ-
 ութիւնդ : Մեծ զգուշութեամբ քննէ՛ քու սիրտդ որ
 ջըլայ թէ խաբուիս , կարծելով թէ մկրտութեան յար-
 մար եղած ես , որ ատեն չես : Բնաւ ամենեկին վայր-
 կեան մըն ալ մի յուսար թէ մկրտութիւնն ըստ ինք-
 եան քեզ պիտի փրկէ : Շատ մկրտուածներ կան որ
 երբէք փրկուած չեն : Քրիստոսի և Առաքելոց օրերը
 կեղծաւորներ և անձերնին խաբողներ կային , և ան-
 սարակոյս աս օրերս ալ կը դանուին անանկներ :

Ե . Վերջապէս մկրտուած ըլլալով՝ ջանք քրէ ա-
նանկ կեանք մը վարել աշխարհիս վրայ՝ ինտոր որ մկր-
տուած անձանց կը վայէ :

2 . Պզտիկ տղայոց մկրտութեանը վայ :

Ղ Դ—Է . ԺԲ . 1—17 :

Հ . Ըստուծոյ եկեղեցին՝ Քրիստոսի աշ-
խարհ գալէն առաջ կամեալքը , մի և նոյն ե-
կեղեցին է :

Պ . Հրամարեա :

Թէ որ ան ճիւղերէն մէկ քանիները կոտրեցան , ու-
րուն որ վայրենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պատուա-
տուեցար , ու ձիթենիին արմատին և պարարտութեա-
նը հաղորդ եղար , ճիւղերուն դէմ մի պարծենար .
հասա թէ որ պարծենաս՝ չէ՛ թէ դուն արմատը վեր-
բուներ ես , հասա արմատը բեզ : Հոով՝ . ԺԱ . 17 , 18 ,
Կէս նաև 15—32 համարները : Գործ . Է . 37 , 38 : Ա կորնի ,
Ժ . 1—11 : Հոով՝ . ԺԵ . 8—12 : Եփես . Բ . 11—22 :
Գոր . Գ . 15—29 :

Հ . Քրիստոսի աշխարհ գալէն առաջ՝ Ըս-
տուած հրաման ըրեր էր որ պզտիկ տղարէ
ալ եկեղեցին մէջ ընդունուին :

Պ . Հրամարեա :

Եւ ձեր ազգերուն մէջ ամէն ութ օրուան արու զա-
 րակիդ՝ կամ տունը ծնածը, կամ քու սերունդէդ չե-
 ղող բոլոր օտարականներէն ստակով ծախու առնուա-
 ծը՝ Թլփատուի : Ծննդ . ժ . 12 : Կէս նաև 9—13,
 22—27 համարները :

Հ . Ի՞նչ կերպով ու ի՞նչ սահմանադրու-
 Թեամբ ընդունուելու էին անոնք եկեղեցիին
 մէջ :

Պ . Ընոնք Թլփատելով : Ծննդ : ժ . 11 :

Հ . Թէ որ Աստուած անատենը յատուկ
 հրաման ըրաւ որ սղտիկ տղաքն իր եկեղեցի-
 ին մէջ ընդունուին, արդեօք հիմայ ալ սկտք
 է անոնք իր եկեղեցիին մէջ ընդունիլ :

Պ . Հրամարես, քանզի Աստուած երբէք
 ան հրամանը ետ չառաւ :

Հ . Բայց հիմա ի՞նչ կերպով անոնք ընդու-
 նիլ սկտք է եկեղեցիին մէջ :

Պ . Ընոնք մկրտելով :

Հ . Եւ ինչո՞ւ անոնց մարմինները մկրտել
 սկտք է, ու չէ Թէ Թլփատել :

Պ . Քանզի մկրտութիւնը՝ Թլփատութեան
 տեղն անցած է :

Հ . Ի՞նչպէս կրնաս հաստատել Թէ մկր-
 տութիւնը և Թլփատութիւնը մի և նոյն
 սահմանադրութիւն սեպուելու են :

Պ • Քանզի նախ՝ երկուքն ալ կը ցուցընեն սրտի փոփոխուածեան մը հարկաւորութիւնը :

Ուստի ձեր սրտերուն անթլիատուծիւնը թլփատեցէք • ու ձեր սարանոցները ալ մի խտացունէք : Բ Օրին • Ժ • 16 : Եւ քու Տէր Աստուածդ քու սիրտդ և քու որդւոցդ սիրտը պիտի թլփատէ , որպէս զի քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ ու բոլոր հոգիովդ սիրես , որ ապրիս : Բ Օրին • Լ • 6 : Հապա Հրէայ ան է՝ որ ներսուանց է , և թլփատուծիւն սրտինը՝ հոգիով , ու չէ թէ գիրով • որուն գովուծիւնը չէ՛ թէ մարդիկներէն է , հապա Աստուծմէ : Հոով՝ • Բ • 29 : Անոր հետ թաղուեցանք մկրտուծիւնով մահուան համար , որ ինչպէս Քրիստոս Հօրը փառքովը յարուծիւն առաւ մեռելներէն , անանկ ալ մենք կենաց նորոգութեան մէջ պտըալինք : Հոով՝ • Զ • 4 : Տի • Գ • 5 : Երեմ • Գ • 4 : Փիլիպ • Գ • 3 : Յով • Գ • 3—8 :

Երկրորդ՝ երկուքն ալ՝ չափահաս անձանց համար , Քրիստոսի վրայ անոնց ունեցած հաւատքը կը յայտնեն :

Ուստի աս երանութիւնը թլփատուծեան վրայ է , թէ անթլփատուծեան վրայ ալ • քանզի կ'ըսենք՝ թէ հաւատքը Աբրահամին արգարութիւն սեպուեցաւ : Ուրեմն ինտո՞ր սեպուեցաւ • թլփատուծեան մէջ եղած ատենը , թէ անթլփատուծեան մէջ • չէ՛ թէ թլփատուծեան մէջ , հապա անթլփատուծեան : Ու երբեք թլփատուծեան նշանը առաւ՝ իբրև անթլփատուծեան

ատենէն ոսկեցած հաւատքին արդարութեանը մէկ կնիք մը , որ ինքը հայր ըլլայ ան բոլոր հաւատացեալներուն՝ որոնք անթլիատութենէ են , (անոնց ալ արդարութիւն սեպուելու համար ,) և հայր թլիատութեան՝ չէ՛ թէ մինակ թլիատութենէ եղողներուն , հասլա անոնց ալ՝ որ մեր հօրը Աբրահամին անթլիատութեան ատենի հաւատքին շաւիղներուն մէջը կը քալեն : Հոմ.Վ. Դ. 9—12 : Ու երբոր Իբնեց Ճամբան կ'երթային , ջուրի մը քով եկան . ու ըսաւ ներքինին . Ահա ջուր՝ ալ ի՞նչ բան իսկ'արդիլէ միրտուելէն : Եւ Փիլիսպպոս ըսաւ անոր . Թէ որ քու բոլոր սրտովդ կը հաւատաս , կարելի՛ է . անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոսը Որդի Ատուծոյ է : Գործ. Ը . 36, 37 : Գաղ. Դ . 26—29 : Յռ. Ը : 56 : Եբբ . ԺԱ . 13 :

Եւ երբորդ՝ երկուքին ալ հոգևոր իմաստը մի և նոյն է : Կող. Ի . 11, 12 : Գործ. Ի . 38 : Ժ.Օ . 31—34 : Գաղ. Դ . 24—27 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ մեր Փրկիչը պզտիկ տղայոց համար :

Պ . « Բայց Յիսուս անոնք իրեն կանչելով՝ ըսաւ . Թո՛ղ տուէք աս մանր տղոցը որ ինձի գան , և մի արդիլէք ատոնք . ինչու որ Ատուծոյ թագաւորութիւնը ատանկներունն է : Գող. ԺԸ . 16 :

Հ . Երբոր Առաքեալները նորահաւատ մը

Սկրտելու ըլլային, անոր բոլոր ընտանիքն
ալ կը մկրտէին :

Պ . Հրամարեա :

Եւ թիւատիր քաղաքէն ծիրանավաճառ կին մը՝ Լիզիա
անուն, որ աստուածավախ մէկ մըն էր, մտիկ կ'ընէր .
որուն սիրաբը Տէրը բացաւ Պողոսին ըսածներուն ուշա-
գրութիւն ընելու : Ու երբոր մկրտուեցաւ ինքը և իր տու-
նը, աղաչեց ու ըսաւ . Թէ որ իս Տէրոյը հաւատացեալը
կը սեպէք, իմ տունս մտէ՛ք բնակեցէք . և ստիպելով
տարաւ մեզ : Գործ . Ժ. 2 . 14, 15, 26—34 : Ա կորնթ . Ա .
16 : Ղուկ . Ժ. Թ . 9 Բաղդադէ՛ Գործ . Ժ. 2 . 31ին Կեք .

Հ . Հաւատացեալ ծնողքները պարտաւոր
են իրենց զաւակները մկրտութեամբ Մատու-
ծոյ նուիրելու :

Պ . Հրամարեա . վասն զի ասանկ չընելով
Մատուծոյ պատուիրանքը կ'անարգեն և անոր
ուխտը կ'աւրեն :

Եւ անթլխատ արուն՝ որուն անթլխատութեան մար-
մինը թլխատուած չէ, ան անձը իր Ժողովուրդէն պի-
տի կորսուի . անիկայ իմ ուխտս անարգած է : Ծննդ .
Ժ. Ե . 14 :

Հ . Ծնողքները երբոր իրենց զաւակները
մկրտութեամբ Մատուծոյ կը նուիրեն, անոնց
համար ի՞նչ ընելու կը պարտաւորին :

Պ . Կը պարտաւորին Տէրոյը խրատովն ու
վարժութիւնովը մեծցունել անոնք :

Քանզի գիտեմ անիկայ, որ իր որդւոցը ու իրմէն ետքը իր սանը պիտի պատուիրէ, և անոնք արդարութիւն ու իրաւունք ընելու համար՝ Տէրոջը ճամբան պիտի պահեն • որպէս զի Տէրը Աբրահամին վրայ բերէ ինչ որ խօսեցաւ : Ծննդ • ԺԼ • 19 : Եփե • 2 • 4 : Յե • ԻԳ • 15 :

Հ • Եւ ուրիշ ինչ պարտաւորութիւն ունին :

Պ • Ընտնց պարտաւորութիւնն է զաւկընէրնուն միտքը ձգել անտնց մկրտուած ըլլալը, մկրտութեան նշանակութիւնն անտնց մեկնել, և սիրով յորդորել անոնք որ ինքզինքնին Մատուծոյ յանձնեն ու Մատուծոյ եկեղեցիին արժանաւոր անդամներ ըլլան : Եւեց ԺԻ • 26, 27 : Ի ՏԻԺ • Գ • 14, 15 :

Հ • Ընբարեպաշտ ծնողքներուն կամ Մատուծոյ ուխտէն բաժին չունեցող ծնողքներուն զաւկընէրը մկրտել պէտք է :

Պ • Չէ :

Ուստի միաբերնիդ բերէք, որ դուք ատեն մը մարմինով հեթանոսներ ըլլալով, (որոնք անթլխատութիւն կ'ըսուին անոնցմէ՝ որ թլխատութիւն կ'ըսուին մարմնի մէջ ձեռքով եղած,) որ ան ատենը դուք առանց Քրիստոսի էիք, ու հեռացած էիք Իսրայէլի քաղաքակցութենէն, և օտարացած խոսամունքին ուխտերէն, ու յոյս մըն

աւ չունէիք, և աշխարհի մէջ անաստուած էիք: Եփե-
բ. 11, 12:

Հ. Իսկ եթէ պատահի որ մարդ մը ե-
կեղեցիին անդամ եղած ըլլայ, ու անոր կի-
նը անբարեպաշտ ըլլայ. կամ կինը եկեղեցւոյ
անդամ եղած ըլլայ, ու անոր էրիկը անբա-
րեպաշտ ըլլայ. անատենը անսնց մի, հաւատա-
ցեալ եղողը կը պարտաւորի իր զաւկըները
մկրտել տալու:

Պ. Հրամարեա:

Ինչու որ անհաւատ էրիկը սրբուած է կնիկովը, և
անհաւատ կնիկը սրբուած է էրիկովը. ապա թէ ոչ՝
ձեր որդիքը սկսած պիտի ըլլային. բայց հիմա սուրբ
են: Ա Կորնթ. Է. 14:

Հ. Քու մկրտութիւնդ՝ ընականաբար ի՞նչ
տեսակ սիրտ մը ունենալդ կը սորվեցունէ
քեզի:

Պ. Կը սորվեցունէ թէ ասպականած և ըս-
տուծ մէ հեռացած սիրտ ունիմ:

Հ. Քու մկրտութիւնդ ի՞նչ տեսակ սիրտ
մը ունենալու կարօտութիւնդ կ'իմացունէ
քեզի որ ըստուծոյ առջևը ընդունելի ըլլաս:

Պ. Նոր սիրտ մը:

Հ. Եւ վերկուելու համար որուն հաւատալ
կը սորվեցունէ քեզի քու մկրտութիւնդ:

Պ . Յիսուս Քրիստոսի : Գործ . Բ . 37 :

Հ . Ուստի երբոր միտքդ կը բերես թէ քու ծնողքդ Աստուծոյ հրամանովը քեզ մկրտել տուած են , ան ատենն ինչ պարտաւորութիւն ունենալդ կը զգաս :

Պ . Կը զգամ թէ պարտաւոր եմ անոնց խրատին և վարժութեանն ականջ կախել , ու ջանք ընել նոր սիրտ մը ստանալու , և Փրկչին հաւատալու :

Հ . Եկեղեցին ինչ ընել կը պարտաւորի մկրտուած տղայոց համար :

Պ . Անոր պարտքն է միշտ յորդորել ծնողքները որ իրենց զաւկըներուն վրայ ունեցած պարտաւորութիւննին ամբողջ կատարեն . նաև մկրտուած տղայոց վրայ հսկել , անոնց համար աղօթք ընել և անոնք բոլոր ջանքով կըթել աստուածաբաշտութեան մէջ :

Պ . Մկրտուած տղայ մը երբ կրնայ հաղորդութիւն առնել :

Պ . Երբոր կարող կ'ըլլայ Տէրօջը մարմնը որոշելու , ու երբոր Քրիստոսի վրայ հաւատք ունենալու , ու Սուրբ Հոգիին նորոգուած ըլլալու նշանները կը ցուցնէ : Ե . Կորնթ . ԺԵ . 27—29 : Ե . 7 , 8 :

Աստուծոյ եկեղեցին՝ թէ՛ Քրիստոսի աշխարհ գալէն առաջ և թէ՛ անկէց ետքը, նոյն եկեղեցին եղած է և նոյնը պիտի ըլլայ մինչև աշխարհիս վերջը : Աստուած իր եկեղեցիին հետ յաւիտենական ուխտ մը ըրաւ, որ կը պարունակէ ամէն հոգևոր օրհնութիւնները Քրիստոս Յիսուսով : Ինչու որ կ'ըսէ՝ « Քեզի՛ ու քեզմէ՛ ետքը քու սերունդիդ Աստուած ըլլամ » :

Աստուած՝ Աբրահամին հետ ուխտ ըրած ժամանակը՝ թլփատութիւնը տուաւ անոր, իբրև նշան մը և կնիք մը ան ուխտին և հրաման ըրաւ որ հաւատացելոց նոք ծնած զաւակները թլփատուին և եկեղեցիին անդամ ընդունուին :

Արդ՝ Աստուած երբէք չխափանեց աս իր հրամաններ, անոր զօրութիւնը գեռ կը մնայ : Վասն որոյ ուխտին ու եկեղեցւոյ անդամ ըլլալու կնիքը՝ արուելու է ան նոյն անձանց՝ որոնց որ առաջ կը տրուէր, այսինքն՝ հաւատացելոց և անոնց զաւկրներուն :

Ուխտին կնիքը միայն ձևով փոխուած է, բայց ոչ զօրութեամբ : Մկրտութիւնը Քրիստոսի հրամանովը թլփատութեան տեղը տրուած է, բայց երկուքին զօրութիւնը մի և նոյն է, և երկուքն ալ մի և նոյն բաները կը ցուցնեն ու կը նշանակեն :

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս իմացուց թէ պզտիկ տղաք ալ իր թագաւորութեանն անդամներն են :

Առաքեալներուն սովորութիւնն էր հաւատացեալներուն ամբողջ ընտանիքը մկրտել :

Ա . հաւատացելոց հետ Աստուծոյ ըրած ուխտը՝ իր

մէջը կը պարունակէ նաև անոնց զաւկընէրը (Ծննդ . ԺԷ . 7 : Գործ . Բ . 39) , և աս պատճառով անոնց զաւկընէրուն ալ արուելլու է ան ուխտին կնիքը՝ որ նոր օրէնքին մէջ մկրտութիւնն է :

Բ . Աս կարգադրութիւնը Աստուծոյ կողմանէ կը ցուցնէ իր ներողամտութիւնը , իր սէրը և իր ողորմութիւնը որ ունի իր ժողովուրդին ու նաև անոնց զաւկընէրուն վրայ : Քանզի այսպէս՝ Աստուած տարբերութիւն մը կ'ընէ հաւատացելոց ու անհաւատիյ զաւկընէրուն մէջ : Աստուած ինքնակալ Տէր է թէ իր շնորհաց թաղարորութեանը մէջ և թէ իր նախախնա մութեան թաղարորութեանը մէջ :

Գ . Հաւատացեալ ծնողքները չէ թէ միայն կը պարտաւորին Աստուծոյ հրամանո՞լն իրենց զաւկընէրը մղըր աւել տալու , այլ նաև իրենց մեծ արտօնութիւնն է աս բանս : Ի՞նչ սքանչելի խորհուրդ մըն է մկրտութիւնը , որ իր մէջն ունի ամէն միսթարութիւն և խրատ . և ծնողաց սրտին ամէն զգացումները կրնայ շարժել : Ահա անոնք Տէրոջը ժողովուրդին մէջը կայնելով իրենց զաւակը մկրտուելու կը մատուցանեն . և ի՞նչ է ան պզտիկ զաւակը . մարմին է մարմինէ ծնած , և իր բնութիւնը բոլորովին ապականեալ է : Ուստի անոնք աս բանը զգաւով իրենց սրտին մէջ ասանկ կը խօսին . « Շնորհակալ ենք Աստուծոյ՝ իր ուխտին համար . ո՞վ Աստուած , դուն եղ'ր աս մեր զաւկին Աստուածը : Եւ հիմա որ քու ուխտիդ կնիքը կը արուի աս մեր

զաւկին, կը խնդրենք որ ան ուխտին ամէն հոգևոր օրհնութիւններուն օրհնես անկիայ: Փոխէ անոր ապահանեալ սիրտը, և մաքրէ անկիայ Վրիստոսի աբիւնովը, և անկործանելի սիւն մը ըրէ անկիայ քու Լիկեղեցիիդ մէջ յաւիտեան: Ո՛վ Տէր, մեզի ալ շնորհք թուր որ կարող ըլլանք անկիայ մեծցունելու Քեզի համար»:

Ան ատեն անոնք իրենց Աստուծոյ նուիրած զաւա կը ետ կ'ընդունին շնորհակալու և ուրախ սրտով, աբելի Եռանդ մը ու սէր մը ունենալով առ Աստուած, քանզի Անկիայ իրենց ընտանիքին Աստուածն է: Ամանապէս անոնք նոր սիրով մը կը կապուին իրենց մը կըրտուած զաւկին հետ. և կը սկսին ալ աբելի սիրել անկիայ, քանզի ան իրենց անմահ զաւակն է, աւանդի մը պէս իրենց յանձնուած Աստուծոյ ու Էրկինքին համար պահելու:

Ուրեմն անոնք իրենց սրտի զգացումներէն ստիպուելով առ հանդիսաւոր ուխտն ընելու Աստուծոյ ու մաքրոց առջևը, և այսպէս երգում ըրած ըլլալով որ ամէն կերպով հոգ ասնին իրեց զաւկին բարեկրթութեանը, անկիայ վարժեն աղօթքի ու հոգևոր բաներու մէջ, ու շարունակ աշխատին անոր հոգիին փրկութեանը համար, կը յուսաշուի թէ անոնք Աստուծոյ շնորհքովը հաւատարիմ պիտի ըլլան ան զաւկին՝ մինչև ՚ի մահ և ահա սյսպէս առ խորհուրդիս մէջ՝ մարդոց որդիներուն յաւաճապիմութեան և փրկութեան մեծ հիմը կը ձգուի:

Դ • Ո՛րդիներ, միտքերնիդ բերէք թէ ինչ է ձեր, մկրտութիւնը • ինչ է անոր նշանակութիւնը, և անոր միջոցովը ինչ կը պահանջուի ձեզմէ : Բնականաբար ապականած՝ անօդնական և կորսուած էք • սէտք է ձեզին նոր սիրտ մը, առ Աստուած ասպշխարութիւն, և հաւատք Տէր Յիսուս Քրիստոսի վրայ : Դուք հիմա եկեղեցիին անդամներն էք, բուն Աստուծոյ շնորհալի սահմանադրութեամբը • ուստի պարտիք կենդանի և ճշմարիտ անդամներ ըլլալ : Ձեր ամէն սրտովն սկանջ գրէք ձեր ծնողացը, վարժապետներուն ու եկեղեցիին վարժութեանն ու խրատին, և հանապազ աղօթքը ընելով Աստուծոյ, ջանացէք օգուտ քաղել ան խրատներէն : Ամենկին ձեր անձին մի վստահէք • ամենկին հանդարտ մի կենաք որ ատեն ձեր մեղքերուն մէջը կը մնաք • դուք Աստուծոյ նուիրուած էք • դուք ձեր անձին տերը չէք :

Չարհուրելի դատապարտութիւն սխտի կրէ ան զաւակը՝ որ անարգելով իր մկրտութիւնը, Աստուծոյ և եկեղեցիին իր անդամ ըլլալու իրաւունքը, իր բարեպաշտ ծնողացը խրատները՝ հառաչանքները՝ աղօթքները և պաղատանքները, անարգելով նաև եկեղեցիին բարի խնամքն ու հօգը, ու ոտքին տակը կոտորակելով ամէն կերպ սանձերը, մեղաց մէջ կը թաղուի և կ'ընդարէ ան շաւիղը որ մահուան կը տանի :

Ե • Եկեղեցիին վերատեսուչները սէտք է որ արթնութեամբ դիտեն նային թէ ծնողքները հաւատարմու-

Թեամբ կը կատարեն իրենց պարտաւորութիւնը՝ զաւկընէրնին կըթելով, ու անոնց հետ անոնց համար աղօթք ընելով: Անոնք նաև պարտին որոշեալ ժամանակ՝ մէկ տեղ ժողվել եկեղեցիին մկրտուած տղաքը, անոնց վարժութիւն տալու և խրատելու համար, և պարտին միշտ քննել և ուղղել անոնց վարքն ու բարքը:

Զ. Երբոր ծնողքներն ու եկեղեցիներն աղէկ հոգ կը տանին մկրտուած տղայոց վրայ, և իրենց ամէն պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կը կատարեն, մեծապէս կ'օգնեն ան տղայոցը հոգևոր օգտին: Քանզի Աստուած պիտի վարձատրէ անոնց հաւատարմութիւնը՝ ան զաւակները լուսաւորելով ու դարձի բերելով:



Ե. Հաղորդութեան վրայ:

Ե. Կորնթ. ժ.Ե. 23—32:

Հ. Ո՛վ սահմանադրեց Տէրունական Ընթրիքը:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Հ. Ե՛րբ սահմանադրեց անիկայ:

Պ. Ի՞նչ մատնուած գիշերը: Ե. Կորնթ. ժ.Ե. 23:

Հ. Յիսուս Քրիստոս ինչո՞ւ սահմանադրեց Տէրունական Ընթրիքը:

Պ • Չինքը յիշելու և իր մահն ու չար-
չարանքները ցուցնելու համար :

Ասիկայ ըրէք քանի՛ անգամ որ խմելու ըլլաք՝ զիս
յիշելու համար : Այսն զի քանի՛ անգամ որ աս հա-
ցը ուտէք, ու աս դաւաթը խմէք, Տէրոջը մահը կը
պատմէք, մինչև որ ինքը գայ : Ա. Կորնթ. • ԺԱ. 25, 26 :

Հ • Ուրիշ ի՞նչ անուններով կը կոչուի Տէ-
րունական Ր՛նթըիքը :

Պ • Կ'ըսուինաւ, « հաց կտրելը » և « Քրիս-
տոսի մարմինին հաղորդութիւնը » :

Օրհնութեան գաւաթը որ մենք կ'օրհնենք, չէ՞ որ
Քրիստոսի արեան հաղորդութիւնն է . հացը՝ որ մենք
կը կտրենք, չէ՞ որ Քրիստոսի մարմնոյն հաղորդութիւնն
է : Ա. Կորնթ. • Ժ. • 16 : Գործ. • Բ. • 46 : Ի. • 7, 11 :

Հ • Հաղորդութեան ատեն մեր կերածն
ու խմածն ի՞նչ է :

Պ • Լոկ հաց ու գինի :

Եւ հաց առաւ՝ գոհացաւ, կտրեց և տուաւ անոնց՝
ու ըսաւ . Աս է իմ մարմինս, որ ձեզի համար տըր-
բւած է . ասիկայ ըրէք իս յիշելու համար : Նոյն-
պէս ալ գաւաթը առաւ ընթրիքէն ետև՝ ու ըսաւ . Աս
գաւաթը նոր ուխտ է իմ արիւնտլս, որ ձեզի համար
կը թափուի : Ղուկ. • ԻԲ. • 19, 20 :

Հ • Կտրած հացը ի՞նչ բան կը ներկայա-
ցունէ մեզի և ի՞նչ կը նշանակէ :

Պ . Կը նշանակէ Քրիստոսի մարմինը խաչին վրայ մեղքի համար կտրած :

Եւ դոհանալով կտրեց՝ ու ըսաւ . Ըսէք՝ ու կէրէք . սա է իմ մարմինս՝ որ ձեզի համար կը կտրուի . ասիկայ ըրէք իս յիշելու համար : Ա կորնթ . ԺԱ . 24 :

Հ . Գինին ի՞նչ բան կը ներկայացունէ մեզի :

Պ . Կը ներկայացունէ Քրիստոսի արիւնը խաչին վրայ մեղքի համար թափուած :

Ամենքդ ալ խմեցէք ասկէ . ինչու որ ասիկայ է իմ արիւնս նոր ուխտի , որ շատերու համար կը թափուի՝ մեղաց թողութեան համար : Մատթ . ԻԶ . 28 : Ա կորնթ . ԺԱ . 25 :

Հ . Տէրունական ընթրիքին մեր կերածն ու խմածը իսկապէս հաց ու գինի է , թէ հացի ու գինիի երևոյթով իսկապէս Քրիստոսի մարմինն ու արիւնն է :

Պ . Իսկապէս հաց ու գինի է և ոչ ուրիշ բան մը :

Քանի անգամ որ սա հացը ուտէք , ու սա գաւաթը խմէք , Տէրոջ մահը կը պատմէք , մինչև որ ինքը գայ : Ա կորնթ . ԺԱ : 26 :

Հ . Բայց որովհետև Քրիստոս կ'ըսէ հացին համար , Ասիկայ իմ մարմինս է . և գաւաթին համար , Ասիկայ իմ արիւնս է .

վասն որոյ պարտաւոր չե՞նք Տէրունական ՐՆԹըիքին ժամանակը գործածուած հացն ու գինին՝ իսկապէս իր մարմինն ու արիւնը սեպելու :

Պ . Չէ . քանզի մեր տեսածը՝ շոշափածը՝ հոտոտածը և ճաշակածը յայտնապէս կը ցուցընեն մեզի թէ անոնք իսկապէս հաց ու գինի են . ասկէց զատ Պօղոս առաքեալը Տէրունական ՐՆԹըիքին հացին վրայ խօսելով՝ կ'ըսէ թէ ան կերուածը հաց է :

Քանի անգամ որ աս հացը ուտէք , ու աս դաւաթը խմէք , Տէրոջը մահը կը պատմէք , մինչև որ ինքը դայ : Ուստի ով որ աս հացը ուտէ , կամ Տէրոջը դաւաթը խմէ անարժանաբար , պարտական պիտի ըլլայ Տէրոջը մարմնոյն և արեանը : Ուրեմն թող մարդ իր անձը փորձէ՝ ու այսպէս ան հացէն ուտէ , և ան դաւաթէն խմէ : Ա Կորնթ . ԺԱ . 26—28 :

Գարձեալ մեր փրկիչը դաւաթն առնելէն ու գոհուածիւն տալէն ետև՝ տակաւին որթին պտուղը կը կոչէ անիկայ :

Բաց կ'ըսեմ ձեզի . Ասկէ ետև որթին բերքէն բնաւ պիտի չխմեմ , մինչև ան օրը՝ երբոր ձեր հետը անիկայ նոր խմեմ իմ հօրս թագաւորութեանը մէջ : Մարթ . ԻԶ . 29 :

Հ . Ուրեմն ի՞նչպէս հասկընալու ենք Փրկի-

չին մերոյ ան խօսքը երբոր կ'ըսէ թէ, « Ըսէ իմ մարմինս », և այլն :

Պ . Ըստիկայ այլաբանօրէն հասկընալու է, ինտոր որ Քրիստոսի ուրիշ շատ խօսքերն ու Սուրբ Գրոց մէջ գտնուած ուրիշ շատ համարներն անանկ են . զորօրինակ՝ Ե. Կորնթ. Ժ . 4, 17 : Եւեց ԺԲ . 11 : Յայտ . Ե . 20 : Յովն . Ե . 8, 9 : Ե . 38 . Գ . 10, 13, 14, 32, 33 : Ժ : 7, 15 : Դան . Բ . 38 : Գ . 20—22 : Ծննդ . ԻԵ . 26, 27 : Մատթ . ԺԳ . 38 : Ե . 13, 14 . 39 : ԺԵ . 25 : Ե. Կորնթ . ԺԲ . 27 : Ուստի ան խօսքն աւսանկ հասկընալու է, « Ըստիկայ կը նշանակէ կամ կը ներկայացունէ իմ մարմինս », և այլն :

Հ . Բայց չէ որ Քրիստոս կ'ըսէ . « Թէ որ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք, և անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջը կեանք չէք ունենար » : Յովն . Գ . 54 :

Պ . Հրամարեա, բայց աս խօսքն ալ կ'ըսէ . « Ես եմ կենդանի հացը՝ որ երկինքէն իջայ . թէ որ մէկը աս հացէն ուտէ, յաւիտեանս պիտի ապի » : Յովն . Գ . 51 : Եւ ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ . « Ո՛վ որ ան ջուրէն խմէ որ ես անոր պիտի տամ, յաւիտեանս պիտի չծարաւի » . Յովն . Գ . 13 :

Այսու ամենայնիւ աս խօսքերով ինք ըսել չուզէց մարմնաւոր և նիւթաւոր մտօք ուտել խմելը, ինտոր որ բուն ինքը կը բացատրէ ըսելով՝ « Ըն որ ինձի կու գայ, երբէք պիտի չանօթենայ. և ան որ ինձի կը հաւատայ, պիտի չծարաւի » (Յով. . Գ. . 35). և դարձեալ կ'ըսէ՝ « Մարմնը շահ մը չընէր. ան խօսքերը որ ես ձեզի խօսեցայ, հոգի ու կեանք են » : Յով. . Գ. . 64 :

Հ. Երբոր Քրիստոս կ'ըսէ (Յով. . Գ. . 54), « Թէ որ Որդւոյ մարդոյ մարմնը չուտէք, և անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջը կեանք չէք ունենար », արդեօք աս խօսքը Տէրունական Ընթրիքին համար էր :

Պ. Չէ. քանզի աս խօսքերը ըսուելէն շատ ժամանակ ետքը Հաղորդութեան խորհուրդը հաստատուեցաւ, և այնքան միջոցին մէջ դուրսէ շատերը մեռան. և թէ որ Հաղորդութիւն անելն անհրաժեշտ հարկաւոր եղած ըլլար փրկութեան, ան մեռնող անձինքը փրկուելու հնարք մը պիտի չունենային :

Հ. Ուստի ինչ ըսել կ'ուզէ Քրիստոս աս խօսքով, « Ի՛նչ մարմնս ճշմարիտ կերակուր

է, և իմ արիւնս ճշմարիտ ըմպելիք է) :
Յո՛ւն . Բ . 56 :

Պ . Բնէլ կ'ուզէ թէ՛ ինտոր որ մարմինը կենդանի կը մնայ ու կը սնանի կերակուրով ու խմելիքով, անանկ ալ մեղքի թողութիւնը՝ և հոգևոր կեանքն ու խաղաղութիւնը կու գայ մեզի Քրիստոսի մահուամբն իր մարմնոյն վիրաւորուելովը և իր արեանը թափուելովը :

Բայց անիկայ մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ . մեր խաղաղութեան սպառիժը անոր վրայ եղաւ . և անոր վեքերովը մենք բժշկուեցանք : Եսայ . ԾԳ . 5 :

Հ . Ե՛րբ Որդւոյ մարդոյ մարմինը կերած ու անոր արիւնը խմած կ'ըլլանք :

Պ . Երբոր ճշմարտապէս հաւատանք թէ « Ընիկայ մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ », և թէ իրմով միայն թողութիւն կայ, իր արիւնին միջնորդութիւնովը . երբոր ճշմարտապէս իրեն կարօտ ըլլանիս կը զգանք, և խիստ շատ տրտմելով մեր մեղքերուն համար, միայն իրմէն կը յուսանք թողութիւն ընդունելու, իր շնորհաց մեծութեան չափովը :

Հ . Հաղորդութեան ժամանակ ինչ բանի ուղղելու ենք մեր միտքերը :

Պ . Չէ՛ թէ մեր կերած հացին և մեր խմած գինին ուղղելու ենք միտքերնիս , հապա Յիսուս Քրիստոսի լան քաւչական մահուանը՝ որ հացն ու գինին անիկայ կը ներկայացունեն : Ե . Կրի՛ն . Ժ.Ե . 28 , 36 :

Հ . Ուրեմն ինչ բանի համար են հացն ու գինին որ մենք կ'ուտենք ու կը խմենք :

Պ . Ընտնք Քրիստոսի մահուան սէրը մեզի կը յիշեցունեն և իր մարմինն ու արիւնը մեզի կը ներկայացունեն , և այսպէս՝ միտքերնիս կը բերեն Քրիստոսի մահը , իբրև մեր փրկութեան միջոց . դարձեալ՝ անտնք Քրիստոսի՝ մեզի ցուցրցած սիրոյն ու մեր յաւիտենական կեանք ունենալուս զբաւմըն են :

Հ . Հաղորդութեան խորհուրդին մէջ Քրիստոս կրկին կը պատարագութի մեղաց թողութեան համար :

Պ . Չէ՛ . քանզի Քրիստոս իր անձը մէկ անգամ մը պատարագ մատուց , և ան պատարագն այլ ևս կրկնուելու հարկաւոր չէ :

Չէ՛ թէ որ շատ անգամ իր անձը պոպաւափ մատուցանէ , ինչպէս քահանայապետը՝ որ ամէն տարի սրբաւ

ժանը կը մտնէ իրը չեղած արիւնով. ապա թէ ոչ՝
 պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն հետէ շատ անգամ՝
 չարչարուիլ. բայց հիմա մէկ անգամ մը դարերուն
 վերջը իր անձին պատարագովը յայտնուեցաւ՝ մեղքը
 մէկ դի ձգելու համար : Եւ ինչպէս որ մարդոց սահմա-
 նուած է մէկ անգամ մը մեռնիլ, ու անկէ ետքը դա-
 տաստան . անանկ ալ Քրիստոս մէկ անգամ մը պարա-
 բո՛ւ մատուցուեցաւ՝ շատերուն մեղքերը վերցունելու
 համար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի սլիտի
 յայտնուի փրկութեան համար անոնց՝ որոնք անոր
 կը սպասեն : Եբբ . Թ . 25—28 : Որ ան կամքովը մենք
 ալ սրբուեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմնին մէկ ան-
 գամ պատարագուելովը : Եբբ . Ժ . 10, 12, 14, 18 :

Հ . Երբոր ան հացը կ'ուտենք ու ան
 դաւաթը կը խմենք, ի՞նչ կ'իմանանք ան
 բանն ընելովնիս :

Պ . Կ'իմանանք թէ մենք Յիսուս Քրիս-
 տոսը մեզի փրկիչ կ'ընդունինք ու կը յու-
 սանք որ իր անունովը կը մաքրուինք մեղ-
 քէն : Ե. Յովն . Ե . 7 :

Հ . Ի՞նչ ընելու ենք երբոր Տէրունական
 Բ՛նթրիքին հաղորդելու ըլլանք :

Պ . Պէտք է որ առաջ մեր անձերն ա-
 դէկ մը փորձենք, և մեր մեղքերուն վրայ
 զղջալով՝ հաղորդութեան սեղանին մօտե-

նանք խոնարհ՝ երախտագէտ ու հաւատա-
ցեալ սրտով մը :

Թող մարդ իր անձը փորձէ՛, ու այսպէս ան հացէն
ուտէ, և ան դաւաթէն խմէ : Ա. Կորնթ. • Ժ.Ա. • 28 :

Հ. Ի՞նչ պիտի ըլլայ մեզի, երբոր չար
ու անզեղջ սրտով մը Հաղորդութեան մօ-
տենանք :

Պ. Աստուած պիտի բարկանայ մեր վրայ
և պիտի դատապարտէ մեզ :

Ասան զի ան որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ,
իր անձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ .
ինչու որ Տէրօջը մարմինը չորօշեր : Ա. Կորնթ. • Ժ.Ա. • 29 :

Հ. Եկեղեցւոյ անդամներէն մէկը պէտք
է որ Հաղորդութիւն առնելէն ետ մնայ :

Պ. Չէ՛. քանզի հրաման ունին միշտ ան
հացն ուտելով ու ան դաւաթը խմելով
Տէրօջը մահը պատմելու՝ մինչև որ ինքը
գայ : Ե. Կորնթ. • Ժ.Ե. • 26 :

Պ. Բայց գիցուք թէ ան անձը յան-
ցանք մը ըրած է և իր խղճմտանքէն կը
չարչարուի, ան ատենը ի՞նչ պիտի ընէ :

Պ. Պէտք է որ զղջայ ու այնպէս ուտէ
ան հացէն ու խմէ ան դաւաթէն : Ե. Կորնթ. •
Ժ.Ե. • 28 :

Հ. Տէրունական Ընթրիքը ապացոյց մը

է՛ր ամէն մարդոց՝ որ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ և մեռաւ անոնք իրկելու համար :

Պ . Հրամներես . ինչու որ Քրիստոսի ժա մանակէն մինչև ցայսօր աս բանս անդադար կը կատարուի :

Ա . Տէր Յիսուս Քրիստոս իր մատնուած գիշերը սահմանեց աս Ընթրիքը՝ ՚ի յիշատակ իր մահուանը՝ աշխարհի մեղքերուն համար : Ան նոյն ատենէն մինչև հիմա շարունակ Տէրունական Ընթրիքը կը կատարուի Քրիստոնէից մէջ, և Քրիստոնէական կրօնին ճշմարիտ ըլլալուն՝ մնայուն և հաստատուն ապացոյց մըն է :

Բ . Աս Ընթրիքիս մէջ մեր գործածելու բաները միայն հաց ու գինի ըլլալու են . հացը՝ Քրիստոսի մարմինը կը ներկայացունէ մեզի, ու գինին՝ անոր արիւնը :

Գ . Հաղորդութեան ատեն գործածուած հացն ու գինին իբրև Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արիւնը սեպուելու չեն, հապա անոր մարմինին ու արիւնին նշանակները : Հաղորդութեան մէջ հացն ու գինին անոր համար սահմանուած են՝ որ անոնք խսկոյն մեր միտքը ձգեն Քրիստոսի քաշած շարժարանքները մեզի համար, և որ մեր աչքին առջև ներկայացունեն ան

մեծ ճշմարտութիւնը՝ թէ միայն ան չարչարանքներուն միջոցով՝ օրէնքին անէծքէն աղատութիւն կը գտնենք : Եւ ինտոր որ հացն ու գինին մարմինը կը սնուցանեն և կենդանի կը պահեն, նմանապէս Քրիստոս իր մահուամբը՝ որով իր անձը պատարագ մատուց մեղքի համար, հաշտութիւն և հոգևոր կեանք ու խաղաղութիւն կը շնորհէ զզմացող մեղաւորներուն :

Դ • Երբոր կ'ընդունինք Քրիստոսը իբրև մեր միակ Փրկիչը, ու մեր մեղքերուն թողութեանը համար՝ մեր մի միայն յոյսը իր քաւչական արեան արժանաւորութեանը վրայ կը գնենք, խորունկ զգալով մեր մեղքերը ու բոլոր սրտով ապաշխարելով ու հաւատալով որ Անիկայ կարող ու կամեցող է անոնք քննել, ան առնել իր մահուանն արդիւնքներուն հաղորդ կ'ըլանք ան առնել իր մարմինը և արիւնը ճշմարիտ կերակուր ու ճշմարիտ ըմպելիք կ'ըլլայ մեզի :

Ե • Տէրունական Ընթրիքը իբրև Քրիստոսի մարմնոյ և արեան պատարագը՝ համարելու չենք, այլ յիշատակ մը ան մի միայն ամենաբաւական պատարագին՝ որն որ Քրիստոս իր անձովը մատուց խաչին վրայ, և ան պատարագը բնաւ երբէք նորէն կրկնուիլ պէտք չէ :

Զ • Քանի անգամ՝ որ ան հացը կ'ուտենք ու ան գաւաթը կը խմենք, Տէրոջը մահը կը պատմենք, մինչև որ ինքը գայ : Եւ Աստուծոյ՝ հրեշտակաց ու մարդոց առջևը յայտնապէս կը դաւանինք թէ Քրիստոս մեզի Փրկիչ կ'ընդունինք, և թէ մեր բոլոր կենացը մէջ ա-

մէն բանէն աւելի պիտի սիրենք անիկայ ու պիտի ծառայենք անոր :

Է . Բայց ամենեւին չմտենանք Հաղորդութեան սեղանին՝ անհոգ կամ բարկացող կամ անհաւատ սրտով մը , որ ատեն դիտութեամբ ինչ և իցէ մեղքի մէջ ենք և տակաւին անոր մէջը մնալու հաստատ կամք ունինք . թէ որ այնպէս սրտով մը մտենանք ալ՝ մեր անձին գատապարտութիւնը կ'ուտենք ու կը խմենք՝ Տէրօջը մարմինը չորոշելու համար : Ա կ'ԲԻ . ԺԱ . 29—31 : Իսկ ընդհակառակն՝ զգուշութեամբ և աղօթքով մեր անձերը փորձենք , ամէն մեղքէն հեռանանք փախչինք , յետոյ զղջացող՝ խոնարհ՝ հաւատացող և շնորհակալու սրտով մը յառաջ երթանք մտենանք Տէրօջը Ընթրիքին , և հոն տեղ Քրիստոս մեզ պիտի բարևէ , մեզ պիտի ընդունի սիրով , և մեզի հետ հաղորդ պիտի ըլլայ , և մեզ պիտի արձակէ իր Ընթրիքէն , նոր քաջալերութիւն և ուրախութիւն պարգևելով : Տէրօջը սեղանը նստիլը ոչ միայն մեր սարտաւորութիւնն է , հապա նաև մեր ամենամեծ արտօնութիւններէն մէկն է :

Ը . Չըլլայ որ մէկը այնպէս կարծիք մը ունենայ թէ աս սրբազան սեղանէն հաց ուտելն ու դինի խմելը զինքը կը փրկէ : Մեղաւորներուն փրկութեանը համար խաչին վրայ մեռնողը հացն ու դինին չէր , հապա Յիսուս Քրիստոս էր , որ հացն ու դինին մեզի կը ներկայացունեն . և մինչև որ անկեղծ սրտով չսիրենք անիկայ ու անոր չսպաւինինք՝ չենք կրնար փրկուիլ :

Գ . Եկեղեցիին իշխանութիւնը եր անդամներ
բռան լըայ :

Ե կորնը . Ե . 1—13 :

Հ . Քրիստոնեաներն ինչ կանոնով պի
տի քալեն :

Պ . Քրիստոսի Մեծտարանին կանոնովը :

Միայն թէ Քրիստոսի աւետարանին ինչպէս որ կը
վայէ , անանկ վարուեցէք . որ եթէ դամ ու ձեզ տես
նամ , և կամ հեռու ըլլամ , ձեր վրայովը լսեմ , որ
դուք հաստատուն կը կենաք մէկ հողիով , ու մէկ շունչով
պատերազմակից կ'ըլլաք աւետարանին հաւատքին հա
մար : Փիւհո . Ա . 27 : Եփես . Դ . 1 : Ա թէս . Բ . 12 :
Դ . 1 , 2 : Յովն . ԺԵ . 1—14 :

Հ . Թէ որ եկեղեցիին անդամներէն մէ
կը ան եկեղեցիին ուրիշ մէկ անդամին դէմ
գանգատ ընելու պատճառ մը ունենայ ,
նախ և առաջ Քրիստոս ինչ կը հրամայէ ա
նոր :

Պ . կը հրամայէ որ երթայ առանձին տեղ
մը և քաղցրութեամբ իր եղբորը յանցանքը
ցուցընէ անոր , ու ջանայ համոզել անիկայ
որ իր յանցանքը խոստովանի :

Գ . Թէ որ անիկայ խոստովանի իր յան

ցանքը, և իր վարքն ուղղէ, կամ թէ որ զըրկանք մը ըրած է՝ հատուցանէ, անատենը ի՞նչ ընելու է ան զանգատ ունեցող եղբայրը :

Պ . Պէտք է որ ներէ անոր և այնպէս բանը վերջանայ :

Ան ատենը Պետրոս մօտեցաւ անոր՝ ու ըսաւ . Տէ՛ր , քանի՞ անգամ թէ որ եղբայրս ինծի դէմ մեղանչէ՝ ներեմ անոր . մինչև եօթը անգամ : Յիսուս անոր ըսաւ . Քեզի չեմ ըսեր թէ մինչև եօթը անգամ, հապա եօթանասուն անգամ եօթը : Մատթ . ԺԼ . 21, 22 :

Հ . Բայց թէ որ անիկայ տակաւին իր յանցանքին մէջ կէնայ, չուզէ խոստովանիլ կամ թողուծիւն խնդրել, անատենը ի՞նչ ընել պէտք է :

Պ . Ընատենը զրկանք կրողը պէտք է որ մէկ կամ երկու ուրիշ անձինք ալ իր հետը առնէ, և նորէն ջանայ սիրով խրատել անիկայ : Մատթ . ԺԼ . 16 :

Հ . Բայց թէ որ ան անգամին ալ մտիկ չընէ, ուրիշ ի՞նչ միջոց բանեցունելու է :

Պ . Ընատենը բանն իմացունել պէտք է ան եկեղեցիին՝ որուն որ յանցաւորն անգամ է . և եկեղեցին աղէկ քննութիւն ընելով՝ թէ որ յանցանքն ստուգուի անոր վրայ, պէտք է որ յանդիմանէ անիկայ, և զղջացունէ

իր անսլայել գործին համար : Մատթ. ԺԼ. 17 :

Հ . Բայց թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ, ինչ ընելու է :

Պ . Ընատենը ան անձը եկեղեցիէն դուրս եղած մէկու մը պէս համարուելու է, և այլ ևս քրիստոնեայ եղբայր սեպուելու չէ, մինչև որ չզղջայ և իր յանցանքը չխոստովանի : Մատթ. ԺԼ. 17 :

Հ . Իսկ թէ որ իմանանք թէ եկեղեցիին անդամներէն մէկը ծածկաբար դէշ վարմունք մը ունի, որ թէպէտ մեր անձին վնասակար չէ, բայց Ըւետարանին դէմ է, անատենը ինչ ընելու ենք :

Պ . Պէտք է որ ան նոյն միջոցը բանեցունենք՝ ինչպէս որ եթէ մեր անձին դէմ զըրկանք մը ըլլար պիտի բանեցունէինք . այսինքն՝ պէտք է որ աշխատինք իր բռնած ճամբուն սխալմունքը իրեն ճանչցունելու, և իր վարքը շտկելու :

Եղբայրդ քու սրտիդ մէջը պիտի չատես . քու դրացիդ անսպառճառ պիտի յանդիմանես . որ անոր համար մեզք չկրես : ՂԿ. ԺԹ. 17 :

Հ . Բայց թէ որ իր յանցանքը յայտնի գիտցուած ըլլայ, անատենն ինչ ընելու է :

Պ . Ընատենը պէտք է որ եկեղեցին հրապարակաւ հոգ տանի ան անձին վրայ . և ինտոր որ բանը կը պահանջէ անանկ ընէ : ԸՏԺ . Ե . 20 :

Հ . Ի՞նչպէս վարուելու ենք անանկ մէկու մը հետ, որ քրիստոնէութեան անվայել եղած վարմունքի մէջ շարունակելուն համար՝ եկեղեցին հաղորդակցութենէն կտրուած է :

Պ . Պէտք է որ հեռու կենանք անանկ անձէն, որ այնպէս՝ թէ իրեն և թէ աշխարհի յայտնենք մեր տհաճութիւնն անոր վարմունքին վրայ, և որ այնպէս ինք զգայ իր յանցանքն ու զղջայ :

Բայց հիմա ձեզի գրեցի շնտուուիլ, այսինքն՝ թէ որ մէկը եղբայր ըսուած՝ կամ պրոնիկ ըլլայ, կամ ագահ, կամ կուսարշտ, կամ նախատող, կամ գինով, կամ յափշտակող, անանկին հետ հաց ալ չուտել : Ա՛յսինքն . Ե . 11 : Հոով . Ժ . 2 . 17 : Թէս . Գ . 6 , 14 :

Հ . Ըսկէ զատ եկեղեցին իշխանութիւն ունի իր հաղորդակցութենէն կտրուած մէկ անդամին մարմնաւոր պատիժ տալու կամ անոր ինչ և իցէ վնաս մը հասցունելու :

Պ . Չէ :

Բայց չըլլայ թէ թշնամիի պէս սեպէք անկոյ . հա

պա եղբոր պէս խրատեցէք : Ի Թե՛ս • Գ • 15 : Ե՛ղբայր-
ներ՝ թէ որ ձեզմէ մէկը յանկարծ ի՛նչ և իցէ յանցան-
քով բանուելու ըլլայ , դուք որ հոգևոր էք՝ անանկը
հեղութեան հոգիով ուղղութեան բերէք • քու անձիդ
ալ զգուշութիւն ըրէ որ չըլլայ թէ փորձութեան մէջ
լինաս : Գառ • Զ • 1 : Յիսուս պատասխան տուաւ՝ Իմ
թագաւորութիւնս աշխարհէս չէ : Յո՛ւն • ԺԼ • 36 :

Հ • Ուրեմն ի՛նչ է Յովհաննէս առաքեալին
միտքը՝ երբոր կ'ըսէ • « Թե՛ որ մէկը ձեզի գայ
ու աս վարդապետութիւնը չբերէ , անիկայ
տուներնիդ մի ընդունիք , և անոր բարև մի ը-
սէք : Քանզի ո՛վ որ անոր Բարև կ'ըսէ , անոր
չար գործքերուն հաղորդ կ'ըլլայ » : Ի Յո՛ւն •
10 , 11 :

Պ • Միայն ան կ'ուզէ ըսել՝ ինչ որ Պօղոս
առաքեալն ալ կ'ուզէ ըսել ա Կորնթ • Ե •
գլուխ՝ 11 համարին մէջ • « Բայց հիմա ձեզի
զրեցի չխառնուիլ , այսինքն՝ թէ որ մէկը եղ-
բայր ըսուած՝ կամ պոռնիկ ըլլայ , կամ ագահ
կամ կռասպշտ , կամ նախատող , կամ զի-
նով , կամ յափշտակող , անանկին հետ հաց
ալ չուտել » • այսինքն՝ Յովհաննէս Առաքեա-
լը միայն ան ըսել կ'ուզէ թէ՛ պէտք է կտրենք
անկից ամէն տեսակ բերեկամական և ընտա-
նեկան հաղորդակցութիւնները՝ որ չըլլայ թէ՛

անոր վարքին ու վարդապետութեանը հաստատութիւնն ու հաւանութիւնն տուած ըլլանք :

Հ . Եւ ի՞նչ ըսել կ'ուզէ Պօղոս՝ երբոր կ'ըսէ ա կորնթ . Ե . գլխուն Յ համարին մէջ . « Լնանկը Սատանային մատնէք՝ մարմինը կորսուելու համար, որ հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը » :

Պ . Իսել կ'ուզէ թէ՛ եկեղեցիին հաղորդակցութենէն կտրեն և աշխարհային մէկը սեպեն անիկայ . որովհետեւ եկեղեցին Քրիստոսի թագաւորութիւնն ըլլալով ու աշխարհըս Սատանային թագաւորութիւնը, անտարակոյս Քրիստոսի թագաւորութենէն դուրս ձգուողը Սատանային իշխանութեան տակը պիտի մտնէ, և այնպէս Սատանային մատնուած կ'ըլլայ . իսկ « մարմինին սատկուելը » կը նշանակէ թէ եկեղեցիէն դուրս ձգուած անձը տեսնելով որ ինքը Քրիստոսի թագաւորութենէն դուրս եղած է, պիտի խոնարհի, և այնպէս իր ներսի դին եղած մարմնաւոր սկզբունքները սպանուելով՝ զղջումի գայ ու փրկուի :

Հ . Եկեղեցիին հաղորդակցութենէն կրտ-

ըուած մէկը աստուածային պաշտօնի ատեն
եկեղեցի գալէն արգիլել պէտք է :

Պ . Չէ . պէտք է զգուշացունել անիկայ
Տէրօջը Սեղանին մօտենալէն , բայց պէտք է
քաջալերութիւն տալ անոր՝ Աստուծոյ խօս-
քին քարոզութիւնը մտիկ ընելու , ան յոյսով
որ գուցէ զղջումի գայ ան միջոցով :

Հ . Ի՞նչ տեսակ յանցանքները եկեղեցին
կրնայ դատել և անոնց պատճառովս իր ան-
դամը մերժել :

Պ . Ամէն տեսակ կուսակաշտութիւն նաև
անհաւատութիւն կամ Աւետարանին ինչ և
իցէ էական վարդապետութեան ուրացու-
թիւնը . նմանապէս ամէն տեսակ անառակու-
թիւն . ինչպէս՝ Աստուծոյ Սուրբ անունը
պղծել , կիրակին չպահել , իշխանաւոր ան-
ձանց դէմ ապստամբիլ , ուրիշին անձին կամ
ընչիցը մնաս հասցունել , ամէն տեսակ ան-
մաքրութիւններ , անպարկեշտութիւն , ստա-
խօսութիւն , նախանձ , ազահութիւն , անբա-
րեխառնութիւն , և ուրիշ այսպիսի բաներ :
Տե՛ս Կաթողիկոսի պատմութեան Երեսնուհինգ
Երեսնուհինգ : Եւեղ Ի . 1—
17 :

Հ . Թէ որ բանադրուած անձ մը զղջայ և

նորէն եկեղեցիին մէջ մտնել ուղէ, պէ՞տք է ընդունիլ անիկայ :

Պ . Հրամարեա :

Հերիք է անանկ մարդուն ան սլասիժը . որ շատերէն եղաւ : Ուստի ընդհակառակն՝ պէրք է աւելիներել՝ անոր . ու միսիթարել, որ չըլլայ թէ անանկը աւելի տրամութենէն ընկղմի : Ուստի կ'աղաչեմ՝ ձեզի . որ անոր վըայ յէր սերը հաստատէք : Բ Կորնթ . Բ . 9—5 Գաղ . 2 . 1 :

Հ . Ինչո՞ւ համար իրենց յանցանքը չզգացող յամառեալ յանցաւորներն եկեղեցիէն դուրս ձգուելու են :

Պ . Որ անանկով եկեղեցին ազատ ըլլայ ա նոնց չար օրինակովն ապականուելէն, և որ ան յանցաւորներն ալ զղջումի գան

Անանկը Սատանային մատնէք՝ մարմինը կորսուելու համար, որ հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը : Աս ձեր սարժանքը աղէկ չէ . չէք գիտեր որքե՞ն մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ : Մաքրեցէ՛ք հին խմորը մէկ դի, որ ըլլաք նոր զանգուած, ինտոր որ անխմոր էք . ինչու որ Քրիստոս մեր զատիկը մեզի համար զոհուեցաւ : Ա Կորնթ . Ե . 5—7 :

Հ . Եկեղեցւոյ Հովիւները թէ որ յանցանք մը ընեն, անոնք ալ յանդիմանուել՞ու են :

Պ . Հրամարեա :

Բայց երբոր Կեփասը Անտիոք եկաւ, ես անոր դէմ կեցայ. որովհետեւ ինքը մեղադրուելու էր: Գաղ. Բ. 11: Երեցի վրայով ամբաստանութիւն մի ընդունիր, բայց միայն երկու կամ իրէք վիաներով: Ա ՏԻՃ. Ե. 19:

Հ. Եկեղեցին ինչ զգացում ունենալու է իր հաղորդակցութենէն կտրուած անձերուն վրայօք:

Պ. Մեծ տրտմութիւն:

Ինծի՛ նմանող եղբ՝ եղբայրներ, ու նայեցէ՛ք անոնց որ այնպէս կը քալեն, ինտոր որ մեզ Յէ՛՛՛ օրինակ ունիք: Ինչու որ շատերը կը քալեն, որոնց համար շատ անգամ ձեզի կ'ըսէի, և հիմայ լալով ալ կը զրուցեմ, այսինքն Քրիստոսի խաչին թշնամիներուն համար. Որ անոնց վերջը կորուսա է. որոնց աստուածը՝ Իրենց որովայնն է, ու անոնց փառքը՝ իրենց ամօթն է. որոնք միայն երկրաւոր բաները կը մտածեն: Փիլիպ. Գ. 17—19:

—

Ա. Ամէն եկեղեցի պարտաւոր է իր անդամներէն պահանջելու որ Աւետարանին համեմատ քալեն. և թէ որ անոնցմէ որ և իցէ մէկը Աւետարանին հակառակ վարմովք մը ունենայ՝ պէտք է որ յանդիմանէ անիկայ, և թէ որ հարկը պահանջէ՝ եկեղեցիէն զուրս ընէ:

Բ. Ան եկեղեցին՝ որ երկիւզ ունենալով կամ ա.

չառուութիւն ընելով կամ անհոգ ըլլալով, չբանեցուներ իր կառավարութիւնը և իշխանութիւնը իր անդամներուն վրայ, Աստուծոյ երեսէն պիտի իյնայ և ուրիշ հաւատարիմ եկեղեցիներուն ցաւ և նեղութիւն մը պիտի ըլլայ, և աշխարհային մարդոց ալ դայթակղութիւն, և գուցէ պատճառ կորստեան: Թէ որ չար մարդիկ եկեղեցիին մէջ մնան, եկեղեցին շուտով պիտի կործանի. քանզի եկեղեցիին ամէնէն վնասակար թշնամիները իր անարժան անդամներն են:

Գ. Երբոր եկեղեցւոյ անդամներէն մէկը Քրիստոնէութեան անվայել վարմունք մը ունենայ, պէտք է առանձին յանդիմանել և խրատել անիկայ. թէ որ ան չխոստովանի իր յանցանքը, թող մէկ կամ երկու ուրիշներն ալ մէկ տեղ յանդիմանեն անիկայ. թէ որ անոնց ալ մտիկ չընէ, թող անիկայ եկեղեցիին առջև բերուի ու հոն տեղ պէտք եղածն իրեն ըսուի. իսկ թէ որ անիկայ տակաւին յամառեալ մնայ ու եկեղեցիին ալ մտիկ չընէ, ան ատենը պէտք է որ իր անունն եկեղեցիին անդամներուն ցուցակէն աւրուի և հեթանոսի մը պէս սեպուի, կամ այնպիսի մէկը համարուի՝ որ Քրիստոսի հետ մասն ու բաժին չունի. հոգ չէ անոր ո՞վ կամ ինչ աստիճանի մարդ ըլլալը:

Դ. Եկեղեցին ամենևին իշխանութիւն չունի իր անդամներն հալածելու, ո՛չ ալ անոնց մարմնաւոր պատիժ տալու: Եկեղեցին իր հաղորդակցութենէն անոնք կարեւր անոր համար չէ որ յանցաւոր անդամը կորսուի, հապա որ անիկայ իմանալով իր սոսկալի վիճակը

Թէ Քրիստոսի Թագաւորութենէն դուրս ձգուած է ,
 դարձի գայ ու փրկուի : Եւ Թէ որ յանցաւոր անգամը
 խոնարհութեամբ զղջայ և խոստովանի իր յանցան-
 քը , պէտք է նորէն ընդունիլ անխկայ եկեղեցիին
 մէջ :

Աստուած իր շնորհօքը զօրացունէ ամէնքս որ վայլա-
 ծին պէս ասլրինք , ու բնաւ երբէք դէշ վարմունք-
 ներով նախատինք ու ամօթ չբերենք մեր ամենօրհնեալ
 Փրկչին անունին վրայ , ո՛չ ալ յաւիտենական կորուստ
 մեր հոգիներուն վրայ :

Վ Ե Ր Զ



3308

3308

